թեամբ իշխանին Իլութուերու<sup>16</sup> ժողովեալ բոլոր քաղաքայնոցն՝ հրաման լինէր ատեան դնել եւ հրապարակս յաւրինել: 61 Եւ տուեալ ցեղիցն երկաքանչիւրոցն<sup>17</sup> պայքար յանդիման կաճառախիտ<sup>18</sup> բազմութեանն՝ սկսաւ<sup>19</sup> եպիսկոպոսն յաստուածային Գրոց ձեռն ի գործ արկանել վարդապետական բանին<sup>20</sup> եւ սաստկագոյն յանդիմանէր զնոսա եւ ի<sup>21</sup> նախատինս<sup>22</sup> դարովանաց<sup>23</sup> արկանէր: 62 Եւ զրապարիշտ եւ թշուառական<sup>24</sup> քուրմքն<sup>25</sup> յամաւթ եղեն ի տէրունական խաչէն, զոր միշտ ի ձեռին ունէր<sup>26</sup> եպիսկոպոսն: 63 Պակուցեալ սրտաբեկք լինէին եւ ինքեանք իսկ զանձինս դարովէին<sup>27</sup>, խոստովանեալ զիւրեանց մեղս՝ դարձան ի հաւատս ճշմարիտս, զքուէս կորուսիչ հմայիցն<sup>28</sup> ի ձեռն տուեալ եպիսկոպոսին՝ ի նիւթ հրոյ ծախէին՝ արժանի լինելով վերստին ծննդեանն ի ձեռն սրբոյ աւագանին:

64 Իսկ իբրեւ ետես<sup>29</sup> իշխանն զայն<sup>30</sup> Հոնաց, ամենայն բազմութեամբն հանդերձ առաւել եւս հաստատեցան ի սէր հաւատոցն Քրիստոսի՝ հեռացեալ ի սնտտիագործ<sup>31</sup> պղծութեան<sup>32</sup> պաշտամանցն: 65 Քանզի յաւուր նաւակատեաց նորոգազարդ նշանի խաչին, զոր կանգեալ էր եպիսկոպոսին յարքունական դրանն, արա-

1 bcr փողոցացն փխ փողոցեացն  
 2 b բանդարգելի, I բանտարգել փխ բանդարգելս (cr)  
 3 a չի՛ր առ ի տեսիլ ... արարեալ եւ (երկու տող)  
 4 I գաշխարհն  
 5 a եւ հնազանդեալ փխ հնազանդեցան  
 6 cr գոսկեղեն  
 7 cr ձուլածոյսն փխ ձուլածոյսն  
 8 acr հրամայէր: Այս նախադասութիւնից սկսած՝ a ձեռագրում մէկ թերթ 1676 թ. վերականգնուած բնագիրն է:  
 9 I գայն  
 10 b կամօքն  
 11 bcr Հոգւոյն  
 12 I ծաւալիւր  
 13 a պարգեւացն  
 14 cr պասէփն  
 15 a փաւտիցն, bcr փաւտիցն փխ փաւտիցն (վերականգնում)

16 b Իլութիւրու փխ Իլութիւրու (=Իդութիւրու)  
 17 I երկաքանչիւրոց  
 18 abc կատառախիտ փխ կանառախիտ (I)  
 19 I եւ սկսաւ  
 20 a չի՛ր բանին  
 21 cr չի՛ր ի  
 22 I նախատանս  
 23 a դարովանաց փխ դարովանաց  
 24 b թշուական  
 25 I քուրմքն, ar քուրմքն փխ քուրմքն (bc)  
 26 a ունեին  
 27 a դարովէին փխ դարովէին  
 28 a հմայիցն փխ հմայիցն  
 29 I էտես  
 30 cr գայն իշխանն փխ իշխանն գայն  
 31 c սնտտի դիւագործ փխ սնտտիագործ  
 32 b պղծութեանց

րեալ իշխանին<sup>1</sup> զենմունս պատարագաց եւ<sup>2</sup> ամենայն մեծամեծացն, մինչդեռ զաւրհնութիւնսն կամէին երգել<sup>3</sup> քահանայքն ի վերայ ընծայիցն առաջի խաչին, ասէ եպիսկոպոսն ցիշխանն. 66 «Ահա զխոստմունս սիրոյ քո<sup>4</sup>, զոր ունիս առ Աստուած<sup>5</sup>, այսաւր<sup>6</sup> հատո<sup>7</sup> Տեառն հաշտեցուցանել զնա ընդ ձեզ՝ ի բաց բառնալով զանաւրէնութիւն ի ձէնջ, զի յայսմ հետէ մի՛ լիցի խէթ<sup>8</sup> եւ խութ ընդ ոտն. մանաւանդ զայս քրմապետունս<sup>9</sup> յայսմ նուագի փորձէ Հոգին Սուրբ, որով եւ դուք եղերո՛ւք<sup>10</sup> կատարեալք, որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է: 67 Արդ՝ հաւանեցարո՛ւք այսմ բանի. որոտընդոստ չոփայիցդ<sup>11</sup> շիրիմք Դարքունանդ<sup>12</sup> կոչեցեալ, նախ նա այրեսցի յայսմ մեծի աւուր ի ձեռն խոստովանող<sup>13</sup> քրմապետացդ այդոցիկ, որոց երթեալ նզովելով նզովեսցեն եւ ապա այրեսցեն յետ այնր եւ մկրտեսցին<sup>14</sup> եւ ճաշակեսցեն կերակուր»:

68 Իբրեւ<sup>15</sup> լուաւ զայս բարեպաշտ իշխանն Հոնաց, փութով տայր ի ձեռս նորա քանդել<sup>16</sup> զմեհեանսն: 69 Յայնժամ առաքեաց եպիսկոպոսն եւ իշխանն<sup>17</sup> զՄովսէս՝ այր հմուտ արհեստական շնորհի, հան-

դերձ այլ քահանայիւք՝<sup>18</sup> քանդել եւ<sup>19</sup> այրել զմեհեանսն, գործակցելով եւ քրմապետացն դասուց դիւցազնեա՝<sup>20</sup> զպղծանոցսն<sup>21</sup> բոցակէզ սպառէին առ հասարակ: 70 Ինքնին եպիսկոպոսն ելեալ ի բարձրաւանդակ տեղի<sup>22</sup> հանդէպ կոոցն, եղեալ ծունր<sup>23</sup> եւ արարեալ զնշան խաչին տէրուական, հողմն<sup>24</sup> ուժգին սաստկապէս հասեալ վառէր զայրեցումն բարձու մեհենիցն եւ զչոփայսն<sup>25</sup> զազիր մորթովքն հանդերձ զոհարանաց: 71 Անտի<sup>26</sup> դարձեալք մեծաւ ուրախութեամբ ի քաղաքն՝ լուսազգեստ<sup>27</sup> մկրտութեամբն լինէին, եւ զաւրն զայն տաւնից տաւն եւ ժողովոց ժողով առնէին իշխանն եւ մեծամեծքն:

[ԽԲ. Խորհուրդ մեծ իշխանին Հոնաց Իլիթուերոյ<sup>28</sup> ընդ նախարարս իւր, զի եպիսկոպոսն Իսրայէլ<sup>29</sup> առ նոսա մնացէ՝ հաստատել<sup>30</sup> անդ<sup>31</sup> զաթոռոն<sup>32</sup> հայրապետական<sup>33</sup>]

1 Մտանէ մեծ իշխանն Հոնաց ընդ ամենայն մեծամեծս եւ նախարարս իւրոյ տէրութեանն ի խորհուրդ բարի եւ ասէ.  
2 «Խաւար ուրեմն տգիտական մթացուցիչ

1 b գիշխանին  
2 cr պատարագաց աստուածասէր իշխանին փխ իշխանին գեմմունս պատարագաց եւ  
3 a ելգել փխ երգել  
4 bclr քոյ  
5 b ի յԱստուած, clr յԱստուած փխ առ Աստուած (a)  
6 c յայսօր  
7 bcr հատոյ փխ հատո  
8 c խեթ  
9 cr քրմապետս փխ քրմապետունս  
10 l եղալք  
11 b չոփայից  
12 b արքունամականդ փխ Դարքունանդ  
13 aլ խոստովանաւր  
14 a չիթ յետ այնր եւ մկրտեսցին  
15 b իսկ իբրեւ  
16 cr քանդել  
17 a իշխան

18 clr քահանայիւքն  
19 bclr չիթ եւ  
20 l զդիւցազնեայ փխ դիւցազնեա  
21 b զպղծանոցսն  
22 b տեղոյ  
23 a ծունր փխ ծունր  
24 bcr հողմ, l եւ հողմ փխ հողմն (a)  
25 a զչոփայսն փխ զչոփայսն  
26 bl անդի  
27 cr եւ լուսազգեստք  
28 b Իլիթուերոյ, a<sub>g</sub>c<sub>g</sub> Իլիտուերայ փխ Իլիթուերոյ (=Իլիթուեր)  
29 bclr Իսրայէլ, c<sub>g</sub> Իսրայէլի փխ Իսրայէլ (aa<sub>g</sub>)  
30 a<sub>g</sub> եւ հաստատել  
31 cr անտ  
32 b զաթոռոն, l զաթոռոն, c<sub>g</sub> յաթոռ փխ աթոռ (acr-a<sub>g</sub>b<sub>g</sub>)  
33 a հայրապետութեան փխ հայրապետական (bcl-ra<sub>g</sub>)

ոգևոց<sup>1</sup> գմեաւք պարփակեալ ունէր ի վաղնջուցն<sup>2</sup>, որով նկատել ուրեմն ոչ կարէաք զարդարութեան<sup>3</sup> զլոյսն բոլոր տիեզերաց: 3 Արդ՝ Տէրն<sup>4</sup> մեր Քրիստոս Աստուած<sup>5</sup> առաքեաց մեզ քաղցրութեամբ<sup>6</sup> իւրով առաջնորդ կենաց զայս եպիսկոպոս, որ բանիւք եւ գործովք կշտամբեալ յանդիմանեաց<sup>7</sup> զանաւրէնութիւնս մեր եւ ետ մեզ ճանաչել զամենաստեղծն Աստուած եւ զսքանչահարաչ նորա զաւրութիւնն, որում ամենայնին իսկ միտք իմ ճշմարտութեամբ<sup>8</sup> հաւատացեալ վկայեաց: 4 Եւ ահա հաւատացաք<sup>9</sup> ի մի Աստուած՝ արարիչ<sup>10</sup> երկնի եւ երկրի: 5 Աւրինակ բերցուք մեզ զամենայն աշխարհս<sup>11</sup> հաւանեալս այսմ հաւատոց եւ զմեծ թագաւորութիւնն Հռովմայեցւոց<sup>12</sup>: 6 Քանզի թագաւոր ոմն եղեալ, ասեն, անուն Կոստանդիանոս, որ զԿոստանդնուպաւլիսն<sup>13</sup> շինեաց, առաջին զնա<sup>14</sup>, ասեն<sup>15</sup>, լեալ քրիստոնեայ<sup>16</sup> թագաւորութեանն<sup>17</sup> այն, եւ այնչափ հաւատարիմ այր<sup>18</sup> եղեալ, որ հրեշտակ Աստուծոյ կայր ի<sup>19</sup> սպասու նմա, եւ այսու հաւատով<sup>20</sup> հզաւր յաղթութեամբ<sup>21</sup> զամենայն

թշնամիսն<sup>22</sup> իւր կործանեաց: 7 Արդ՝ եթէ ի ձեռն քրիստոսական հաւատոցն այնպէս փառաւոր<sup>23</sup> եւ յաղթող<sup>24</sup> մարթէ<sup>25</sup> լինել<sup>26</sup>, մեք զի՞ հեղգասցուք հաւատալ յԱստուած կենդանի: 8 Ահա ուսուցիչ պատգամացն Աստուծոյ՝ այրս Իսրայէլ<sup>27</sup> եպիսկոպոս<sup>28</sup>, եկայք աղաչեսցուք զնա<sup>29</sup>, զի կացցէ յաշխարհիս<sup>30</sup> մերում եւ լուսաւորեսցէ զմեզ»: 9 Չայսոսիկ միաբանութեամբ խորհեալ՝ յղեն<sup>31</sup> առ եպիսկոպոսն Իսրայէլ<sup>32</sup> զաւագ ոմն իշխան՝ անուն Աւչի, որ զտուրք<sup>33</sup> թարխանութեան ունէր պատիւ, եւ զսենեկապետն<sup>34</sup> Չաթկասար: 10 Եւ նոքա ի գալն առ նա պատմեն զխորհրդոյն զաւրութիւն, եթէ<sup>35</sup> ասաց մեծ իշխանն Հոնաց եւ ամենայն մեծամեծքն. 11 «Հայր մեր, ծանեաք զՏէր<sup>36</sup> զարարիչն մեր ի ձեռն քո, հաւատացեալ<sup>37</sup> երկրպագեմք միշտ Սրբոյ Երրորդութեանն: 12 Աղաչեմք զքո սրբութիւնդ, զի հաւանեսցիս լինել<sup>38</sup> մեր տեսուչ եւ վարդապետ՝ կանգնելով ի Վարաչան քաղաքիս մերում զաթոռ հայրապետական: 13 Եւ յուխտ<sup>39</sup> Տեառն մտից ես<sup>40</sup> Իլիթուեր<sup>1</sup>, ընդ քեզ եւ զամե-

1 a ոֆոց (ուղղուած՝ ոգոց), b հոգոց, cr յոգոց փխոցոց (1)  
 2 bclr վաղնջուց  
 3 b գարդարութեանն  
 4 bclr Տէր  
 5 a Յիսուս Քրիստոս փխ Քրիստոս Աստուած  
 6 clr քաղցրութեամբն  
 7 c ցամոյնանեաց  
 8 a նշմարիտ փխ նշմարտութեամբ  
 9 I հաւատացաք մեք  
 10 b արարիչն  
 11 cr գաշխարիս ամենայն փխ զամենայն աշխարիս  
 12 b Հռովմայեցոց  
 13 bcr գԿոստանդնուպոլիս, I գԿոստանդնուպոլիս փխ գԿոստանդնուպաւլիսն  
 14 a ըզնա  
 15 b չիք ասեն  
 16 ab քրիստոնեա փխ քրիստոնեայ (clr)  
 17 I եւ թագաւորութեանն  
 18 b չիք այր  
 19 a չիք ի  
 20 a հավատով

21 a յախտութեան փխ յաղթութեամբ  
 22 bclr քշնամիս  
 23 cr չիք փառաւոր  
 24 b յաղթ, I յաղթող փխ յաղթող  
 25 bclr մարթէր փխ մարթէ  
 26 I լինիլ  
 27 bclr Իսրայէլ փխ Իսրայէլ (a Իէլ՝ պատուոյ նշանի տակ, Ժէ դ. նօտրգրով վերականգնուած էջում)  
 28 b եպիսկոպոս  
 29 bclr գսա փխ գնա  
 30 ab աշխարիս փխ յաշխարիս  
 31 c յղէ նա փխ յղեն  
 32 abclr Իսրայէլ փխ Իսրայէլ (վերականգնում)  
 33 a գաւրք, b գիւրք փխ գտուրք (clr)  
 34 a սենեկապետ փխ զսենեկապետն  
 35 bclr թէ փխ եթէ  
 36 a չիք զՏէր  
 37 I եւ հաւատացեալ  
 38 cl լինիլ  
 39 a ուխտ փխ յուխտ  
 40 a եւս փխ ես

նայն հեթանոսական պաշտամունս բնա-  
 ջինջ<sup>2</sup> խլեցից յերեսաց Հոնաց երկրիս եւ  
 զկախարդասար քաւղեայս, որ ոչ գան<sup>3</sup> ի  
 հաւատս, հրով<sup>4</sup> այրեցից<sup>5</sup>: 14 Եւ անձն, որ  
 հեթանոսաբար շրջիցի յաշխարհիս իմում  
 կամ գաղտ կոոց զոհեացէ, սատակեցից  
 սրով<sup>6</sup>: 15 Եւ յառաջ եղիցի նոյն ինքն  
 զանպատում պարգեւացն Քրիստոսի<sup>7</sup>»:

16 Եւ պատասխանի տուեալ եպիսկո-  
 պոսին<sup>8</sup>, ասէ ցնոսա<sup>9</sup>. 17 «Ոչ է իմ այդ կա-  
 րողութիւն առնել անձամբ առանց մեծի  
 հայրապետին Աղուանից՝ սրբոյն Եղիազա-  
 րու<sup>10</sup>, զի նորա է այդ իշխանութիւնդ<sup>11</sup>, եւ  
 ես վիճակ ունիմ բարեկարգ, զիա՞րդ մար-  
 թեացի<sup>12</sup> թողուլ զհաւատ<sup>13</sup> իմ, զոր Աստուած  
 շնորհեաց ինձ հովուել: 18 Այլ Տէր Քրիս-  
 տոս ըստ մարդասիրութեանն իւրոյ զձեզ  
 հոգասցէ, աճեցուցէ եւ աւրհնեացէ զձեզ,  
 եւ<sup>14</sup> տացէ ձեզ ըստ հաւատոց ձերոց հո-  
 վիւ՛ տեսաւորել<sup>15</sup> Աւետարանաւն Քրիստո-  
 սի»: 19 Եւ երկրորդեալ եւ երրորդեալ<sup>16</sup>  
 պատգամացն<sup>17</sup> զնոյնն ասէին<sup>18</sup> բանս:

20 Եւ եպիսկոպոսն<sup>19</sup> ասէ. «Թույլ տուք  
 այժմ<sup>20</sup>, մինչեւ շնորհեացէ<sup>21</sup> ինձ Աստուած  
 երթալ յաշխարհն իմ առ բարեպաշտ որ-  
 դեակն իմ Վարազ Տրդատ՝ իշխանն Ա-  
 դուանից, եւ առ<sup>22</sup> սուրբ կաթողիկոսն<sup>23</sup>:  
 21 Եթէ Աստուծոյ եւ նոցա հաճոյ թուես-  
 ցի, կատարեացէ Աստուած զբանդ զայդ:  
 22 Եւ ոչ է իմ պատիւդ այդ, զոր խոստա-  
 նայք, այլ եթէ<sup>24</sup> չարամահ տանջանաւք ի  
 ձէնջ տանջիմ, փառս եւ պատիւս ինձ գայն  
 համարիմ վասն Տեառն խնդամիտ յոյժ լի-  
 նելոյ<sup>25</sup>: 23 Բայց պարտ է ձեզ զայդ խոր-  
 հուրդ մտածութեան<sup>26</sup> գրով ծանուցանել  
 առ համաւրէն աշխարհն Աղուանից եւ առ  
 հայրապետն Եղիազար<sup>27</sup>. [որ ի սրբոյն Ե-  
 ղիշայէ մինչեւ ցայսաւր Արեւելից հիւսիս-  
 սականաց<sup>28</sup> միայն<sup>29</sup> վիճակեալ է առաքե-  
 լական<sup>30</sup> աթոռ յաստուածաբնակ քաղաքէն  
 յԵրուսաղէմէ<sup>31</sup>, եւ ի<sup>32</sup> սրբոյն Յակովբայ<sup>33</sup>  
 եղբար Տեառն<sup>34</sup> ընկալեալ ձեռնադրու-  
 թիւն:] 24 Եւ դուք սահմանք էք այնմ վի-

1 a Լիթուեր, b Իլուբուեր *փիս* Իլիթուեր (*clr*)  
 2 a բրնաջինջ  
 3 b գտանի *փիս* գան  
 4 a հրով  
 5 c այրեցից  
 6 a սրով *փիս* սրով (Ժէ դ. նօտրգրով վերականգ-  
 նուած էջերի վերջում)  
 7 *bclr* չի՞ք եւ յառաջ ... Քրիստոսի  
 8 a պատասխանեալ *փիս* պատասխանի տուեալ  
 եպիսկոպոսին  
 9 *bclr* չի՞ք ցնոսա  
 10 *bclr* ինձ իշխանութիւն առանց մեծ հայրապե-  
 տին Աղուանից սրբոյն Ղազարոս առնել զայդ  
*փիս* իմ այդ կարողութիւն ... եղիազարու  
 11 *bcr* իշխանութիւն *փիս* իշխանութիւնդ (*al*)  
 12 *bclr* կարացից *փիս* մարթեացի  
 13 *bclr* զհօտն  
 14 *bclr* չի՞ք ըստ մարդասիրութեանն ... արհնեացէ  
 եւ  
 15 *bclr* տեսաւորել (*l* տեսչաւորել) զձեզ  
 16 b երօրդեալ, a երկրորդել եւ երրորդել *փիս* երկ-  
 րորդեալ եւ երրորդեալ  
 17 *cr* չի՞ք պատգամացն  
 18 *bclr* զնոյնն ասեն *փիս* զնոյնն ասէին

19 a Էպիսկոպոսն  
 20 *cr* այժմ ինձ  
 21 b շնորհեացի  
 22 a չի՞ք առ  
 23 *cr* կաթողիկոսն  
 24 a եթէ (վերականգնում)  
 25 *bclr* չի՞ք եւ ոչ է ... լինելոյ (մէկ նախ.)  
 26 *bclr* չի՞ք մտածութեան  
 27 *cr* Աղուանից Ղազար *bl* չի՞ք եւ առ հայրապետն  
 եղիազար: Այս հատուածում մեր կողմից փա-  
 կագծի մէջ առնուած կտորն անկասկած Ժ դ.  
 Աղուանից եկեղեցու բացարձակ ինքնագլխու-  
 քեան ջատագով Մովսէս Դասխուրանցու կող-  
 մից փոփոխուած (=խեղաթիւրուած) բնագիր է:  
 է դ. չպահպանուած այդ հատուածում հաւանա-  
 բար խօսուել է նաեւ կենտրոնական Հայաստա-  
 նի հոգեւոր եւ աշխարհիկ տէրերին դիմելու  
 անհրաժեշտութեան մասին: Ինչպէս երեսում է  
 յաջորդ զուխմերից, հոները հէնց այդպէս էլ  
 վարուել են:  
 28 *bl* հիւսիսականաց *փիս* հիւսիսականաց (*acr*)  
 29 *bclr* մերն *փիս* միայն  
 30 *blr* առաքելականն  
 31 a Երուսաղէմէ, b Երուսաղէմէ  
 32 a չի՞ք ի  
 33 b Յակոբայ, *clr* Յակոբայ *փիս* Յակովբայ  
 34 *cr* Տեառն երօրէ *փիս* եղբար Տեառն

ճակի. առանց կամաց խորհրդակցութեան բոլորեցունց<sup>1</sup> հարց եւ եղբարց եւ աթոռակցաց իմոց՝ այդ զիա՞րդ լինիցի, զի նոր է գործս եւ կարեւոր խորհուրդ<sup>2</sup>»։ 25 Լսելով<sup>3</sup> զայս ամենայն յեպիսկոպոսէն<sup>4</sup> կատարեցին<sup>5</sup> զհրամանն<sup>6</sup> եւ արձակեցին զնա<sup>7</sup> պատուով յաշխարհն իւր։

[ԽԳ. Գալուստ<sup>8</sup> Իսրայելի<sup>9</sup> Մեծ Կողմանց<sup>10</sup> եպիսկոպոսի<sup>11</sup> ի Հոնաց. եւ երկու<sup>12</sup> գլխաւորաց<sup>13</sup> զկնի եկեալ՝ խնդրելով<sup>14</sup> գնա յառաջնորդութիւն<sup>15</sup> իւրեանց]

1 Մեծ եւ բարեպաշտ իշխանն Հոնաց Իլիթուեր<sup>16</sup> Հանդերձեալ<sup>17</sup> կազմէր ի գլխաւորաց աշխարհին իւրոյ զԻթգինն Խուրսանց<sup>18</sup> եւ զՉաթն Խազր<sup>19</sup> զկնի սրբոյն Իսրայելի<sup>20</sup> պատգամատարս սիրոյ եւ խնդրել զնոյն Իսրայել<sup>21</sup> յառաջնորդու-

թիւն Հոնաստանեայցն<sup>22</sup>։ 2 Եւ<sup>23</sup> պատճեն թղթոյն<sup>24</sup> էր այս<sup>25</sup>։

3 «Իմանալի աչաց տեսութեամբ ընկալաք զառաքեալդ ի ձէնջ<sup>26</sup> այրդ<sup>27</sup> Աստուծոյ Իսրայէլ<sup>28</sup> եպիսկոպոս եւ ընդ դորա ձեռն ողջոյնեմք<sup>29</sup> զձեզ, տէ՛ր սուրբ Եղիազար<sup>30</sup> Աղուանից մեծ հայրապետ, եւ սիրելի եղբայր մեր Վարազ Տրդատ՝ աշխարհակալ իշխան Աղուանից։

4 Վասն զի խնդրէիք մարմնաւոր խաղաղութիւն ի մէնջ, եւ<sup>31</sup> մեք<sup>32</sup> հոգեւոր ողջունիւ տեսաք զդա<sup>33</sup> որպէս պատկեր Աստուծոյ եւ ի ձեռն դորա սրբական վարուց եւ նորահրաշ սքանչելեաց, զոր<sup>34</sup> եցոյց բարձրեալն, ծանեաք զարարիչն մեր եւ ստացաք խաղաղութիւն հոգւոց<sup>35</sup> մերոց։

5 Եւ արդ խնդրեմք ի ձէնջ՝ զնոյն<sup>36</sup> ինքն<sup>37</sup> զԻսրայէլդ<sup>38</sup> տեսուչ եւ առաջնորդ մեզ շնորհեցէք, յորոյ<sup>39</sup> ձեռն գտաք բազումք զփրկութիւն յաւիտենից, զի եւ մեր ընդ ձեզ անքակ սէր հաստատեսցի։ 6 Ո՛ղջ լեւուրք ի Տէր<sup>40</sup>»։

1 bclr չիբ բոլորեցունց  
2 bclr չիբ զի նոր է ... խորհուրդ  
3 a լսել փիս լսելով  
4 a յեպիսկոպոսէն  
5 l եւ կատարեցին  
6 b զհրամ, l զհրամանս փիս զհրամանն  
7 a ըզնա  
8 bla<sub>g</sub>b<sub>g</sub>c<sub>g</sub> գալուստն  
9 bcr Իսրայելի փիս Իսրայելի (al Իդի՝ պատուոյ նշանի տակ)  
10 b<sub>g</sub>c<sub>g</sub> Կողմանցն  
11 a էպիսկոպոսի  
12 bcr l այլ փիս երկու (aa<sub>g</sub>b<sub>g</sub>c<sub>g</sub>)  
13 a<sub>g</sub>b<sub>g</sub>c<sub>g</sub> գլխաւորաց յաշխարհէն a զարաւորաց փիս գլխաւորաց (bcra<sub>g</sub>b<sub>g</sub>c<sub>g</sub>)  
14 a<sub>g</sub>b<sub>g</sub>c<sub>g</sub> առ ի խնդրել փիս խնդրելով  
15 c<sub>g</sub> յառաջնորդ  
16 a Լիթուեր, b Խուրսուեր, r Իլիթուեր փիս Իլիթուեր (cl)  
17 bclr չիբ հանդերձեալ  
18 bclr Խուրսունաց փիս Խուրսանց (a) (Խե գլխում՝ Խուրսան)  
19 bclr Խազրն  
20 bcr Իսրայելի փիս Իսրայելի (al Իդի՝ պատուոյ նշանի տակ)  
21 bclr Իսրայել փիս Իսրայել (վերականգնում)

22 l Հոնաստանեայցն, a չիբ եւ խնդրել ... Հոնաստանեայցն  
23 a չիբ եւ  
24 b քոթից, a հրովարտակից փիս քոթոյն (clr)  
25 cr չիբ էր այս  
26 a ձէնջդ փիս ձենջ  
27 bl այր փիս այրդ  
28 bclr Իսրայել  
29 bclr ողջունեմք փիս ողջոյնեմք (a)  
30 bclr Ղազար փիս եղիազար  
31 bl չիբ եւ  
32 c չիբ մեք  
33 a դա փիս գդա  
34 l գորս  
35 bcr ոգոց, l ոգւոց փիս հոգւոց (a)  
36 b գնոյնն  
37 b չիբ ինքն  
38 bcr Իսրայել, l գԻսրայել փիս գԻսրայելդ (a)  
39 a յորո c որոյ  
40 bcr չիբ ի Տէր

[ԽԳԻ. Թուղթ իշխանին Հոնաց ի նոյն խորհուրդ<sup>2</sup> յաշխարհն Հայոց<sup>3</sup>]

1 «Առ սուրբ եպիսկոպոսապետդ<sup>4</sup> Հայոց Մեծաց Սահակ եւ մեծագոյ իշխանդ Գրիգոր՝ Հայոց զաւրապետ<sup>5</sup>. ողջո՛յն շատ:

2 Յակզբանցն<sup>6</sup> լինելութեան երկրի անգիտութեամբ խաւարեալք՝ մառախլապատ միգով հարքն մեր ննջեցին<sup>7</sup>: 3 Իսկ զեկեալ փրկութիւն<sup>8</sup> աշխարհի՝ վերինն Աստուած, յերկիր եկեալ Քրիստոս՝ ի լուր ահանջաց լուաք իբրեւ ընդադաւտ<sup>9</sup>: 4 Եւ յարշաւանաց մերոց յայդ<sup>10</sup> աշխարհ<sup>11</sup> եւ որ մաւտ առ մեաւք<sup>12</sup> տունդ Աղուանից<sup>13</sup> զմի հաւատ ունողք<sup>14</sup> դուք եւ այժմ<sup>15</sup> ամենայն տիեզերք, նախանձ բարի եւ մեր տնկեցաւ ի<sup>16</sup> սրտի: 5 Եւ բան Քրիստոսի Աստուծոյ մերոյ լցեալ կատարեցաւ<sup>17</sup>, եւ ի ծագս հիւսիսայնոցս<sup>18</sup> քարոզեցաւ Աւետարան նորա<sup>19</sup>, զորս բաւանդակապէս<sup>20</sup> ուսաք ի<sup>21</sup> լաւագոյն<sup>22</sup> առնէ<sup>23</sup> միոջէ՝ Իս-

րայէդ<sup>24</sup> Մեծ Կողմանցդ<sup>25</sup> եղելոյ եպիսկոպոսէ<sup>26</sup>:

6 Եւ այժմ զեղեալ առ մեզ սքանչեւ իս<sup>27</sup> յեկելոցդ՝ լուեալ ձեր՝ եւ<sup>28</sup> զհայցումն մեր կատարել<sup>29</sup> ախորժեսջիք՝<sup>30</sup> զնոյնդ առաքեալ<sup>31</sup> մեզ<sup>32</sup> տեսուչ<sup>33</sup>: 7 Եւ<sup>34</sup> ի սրբոյ Հայրապետէդ Աղուանից<sup>35</sup> Եղիազարու<sup>36</sup> խնդրեալ է մեր, եւ զձեզ<sup>37</sup> գործակից եւ հաւատակից նմա գիտելով<sup>38</sup> աղերսեմք<sup>39</sup> յերկաքանչիւրոցդ կատարել զմեր հոգեւոր խնդիր: 8 Զի սակս նորա լինելոյ<sup>40</sup> առ մեզ արշաւանք զաւրացս խուժադուժ ազգաց<sup>41</sup> յաշխարհ ձեր արգելեալ փակեալ լինիցի<sup>42</sup> մեր մի հաւատ ունելով եւ ձեզ<sup>43</sup>: 9 Ո՛ղջ լերուք»:

10 Արդ՝ իբրեւ եկին հասին նոքա յաշխարհս<sup>44</sup> Աղուանից եւ Հայոց, եւ տուեալ ողջոյն՝ պատմելով զամենայն, որ<sup>45</sup> ինչ արար Աստուած ի ձեռն<sup>46</sup> նորա յաշխարհին

1 c ԽԳԻ փխ ԽԳԻ  
2 a<sub>g</sub>b<sub>g</sub> խորհուրդն  
3 a<sub>g</sub>b<sub>g</sub> Հոնաց փխ Հայոց  
4 a Էպիսկոպոսապետդ, bcr եպիսկոպոսապետ փխ եպիսկոպոսապետդ (1)  
5 c գորապէտ  
6 a յիսկզբանց, cr յըսկզբանցն, I ի սկզբանցն փխ յսկզբանցն (b)  
7 bclr ննջեցին հարքն մեր փխ հարքն մեր ննջեցին  
8 bl փրկութիւնն  
9 I անաղօթ փխ ընդադաւտ  
10 c չիբ՝ յայդ  
11 br աշխարհս, c յաշխարհս փխ աշխարհ (al)  
12 a մեզ փխ մեաւք  
13 I անուանից փխ Աղուանից  
14 I ունողք cr ունելով ողջ փխ ունողք (ab)  
15 br այժմ եւ փխ եւ այժմ (acl)  
16 bclr ի մեր տնկեցաւ փխ մեր տնկեցաւ ի  
17 cr կատարեցաւ լցեալ փխ լցեալ կատարեցաւ  
18 a հիւսիսայնոցս, bl հիւսիսայնոցս փխ հիւսիսայնոցս (cr)  
19 a քարոզել զԱւետարան փխ քարոզեցաւ Աւետարան նորա  
20 bclr բովանդակապէս փխ բաւանդակապէս  
21 c չիբ՝ ի  
22 b լաւագոյնս

23 c առնել փխ առնէ  
24 bcr յԻսրայէլէ, I Իսրայելդ փխ Իսրայէլ (a)  
25 a Կողմանց փխ Կողմանցդ  
26 a Էպիսկոպոսի, b եպիսկոպոս փխ եպիսկոպոսէ (clr)  
27 bl զսփանջելիս փխ սփանջելիս (acr)  
28 clr չիբ՝ եւ  
29 a կատարեալ փխ կատարել  
30 cr յախորժեսջիք  
31 bclr առաքել փխ առաքեալ  
32 c մեր  
33 I տեսուչս  
34 bclr չիբ՝ եւ  
35 a չիբ՝ Աղուանից  
36 bclr Ղազարու փխ Եղիազարու  
37 bclr յուզեալ է եւ մեր զձեզ փխ խնդրեալ է մեր, եւ ձեզ  
38 bclr գիտացեալ փխ գիտելով  
39 a աղերսամբ փխ աղերսեմք  
40 a լինելով փխ լինելոյ, cr լինելոյ նորա փխ նորա լինելոյ  
41 bl ազգացս  
42 bl փակեցին, cr փակեցին փխ փակեալ լինիցի  
43 a լինելով փխ ունելով եւ ձեզ  
44 a յաշխարհն փխ յաշխարհս  
45 b գոր փխ որ (aclr)  
46 blr ձեռն փխ ձեռն

Հոնաց, եւ մատուցին զթուղթսն<sup>1</sup> մեծի իշխանին Հոնաց<sup>2</sup> առաջի քահանայապետին սրբոյն<sup>3</sup> Սահակայ<sup>4</sup> եւ Գրիգորոյ<sup>5</sup> իշխանին Հայոց<sup>6</sup>, մեծաւ<sup>7</sup> խնդութեամբ ընկալեալ նոցա եւ ամենայն աշխարհին՝ առնեն<sup>8</sup> պատասխանի զայս<sup>9</sup>:

[ԽԵ<sup>10</sup>. Պատասխանի թղթոյն Հոնաց]

1 «Ի<sup>11</sup> Սահակայ<sup>12</sup> Հայոց կաթողիկոսէ<sup>13</sup> եւ յամենայն քահանայական<sup>14</sup> ուխտէ եւ ի Գրիգորէ<sup>15</sup> Հայոց իշխանէ, եւ ի համարէն եկեղեցեացս<sup>16</sup> ժողովրդականաց<sup>17</sup> ի<sup>18</sup> Տէր խնդալ:

2 Վասն կենսատու փրկութեան հասանելոյ ի ձեզ յԱստուծոյ, որպէս մեզ պատմեցաւ, անպայման<sup>19</sup> ուրախութեամբ<sup>20</sup> գոհացաք զանգեղջական<sup>21</sup> պարգեւացն Քրիստոսի եւ զթուղթ, զոր<sup>22</sup> նորընծայ<sup>23</sup> ծառայիցդ Աստուծոյ գրեալ էր<sup>24</sup> առ մեզ, տեսաք: 3 Յորմէ իմացաք զբարերարութիւն արաչին, որ ծագեաց<sup>25</sup> յաշ-

խարհդ<sup>26</sup> ձեր զլոյս աստուածածանաւթութեան որպէս եւ յամենայն աշխարհս, առաւել<sup>27</sup> փառաւորեցաք զմարդասէրն<sup>28</sup> Աստուած, որ ոչ եթող զձեզ յընդունայն պաշտամունս հարցն ձերոց առաջնոց<sup>29</sup>, այլ ծանոյց ձեզ զանուն<sup>30</sup> իւր սուրբ, եւ եղէք<sup>31</sup> ճշմարիտ երկրպագուք արարչին ձերոյ<sup>32</sup> Աստուծոյ: 4 Ահա՛ գիտացաք, եթէ<sup>33</sup> անուն նորա տարածեալ ելից գտիեզերս<sup>34</sup>:

5 Որպէս ի ձերոցդ գրելոց<sup>35</sup> եւ ի պատգամաւորաց<sup>36</sup> լուաք, եթէ<sup>37</sup> որպէս դարձայք բոլորով սրտիւ ի ձեռն Իսրայելի եպիսկոպոսի<sup>38</sup>, արդ<sup>39</sup> մեք եւ աշխարհս մեր, թէպէտ եւ մարմնով հեռի եմք, սրտի սիրով մերով<sup>40</sup> համարեմք<sup>41</sup>, թէ յանդիման<sup>42</sup> տեսաք զձեզ: 6 Այլ զոր խնդրեցէք<sup>43</sup> ի մէնջ զեպիսկոպոսդ Իսրայելդ<sup>44</sup>, մեծ է այդ խորհուրդ ձեր, զի չէ մարթհատի առանց հովուի լինել<sup>45</sup>: 7 Եւ արդ՝ ծանր եւ<sup>46</sup> դժուարին է մեզ չկատարել<sup>47</sup> զհայցումնդ<sup>48</sup> ձեր, սակայն պատճառք

1 bclr գիրովարտակն փխ գթուղթսն  
2 bclr Հոնաց իշխանին փխ մեծի իշխանին Հոնաց  
3 I սրբոյ քահանայապետին փխ քահանայապետին սրբոյն  
4 b Սահակայ  
5 I Գրիգորի փխ Գրիգորոյ (bcr)  
6 a չիբ առաջի քահանայապետին ... Հայոց  
7 bclr եւ մեծաւ  
8 bclr առնէին փխ առնեն  
9 bl չիբ զայս  
10 c ԽԵ փխ ԽԵ  
11 c չիբ ի  
12 br Սահակայ  
13 r կաթողիկոսէ  
14 cr քահանայապետական փխ քահանայական  
15 bcr Գրիգորոյ փխ Գրիգորէ (al)  
16 cr եկեղեցացս  
17 cr ժողովրդականացս  
18 bclr չիբ ի  
19 b այն պայման փխ անպայման  
20 a ուրախութեան փխ ուրախութեամբ  
21 bclr զանգեղջ փխ զանգեղջական  
22 b չիբ զոր  
23 a նորընծայ, r նորընծա փխ նորընծայ  
24 a չիբ էր  
25 c գործեաց փխ ծագեաց

26 a յաշխարհի փխ յաշխարհդ (bclr)  
27 a չիբ առաւել  
28 I մարդասէրն  
29 bcr առաջնոցն  
30 bcr զանունն  
31 I եղայք փխ եղէք  
32 bclr մերոյ փխ ձերոյ  
33 bclr թէ փխ եթէ (a եթէ)  
34 c տիեզերս  
35 c գրելոցդ b ձերոց գրելոցդ փխ ձերոցդ գրելոց  
36 bclr պատգամաւորացս  
37 bclr թէ  
38 bclr երանելի եպիսկոպոսիդ Իսրայելի (I Իսրայելի, b չիբ Իսրայելի) փխ Իսրայելի (a Իսրայելի) եպիսկոպոսի  
39 al եւ արդ  
40 bclr չիբ մերով  
41 abl համարիմք փխ համարեմք (cr)  
42 blr չիբ յանդիման  
43 b խնդրեցէք, I խնդրեցիք փխ խնդրեցէք (acr)  
44 bclr Իսրայել  
45 I լինիլ  
46 bclr չիբ ծանր եւ  
47 I կատարել  
48 a զհայցումնդ, cr զհայցուածնդ փխ զհայցումնդ (bl)



կան. զի ոչ է նա վիճակեալ մերում<sup>1</sup> աթոռոյս, այլ՝ տանն Աղուանից: 8 Մեր կամ է եւ մեծ յաւժարութիւն<sup>2</sup> լինել<sup>3</sup> նմա առ ձեզ հանապազ, այլ այդ հրաման<sup>4</sup> եւ իշխանութիւն<sup>5</sup> աթոռակցին մերոյ է՝ Եղիազարու՝ հայրապետին Աղուանից<sup>6</sup>. նորա է գործդ այդ<sup>7</sup>: 9 [...] Արդ՝ ծաներուք զԱստուած կենդանի, որ տայն<sup>8</sup> կեանս մարդկան, մեռուցանէ եւ կեցուցանէ: 10 Որ<sup>9</sup> եւ նոյն շնորհք Սուրբ Հոգւոյն<sup>10</sup> հաստատեսցէ զձեզ յերկիւղն Աստուծոյ եւ ի պահպանութիւն պատուիրանաց նորա: 11 Եւ մեք կարաւտութեամբ սրտից անմոռաց յիշեսցուք զձեզ ի մեր եկեղեցիս: 12 Ո՛ղջ լեռուք»:

13 Իսկ իբրեւ դարձան ի Հայոց գիթգինն իտուրսան եւ Չաթն իսագր<sup>11</sup> եւ կացին առաջի կաթողիկոսին Եղիազարու<sup>12</sup> եւ իշխանին Վարազ Տրդատայ<sup>13</sup> ի մայրաքաղաքն Պարտաւ, խնդրէին<sup>14</sup> հրաժեշտ ի նոցանէ եւ<sup>15</sup> տալ գեպիսկոպոսն<sup>16</sup>: 14 Յայնժամ ոչ կամեցան տալ նոցա գիսրայէղ<sup>17</sup> յառաջնորդութիւն: 15 Ասեն. «Ոչ է պարտ

դմա զհաւատացեալ դմա<sup>18</sup> յԱստուծոյ զհաւտն իւր<sup>19</sup> թողուլ միանգամայն եւ լինել ընդ ձեզ<sup>20</sup>. այլ երթալ եւ գալ դմա ըստ կարի<sup>21</sup> իւրում հրամայեմք՝ հաստատել զձեզ ի հաւատս<sup>22</sup> Քրիստոսի եւ ողջ պահել զանխախտելի սէր<sup>23</sup> մեր, որ առ միմեանս է: 16 Այնմ եւ մեք կամակիցք եմք<sup>24</sup>, զի լինելով դորա միջնորդ ընդ մեզ եւ ընդ ձեզ՝ բարձցի<sup>25</sup> թշնամութիւն<sup>26</sup> ի միջոյ մերմէ, եւ տնկեսցի սէր եւ խաղաղութիւն»:

17 Զայս ամենայն լուեալ իշխանացն, խռովամիտ ընդ իրան<sup>27</sup> եղեալ<sup>28</sup> զարհուրէին<sup>29</sup>, եւ անյաւժար կամաւորութեամբ հաւանեալ<sup>30</sup> ասեն. «Ի գալն եւ յերթալն<sup>31</sup> առ մեզ մի՛ յապաղեսցի եւ գեղեալ<sup>32</sup> հիմն հաւատոյ անդրէն<sup>33</sup> մի՛ քակտեսցի<sup>34</sup> եւ թողցէ զմեզ<sup>35</sup> որբս, զի այլում վարդապետի ո՛չ<sup>36</sup> անսամք եւ հնազանդիմք<sup>37</sup>»:

18 Եւ երանելի եպիսկոպոսն<sup>38</sup> ըստ քաղցր բարուցն<sup>39</sup> առնէր շինութիւն երկոցունց<sup>40</sup> կողմանցն, յանձն առնոյր գերթալն ի

1 a մէրոյ  
 2 bclr մեծ յօժարութիւն է (b յօժարութեմէ) մեզ փիս Մեր կամ է եւ մեծ յաւժարութիւն  
 3 l լինիլ  
 4 bclr չի՛ք հրաման  
 5 bclr իշխանութիւնը  
 6 bclr Ղազարու Աղուանից հայրապետին է փիս է Եղիազարու հայրապետին Աղուանից  
 7 bclr չի՛ք նորա է գործդ այդ: Բովանդակութեան կտրուկ անցումից երեսում է, որ այս տեղում Մ. Դասխուրանցին է դ. բնագրի ինչ-որ կտոր պակաս է արտագրել. նշել ենք՝ [...])  
 8 a տա փիս տայն  
 9 bclr չի՛ք որ  
 10 bcr հոգոյն  
 11 b իսագրն  
 12 bclr Ղազարու փիս Եղիազարու  
 13 b Տրդայ  
 14 l եւ խնդրէին  
 15 a չի՛ք եւ  
 16 a գեպիսկոպոսն  
 17 bclr գիսրայէլ

18 bclr չի՛ք դմա  
 19 bclr չի՛ք իւր  
 20 bclr չի՛ք միանգամայն եւ լինել ընդ ձեզ  
 21 b կարգի  
 22 bcr հաւատսն, l հաւատն փիս հաւատս  
 23 bclr սէրն փիս սէր  
 24 bclr չի՛ք այնմ եւ մեք կամակիցք եմք  
 25 c բարձի  
 26 l թշնամութիւնն  
 27 bclr իրն փիս իրսն  
 28 b ելեալ  
 29 bclr եւ գարհուրէին  
 30 cl հաւանէին փիս հաւանեալ  
 31 bclr յերթալն (c երթալն) եւ ի (c չի՛ք ի) գալն փիս ի գալն եւ յերթալն  
 32 a գեղեալ  
 33 bclr անդէն փիս անդրէն  
 34 bl քակտեսցէ, cr քակտեսցի փիս քակտեսցի  
 35 a չի՛ք զմեզ  
 36 c չի՛ք ոչ  
 37 b հնազանդեմք  
 38 a եպիսկոպոսն  
 39 c չի՛ք ըստ քաղցր բարուցն  
 40 a երկուց փիս երկոցունց

Հոնս քաջայաւժար կամաւորութեամբ եւ  
յանձանձել գնորընծայ<sup>1</sup> հաւտն<sup>2</sup> Բրիստո-  
սի, ունել<sup>3</sup> եւ հաստատուն զուխտ եւ  
զպայման դաշնաւորութեան<sup>4</sup> նոցա:  
19 Յայսմ<sup>5</sup> հաւանեալ բանից մեծաշնորհ

եպիսկոպոսին<sup>6</sup> լնուին<sup>7</sup> ուրախութեամբ եւ  
դառնային խաղաղութեամբ<sup>8</sup> ի տեղի իւ-  
րեանց՝ փառաւոր առնելով<sup>9</sup> զԱմենասուրբ  
Երրորդութիւնն:

1 a գնորընծայ, bcr գնորընծա փ/ս գնորընծայ (1)

2 r հոտն փ/ս հաւտն

3 I ունիլ

4 cr դաշնաւորութեանց

5 bclr այսմ փ/ս յայսմ

6 a Էպիսկոպոսին

7 I շնութիւնն փ/ս լնութիւնն

8 bclr չի՛ր խաղաղութեամբ

9 bclr փառաւորելով փ/ս փառաւոր առնելով

# ՓԻԼՈՆ ՏԻՐԱԿԱՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ



## ՓԻԼՈՆ ՏԻՐԱԿԱՑԻՆ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յուստինիանոս Բ կայսեր երկրորդ տարում՝ 686 թ. գրուած այս պատմական երկը ուսումնասիրուել է բազմիցս (Գրիգոր Խալաթեանց, Յրանց Նիկողոսու Ֆինկ, Հայր Բարսեղ Սարգիսեան): Աղբիւրագէտ-պատմաբանները պարզաբանել են, որ նրանում օգտագործուած են Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը, «Անդրէասի» վերնագրուած, բայց իրականում մեծ մասով Գ դարի յոյն ժամանակագիր Հիպոդիտոսի *Liber generationis աշխատութիւնն* արտացոլող մի երկի թարգմանութիւնը, Եւսեբիոս Կեսարացու գործերի վրայ հիմնուած Արեմենեան արքաների, Եգիպտոսի Պտղոմեանների, Հրէից իշխանների, Հռոմէա-բիւզանդական կայսրերի ցուցակները, Սասանեան արքաների մի ուշագրաւ ցանկ, որը թերեւս՝ Հայ հեղինակի գրչին պատկանող ինքնուրոյն շարադրանք է, ինչպէս որ՝ ամբողջ երկի յօրինուածքը եւ յաճախ եզակի պատմական անդրադարձերը:

Երկի բնագիրն առաջին անգամ հրատարակեց Հ. Բարսեղ Սարգիսեանը՝ Անանուն ժամանակագրութիւն. խմբագիր յօրինեալ յէ դարու ի հնագոյն ժամանակագրաց խորագրով: Քննելով երկի բազմաթիւ աղբիւրները՝ գիտնականը եզրակացրեց, որ դրա կազմողը (ըստ իրեն՝ խմբագիրը) Անանիա Շիրակացին է (թէեւ՝ տարակուսանքով): Յոյց տալով հեղինակի բազում հակասութիւնները եւ շատ հարցերում՝ անգիտակութիւնը, նա նշում էր, որ ժամանակագիրը «չինձու եւ ստայօդ առասպելները որպէս ճշմարիտ պատմութիւն միամտօրէն մէջ կը բերէ, կ'ազուցանէ», որ «ճշգրիտ հակապատկերը կը կազմեն Շիրակացուցոյն, դժուար է ուրեմն, որ միեւնոյն գրչի եւ մտքի ծնունդ ըլլան», ուստի խնդիրը «խիստ ծանրակշիռ է եւ դժուարալուծելի»: Առաջին հրատարակութիւնից 40 տարի անց ժամանակագրութեամբ զբաղուեց Աշ. Աբրահամեանը: Նա ընդունեց Անանիա Շիրակացու կողմից այն խմբագրելու մասին Հ. Բարսեղ Սարգիսեանի բոլոր կռուանները եւ պնդեց, որ Շիրակացին ոչ թէ խմբագրել է, այլ հեղինակել ժամանակագրութիւնը:

Յակոբ Անասեանը եւս ժամանակագրութիւնը վերագրեց Անանիա Շիրակացու գրչին, նշելով, որ վերջինիս Զատկի ցառում յիշուած ժամանակակալ կանոնը հէնց սոյն ժամանակագրութիւնն է: Սակայն իրականում ժամանակակալ կանոնը նոյնանում է Ստեփանոս Ասողիկի յիշած Քրոնիկոնի հետ, ուր խօսք է գնում Անաստաս կաթողիկոսի՝ Անանիա Շիրակացուն արուած կարգադրութեան մասին՝ կազմելու «գՔրոնիկոն հրաշագան, յորում գտօմար մեր կարգեաց անշարժ»: Ժամանակագրութեան մէջ տոմարի մասին՝ ընդհանրապէս, եւ Հայոց տոմարի մասին՝ մասնաւորապէս, ոչ մի յիշատակութեան չենք հանդիպում: Տարբեր աղբիւրներից ու հեղինակներից բանաքաղուած, իրար կցուած, յաճախ՝ իրար հակասող վկայութիւնները ցոյց են տալիս, որ ժամանակագրութիւնը Անանիա Շիրակացու հետազօտութիւն լինել չի կարող: Դա է ապացուցում նաեւ այն, որ Շիրակացին բնութեան երեւոյթներին մօտենում է գիտական տեսանկիւնից, այնինչ ժամանակագրութեան հեղինակը (կամ բանաքաղը) հեռու է գիտութիւնից: Օրինակ, ըստ նրա՝ քանի որ Հռոմէացիք չընդունեցին Չենոն կայսեր Հենոտիկոնը եւ հաւատարիմ մնացին Քաղկեդոնի ժողովի որոշումներին, Հռոմում սաստիկ երկրաշարժ եղաւ: Բնական երեւոյթների նման «բացատրութիւնները» երկում քիչ չեն:

ՄՄ թիւ 5254 գրչագրում պահպանուել է ժամանակագրութեան աւելի համառօտ, բայց յաճախ ընտիր ընթերցումներ պարունակող մի օրինակ, որը վերնագրուած է Խօսք Փիլոնի: Այս Փիլոնը, մեծ հաւանականութեամբ, նոյնանում է Ասողիկի յիշած Փիլոն Տիրակացու հետ. «ի սորա (Անաստաս կաթողիկոսի - Հ. Բ.) աւուրս էր եւ Փիլոն Տիրակացի,

որ զՍոկրատայ Պատմութիւնն թարգմանեաց ի հայ լեզու»: Ենթադրելի է, որ Փիլոն Տիրակացին Սոկրատ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւնը թարգմանելուց յետոյ կազմել է խնդրոյ առարկայ ժամանակագրութիւնը՝ օգտագործելով նաեւ իր իսկ թարգմանած Սոկրատը: Ըստ ուսումնասիրողների թէկուզ եւ հապէս չափազանցուած կարծիքի՝ Փիլոնը «սահմանափակ մէկն էր», այնքանով որքանով Սոկրատի եկեղեցական պատմութեան նրա «թարգմանութիւնը ունի մեծ թերութիւններ» (Մեսրոպ Տէր-Մովսիսեան): Ընդամին ժամանակագրութեան մէջ առկայ՝ յունարէնից թարգմանութեան սխալները բնոյթով նման են Սոկրատի թարգմանութեան մէջ թոյլ տրուած սխալներին:

Է դարի այս բնագրի (հրատարակիչների կողմից ժամանակագրութիւն կոչուած) հիմնական մասերը յունարէնից կատարուած թարգմանութիւններ են. փոքր մասը միայն կարելի է համարել հայ հեղինակի ինքնուրոյն աշխատանքի արգասիք: Եւ այդ ամբողջ աշխատութեան ամենահաւանական բանաբաղ-թարգմանիչն ու ինքնուրոյն էջերի հեղինակը Անանիա Շիրակացու կրտսեր ժամանակակից Փիլոն Տիրակացին է:

Հրաչ Բարթիկեան

\* \* \*

Մատենագիրք Հայոցի համար Փիլոն Տիրակացու ժամանակագրութեան քննական բնագիրը կազմուած է հայագիտութեանն այսօր յայտնի բոլոր վեց ամբողջական եւ հատուածային ձեռագրական ընդօրինակութիւնների անմիջական կամ միջնորդաւորուած օգտագործումով (ՄՄ թիւ 2679, 5254, Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի թիւ 739, 1091, 222, 1245): Հնագոյն եւ համեմատաբար ամենամբողջական ընդօրինակութեան (պահպանուած հայերէն հնագոյն թղթեայ գրչագրում. ՄՄ թիւ 2679, միասին վաղ բոլորգիր, 981 թ., գրիչ՝ Դաւիթ քահանայ) հիման վրայ կատարուել են երկի նախորդ հրատարակութիւնները (Վենետիկ, 1904 եւ Երեւան, 1944):

Առաջին հրատարակութեան աշխատասիրող Հ. Բարսեղ Սարգիսեանը ծաւալուն պատմաբանասիրական ու աղբիւրագիտական հետազոտութիւնից յետոյ պայմանականօրէն անուանել է երկը Անանու ժամանակագրութիւն, իր համար հիմք ծառայած՝ 1836 թ. Կարինում հնագոյն գրչագրից Հ. Եփրեմ վրդ. Սեթեանի արտագրած բնագրին (Մխիթարեան մատենադարանի թիւ 739, ԺԹ ձառնարկ) աւելացրել Վենետիկեան եւս երեք ձեռագրերի հատուածային ընդօրինակութիւնների ընթերցումների համեմատութիւնը եւ փորձել հասկանալ չորս բնագրերի ճիւղագրութիւնը: Երեւանեան հրատարակիչ պրոֆ. Աշ. Աբրահամեանը, ցաւօք, աններելիօրէն անտեսել է Հ. Բարսեղ Սարգիսեանի տքնաջան (եւ յաջողուած) աշխատանքը եւ խնդիր դարձրել Անանիա Շիրակացու անուան տակ թղթեայ հնագոյն մատենանի բնագրի պարզ արտատպութիւնը (իր յօրինած Պատմութիւն Անանիայի Շիրակայնուոյ Համարողի վերնագրով): Ընդ որում, ներածականում պնդելով, թէ չի «օգտագործել վենետիկցիների հրատարակութիւնը եւ մեր ունեցած երկրորդ ձեռագիրը, որովհետեւ նրանց տարբերութիւնը բնագրից կատարուած շեղումներ են միայն», նա երկու պնդման մէջ էլ հեռու է ճշմարտութիւնից: Իրականում վենետիկեան հրատարակութիւն թափանցած գրէթէ բոլոր պահասները (Հ. Ե. Սեթեանի վրիպումների արդիւնքում) առկայ են նաեւ Աշ. Աբրահամեանի մատուցած բնագրում, ինչից բացայայտ է դառնում, որ վերջինս հնագոյն գրչագիրը ընդամէնը տեղ-տեղ համեմատել է (եւ չափազանց անփոյթ ձեւով) հէնց վենետիկեան տպագրի հետ: Իսկ ՄՄ թիւ 5254 ձեռագրի (ժողովածոյ, միասին բոլորգիր, թ. 190ա-202բ, 1280 թ., տեղ՝ Մահկանաբերդի Դեղձուտի վանք, գրիչ՝ Գիորգ քահանայ) բնագիրը՝ Խօսք Փիլոնի վերնագրով (եթէ նրա մասին է Աշ.

Աբրահամեանի պնդումը), իրականում հանգում է հեղինակային բնօրինակին հնագոյն գրչագրի ընդօրինակութիւնից լրիւ անկախ ձեւով եւ չնայած իր ծաւալուն բացթողումներին հապէս օգնում լրացնելու վերջինիս պակասները:

Վենետիկեան երեք հին գրչագրերի մասին Հ. Բարսեղ Սարգիսեանը յայտնում է.

«Աստուծոյ մին (թիւ 1091) է Ձ. ոսկեփորիկը, նօտրադիր հին եւ փոքրիկ, որը, բաց ի շատ մը հեղինակաւոր եւ ամբողջական գրուածներէ, կը պարունակէ եւ հետեւեալները. Ա. Ծնունդի յԱդամայ եւ թիւ 609իմ (մինչեւ ցԿոստանդին Պոզոնագոս կայսր [ճիշտը՝ Կոստանդ Բ - Ա. Յ.]), Բ. Թագաւորի Հայոց ի նոյէ (մինչեւ ցԱրտաշիր, վերջին թագաւոր Արշակունի), Գ. Հոռոմից թագաւորի (այսինքն՝ կայսերք Հռովմայեցւոց՝ մինչեւ ցՓոկաս), Դ. Դարագլուխի կամ չափմունի ժամանակաց (սկսեալ յԱդամայ մինչեւ ցՍ. Սահակ եւ ցերկրորդ Յագկերտ): ... Իսկ երրորդ պակասաւոր օրինակն է մեր թիւ 222 գրչագիրը (Է. Ճառնտիրն), բոլորգիր: Գրչին Ստեփաննոսի յիշատակարանը՝ տարբեր գրով, գրուած է Հայոց ՊԾԱ. թուականին (=1402): Այս գրչագիրս կը ներկայացնէ մեզ 306-324 էջերում ... ժամանակագրութեան վերջին մասը, այսինքն է՝ Մեծն Կոստանդինոսէն սկսեալ մինչեւ Կոստանդին Գ.ի որդւոյն՝ Յուստիանոսի երկրորդ տարին ու Խագրաց տիրապետութիւնը՝ Աղուանից, Հայոց ու Վրաց: ... Գրուածիս տպագրութիւնը յառաջացած ժամանակ՝ գտանք, վանացն Մատենադարանին մէջ, ուրիշ օրինակ մ'եւս, այն է՝ թիւ 1245 (ԻԲ. ոսկեփորիկը), գրուած ի թու. ԻԾԳ, որ կը պարունակէ ամբողջապէս կայսերաց պատմութիւնը. այսինքն է՝ Գայոս Յուլիոսէն սկսեալ՝ մինչեւ Խագրաց տիրապետութիւնը Հայոց վրայ, յամին ձԼԴ, հետեւեալ վերնագրի ներքեւ՝ Կայսերի Հոռոմայեցւոց, եւ գործի ցոցա»:

Խորամուկ լինելով գրչագրերի ճիշտագրութեան մէջ՝ Հ. Բարսեղ Սարգիսեանը արդարացիօրէն եզրակացրել է, որ թիւ 7 Ճառնտիր (ԷՃ) եւ թիւ 22 ոսկեփորիկի (ԻԲՈ) բնագրերը հեղինակային մայր բնօրինակին հանգում են 981 թ. ընդօրինակութիւնից անկախ ձեւով: Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ այդպէս են նաեւ ՄՄ թիւ 5254 գրչագրի (նշանակել ենք՝ Փ) եւ Վենետիկի թիւ 6 ոսկեփորիկի (ՁՈ) բնագրերը, ինչքան էլ որ վերջինիս շարադրանքը նկատելիօրէն խմբագրուած է: Այդ համոզմամբ՝ սոյն քննական բնագրերը կազմելիս նշուած չորս գրչագրերի ընթերցումները՝ հեղինակային բնօրինակից ծագած լինելու հնարաւորութիւնները հնագոյն գրչագրի հետ հաւասար են դիտարկուել:

Բնագրում չենք համեմատել, այլ ամբողջութեամբ տողատակում ենք ցոյց տուել միայն ՁՈ գրչագրի՝ Հայոց թագաւորների (նոյից եւ Հայկ նահապետից սկստող) ցանկը, որը թերեւս ոսկեփորիկեան անյայտ խմբագրի կողմից ստեղծուել է Փիլոն Տիրակացու մօտ առկայ Հայոց Արշակունիների ցանկի (պահպանուած միայն Փ գրչագրում եւ առաւել զուգորդուող՝ Սեբէոսի Անանունի տարբերակին) ազդեցութեամբ, սակայն՝ այդ ցանկի փոխարէն պարզապէս Մովսէս Խորենացու տեղեկութիւններից մի ուրիշ ցուցակ կազմելու արդիւնքում: Բացի այդ, չձանրաբեռնելու նկատառումով խոստովել ենք Փ եւ ԷՃ գրչագրերի այն ընթերցումների մեծ մասի նշումից (բացի յատուկ դէպքերից), որոնք հիմնականից տարբերում են միայն է-ի փոխարէն ե (եւ հակառակը), աւ-ի փոխարէն օ եւ ձայնաւորից յետոյ յ կիսաձայնի ոչ դասական օգտագործման պատճառով: Նշենք, որ կատարեալ չէ նաեւ ԻԲՈ գրչագրի համեմատութիւնը, որի ընթերցումները, ցաւօք, սխտեմատիկ տրուած չեն հէնց Հ. Բարսեղ Սարգիսեանի կողմից:

Այնուամենայնիւ, յատուկ չպարզաբանուող դէպքերում պահպանուել են հնագոյն գրչագրի՝ իբրեւ առաւել ամբողջական մեզ հասած եւ նախորդ հրատարակութիւններով քաղաքացիութիւն ստացած տարբերակի, ընթերցումները: Բնագիրն ուշադիր համեմա-

տուել է նորոգ հանգուցեալ Արտաշէս Մաթեոսեանի կողմից խնամքով հրատարակուած՝ հնագոյն թղթեայ մատեանի նմանատպութեան ու վերծանութեան հետ՝ ամենադժուարընթեանելի կտորներն ստուգելով բուն ձեռագրում: Նախորդ հրատարակիչները հնագոյն ձեռագրի գրչի բաց թողած տառերն աւելացրել են կլոր փակագծերում՝ (-), ակնյայտ սխալագիր տառերը նշել շեղատառ, ինչպէս նաեւ՝ աւելորդ որոշ տառեր վերցրել քառակուսի փակագծերի մէջ՝ [-]: Միւս չորս ինքնուրոյն գրչագրերում համապատասխան հատուածների բացակայութեան կամ անօգտակարութեան դեպքում պահպանելով դրանք՝ մենք աւելացրել ենք փակագծերի ու շեղատառերի քանակը եւ բազմաթիւ դէպքերում քառակուսի փակագծերի մէջ վերցրել ակնյայտօրէն գրիչների նախաձեռնութեամբ հնագոյն գրչագրում «լրացուած» կամ տեղաշարժուած բնագրային կտորները: Բացի այդ անխուսափելի դէպքերում տողատակում կատարել ենք բնագրագիտական ճշգրտումներ՝ միաժամանակ հնարաւորինս ձեռնպահ մնալով աղբիւրագիտական անդրադարձերից:

Ժամանակագրութեան բնագիրը պայմանականօրէն բաժանել ենք երեք մասի ([Ա], [Բ], [Գ]՝ նախադասութիւնների առանձին համարակալումներով), որոնցում ներկայացուած են. առաջինում՝ առաւելապէս Գ դարի ժամանակագիր Հիպոդիտոսի *Liber generationis*-ին հանգող ենթադրաբար Ե դարի առաջին կէսում ստեղծուած մի յունարէն երկի (ըստ Հ. Բարսեղ Սարգիսեանի՝ Անդրէաս անունով հեղինակի) թարգմանութիւնը, երկրորդում՝ ինքնուրոյն կամ Ե-է դդ. ինչ-ինչ երկերի թարգմանուած հատուածներ, երրորդում՝ հռոմէա-բիւզանդական կայսրերի մասին մի ինքնատիպ շարադրանք՝ եկեղեցական պատմութեան բաւականին ընդարձակ անդրադարձերով:

Պահպանել ենք Վենետիկի հրատարակութեան մէջ օգտագործուած թիւ 7 ճառընտրի եւ թիւ 6, 22 ոսկեփորիկների տառանիչերը՝ ԷՃ, ԶՈ, ԻԲՈ, ՄՄ թիւ 5254 գրչագրի ընթերցումները նշել ենք Փ, իսկ հնագոյն գրչագրինը՝ Ա տառանիչերով: Երեւանեան հրատարակութեան բնագիրը նշուած է Ա.Ա., իսկ վենետիկեանը՝ Բ.Ս. տառանիչերով:

Ալեքսան Զակոբեան

### ՍՍՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւիթ ֆահանայի. Հայերէն թղթեայ հնագոյն ձեռագիր. 981 թ., նմանատպութիւն, վերծանութիւն, ուսումնասիրութիւն, ծանօթագրութիւններ՝ աշխատասիրութեամբ Արտաշէս Մաթեոսեանի, Երեւան, 1997
2. Բ. Սարգիսեան, Անանուն ժամանակագրութիւն, իմբագիր յօրինեալ յէ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վենետիկ-Ս. Ղազար, 1904
3. Հ. Բարթիկեան, Անանիա Շիրակացուն վերագրուող «ժամանակագրութեան» եւ նրա բանաբանի հարցի շուրջը, ԲՄ, թիւ 8, 1967, էջ 57-77
4. Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանակակալն երկմասնեայ ..., Կ. Ա.-Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1818
4. Ա. Արքահամեան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944
5. Պատմութիւն Սերէնոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Արքարեանի, Երեւան, 1979
6. G. Khalatiantz. Über die armenische Version der Weltchronik des Hippolitus.- Wiener Zeitschrift für die Kunden des Morgenlandes, Bd. XVII, 1903, S. 182-186 (հայերէն թարգմանութիւնը տե՛ս ՀԱ., 1904, փետրուար, էջ 46-48



## [ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ]

### ԽԱՄՔ ՓԻԼՈՆԻ<sup>1</sup>

[Ա]

1 Մովսէսի Խորեմացոյ եւ Անդրեասի<sup>2</sup>. Ադամ նախաստեղծ. սա<sup>3</sup> կեցեալ ամս ՄԼ՝ ծնանի զՍէթ<sup>4</sup>: 2 Եւ եկեաց ամս Ձ, մինչեւ ի ճԼԵ ամն Մաղաղայեղի<sup>5</sup>: 3 Սէթ կեցեալ ամս ՄԵ՝ ծնանի զԵնոփս. <sup>6</sup>Եւ եկեաց ամս ՁԷ<sup>7</sup>, մինչեւ ի Ի ամն Ենոփքայ:

4 Սորա երկուքն յարձանագրութեանցն՝ ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսեպոս, թնայտ եւ ուրն անյայտ է, Ենոփս, որ առաջին յուսացաւ կոչել զԱստուած: 5 Եւ ընդէ՞ր արդեւք այս, եւ կամ վասն որո՞յ պատճառանաց նախն է սա ասացեալ կոչելոյն զԱստուած, կամ ո՞րպէս կոչելն իմանի: 6 Քանզի Ադամ ճշմարտութեամբ աստուածաստեղծն. եւ սա ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր. այդ եւ յանցուցեալ եւ ի թաքստեան եղեալ, զՄԸր եսն յԱստուծոյ՝ եւ ոչ յայդ ումեքէ՞ հարցանի: 7 Սապէս եւ զվճիռ վարկին ի նմին բերանոյ լսէ. իսկ յետոյ եւ Աբէղ մերձաւոր եւ ծանաւթ Աստուծոյ լիալ՝ պատարագս մատուցանէ, եւ ընկալեալ լինի: 8 Արդ՝ սոցա այսպէս ընդելութեան եւ ծանաւթութեան Աստուծոյ լինել՝ էր աղազաւ առաջին սա ասի կոչել զԱստուած, եւ այս յուսով:

9 Այդ զայլսն վասն սորա ի տեսութեանց՝ ի հրաւիրեալսն մեր յո(ւ)ղարկես-

ցուք տեղի. իսկ որ առձեռն պատրաստն է, ասացուք: 10 Քանզի ի պատուիրանագանցութեան գտեալ առաջինն ի մարդկանէ՝ ի դրախտէն եւ յԱստուծոյ՝ չարութեանն աղազաւ, որպէս ասացեալ է, գտանի արտասահմանեալ: 11 Զկնի եւ ընդանէգոյնն Աստուծոյ յորդուցն Ադամայ ի հարազատէն իւրմէ սպանանի յեղբարէ: 12 Յետ որոյ ո՛չ բանի ինչ աստուածայնոյ, եւ ո՛չ յայտնութեան ինչ իրիք եղելոյ՝ ի տարակուսանս եւ յանյուսութեան ազգ մարդկան համարեալ լինի. այդ եւ ինքնահաճոյ արդարեւ գործս: 13 Յորոց միջի սա քաջայոյս եղեալ՝ ուղղութեամբ հանդերձ կոչէ զԱստուած:

14 Իսկ կոչելդ կրկնակի իմանի. կամ անուանել որպէս զմոռացեալ, կամ՝ յաւգնականութիւն կարդալ: 15 Արդ՝ անուանել որպէս (զ)մոռացեալ՝ ոչ է ի դէպ. զի ոչ բազմութիւն ամաց ընդ մէջ, որ ի մոռացումն նոցա զԱստուածդ անուանն, եւ կամ զնոյն ինքն որոյ անուանն. եւ ոչ դարձեալ մահու եւ թաղման դեռեւս յԱստուծոյ ստեղծեալն հասեալ էր: 16 Ապա ուրեմն՝ յաւգնականութիւն կոչէ սա զԱստուած:

17 Սա կեցեալ<sup>8</sup> ամս ՃՂ<sup>9</sup>, ծնանի<sup>10</sup> զԿայինան: 18 Եւ եկեաց ամս ՁԺԵ, մինչեւ ի ԺԳ ամն Մաթուսաղայի<sup>11</sup>: 19 Կայինան կեցեալ<sup>12</sup> ամ ՃՀ<sup>13</sup>, ծնանի<sup>14</sup> զՄաղա-

1 Ա. ԶՈ չիք Խաւսփ Փիլոնի (Փ)

2 Փ չիք Մովսէսի ... Անդրեասի / ԶՈ Ծնունդի յԱդամայ եւ թիւֆ Լոցին [իբրեւ վերնագիր] փիս Մովսէսի ... Անդրեասի (Ա.)

3 Փ Նախաստեղծն Ադամ փիս Ադամ ... սա

4 ԶՈ Ադամ եկաց ՄԼ, ամ եւ ծնաւ զՍէթ

5 Փ չիք եւ եկեաց ... Մաղաղայեղի

6 Փ չիք եւ եկեաց ... սա զԱստուած (նախ. 16)

7 ԶՈ Սէթ՝ ամս ՄԵ. միաւրեայ եւ լինի ՆԼԵ

8 Փ Ենոփս եկաց փիս սա կեցեալ

9 ԶՈ Ենոփս ՃՂ. ՈՒԵ

10 Փ ծնաւ

11 Փ չիք եւ եկեաց ... Մաթուսաղայի

12 Փ եկաց

13 Փ ամս ԿԵ փիս ամ ՃՀ / ԶՈ Կայինայն՝ ՃՀ. ԶՂԵ

14 Փ ծնաւ

դայէլ<sup>1</sup>. եւ եկեաց ամս ՉԽ, մինչեւ ՉԱ ամս  
 Ղամեքայ<sup>2</sup>: 20 Մաղաղայէլ<sup>3</sup> կեցեալ<sup>4</sup> ամս  
 ձԿԵ, ծնանի<sup>5</sup> գՅարեդ. եւ եկեաց ամս ՉԼ,  
 մինչեւ ի ԽԸ ամս Նոյի<sup>6</sup>: 21 Յարեդ կե-  
 ցեալ<sup>7</sup> ամս ձԿԲ<sup>8</sup>, ծնանի<sup>9</sup> գԵնովք. եւ ե-  
 կեաց ամս Պ, մինչեւ ի ՄՁ ամս Նոյի<sup>10</sup>:

22 Ենովք կեցեալ<sup>11</sup> ամս ձԿԵ, ծնանի<sup>12</sup>  
 գՄաթուսաղայ: 23 Եւ եկեաց ամս Մ մին-  
 չեւ ԼԳ ամս Ղամեքայ: 24 Եւ հաճոյ ե-  
 դեալ Աստուծոյ՝ փոխի: 25 Սա յետ ծնանե-  
 լոյ գՄաթուսաղայ ամաց Մ՝ արժանի եւ  
 հաճոյ վարս ստացեալ, որպէս գիտէ որ  
 հաճեցաւն, փոխեալ ասի ի միջոյ ամպարչ-  
 տաց, զորոյ զպատճառսն յետոյ Հատուս-  
 ցուք<sup>13</sup>: 26 Եւ ի Խ ամին Յարեդի  
 կատարեցաւ Ռ ամ ի նախնի մարդոյն  
 յանցանաց՝ Ա դարն<sup>14</sup>:

27 Մաթուսաղայ կեցեալ<sup>15</sup> ամս ձԿՁ<sup>16</sup>,  
 ծնանի<sup>17</sup> գՂամեք. եւ եկեաց ամս ՊԲ, մին-  
 չեւ Ո ամս Նոյի. եւ անդէն իսկ առ ջրհե-  
 դեղաւն վախճանեցաւ<sup>18</sup>: 28 Ղամեք կեալ<sup>19</sup>

ամս ձՁԸ<sup>20</sup>, ծնաւ որդի եւ անուանեաց զա-  
 նուն նորայ Նոյ<sup>21</sup>: 29 <sup>22</sup>Եւ եկեաց ամս  
 ՇԼԵ<sup>23</sup>, մինչեւ ի ՇՂԵ ամս Նոյի. եւ մեռաւ  
 չորիւք ամաւք յառաջ քան զՄաթուսաղա  
 Հայր իւր:

30 Վասն Նոյի. եւ ընդէ՞ր արդեւք  
 զսա միայն որդւոյդ անուամբ յորջորջեաց,  
 իսկ վասն այդոցն ամենեցուն պարզաբար  
 ասաց, թե՛ ծնան, զորմէ ընդդէմ իմն մար-  
 գարէանայ Հայրն: 31 Սա, ասէ, Հանգուս-  
 ցէ զմեզ ի գործոց եւ ի տրտմութենէ ձե-  
 ոաց եւ յերկրէ, զոր անէ՞ծ Տէր Աստուած.  
 որ եղեւ ո՛չ Հանգիստ, այդ ջնջումն՝ որ  
 ինչ միանգամ ի վերայ երկրի: 32 Ինձ  
 թուի, Հանգուցանելն՝ դադարեցուցանել.  
 իսկ դադարեցուցանելն՝ զամպարչտու-  
 թիւնս եւ զչարիս՝ սատակմամբ մարդկան  
 երկրագործաց դարուն երկրորդի:  
 33 Քանզի գեղեցկաբար ասաց, թե՛ ի գոր-  
 ծոց մերոց, որ է՝ յանաւրէնութեանց, եւ ի  
 տրտմութենէ ձեռաց, որովք կատարեմք  
 զպղծութիւնս: 34 Բայց արդարեւ Հանգ-  
 չին ըստ այսմ մարգարեութեան ոչ ամենե-  
 քեան, այդ կատարեալքն յառաքինութեան  
 ոգիք. յորժամ չարիք՝ իբրեւ Հեղեղաւ  
 ջնջեալք մաքրին, իբր առ Նոյիւ մոլեալքն  
 ի չարիս: 35 Իսկ որդւոյդ անուամբ՝ մեծա-  
 րեաց զնա Գիր, իբրեւ գյայտնի եւ զնշա-  
 նաւոր, եւ զարժանի ժառանգ Հայրենակա-  
 նացն ժառանգութեան:

36 Անդր[ը]էասի. Նոյ եղեալ ամաց<sup>24</sup>  
 Շ<sup>25</sup> ծնաւ<sup>26</sup> երիս որդիս<sup>27</sup> զՍէմ, գԳամ, եւ  
 զՅաբեթ<sup>28</sup>. եւ յետ ձ՝ ամի ծննդեանն<sup>29</sup>

1 Փ Մաղաղիել  
 2 Փ չիբ եւ եկեաց ... Ղամեքայ  
 3 Փ Մաղաղիել  
 4 Փ եկաց  
 5 Փ ծնաւ  
 6 Փ չիբ եւ եկեաց ... Նոյի / ՁՈ Մաղաղիել՝ ձԿԵ. ՁԿ  
 7 Փ եկաց  
 8 Փ ձԷ փիս ձԿԲ / ՁՈ Յարեդ՝ ձԿԲ. ՌձԻԲ  
 9 Փ եւ ծնաւ  
 10 Փ չիբ եւ եկեաց ... Նոյի  
 11 Փ եկաց  
 12 Փ ծնաւ / ՁՈ Ենովք՝ ձԿԵ. ՌՄՂԵ  
 13 Փ եկաց յետ ծնանելոյն զՄաթուսաղա ամ Մ. եւ  
 ծնաւ ուստերս եւ դստերս: Եւ եղեմ Մ՝ ամբ կե-  
 նացն Ենովքա՝ ՅԿԵ ըստ շրջանակի աւուրց տա-  
 րո միոյ: Եւ յանոյ եղեալ Աստուծոյ կենդանոյն՝  
 փոխեցաւ ի կարգս հրեշտակաց: փիս եւ եկեաց  
 ամս Մ ... հատուցուի (7 տող)  
 14 Ա չիբ եւ ի Խ ամին Յարեդի ... Ա դարն (2 տող)  
 15 Փ եկաց  
 16 Ա ձԿԷ փիս ձՁԷ (Փ) / ՁՈ Մաթուսաղայ՝ ձԿԵ.  
 ՌՆԾԲ  
 17 Փ եւ ծնաւ  
 18 Փ չիբ եւ եկեաց ... վախճանեցաւ  
 19 Փ եկաց

20 Փ ձԽԸ փիս ձՁԸ / ՁՈ Ղամեք՝ ձ(Ձ)Բ. ՌՈԼԴ  
 21 Փ եւ ծնաւ գՆոյ փիս ծնաւ որդի ... Նոյ  
 22 Փ չիբ եւ եկեաց ... ժառանգութեան: Անդրրէասի  
 (նախ. 36)  
 23 Թերեւս թուարանորէն ուղղելի է ՁՁԵ  
 24 Փ եկաց ամս փիս եղեալ ամաց  
 25 ՁՈ Նոյ՝ Շ. ՍձԼԴ  
 26 Փ եւ ծնաւ  
 27 Փ որդի  
 28 Ա Յափեթ փիս Յաբեթ (Փ)  
 29 Փ ամին փիս ամի ծննդեանն

Սեմայ՝ եկն ջրհեղեղն յամի վեց հարիւր(ե-  
ր)որդի կենացն Նոյի, եւ կալաւ զերկիր ամ  
մի<sup>1</sup>: 37 Եւ ՅԾԸ ամին Նո(յ)ի կատարեցաւ  
Ս ամ ի նախնի մարդոյն յանցանաց՝ Բ  
դարն<sup>2</sup>: 38 Եւ առնին<sup>3</sup> յԱդամայ մինչեւ ի  
ջրհեղեղն<sup>4</sup> ազգք<sup>5</sup> ժ, ամք ՍՄԽԲ<sup>6</sup>: 39 Եւ  
եկեաց Նոյ յետ ջրհեղեղին ամս ՅԾ,  
մինչեւ Չ ամն եբերա(յ)<sup>7</sup>:

40 Եւ այս են ծնունդք Սէմայ<sup>8</sup>:  
41 Սէմ էր ամաց<sup>9</sup> ճԲ<sup>10</sup>, ծնաւ<sup>11</sup> զԱրփաք-  
սադ յերկրորդում ամին<sup>12</sup> յետ ջրհեղեղին.  
Եւ եկեաց ամս Շ, մինչեւ ի Ճ Եւ ի Ա ամն  
Փաղեգայ<sup>13</sup>: 42 Արփաքսադ եղեալ ամաց  
ՃԼԵ<sup>14</sup> ծնանի զԿայինան. եւ եկեաց Կայի-  
նան ամս ՅԼ<sup>15</sup>, մինչեւ Սաղա(յ)<sup>16</sup>: 43 Եւ  
եկաց Սաղայ ամս<sup>17</sup> ՃԼ<sup>18</sup> ծնաւ զԵբեր. եւ  
եկեաց ամս ՆԶ, մինչեւ յեւթներորդ ամն  
Սերուքայ<sup>19</sup>: 44 Եբեր եղեալ ամաց ՃԼ Դ<sup>20</sup>

ծնաւ զՓաղեգ<sup>21</sup>. Եւ եկեաց առ նովաւ ամս  
ՆԼ Գ, մինչեւ ԼԸ ամն Նաքովրայ<sup>22</sup>: 45 Առ  
սովաւ ասի լինել բաժանումն լեզուացն,  
վասն զի եւ Փաղեկ՝ ըստ եբրայեցւոց բար-  
բառոյն՝ բաժանումն կոչի<sup>23</sup>: 46 Եւ առնին  
ի<sup>24</sup> ջրհեղեղէն մինչեւ ցՓաղեկ ազգք<sup>25</sup> Ե,  
ամք ՇԻԵ: 47 Եւ յԱդամայ՝ ազգք<sup>26</sup> ժԵ,  
ամք՝ ՍԶԿէ<sup>27</sup>:

48 Բաժինք երկրի յերից որդւոցն Նո-  
յի յետ ջրհեղեղին՝ Սէմայ, Քամայ, եւ  
Յափեթի, եւ բաժինք ազգաց նոցա:

49 Եւ առնին սահմանք նոցա. Սէմայ՝  
անդրանկանն Նոյի՝ ի Պարսից եւ ի Բակտ-  
րիոնէ մինչեւ ի Հնդկիս. եւ ձգին մինչեւ  
յՌինիկոր(ուր)ոն: 50 Եւ Քամայ՝ երկրորդի  
որդւոյն՝ յՌինիկորուրայ մինչեւ ի Գաղի-  
րովն, կողմն հարաւոյ: 51 Եւ Յափեթի՝ եր-  
րորդի որդւոյն՝ ի Մարաց մինչեւ ի Գաղի-  
րովն, կողմն հիւսիսային: 52 Եւ է Յափե-  
թի՝ գետն Դկղաթ, որ մեկնէ ընդ Մարս եւ  
ընդ Բաբելոն, եւ Սէմայ՝ գետն Արածա-  
նի, եւ Քամայ՝ գետն Գեհոն, որ կոչի Նի-

1 Փ ջրհեղեղն ի վերայ երկրի փխ ջրհեղեղն յամի ...  
ամ մի (2 տող)  
2 Ա չիք եւ ՅԾԸ ամին Նոյի ... Բ դարն (մեկ նախ.)  
3 Փ լինի փխ առնին  
4 Փ ցնո փխ ի ջրհեղեղն  
5 Փ ազգ  
6 Ա ՍԽԲ փխ ՍՄԽԲ (Փ ԼՁՈ)  
7 Փ չիք եւ եկեաց Նոյ ... Եբերայ Լրացի այդ, այս-  
տեղից Փ-ի գրիչը շեղուել է նիւթերի հեղինա-  
կային հերթականութիւնից եւ թոյնք կատարել  
մինչեւ նախ. 57-ի բնագիրը: Սակայն Սէմի ազ-  
գերի բնակութեան հատուածից յետոյ (նախ.  
100) նա վերադառնում է Նոյի որդիներին, որը  
ծանոթագրում ենք ստորեւ՝ նախ. 39-47]  
8 Փ չիք եւ եկեաց Նոյ ... Սէմայ  
9 Փ եւ եկաց Սէմ ամս փխ Սէմ էր ամաց  
10 ՁՈ Սեմ՝ Ճ. ՍՄԼԴ  
11 Փ եւ ծնաւ  
12 Փ յերկրորդ ամի փխ յերկրորդում ամին  
13 Փ չիք եւ եկեաց ... Փաղեգայ  
14 Փ եւ եկաց Արփաքսադ ամս ՃԼ փխ Արփաքսադ  
եղեալ ամաց ՃԼԵ / ՁՈ Արփաքսադ՝ ՃԼԵ. ՍՅՃԱ.  
15 ՁՈ Կայինայն՝ ՃԼ. ՍՇԱ.  
16 Փ եւ ծնաւ զՍաղայ փխ ծնանի զԿայինան ...  
Սաղայ  
17 Ա եղեալ ամաց փխ եւ եկաց Սաղայ ամս (Փ)  
18 Փ ՃԼԴ եւ փխ ՃԼ / ՁՈ Սաղա՝ ՃԼ. ՍՈԼԱ.  
19 Փ չիք եւ եկեաց ... Սերուքայ  
20 Փ եւ եկաց Եբեր ամս ՃԼԵ եւ փխ Եբեր ... ՃԼԴ /  
ՁՈ Եբեր՝ ՃԼԴ. ՍՁԿԵ Բ.Ս. ՈՁԿԵ՝ թերեւս տպա-

գրական վրիպակ. բայց գումարման թուարա-  
նական սխալը հաւանաբար ՁՈ խմբագրինն է]  
21 Փ զՓաղեկ / ՁՈ Փաղեկ՝ ՃԼ. ՍՊՂ Բ.Ս. ՍՈՂԼ]  
22 Փ չիք եւ եկեաց ... Նափովրայ  
23 Փ Սա ոչ միաբանեցաւ ընդ խորհուրդս աշտա-  
րակին եւ զբնական զլեզու իւր առողջ պահե-  
ցաւ, որ ի դրախտին ունէին. եբեր, եւ ի նմանէ՝  
Եբրաեցի փխ Առ սովաւ ... բաժանումն կոչի (3  
տող) [այստեղ Փ-ն ունի նաեւ հեղինակային  
բնօրինակի հետ ակնյայտօրէն կայ չունեցող  
հետեւեալ բնագիրը. որպէս եւ վկայեալ սուրբ  
Գրիգոր՝ որդի Պարթեւի, յաւուրս Փաղեկա եղեւ  
աշտարակագործութիւնն, ի տանէ Սէմա եւ ի  
տանէ Քամա՝ որդո Նեբրոտա, որդո Քուշեա: Եւ  
Յափեթի տանէն Հայկա որդի Թորգոմա, ուստի  
Հայք որդի Թորգոմա եղեն: Ուստի Թուրքաս-  
տան:]  
24 Փ լինի փխ առնին ի  
25 Փ յաշտարակն ազգ փխ ցՓաղեկ ազգք  
26 Փ ազգ  
27 Փ ՍԶԿԵ [Սյստեղից Փ-ն նորից թոյնք է կատա-  
րելում եւ վերադառնում Ա-ի նիւթերի հերթա-  
կանութեանը, ուստի մնացեալը ցոյց ենք տալիս  
իր տեղում՝ նախ. 106-ի հատուածում: Ըստ  
այդմ՝ Փ-ում նաեւ բացակայում է յաջորդ պար-  
բերութիւնը՝ Բաժինք ... բաւականի (նախ. 48-56)]

դոս: 53 Եւ որ խառնակեցան լեզուքն յետ ջրհեղեղին՝ եին ՀԲ: 54 Եւ որ զաշտարակն շինեին՝ այն ազգք եին, որ լեզուաւքն ընդ ամենայն երկիր սփռեցան: 55 Եւ Ներքովդ սկայ՝ որդի Քուշայ եթրովպացի՝ որսայր նոցա երէ առ ի կերակուր բաւականի:

56 Եւ այս անուանմ եմ ՀԲ ազգացն

57 Որդիք Յաբեթի՝<sup>1</sup> երրորդի որդւոյն Նոյի<sup>2</sup>. Գոմեր<sup>3</sup>, եւ ի նմանէ՝ Գամիրք. Մագովգ<sup>4</sup>, եւ ի նմանէ՝ Կեղտք եւ Գաղատացիք. եւ Մադայ<sup>5</sup>, եւ ի նմանէ՝ Մարք. Յաւան, եւ ի նմանէ՝ Յոյնք եւ Հեղդէնք<sup>6</sup>. Թոբէլ, եւ ի նմանէ՝ Թետաղք<sup>7</sup>. Մոսոք, եւ ի նմանէ՝ Ղիւրիկացիք<sup>8</sup>. Թիրաս, եւ ի նմանէ՝ Թրակացիք. Քիտիւմ<sup>9</sup>, եւ ի նմանէ՝ Մակեդովնացիք: 58 Եւ որդիք Գամերայ<sup>10</sup>. Ասքանաս, եւ ի նմանէ՝ Սարմատք. եւ Բիփաթ<sup>11</sup>, եւ ի նմանէ՝ Սաւրոմատք<sup>12</sup>. Եւ Թորգոմ, եւ ի նմանէ՝ Հայք: 59 Եւ որդիք Յաւանայ. Եղիսա<sup>13</sup>, եւ ի նմանէ՝ Սիկեղացիք<sup>14</sup> եւ Աթենացիք. Թարշիշ<sup>15</sup>, եւ ի նմանէ՝ Վիրք եւ Տիւրենացիք. Կիտիս, ուստի Հոռոմք եւ Ղատէնացիք եւ Ռոդացիք<sup>16</sup>: 60 Ընդ ամենայն՝ ազգք<sup>17</sup> ժե:

61 <sup>18</sup>Եւ ի սոցանէ ելին մեկնեցան կղզիք հեթանոսաց, որ են Կիւպրացիք՝ ի

Կիտիացւոց, որդիք Յափեթի: 62 Բայց դարձեալ գտանեմք եւ յայնոցիկ, որ են ի կողմանս հիւսիսոյ, որ ազգակից են Կիտիացւոցն: 63 Եւ ազգքն, որ են ի Հեղաս աշխարհի, յայնցանէ են, որք յետոյն փոխեցան անդր, որպէս Սաէտացիքն, որ բնակեցան յԱթէնս քաղաքի ի պատուականացն Յունաց, եւ Թիբեացիք: 64 Սիդովնացիք ելին եւ պանդխտեցան, որ են ի Կարեմայ որդւոյ Ագէնովրայ. եւ Կարքեդովնացիք, որ են եկք ի Տիւրոսէ: 65 Եւ եթն այլք եւս իցեն, որ սոյնպէս յետոյ փոխեցան եւ յեղադաս, բայց ուսանիմք զճշմարտութիւն սոցա յաւրինաց եւ ի մարգարեից:

66 Արդ՝ ելին ի Յափեթէ ի խառնակել լեզուացն ազգք ժե: 67 Եւ ունին ազգքս այսոքիկ, որ ելին ի Յափեթէ, ի Մարաց մինչեւ ի Սպերիոն, որ ձգին մինչեւ ի յովկիանոս եւ հային ընդ հիւսիսի. Մարք, Աղուանք, Լիփինք, Աղանք, Ամագոնք, ձիղբք, Մասքութք, Հայք, Վիրք, Եգերացիք, Խաղտիք, Գամիրք, Պափղագոնացիք, Մարիանդէնացիք, Տիբարէնացիք, Քաղիւկացիք, Մոսիւնիկացիք, Կողքացիք, Մեղանք, Ղենացիք, Սարմատք, Սաւրոմատք, Մէովտացիք, Սկիւթացիք, Տաւրացիք, Թրակացիք, Բաստանացիք, Իղիւրիկացիք, Մակեդովնացիք, Յոյնք, Ղիբացիք, Իստրացիք, Հոնք, Դաւնացիք, Յապիւզացիք, Կաղաբրացիք, Ովնիկացիք, Ղատենացիք, որ են Հոռոմք, Տիւրենացիք, Գաղիանոսք, Կեղտք, Ղիգ(ի)ւստիանոսք, Կեղտիբերք, Գաղիացիք, Ակիւտանացիք, Իղիւրիանոսք, Բաստանք, Կիրտանացիք, Ղիւսիտանացիք, Վակիացիք, Կիւնացիք, Բրիտանիկեցիք, որ ի կղզիսն բնակեալ են:

68 Եւ այս ազգք են, որ գիտեն ի սոցանէ դպրութիւն<sup>19</sup>. Իբերացիք<sup>20</sup>, Ղա-

1 Ա Յափեթի փխ Յաբեթի (Փ)  
2 Փ չիբ երրորդի որդւոյն Նոյի  
3 Փ Գամիր  
4 Փ Մագովգ  
5 Փ Մադան  
6 Փ Յելլէնք եւ Յոյնք փխ Յոյնք եւ Հեղդէնք  
7 Փ Թետալք  
8 Փ Լորիկացիք փխ Ղիւրիկացիք  
9 Փ Քիտիւմ  
4 ԷՃ ~.ԾԵ. Կոստանդին  
5 ԷՃ ԺԵ, ԻԲՈ ԺԳ փիլ ԺԴ (Ա) [թերեւս միաւորը վերականգնելի է է փիլ Գ / Ե]  
6 Ա հայրապետիւ փիլ հայրապետաւ (ԷՃ)  
7 ԻԲՈ ՃԺԵ  
8 ԻԲՈ չի՛ առ ի քննութիւն ... ժողովեալ գնոյն  
9 Ա զՄարտինոսին  
10 ԻԲՈ չի՛ Ե զՄաքսիմոսի ... վերայ Քրիստոսի  
11 ԷՃ արարին  
12 Ա Անփորայ, ԷՃ Անափորա փիլ Անափորայ (ԻԲՈ)  
13 ԷՃ Հռովմայեցիոց Ե Կոստանդնուպաւսացիոցն  
14 ԷՃ յամենայն  
15 ԷՃ Հռովմոց  
16 ԷՃ ժողովեցան փիլ ժողովեալ  
17 ԻԲՈ չի՛ գրեաց առ ... եպիսկոպոսք (4 տող)

18 ԻԲՈ գաղանդն Քաղկեդոնի փիլ գիպիոյութիւնն  
19 Ա Մարտինոսի փիլ Մարտինոսի (ԷՃ) / ԻԲՈ չի՛ Մարտինոսի ... նոցա ամս Լ (նախ. 411)  
20 Ա Մարտինոսի փիլ Մարտինոսի (վեր.)  
21 ԷՃ չի՛ Մարտինոսի Ե  
22 ԷՃ չի՛ կարգեցին Ե գրեցին  
23 ԷՃ չի՛ նորաձայն ... հայհոյութեանն Ե  
24 ԷՃ զՊողիքոս  
25 ԷՃ զոր  
26 Ա չի՛ սրով  
27 Ա հաւանեցան փիլ հնազանդեցան (ԷՃ)  
28 ԷՃ Մաքսիմոսի  
29 ԷՃ Հռովմ հայրապետ  
30 ԷՃ Հռովմայեցիովք Ե Կոստանդնուպաւսացովք  
31 ԷՃ ասել  
32 ԷՃ անուանեցին փիլ կարգեցին  
33 Ա չի՛ ինչ  
34 ԷՃ անբաժանելի

մեկնելի, անշփոյթելի<sup>1</sup> ի մարմին<sup>2</sup> Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ճշմարտի Աստուծոյ մերոյ, փառաւորեմք: 407 Այսինքն է՝ աստուածային ներգործութիւն եւ մարդկային ներգործութիւն<sup>3</sup>, ըստ աստուածապատումն Ղեւոնի հաստատագոյն ասելով<sup>4</sup>, քանզի ներգործէ իւրաքանչիւր կերպարան ընդ<sup>5</sup> ընգերին հաղորդութեամբ, զոր ինքեան ունէր ի միում անձնաւորութեան, զանազանութեամբ զանազանութիւն ծանուցեալ, որ ըստ ընգերին հաղորդութեամբ իւրաքանչիւր բնութեանցն կամել եւ ներգործել զաւրութիւն<sup>6</sup> ըստ ինքեան: 408 Եւ Բ բնական կամս եւ ներգործութիւն փառաւորեմք՝ առ ի փրկութիւն մարդկային ազ(գի՝ առ) միմեանս ընթանալով: 409 Զայս այժմ<sup>7</sup> ամենայն ուստեք<sup>8</sup> ստուգութեամբ եւ ճշմարտութեամբ առ ի մէնջ տպաւորեալ՝ սահ-

մանեմք. այդ հաւատ մի՛ ումեք յառաջ բերել իշխել<sup>9</sup>, կամ վարդապետել: 410 Զայս հայհոյութիւն հաստատեցին եւ սփռեցին յիւրաքանչիւր տեղիս<sup>10</sup>:

411 Ի սորին աւուրս եղեւ շփոյթումն Տաճկաց սաստիկ պատերազմաւ: 412 Եւ դադարեցին ի հարկատրութենէ<sup>11</sup> նոցա Հայք, Վիրք<sup>12</sup> եւ Աղուանք՝ ծառայեալ նոցա ամս Լ:

413 ՅՈՒՍՏԻԱՆՈՍ<sup>13</sup> որդի երրորդ Կոստանդնի<sup>14</sup>, ամս Բ: 414 Ի սորա<sup>15</sup> առաջին ամին տիրեցին հիւսիսային<sup>16</sup> ազգն<sup>17</sup>, որ ասին<sup>18</sup> Խազիրք<sup>19</sup> Հայոց, Վրաց եւ Աղուանից: 415 Եւ սպանին ի պատերազմի գիշխանս Հայոց<sup>20</sup>, Վրաց<sup>21</sup> եւ Աղուանից, յամսեանն սահմի, որ աւր ժ էր ամսոյն<sup>22</sup>, ի ձԼ Դ թուականին Հայոց<sup>23</sup>:

1 էձ չի՛ անմեկնելի անշփոյթելի  
 2 էձ նմին փիս մարմին  
 3 էձ չի՛ աստուածային ... ներգործութիւն  
 4 էձ հաստատուագոյն ասել  
 5 Ա չի՛ ընդ  
 6 էձ զի զարութիւն  
 7 էձ չի՛ այժմ  
 8 էձ չի՛ ուստեք

9 էձ ո՛ր իշխեսցէ յառաջ բերել փիս ումեք ... իշխել  
 10 Ա չի՛ յիւրաքանչիւր տեղիս (էձ)  
 11 էձ հարկատուութենէ  
 12 էձ եւ Վիրք  
 13 Ա Յուստիանէս փիս Յուստիանոս (էձ ԻԲՈ) / էձ ~.ԾԶ. Յուստիանոս  
 14 էձ ԻԲՈ Կոստանդինի  
 15 Ա սորայ  
 16 էձ հիւսուսաին, ԻԲՈ հիւսիսային փիս հիւսիսային (Ա)  
 17 ԻԲՈ ազգին  
 18 ԻԲՈ չի՛ որ ասին  
 19 Ա Հազիրք փիս Խազիրք (էձ ԻԲՈ)  
 20 էձ զիշխանն Հայոց  
 21 էձ եւ Վրաց  
 22 ԻԲՈ չի՛ եւ սպանին ... ամսոյն  
 23 ԻԲՈ ձԼ Դ թուին փիս ի ձԼ Դ թուականին Հայոց / էձ չի՛ եւ Աղուանից յամսեանն ... Հայոց

# ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐԱԼՈՅ



## ՅՈՎՀԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆԸ ԵՒ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ» ԵՐԿԸ

Է դարի երկրորդ կեսի պատմիչ Յովհան Մամիկոնեանի «Պատմութիւն Տարօնոյ» երկն իր բնոյթով եւ շարադրանքի ոճով եզակի է վաղ միջնադարեան Հայ մատենագրութեան մէջ: Օգտագործելով Տարօն գաւառում հաւաքուած գրաւոր եւ բանաւոր բազմաթանր նիւթերը՝ հեղինակը Հայաստանում առաջին անգամ ստեղծել է իր երկրամասի պատմութեան որոշակիօրէն համակարգուած շարադրանքը լայն պատմական ֆոնի վրայ:

Երկի վերջում գետեղուած բաւական ընդարձակ յիշատակարանում Յովհանը ներկայանում է որպէս Մամիկոնեան եպիսկոպոս, նշում, որ իր «շարադրութիւնը» կատարել է «ի վանսն Գլակայ, ի դուռն սրբոյ Կարապետին», որտեղ գաւառի առաջին եպիսկոպոս Զենոբ Ասորուց յետոյ եղել է քսանհինգերորդ (առկայ ձեռագրերում՝ ԼԵ-երորդ) առաջնորդը (ըստ այդմ՝ ենթադրելի է, որ Գլակավանքը եղել է Մամիկոնեան եպիսկոպոսութեան նստոցը): Յիշատակարանի՝ մեզ հասած գրչագրերի աւանդած մի արտայայտութեան համաձայն՝ աշխատութեան համակարգումը կատարուել է Հերակլ կայսեր (610-641 թթ.) եւ Ներսէս Տայեցի կաթողիկոսի (641-661 թթ.) օրօք, Խոսրով Բ Պարսից արքայի մահից յետոյ (628 թ.), «յիշխանութեանն Մամիկոնեան Վահանայ, գոր մայրենեաւք Կամսարական կոչեն»: Իրականում պարզ է, որ երկն ստեղծուել է մի քանի փուլով (նոյն կերպ, առնուազն երկու փուլով է գրուել նաեւ «Մատենագիրք Հայոց»-ի սոյն հատորում ներառուած 684 թ. Անանունի Պատմութիւնը) եւ վերջնականապէս ձեւաւորուել է դարի երկրորդ կէսում, բոլոր դէպքերում՝ մինչեւ Հայաստանի վերջնական ենթարկումը Արաբական խալիֆայութեանը, ամենայն հաւանականութեամբ՝ 680-ական թթ.: Ըստ երեւոյթին՝ պատահական չէ Հայոց ՃԼ թուականի (681 թ.) յիշատակութիւնը երկի ժ գլխի աւարտական հատուածում եւ (ըստ Ն ենթախմբի ձեռագրերի) հեղինակի յիշատակարանի բնագրում, թէկուզ եւ վերջին հատուածում առկայ է նաեւ աւելի վաղ ժամանակաշրջանով (գուցէ՛ հետագայում աւելացուած) թուագրումը:

Յովհանը նաեւ նշում է, որ իր «շարադրութիւնը» ամբողջացրել է տարբեր տեղերից հայթայթուած «ԼԼ պատճեան ... ի մի գիրս հաւաքելով»: Իրականում հաւանաբար պատճեններ են կոչուել նրա ունեցած գրաւոր սկզբնաղբիւրներից մէկի կազմում հաւաքուած նիւթերը: Դա ըստ ամենայնի՝ Ե դարի վերջում կամ Զ դարի ամենասկզբում ստեղծուածի կամ խմբագրուածի տպաւորութիւն թողնող, Դ դարի սկզբի հոգեւորական Զենոբ Ասորի եպիսկոպոսին վերագրուած մի գործ էր, որում արդէն հաւաքուած էին Գլակավանքին ու Տարօն գաւառին վերաբերող պատմական եւ վանական բանահիւսութեանը հանգող, աղբիւրագիտական տեսակէտից յաճախ եզակի եւ անգնահատելի տեղեկութիւններ: Մէկ ուրիշ գրաւոր սկզբնաղբիւրում՝ է դարի առաջին կէսում համախմբուածի տպաւորութիւն թողնող եւ ամենայն հաւանականութեամբ Պարսից պատմութիւն վերտառութիւնը կրած երկում հատուածները գլուխներ են կոչուել, եւ այդ անուանումը ներթափանցել է Յովհանի երկի երեք այլ հատուածների (Զ-Ը) գլխագրեր («Գլուխ Պարսից պատմութեան. գալոյն Միհրանայ...», «Գլուխ գալոյն Վախտանգայ...», «Գլուխ երրորդ պատճէնի. վասն գալոյն Տիգրանայ...»): Ինքը՝ հեղինակը, նախընտրում է պատճեն եզրը, սակայն իրականութիւնն այն է, որ նա ըստ երեւոյթին չի հասցրել միասնականացնել երկի հատուածների անունները, ուստի հնարաւոր է, որ երկի միւս հատուածները եւս առ-

նուազն մասամբ պահպանել են գրաւոր սկզբնաղբիւրների վերնագրերը: Սակայն միեւնոյն ժամանակ որոշ եզրեր եւ իւրայատուկ արտայայտութիւններ թոյլ են տալիս մտածել, որ արտագրելով դրանք իբրեւ իր «շարադրութեան» գլխագրեր, Յովհան Մամիկոնեանը գոնէ ինչ-որ չափով փոփոխութիւններ կատարել է: Օրինակ՝ Պարսից պատմութեան առաջին մասերի գլխագրերում թողնելով գլուխ բնորոշումը, չորրորդն արտագրելիս նա, կարծէք, լրիւ վերյիշել է իր նախընտրած պատմէն եզրը («Պատճէն չորրորդ. գալոյն Վարդուհրայ...»): Ընդհանուր առմամբ, հիմնաւորուած չեն թւում Պատմութիւն Տարօնոյն աւելի համակարգուած գլուխ-պատմէն-ների բաժանելու մի շարք ուսումնասիրողների փորձերը, ուստի մեր բնագրում հետեւել ենք ձեռագրերի գլխակարգութեանը, որով երկը բաժանուած է 11 հատուածի: Ընդ որում, ձեռագրերում բացակայող դրանց թուահամարները, իբրեւ պայմանական, տուել ենք քառակուսի փակագծերով [Ա]-[ԺԱ]:

Աշխատութեան ընդհանուր վերնագիրը՝ ըստ յիշատակարանում առկայ եզրերի պէտք է լինէր ժամանակագրութիւն կամ Շարադրութիւն: Եթէ գրչագրերի ճիւղագրութեան տրամաբանութեանը հետեւելով ընդունենք, որ Յովհանի գրած վերտառութիւնը պահպանել են Ա ձեռագրախմբի ԲԼ եւ Ն ենթախմբերը (Սկիզբն պատմութեան Չորրորդ Հայոց եւ ժամանակագրութեանն Ձեռնարկ Ասորոյ, որ ձեռնագրեցաւ առաջին եպիսկոպոս ի սրբոյն Գրիգորէ երկրին Մամիկոնեանից), ապա նշելի է, որ նրա եզրաբանութիւնը բաւականին համահունչ է յիշատակարանի հետ: Ի դէպ, այս վերտառութեան «Չորրորդ Հայոց» եզրը պարզապէս նշանակում է Տարօնոյ կողմն - Տուրուբերան նահանգը ըստ Մովսէս Խորենացու Աշխարհացոյցում առկայ նահանգաթուարկման հերթական համարի («Արդ՝ ունի առաջին աշխարհ [Բարձր Հայք] գաւառս ինն... Երկրորդ աշխարհ Հայոց՝ Չորրորդ Հայք, որ է Մոփաց կողմն... Երրորդ աշխարհ՝ Աղձնիք... Չորրորդ աշխարհ՝ Տա[ւ]րուբերան...»), ինչպէս որ եզակի ձեւով այն ներկայացուած է քիչ անց, Ա գլխում՝ ոչ մի կապ չունենալով Չորրորդ Հայք - Մոփք նահանգի հետ: Իսկ դա նաեւ ցոյց է տալիս, որ Յովհանը բաւականին ուշադիր է եղել իր աղբիւրներն ընթերցելիս եւ արտագրելիս: Միւս ձեռագրերի պահպանած Պատմութիւն Տարօնոյ, գոր թարգմանեաց Ձեռնարկ Ասորոց եպիսկոպոսն անուանումն անկասկած ժԳ դարից ոչ ուշ կատարուած «մեծ խմբագրման» արդիւնք է: Բացի Բ խմբից, այն պահպանուել է նաեւ Ա խմբի ԲԼ ենթախմբի Ը, Դ եւ Է գրչագրերում, որը պէտք է համարել հաւանաբար Բաղէշի դպրոցում ժԷ դարի կէսերին ստեղծուած նրանց մայր օրինակի գրչի գիտական մօտեցման արդիւնք: Բոլոր դէպքերում, այդ վերտառութիւնը (համառօտ՝ Պատմութիւն Տարօնոյ) քաղաքացիութիւն է ձեռք բերել, ուստի այն պահպանել ենք տիտղոսաթերթում եւ սոյն առաջաբանում:

Իր ընդգրկած նիւթերի համակարգման որակով Յովհան Մամիկոնեանը թերեւս զիջում է հայ պատմիչներից շատերին, եւ հէնց նոյն պատճառով՝ դրանք շահում են աղբիւրագիտական հաւաստիութեան տեսանկիւնից: Միաժամանակ, հեղինակի ձեռքը նկատուում է գրեթէ բոլոր հատուածներում, յատկապէս նրանց վերջին մասերում, ուր կատարուած են տարբեր սկզբնաղբիւրների տեղեկութիւնների շղկապման եւ համագրման առաւել ակնյայտ փորձերը, նաեւ՝ առաւել մեծ սխալներով: Այդ սխալներից աւելի ակնառու են, օրինակ, Ձեռնարկ Գլակի երկի անուանումն Ասորոց պատմութիւն ներկայացնելը (իրականում դա ամենայն հաւանականութեամբ Ձեռնարկ մատնանշած աղբիւրներից մէկի՝ վերականգնող «Գիր գԱրշակունի եւ գքաջ թագաւորաց տանս Հայոց» վերնագրով երկի միւս անուանումն է), Պարսից պատմութիւն կիսավիպական ժողովածոյի (իբրեւ թէ

Ուռհայում յայտնաբերած, սակայն «ի նոյն Իննականեան վանս ... գրած») տուեալները Գլխավանքի վանահայրերի գաւազանագրքի (գլուխ Ե) հետ համաձայնեցնելիս առաջացած անհամապատասխանութիւնները, եւ այլն:

Ընդհանրապէս, քննական նոր բնագրի հրատարակութեան առիթով նշելի է, ցաւօք, որ ժամանակին երկի թուագրումը մինչեւ Թ-Ժ դարեր հասցնող հետազոտողների եւ նրանց հետեւորդների գերքննադատական մօտեցման արդիւնքում (վերջին անգամ Լ. Աւդոյեանի անգլերէն թարգմանութեան մէջ) Յովհանի աղբիւրների հիմնաւոր ուսումնասիրութիւնը ինչ-որ չափով կանգ է առել: Մեծ ծաւալով օգտագործելով Պատմութիւն Տարօնոյ-ի բազմատեսակ տեղեկութիւնները, բանասէրներից շատերը, միաժամանակ, նրա աղբիւրներից եւ առկայ ձեռագրերից եկող հակասութիւնները թեթեւաբար վերագրում են Մամիկոնեան պատմիչին՝ հաշուի չառնելով նրա յիշատակարանի անմիջականութեամբ տողորուած խոստովանութիւնները եւ յորդորները: Նշենք, որ հակասութիւնների մի մասը լուծում է ստանում նոր քննական բնագրում ի յայտ եկած հաւաստի ընթերցումների շնորհիւ: Աղբիւրագէտի խնդիրը համարելով հեղինակի սխալների տրամաբանութիւնը գտնելը, այլ ոչ թէ նրա երկը պարզապէս ուշ դարաշրջան տեղափոխելը (ճշմարիտ աղբիւրագիտութեան հետ ոչ մի կապ չունեցող այն մտայնութեամբ, թէ ինչքան աւելի վաղ է հեղինակը, այնքան աւելի հաւաստի պէտք է լինեն նրա շարադրած նիւթերը)՝ մեր բնագրի տողատակի ծանօթագրութիւնների սուղ հնարաւորութիւնների շրջանակում փորձել ենք նաեւ ներկայացնել այդպիսի մեկնաբանութիւնների մի մասը:

Իսկ երկի առանձին մասերի աղբիւրների համար գնահատման չափանիշերի փոփոխութիւնը դէպի վանական բանահիւսութեան եւ ուշ Սասանեան աւանդոյթին համահունչ, գրեթէ աշխարհիկ վիպական յուշարձաններ, ամբողջապէս հնարաւորութիւն է տալիս ըստ արժանւոյն գնահատել Պատմութիւն Տարօնոյ-ն՝ իբրեւ վաղ միջնադարեան գրականութեան աչքի ընկնող կոթողներից մէկը: Միաժամանակ, կարեւոր է նշել, որ երկի տարբեր սկզբնաղբիւրների հանգող մասերը լեզուաոճական մեծ նմանութիւն են դրսեւորում, ուստի դրանք չի կարելի դիտել իբրեւ բառացի արտագրուած եւ այդպիսով անխաթար պահպանուած բնագրեր: Հետեւելով նաեւ բանաւոր աւանդոյթին՝ Մամիկոնեան պատմիչն անշուշտ շատ դէպքերում հարստացրել է իր արտագրածը անձնական ներդրումով: Ի տարբերութիւն աւելի վաղ երկերի՝ նրա մօտ լաւ է պահպանուել նաեւ լեզուաոճական հասարակաբանութիւնը:

Երկի քննական բնագիրը Մատենագիրք Հայոց-ի համար պատրաստուել է նախկին հրատարակութիւններում օգտագործուած եւ նոր գրչագրերի վերլուծութեան արդիւնքում: Մաշտոցի անուան Մատենադարանում պահուող բոլոր, ինչպէս նաեւ դրսի գրչագրերի մեծ մասի հրատարակուած կտորների առանձնայատկութիւնների քննութեամբ կազմուել է ձեռագրերի ճիշտագրութիւնը, որից պարզ է դառնում, որ 1941 թ. Աշ. Աբրահամեանի հրատարակութեան պատկերացումները իրականութեան հետ ոչ մի կապ չունեն: Վերջինիս օգտագործած եւ քաղաքացիութիւն ստացած տառանիշերը (Բ, Լ, Հ, Մ, Պ, Ս, Վ, Օ) մեր կողմից պահպանուել են, սակայն բոլոր միւսների նման տրուած են լատինատառ: Մեր կողմից բաց են թողնուած միայն Պոլսի եւ Վենետիկի հրատարակութիւններից ընդօրինակուած ԺԸ-ԺԹ դդ. մի քանի գրչագրեր, ինչպէս նաեւ Պատմութիւն Տարօնոյ-ին հանգող, սակայն էական խմբագրումների ենթարկուած (փաստօրէն նոր երկեր դարձած) յայսմաւուրքային հատուածները: Ցաւօք, հետազոտուած գրչագրերի մի մասի ընթեր-



ցումները հնարաւոր չի եղել նշել տողատակերում (չենք նշել նաեւ Աշ. Աբրահամեանի հրատարակութեան վրիպակները՝ մեր տողատակերի ծաւալը չկրկնապատկելու համար):

Երկի պահպանուած շուրջ երեք տասնեակ ձեռագրերը բաժանուած են երկու հիմնական խմբի (պայմանականօրէն անուանում ենք Ա եւ Բ), ընդ որում քննութիւնից պարզ է դառնում, որ Բ խումբը ԺԳ դարի կէսերից ոչ ուշ կատարուած մի մեծ եւ իւրատեսակ խմբագրման արդիւնք է: Ա խմբում պահպանուած բնագրի հետ այդ խմբագրման տարբերակների (ենթախմբերի) իւրօրինակ յարաբերութիւնը ցոյց է տալիս, որ անյայտ խմբագիրը մեզ չհասած մի գրչագրում գծիկներով եւ խաչանշաններով ջնջումներ ու յաւելումներ է կատարել, ապա այդ օրինակից արուել են մի քանի արտագրութիւններ: Բազմաթիւ տարբերութիւնների համեմատութիւնից երեւում է, որ առնուազն երեք արտագրողներ ինքնուրոյն են եղել անյայտ խմբագրի կողմից «առաջարկուած» փոփոխութիւններն ընդօրինակելիս եւ դրա շնորհիւ առաջացել են Բ խմբի երեք ենթախմբերը:

Ամենից շատ փոփոխութիւններ են անցել Բ խմբի պայմանականօրէն Օ եւ ՀՄ կոչուած ենթախմբերի ձեռագրեր (Օ, v<sub>7</sub>, w եւ h, m, u, v<sub>1</sub>, v<sub>2</sub>, ՄՄ թիւ 1885, 1887, 2560, 6724, Սանկտ-Պետերբուրգի Արեւելագիտութեան ինստիտուտի հայերէն ձեռ. թիւ B 29, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի թիւ 1149, Փարիզի Ազգային գրադարանի թիւ 184), որոնք մասնաւորապէս բաց են թողել երկի վերջին երկու հատուածները (Յովհան Մամիկոնեանի յիշատակարանով հանդերձ). m գրչագրում երկի նախավերջին գլուխն առկայ է, հաւանաբար, նրա նախօրինակի գրչի նախաձեռնութեամբ: Շատ աւելի պակաս է փոփոխութիւններ կատարել այն մայր օրինակի գրիչը, որից արտագրուել եւ մեզ են հասել ՍՎ կոչուած ենթախմբի ձեռագրերը (S, v<sub>3</sub>, v<sub>5</sub>, ՄՄ թիւ 2748): Այս ենթախումբը պէտք է իր հերթին բաժանել երկու խմբի. S գրչագրում երկի վերջին երկու գլուխներն առկայ են, իսկ միւսներում՝ ոչ: Հնարաւոր է խմբաւորել նաեւ ՀՄ ենթախմբի գրչագրերը. m-ին նման են (առանց նախավերջին գլխի) v<sub>1</sub>, v<sub>2</sub>, ՄՄ թիւ 1885, 1887, Սանկտ-Պետերբուրգի B 29 եւ Երուսաղէմի 1149, իսկ h-ին՝ u, ՄՄ թիւ 2560 եւ 6724 գրչագրերը: Մեծ խմբագրումից յետոյ Ա եւ Բ խմբերի միջեւ որոշ չափով միջանկեալ դիրք են գրաւում Բ խմբի Օ կոչուած ենթախմբի երեք պահպանուած ձեռագրերը (Օ, v<sub>7</sub> եւ w. բնորոշ ընթերցումներից երեւում է, որ այս ենթախմբին է պատկանել նաեւ Սեբաստիայի պահպանակի պատառիկի գրչագիրը): Գերակշռող մասով դրանց ընթերցումները նման են ՀՄ ենթախմբի ձեռագրերին, սակայն շատ ընթերցումներ էլ համընկնում են Ա խմբի բնագրին, որը նրանց մայր օրինակի գրչի կողմից մեծ խմբագրման որոշ «առաջարկներ» չընդունելու արդիւնք է:

Ա խմբի ձեռագրերը եւս հնարաւոր է բաժանել երեք ենթախմբերի, որոնց տարբերութիւնները, սակայն, անհամեմատելի են Բ խմբի ենթախմբերի տարբերութիւնների հետ: ԲԼ եւ Ն ենթախմբերի գրչագրերը անխաթար են պահպանել երկի՝ Յովհան Մամիկոնեանից եկող վերտառութիւնը. «Սկիզբն պատմութեան Չորրորդ Հայոց եւ ժամանակագրութեանն Ձեռնբայ Ասորոյ...» (հնագոյն՝ 1220 թ. ընդօրինակուած b գրչագրում առաջին թերթերը կորսուած են, ուստի նրա մասին ասուածը ենթադրութեան մակարդակով է): ԲԼ ենթախմբի (b, l, v<sub>4</sub>, ՄՄ թիւ 1665) բնագրից չնչին շեղումներ ունեցող c, r եւ t գրչագրերի մայր օրինակում մի գիտակ գրչի նախաձեռնութեամբ վերնագիրը դարձուել է Բ խմբի նման՝ «Պատմութիւն Տարաւնոյ, գոր թարգմանեաց Ձեռնոբ Ասորոց եպիսկոպոսն»: Ն ենթախումբը (n, q, v<sub>6</sub>) ստեղծուել է մի վաղ ձեռագրում երկի նիւթերի հերթականութիւնը եւ գլխագրերը որոշ չափով փոփոխելու ճանապարհով (Արծրունեաց իշխանների մասին

նիւթերը շեշտելու նպատակադրումով՝ փաստորէն վերածուելով մի նոր խմբագրութեան: Սակայն չհանգելով մեզ հասած մնացեալ ձեռագրերից որեւէ մէկին՝ բնագրի գերակշիռ մասով այդ խմբագրութիւնը գերծ է ԲԼ ենթախմբի մայր օրինակի գրչի թոյլ տուած որոշ շեղումներից, ուստի էական դեր է կատարում Ա խմբի մայր գրչագրի կամ ուղղակի՝ Յովհան Մամիկոնեանի բնօրինակային ընթերցումների վերականգնման խնդրում:

Յաւօք, 1941 թ. համեմատական հրատարակութեան աշխատասիրող Աշ. Աբրահամեանը բնագրի հիմքում անվերապահօրէն դրել է պարզեցուած խմբագրումներով եւ համառօտումներով աչքի ընկնող օ ձեռագիրը (ՄՄ թիւ 1328) եւ տապալել քննական հայեցքով սկզբնօրինակային ընթերցումները վերհանելու հնարաւորութիւնը (արժանանալով Լեւոն Խաչիկեանի արգարացի դատապարտմանը): Այդ իմաստով աւելի շահեկան էր Վենետիկի 1832 թ. հրատարակութիւնը (վերատպուած 1889 թ.): Քննութիւնից երեւում է, որ հրատարակչի օգտագործած 5 գրչագրերից մէկը պատկանում է Ա խմբի ԲԼ ենթախմբին (V<sub>4</sub>), միւսներից երկուսը՝ Բ խմբի ՀՄ (V<sub>1,2</sub>), երկուսը՝ ՍՎ (V<sub>3,5</sub>) ենթախմբերին: Վերջին երկու հատուածներում ըստ ամենայնի օգտագործուել է նաեւ Ն ենթախմբին պատկանող թիւ 413 (V<sub>6</sub>) գրչագիրը, առանց այդ մասին յատուկ նշում կատարելու (վենետիկեան գրչագրերի մասին մեր պատկերացումները հանգում են նաեւ հրատարակուած ձեռագրացուցակի սուղ նիւթերին. այդպէս ձեռագրացուցակների տրամադրած կտորներով վերլուծել ենք նաեւ Վիեննայի թիւ 705 եւ Երուսաղէմի թիւ 1149 գրչագրերի ընթերցումները, իսկ անգլերէն թարգմանութեան մէջ դրուած մի քանի կտորներով՝ Սանկտ-Պետերբուրգի թիւ B 29-ի): Իհարկէ, տարընթերցումների սիստեմատիկ նշումների բացակայութիւնը եւ յաճախ ձեռագրերի ամենից պարզեցուած ընթերցումների ոչ քննական ընտրութիւնը էապէս դժուարացնում է վենետիկեան բնագրի օգնութեամբ է դարի սկզբնօրինակի մասին պատկերացում կազմելու ջանքերը եւ շփոթութիւններ առաջացնում: Վենետիկի հրատարակութեան ընթերցումները նշել ենք V տառանիշով: Տողատակի ծանօթագրութիւնները տուել ենք V<sup>1-3</sup> տառանիշերով, որի թուանշաններից երեւում է, թէ քանի օրինակներում է առկայ տուեալ ընթերցումը, իսկ երբեմն V<sub>1-5</sub> տառանիշերով ցոյց ենք տուել համապատասխան ճշտուած ձեռագիրը: Պոլսի 1719 թ. հրատարակութեան տարընթերցումներից տողատակում ընդգրկել ենք (ըստ Աշ. Աբրահամեանի կատարած համեմատութեան) միայն գլխագրերը՝ զուտ ճանաչողական նպատակով: Քննութիւնից երեւում է, որ այդ հրատարակութեան հիմքում դրուած է եղել Բ խմբի մի գրչագիր (m-ին շատ նման), սակայն հրատարակիչն էապէս փոխել-պարզեցրել («ճշտել») է բնագիրը, եւ մենք չենք ցանկացել, որ դա համատարած շփոթութիւնների պատճառ դառնայ:

Քննական բնագիրը կազմելիս փորձել ենք խմբագրումների արդիւնքում առաջացած երկու խմբերի եւ նրանց ենթախմբերի մայր ընթերցումների վերհանումից եւ համեմատութիւնից յետոյ իւրաքանչիւր դէպքում հասկանալ ե՛ւ վաղմիջնադարեան հեղինակի գրելաոճը, ե՛ւ հետագայ գրչի տուեալ շեղման կամ վրիպման պատճառը: Ըստ վերհանուած ճիւղագրութեան տրամաբանութեան՝ ամենից մեծ վստահութեամբ է դարի ընթերցումներն ի յայտ են գալիս այն դէպքերում, երբ միեւնոյն ընթերցումը տալիս են մի կողմից Ա խմբի կամ նրա ենթախմբերի, միւս կողմից՝ Բ-ի ՍՎ, Օ կամ ՀՄ ենթախմբերից որեւէ մէկի պայմանականօրէն վերականգնող մայր բնագրերը: Հակառակ դէպքում, երբ նշուած խմբերը տարբերութիւններ են դրսեւորում, նրանց ընթերցումների՝ է դարի բնօրինակին հանգելու հնարաւորութիւնները փաստօրէն հաւասարուում են:

Ամենից աւելի ուշադիր ձեռով ջանացել ենք խուսափել այս կամ այն ձեռագրախմբի «լավ» ընթերցումները բնագիր ընդգրկելու գայթակղութիւնից: Ժամանակին այդպէս վարուել է միջնադարեան գրիչների մեծ մասը՝ իրենց արտագրածը «իրենց» ընթերցողին առաւել մատչելի դարձնելու նպատակադրումով (ցաւօք, այդպէս նաեւ՝ նոր ժամանակների շատ հրատարակիչներ): Սակայն անգամ այն դէպքում, երբ գրիչները փոփոխութիւններ են կատարել է դարի սկզբնօրինակի իրական խաթարման հատուածներում, գիտական հրատարակութեան համար գերադասելի պէտք է համարել համապատասխան նշումով վերականգնում տալը, ոչ թէ՛ անգամ ամենայնջողակ գրչի «վերականգնումն» ընդունելը: Հետեւողական լինելով այս ճանապարհով է դարի սկզբնօրինակը վերհանելու ջանքերում՝ միաժամանակ հնարաւորինս խնամքով կազմուած տողատակերով փորձել ենք ընթերցողի համար հնարաւորութիւն ստեղծել՝ անհրաժեշտութեան դէպքում ինքնուրոյն վերակազմելու ցանկացած գրչագրի (այդ թւում՝ սկզբնօրինակի) լրիւ բնագիրը:

Հազուադիւր դէպքերում իբրեւ է դարի բնագրի վերականգնում տալով առկայ ձեռագրերում չարձանագրուած տարբերակներ, յատուկ ծանօթագրել ենք դրանք եւ ձեռագրերում բացակայող տառերը դրել քառակուսի փակագծերի մէջ: Իհարկէ, նմանատիպ դէպքերում անհրաժեշտ է նաեւ այլ վերապահում անել. տուեալ ընթերցումը (օրինակ, Բ գլխի վերջում, ուր աւանդական վէճերի եւ անտեղի քննադատութեան պատճառ եղած յայտնի հատուածում ըստ *hmosv* ձեռագրերի վերականգնուել է՝ «Ագաթանգեղոս գայլ ոչ յիշէ, զի (հասկանա՛լ որպէսզի) ես յառաջագոյմ գրեցի[ց] (երկրորդ ապառնիով՝ փոխանակ ձեռագրերի անցեալ կատարեալ գրեցի ընթերցման), քան զնա») կարող էր խաթարուած լինել ոչ միայն ինչ-որ մի գրչի, այլեւ հէնց իր՝ Յովհան Մամիկոնեանի կողմից, որն, օգտագործելով գրաւոր սկզբնաղբիւրը (այստեղ՝ Ձեռք Գլակի անունը կրող բնագիրը), կարող էր նաեւ սխալ ընկալել ինչ-ինչ տառեր, արտայայտութիւններ ու քերականական դարձուածքներ: Տեղին նշենք, որ ոճական բարդ հատուածներում կետադրական նշանների թւում օգտագործել ենք նաեւ կլոր փակագծեր (Հայաստանում կիրառուութիւն ստացած արդէն է դարի վիճագրերում):

Ալեքսան Յակոբեան

### ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Հայր Ներսէս Ակիմեան, Շ. Սահակեան, Նորագիւտ հատուած Ձեռք Գլակի Պատմութեան, «Հանդէս Ամսօրեայ», Իե տարի, Վիեննա, 1911, էջ 178-184
2. Գ. Խալաթեանց, Ձեռք Գլակ. համեմատական ուսումնասիրութիւն, Վիեննա 1893
3. Լ. Ա. Խաչիկեան, Դիտողութիւններ Յովհ. Մամիկոնեանի «Պատմութեան» նոր հրատարակութեան առթիւ, «ՀՍՍԻ ԳԱ Տեղեկագիր», 1944, թիւ 1-2, էջ 141-150
4. Հայր Սահակ վրդ. Ճեմբեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միջնադարեանի վեցերորդ, հատոր 2, Վեներտիկ - Ս. Ղազար, 1996
5. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատասիրութեամբ եւ առաջաբանով Ա. Արքահամեանի, Երեւանի, 1941
6. Յովհան Մամիկոնեան, Տարօնի պատմութիւն, աշխարհաբար թարգմանութիւնը, ներածականը եւ ծանօթագրութիւնները Վ. Վարդանեանի, Երեւանի, 1989
7. Պատմութիւն Տարօնոյ, գոր թարգմանեաց Ձեռք Ասորի, Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վեներտիկ - Ս. Ղազար, 1832

8. **Խ. Յովհաննիսեանց**, *Զեկոք Գլակայ նոր օրինակ մը*, «Հանդէս Ամսօրեայ», Ը տարի, Վիեննա, 1894, էջ 200-202, 239-240
9. **Ուխտանէս Եպիսկոպոս**, *Պատմութիւն Հայոց*, Վաղարշապատ, 1871
10. **Л. Тер-Петросян**, К вопросу о датировке "Истории Тарона" (по поводу книги К. В. Айвазяна), «Բանբեր երեւանի համալսարանի», 1977, թիւ 3, էջ 143-178
11. **Pseudo-Yovhannes Mamikonean**, *The History of Tarôn [Patmut'iwn Tarônoy]. Historical Investigation. Critical Translation and Historical and Textual Commentaries by Levon Avdoyan*. Scholars Press, Atlanta, Georgia, 1993.

### ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- b* - ՄՄ ձեռ. թիւ 1912, ժամանակ՝ 1220 թ.  
*c* - ՄՄ ձեռ. թիւ 3070, ժամանակ՝ 1669 թ.  
*f* - Սեբաստիայի գրչագրի պահպանակ-պատառիկ (ըստ Շ. Սահակեանի)  
*h* - ՄՄ ձեռ. թիւ 2618, ժամանակ՝ ԺԷ դ.  
*l* - ՄՄ ձեռ. թիւ 1886, ժամանակ՝ ԺԴ դ.  
*m* - ՄՄ ձեռ. թիւ 1722, ժամանակ՝ ԺԵ դ.  
*n* - ՄՄ ձեռ. թիւ 1770, ժամանակ՝ 1589 թ.  
*o* - ՄՄ ձեռ. թիւ 1328, ժամանակ՝ 1278 թ.  
*p* - Պոլսի 1719 թ. հրատարակութիւնը (ըստ Աշ. Աբրահամեանի ընթերցումների)  
*q* - ՄՄ ձեռ. թիւ 3069, ժամանակ՝ 1672 թ.  
*r* - ՄՄ ձեռ. թիւ 1482, ժամանակ՝ 1676-1678 թթ.  
*s* - ՄՄ ձեռ. թիւ 7898, ժամանակ՝ 1791 թ.  
*t* - ՄՄ ձեռ. թիւ 4584, ժամանակ՝ 1668 թ.  
*u* - ՄՄ ձեռ. թիւ 1903, ժամանակ՝ 1600 թ.  
*v* - Վեներտիկեան 1832 թ. հրատարակութեան բնագիր  
*v*<sub>1</sub> - Վեներտիկի Միթրաբեան միաբանութեան Մատենադարանի (այսուհետեւ՝ Վեներտիկի ՄՄՄ) ձեռ. թիւ 44, ժամանակ՝ 1680-1682 թ.  
*v*<sub>2</sub> - Վեներտիկի ՄՄՄ ձեռ. թիւ 901, ժամանակ՝ 1687 թ.  
*v*<sub>3</sub> - Վեներտիկի ՄՄՄ ձեռ. թիւ 489, ժամանակ՝ 1669 թ.  
*v*<sub>4</sub> - Վեներտիկի ՄՄՄ ձեռ. թիւ 963, ժամանակ՝ ԺԴ դար  
*v*<sub>5</sub> - Վեներտիկի ՄՄՄ ձեռ. թիւ 286, ժամանակ՝ 1529 թ.  
*v*<sub>6</sub> - Վեներտիկի ՄՄՄ ձեռ. թիւ 413, ժամանակ՝ ԺԶ դար  
*v*<sub>7</sub> - Վեներտիկի ՄՄՄ ձեռ. թիւ 557, ժամանակ՝ ԺԷ դար  
*w* - Վիեննայի ՄՄՄ ձեռ. թիւ 705, ժամանակ՝ 1403 թ.



**1ՍԿԻԶԲՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԶՈՐՐՈՐԴ<sup>2</sup> ՀԱՅՈՑ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆՆ<sup>3</sup>  
 ԶԵՆՈՒԲԱՅ<sup>4</sup> ԱՍՈՐՈՅ, ՈՐ ԶԵՆՆԱԴՐԵՑԱՒ ԱՌԱՋԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ Ի  
 ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԷ<sup>5</sup> ԵՐԿՐԻՆ ՄԱՍԻԿՈՆԵՆԻՑ<sup>6</sup>**

[Ա] ՊԱՏՃԵՆ<sup>7</sup> ԱՌԱՋԻՆ<sup>8</sup> ՍՐԲՈՅՆ<sup>9</sup> ԳՐԻԳՈՐԻ, ԶՈՐ ԳՐԵԱՅ ԵՒ ՅՂԵԱՅ<sup>10</sup> Ի  
 ԿԵՍԱՐԻԱ<sup>11</sup>

1 *Ջառ ի յաստուածուստ<sup>12</sup> պատուեալ  
 եւ ի մարդկանէ փառաւորեալ<sup>13</sup>, երիցս<sup>14</sup> ե-*

- 
- 1 *Ե գրչագրում քերթերի պակաս կայ մինչեւ Դ զլ-  
 իսի պատուէր տուեալ բառերը (նախ. Դ.16)*
- 2 *Լ երրորդ / v<sub>4</sub> չիք չորրորդ*
- 3 *v<sub>4</sub> ժամանակագրութիւն / nq<sub>v6</sub> ի ժամանակա-  
 գրութեանէ փխ եւ ժամանակագրութեանն (1)*
- 4 *Խv<sub>4</sub> Զննովբայ փխ Զննովբայ (qv<sub>6</sub>)*
- 5 *Խv<sub>4</sub> ի սրբոյն Գրիգորէ եպիսկոպոս փխ առաջին  
 ... Գրիգորէ (nq<sub>v6</sub>)*
- 6 *nq<sub>v4,6</sub> Մամիկոնէից / chmoprstuv<sub>1-3,5</sub> Պատմու-  
 թիւն Տարաւնոյ (p երկրին Տարօնոյ), գոր Քարգ-  
 մանեաց (p գրեաց, w Քարգմանեալ, o Քարմա-  
 նեալ է, v<sub>5</sub> Քարմանեաց) Զննոր (mtr Զննովբ, wo  
 Զննովբայ) Ասորոց (pv<sub>1</sub> Ասորոց, hsu<sub>v2</sub> Ասորի,  
 v<sub>7</sub> Ասորին, v<sub>3,5</sub> Ասորեստանեաց) եպիսկոպոսն  
 (wo եպիսկոպոսի, v<sub>7</sub> եպիսկոպոսին, sv<sub>3,5</sub> չիք ե-  
 պիսկոպոսն, p եպիսկոպոսն. հրամանաւ Լու-  
 սաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի) փխ Սկիզբն  
 պատմութեան ... Մամիկոնէից (3 տող) (lnq<sub>v4,6</sub>)*
- 7 *nq<sub>v6</sub> պատմութիւն փխ պատմէն*
- 8 *Լ պատ... (գրչագրի քայքայուած էջերում...) փխ  
 պատմէն առաջին*
- 9 *tr սրբոյ / v<sub>1</sub> թղթոյն սրբոյն*
- 10 *sv<sub>v5</sub> առաքեաց, nq<sub>v6</sub> յղեաց փխ գրեաց եւ յղեաց  
 (lwov<sub>4</sub>) / chmtuv<sub>1</sub> չիք եւ յղեաց / v<sub>3</sub> եւ առաքեաց  
 փխ գոր գրեաց եւ յղեաց*
- 11 *w Կեսարիայ / Լ գրչագրում ի Կեսարիա բառե-  
 րը՝ քայքայուած էջերի հատուածում / nq<sub>v6</sub> Կե-  
 սարիայ Կապադովկեցոց (v<sub>6</sub> Կապադովկաց-  
 ցոց, n Կապադովկեցոց) / chmsvtruv<sub>1-3,5</sub> Կեսա-  
 րիա (m Կեսարիա, ctv<sub>1-3</sub> Կեսարիայ) առ (r առ  
 սուրբն) Ղեւոնդիէ (hu Ղեւոնդ, v<sub>7</sub> Ղեւոնդի) / f  
 Թուղթ առ Ղեւոնդ հայրապետն Կեսարու այս-  
 պէս փխ Պատմէն ... Կեսարիա*
- 12 *sv<sub>v3,5</sub> վերուստ, huw<sub>v4</sub> աստուածուստ, v<sub>1</sub> յա-  
 ստուածուստ փխ յաստուածուստ (clmnoqrt)*
- 13 *sv<sub>v3,5</sub> գովեալ փխ փառաւորեալ (hmotuwv<sub>1</sub>) / Խv<sub>4</sub>  
 փառաւորեալ ի մարդկանէ (Լ գրչագրում ի  
 մարդկա հատուածը՝ քայքայուած էջերում) փխ  
 ի մարդկանէ փառաւորեալ*
- 14 *hou երից / lnq չիք երիցս*

*րանելի<sup>15</sup> տեառն եւ աստուածարեալ  
 սրբոյ<sup>16</sup> հայրապետիդ<sup>17</sup> Ղեւոնդեայ<sup>18</sup> Մե-  
 դաղու<sup>19</sup> Կեսարու<sup>20</sup> հոյակապ<sup>21</sup> քաղա-  
 քիդ<sup>22</sup>, առ<sup>23</sup> ի<sup>24</sup> ձերոյ<sup>25</sup> սրբոյ ձեռնադրու-  
 թենէդ եւ ի մեր փանաքիմացութենէս<sup>26</sup> ա-  
 ռաջին թուղթ ողջունիւ<sup>27</sup> եւ սրբութեամբ  
 հասցէ, որով միշտ զխաղաղութիւն պար-  
 դեւեացէ նախ<sup>28</sup> ձերում<sup>29</sup> փառաւորու-  
 թեանդ<sup>30</sup>, եւ ապա՝ բոլոր՝ տիեզերաց<sup>2</sup>:*

- 
- 15 *hmosvuv<sub>v3,5</sub> երանեալ փխ երանելի (clnqrtv<sub>4</sub>) / f  
 չիք երիցս երանելի*
- 16 *v<sub>3</sub> սուրբ / crt<sub>v4</sub> չիք սրբոյ*
- 17 *nq հայրապետին սրբոյն փխ սրբոյ հայրապե-  
 տիդ*
- 18 *crt<sub>v4</sub> Ղեւոնդի, n Ղեւոնդէա, v<sub>3,5</sub> Ղեւոնդիէ, hu  
 Ղեւոնդէս, m Ղեւոնդիէս փխ Ղեւոնդեայ (foq-  
 svw) / Լ հայրապետ... (էջերի քայքայուած հա-  
 տուած...)նդի փխ հայրապետիդ Ղեւոնդեայ*
- 19 *v<sub>4</sub> Մեծգաղու / fo Մեղարու*
- 20 *o Կեսարեան, f Կեսարեա, v<sub>4</sub> Կեսարո փխ  
 Կեսարու (clqrt) / n չիք Մեծգաղու Կեսարու*
- 21 *nq հոյակապ (n խոյակապ) եւ հոչակաւոր*
- 22 *nv<sub>4</sub> քաղաքի / hmosvuv<sub>v3,5</sub> մեծարգոյ (sv<sub>v3,5</sub> եւ մե-  
 ծարգոյ) եւ (u չիք եւ) պատուական հոյակապ  
 (v<sub>3,5</sub> խոյակապ, hu խոհակապ) քաղաքիդ Կեսա-  
 րեան (hu Կեսարիեան) քաղաքապետ փխ Մե-  
 գաղու Կեսարու ... քաղաքիդ (clnqrtv<sub>4</sub>)*
- 23 *f որ փխ առ*
- 24 *crt չիք ի / Լ քաղ... (քայքայուած էջերի հա-  
 տուած) ... փխ քաղաքիդ առ ի*
- 25 *hmosvuv ձեր փխ ձերոյ (clnqrtv<sub>4</sub>)*
- 26 *fnq քանաքիմացութեանցս, w քանաքիմացու-  
 թենէ փխ քանաքիմացութենէս (hmosv)*
- 27 *hmou ողջոյնի փխ ողջունի (nqsvw)*
- 28 *f չիք նախ / hmosv չիք որով միշտ ... նախ (fnq)*
- 29 *lrv<sub>4</sub> չիք սրբոյ ձեռնադրութենէդ ... ձերում (4  
 տող) / c-ում նոյն կտորը լուսանցում է՝ ձերոյ  
 բառի վերջում դրուած յաւելման նշանի դիմաց*
- 30 *f սրբութեանդ փխ փառաւորութեանդ*

2 Յոյժ գոհանամք<sup>3</sup> զԱստուծոյ, որ հայրախնամ ողորմութեամբն<sup>4</sup> իւրով զթացաւ յազգս մարդկան իջմամբ Որդւոյ<sup>5</sup> իւրոյ միածնի<sup>6</sup>, որ<sup>7</sup> զամենայն ազինս<sup>8</sup> հրաւիրեաց յերկնային<sup>9</sup> քաղաքն ի ձեռն առաքելական քարոզութեանն<sup>10</sup>: 3 Յորմէ<sup>11</sup> եւ յայսմ<sup>12</sup> աշխարհի կարի առաւել<sup>13</sup> մասն պարծանաց<sup>14</sup> եհաս, զի երկոքեան ամուքն աստանաւր եկին<sup>15</sup> եւ ի նոյն<sup>16</sup> սահմանին վիճակեցան բանիւ Հոգւոյն<sup>17</sup>: 4 Որ թէպէտ եւ առ նոքաւք<sup>18</sup> վերջացան ի ճշմարտութենէ<sup>19</sup>, սակայն կամք ողորմութեանն<sup>20</sup> Աստուծոյ<sup>21</sup>, զթացեալ առ<sup>22</sup> մեր նուա-

տութիւնս՝ ի մերում ժամանակիս<sup>23</sup> կամեցաւ<sup>24</sup> եւ գործեաց զսքանչելիսն<sup>25</sup>, զոր<sup>26</sup> դուք<sup>27</sup> ի<sup>28</sup> մեզէն<sup>29</sup> իսկ լուայք<sup>30</sup> եւ ծանեայք<sup>31</sup>:

5 Մանաւանդ կրկին<sup>32</sup> գոհութիւն ձեւք<sup>33</sup> Աստուծոյ<sup>34</sup> մատուցանեմք, առաւել եւ ձեզ՝ աւրհնութիւն<sup>35</sup>, զի զգանձն<sup>36</sup> կենաց աննախանձ<sup>37</sup> շնորհեցէք<sup>38</sup> երկրիս Հայոց՝ զմիջնորդն<sup>39</sup> Աստուծոյ եւ մարդկան<sup>40</sup>, զսրբոյ Մկրտչին Յովհաննու<sup>41</sup> զնշխարսն<sup>42</sup>, որով ցնծայ<sup>43</sup> երկիրս Հայոց<sup>44</sup> ի<sup>45</sup> սորա գալստեանս<sup>1</sup>, որպէս եւ անդ

1 *hu* բոլորից  
 2 *I* տի((*բայբայուած էջեզրի հատուած*)...) *ի* իս տիեզերաց  
 3 *fnqrt* գոհանամ  
 4 *noqrtn* ողորմութեամբ / *I* ((*բայբայուած էջեզրի հատուած*)...)մբն *ի*ս ողորմութեամբն  
 5 *hlnqs* Որդւոյն, *o* Որդոյ *ի*ս Որդւոյ (*cmstv*)  
 6 *f* միածնի իւր *ի*ս Որդւոյ ... միածնի  
 7 *hrt* չի՞ որ  
 8 *nq* ազգս եւ ազինս  
 9 *f* ի յերկնային  
 10 *osv* քարոզութեան *ի*ս քարոզութեանն (*chlmn-qrtu*)  
 11 *hmosuv* Յորում *ի*ս Յորմէ (*clnqrt*)  
 12 *msv* այսմ, *o* եւ այս, *fnq* եւ այսմ, *hu* յայսմ *ի*ս եւ յայսմ (*clrt*) (*I* զբնագրում յայսմ աշխարհի *հատուածը՝ Բայբայուած էջեզրում*)  
 13 *chlrtu* կատարեալ *ի*ս կարի առաւել (*mnogsv*)  
 14 *f* մասն առաւել պայծառաց *ի*ս առաւել մասն պարծանաց  
 15 *mosv* աստ եկեալի *ի*ս աստանաւր եկին (*chln-qrtu*)  
 16 *c* սոյն *ի*ս ի նոյն  
 17 *rt* Հոգւով *ի*ս Հոգւոյն / *o* վիճակի սահման ընկալան ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, *hmsvu* սորին սահմանի վիճակի Հոգւոյն (*hu* Հոգւոյն) բանիւ, ի ձեռն նորին շնորհաց *ի*ս ի նոյն սահմանին ... Հոգւոյն (*I* սոող) (*clrt*) / *nq* չի՞ զի երկոքեան ... Հոգւոյն (*2* սոող)  
 18 *clrt* նոքա *ի*ս առ նոքաւք (*hmnogsvu*)  
 19 *clort* նշմարտութեանն *ի*ս նշմարտութեանն  
 20 *hu* ողորմութեան / *clrt* եւ ինդրեմբ ողորմութեամբն *ի*ս սակայն կամբ ողորմութեանն (*hmnogsvu*)  
 21 *o* չի՞ Աստուծոյ / *nq* Քրիստոսի Աստուծոյ մերոյ *ի*ս Աստուծոյ  
 22 *clrt* զթացեալ ի, *hmosuv* զթացաւ առ *ի*ս զթացաւ առ (*hmosuv*)

23 *clrt* ըստ իւրում (*c* ուրում) ժամանակի *ի*ս ի մերում ժամանակիս (*nq*)  
 24 *c* եւ կամեցաւ  
 25 *hmosuv* ըստ որում (*o* չի՞ ըստ որում) կամեցաւ (*hmsuv* չի՞ կամեցաւ) եւ գործեաց սքանչելիս ի մերում ժամանակիս (*hmsuv* ժամանակի) *ի*ս ի մերում ... զսքանչելիսն (*I* սող) (*clnqrt*)  
 26 *hmsuv* որ զարիմակն *ի*ս զոր (*clnoqrt*)  
 27 *nq* դու  
 28 *clrt* չի՞ դու ի  
 29 *sv* մեզանէն, *nq* մէնջ *ի*ս մեզանէն (*chlmortu*)  
 30 *hmsu* լուսի, *nq* լուսար, *crt* առաք *ի*ս լուսի (*osv*) / *I*-ում իսկ լուսի (*կամ առաք*) *հատուածը՝ Բայբայուած էջեզրում*  
 31 *clrt* ծանեալ, *nq* ծանեալ *ի*ս ծանեալք (*sv*) / *hmou* չի՞ եւ ծանեալք  
 32 *nq* կրկին իսկ  
 33 *s* ձեով / *n* չի՞ ձեով  
 34 *clrt* չի՞ Աստուծոյ  
 35 *h* արիւնութեան  
 36 *u* զանձն / *clrt* յայնքան (*c* զայնքան) զանձն *ի*ս զզանձն  
 37 *hmosvu* չի՞ աննախանձ, *I* ((*բայբայուած էջեզրի հատուած*)...) նախանձ, *t* պարծանաց նախանձ *ի*ս կենաց աննախանձ (*cnqr*)  
 38 *s* շնորհեցիք  
 39 *clrt* միջնորդ  
 40 *I* (...(*բայբայուած էջեզրի հատուած*)...)ան *ի*ս Աստուծոյ եւ մարդկան  
 41 *o* Յովհաննու / *clrt* զսրբոյն Յովհաննու Մկրտչին *ի*ս զսրբոյ ... Յովհաննու (*noq*)  
 42 *clort* չի՞ զնշխարսն / *msv* զնշխար սրբոյն Յովհաննու (*m* Յովհաննու) Մկրտչին *ի*ս զսրբոյ ... զնշխարսն (*nq*)  
 43 *nq* ցնծացաւ, *mo* ցնծայ յոյժ, *sv* եւ ցնծայ յոյժ *ի*ս ցնծայ (*clrt*)  
 44 *t* չի՞ Հայոց / *I*-ում երկիրս Հայոց *հատուածը՝ Բայբայուած էջեզրում*  
 45 *mosv* չի՞ ի

Յորդանան<sup>2</sup> Քրիստոսի<sup>3</sup> գալստեամբն<sup>4</sup>:  
6 Եւ<sup>5</sup> գայս գիտութեան աղագաւ<sup>6</sup> ձեզ ծա-  
նուցանեմք, զի<sup>7</sup> որպէս Քրիստոսի իջ-  
մամբն ի ջուրն մահ<sup>8</sup> կորեալ, նոյնպէս<sup>9</sup> եւ  
աստ<sup>10</sup> ի սորա գալստեանս<sup>11</sup> դրունք դժո-  
խոց<sup>12</sup> բնաւ փշրեցան<sup>13</sup>:

7 Զի է<sup>14</sup> աստ<sup>15</sup> յերկրիս<sup>16</sup> Հայոց, ի  
չորրորդ բաժնի Հայոց<sup>17</sup> եւ յերրորդ<sup>18</sup> Հա-  
յոց աւարտին<sup>19</sup>, ի<sup>20</sup> լերինն, որ բնակու-  
թիւն նորա<sup>21</sup> կոչի Տորոս<sup>22</sup> եւ Հատեալ<sup>23</sup>  
անցանէ<sup>24</sup> մինչեւ<sup>25</sup> ի դուռն<sup>26</sup> Պալհաւայ<sup>27</sup>

Պարսից, եւ<sup>28</sup> առ սովաւ բնակի<sup>29</sup> երկիրս<sup>30</sup>  
Մամիկոնէից, բազում վայելուչ<sup>31</sup> տեղաւք  
եւ առատատունկ<sup>32</sup> պիտոյից<sup>33</sup>, որ<sup>34</sup> եւ  
աստ<sup>35</sup> իսկ որջացեալ էր մահ յերկուս<sup>36</sup>  
տեղիս<sup>37</sup>: 8 Եւ այնչափ<sup>38</sup> որջացեալ էր ի  
միում<sup>39</sup> վայրի, մինչ զի<sup>40</sup> Սրբոյ Հոգւոյն<sup>41</sup>  
յայտնեալ լինի<sup>42</sup>: 9 Եւ<sup>43</sup> նա է<sup>44</sup> դուռն<sup>45</sup>  
դժոխոց, զոր Իննակնեան<sup>46</sup> կոչեն տեղ-  
ւոյն<sup>47</sup> Հնդիկք եւ Պարսիկք<sup>48</sup>, որով<sup>49</sup> պան-  
ձան<sup>50</sup> յոյժ բնակիչք տեղւոյն<sup>51</sup> Գիսա-  
նեայ<sup>52</sup> կոոցն<sup>53</sup> եւ նորին եղբաւրն<sup>54</sup> Դե-

- 1 msv գալստեամբս, օ գալստեամբն փխ գալստեանս (clnqrt)
- 2 nq զի կցորդանան (n կցորդանալն) փխ եւ անդ Յորդանան (clrt)
- 3 t ի փխ Քրիստոսի
- 4 nq գալստեանն / mosv Քրիստոսի գալստեամբն ի Յորդանան (s Յորդանանն) փխ Յորդանան ... գալստեամբն (clrt) / hu սորա գալստեամբս, որպէս եւ անդ՝ գալստեամբն Քրիստոսի ի Յորդանան, գմիջնորդն Աստուծոյ եւ մարդկան՝ զնշխարս սրբոյն Յովհաննու Մկրտչին, որով եւ ցնծացաւ յոյժ երկիրս Հայոց փխ գմիջնորդն Աստուծոյ ... գալստեամբն (5 unnh)
- 5 nq Զի փխ եւ
- 6 hmsvu գիտութիւն (s գիտութիւնն) ստուգիւ փխ գիտութեան աղագաւ (clnoqrt)
- 7 hu չիք զի
- 8 u մահն
- 9 clnqrt տոյնպէս
- 10 nqt չիք աստ
- 11 hmstu գալստեանն փխ գալստեանս (clnoqrt)
- 12 hmosuv եւ (sv չիք եւ) դժոխոց դրումք (sv դրումքն) փխ դրումք դժոխոց (clnqrt)
- 13 nq բնաւին իսկ փակեցան, hmosuv խորտակեցան փխ բնաւ փշրեցան (clrt)
- 14 clrt չիք է
- 15 mo սա փխ աստ
- 16 clrt յերկիրս, huo երկիրս փխ յերկիրս (msv) / nq ի յերկիրս
- 17 hmosuv բաժինս փխ բաժնի Հայոց (clrt)
- 18 օ յերկրորդ փխ յերրորդ
- 19 օ աւարտինս
- 20 nq յերկրորդի (q յերկրորդ) աւարտ փխ ի չորրորդ ... աւարտին ի (2 unnh)
- 21 nq բնակութեան որ փխ որ բնակութիւն նորա (clrt) / hmosuv չիք բնակութիւն նորա
- 22 hmosuv Տաւրոս փխ Տորոս (clnqrt) (=Տաւրոս)
- 23 օ հատանէ, nq հասեալ փխ հատեալ
- 24 mv<sup>2</sup> անց է փխ անցանէ
- 25 օ մինչ փխ մինչեւ

- 26 hmosuv դրումս փխ դումն (clnqrt)
- 27 msv Պահլաւայ փխ Պալիաւայ (chlnqrtu)
- 28 nq որ եւ աստ իսկ եւ
- 29 u բնակէ
- 30 mus երկիրն, clrt յերկիրն, h երկրին, sv; յերկրին փխ երկիրս (noq)
- 31 n եւ վայելուչ
- 32 sv ծառատունկ փխ առատատունկ (clnqrt)
- 33 t ծառօք փխ պիտոյից / hmuvs<sup>1</sup> եւ սա բազում վայելուչ կայ տեղաւք փխ բազում վայելուչ ... պիտոյից (1 unnh) (clnqrstv) / օ չիք բազում ... պիտոյից
- 34 hmuo չիք որ
- 35 s այս
- 36 օ եւ յերկուս
- 37 hvs<sup>1</sup> կայ յերկուս տեղիս աստ որջացեալ մահ փխ եւ աստ իսկ ... տեղիս (1 unnh)
- 38 t յայնչափ / l-ում բառը՝ քայնայնած էջեզրում
- 39 sou մերում փխ միում
- 40 u մինչ, ho մինչեւ, msv մինչեւ ի փխ մինչ զի (clnqrt)
- 41 hou Հոգոյն փխ Հոգւոյն (msv) / crt Հոգին Սուրբ, lnoq ահագին սրբոյն փխ Սրբոյ Հոգւոյն
- 42 hmosuv չիք լինի
- 43 hou Թէ, mnsv եթէ փխ եւ (clqrt)
- 44 hmosuv իսկ է
- 45 hmosuv դրումք փխ դումն (clnqrt)
- 46 so Իննակնեանն / nq եւ Իննակնեան
- 47 hmotuv տեղոյն, n տեղի, q տեղիք փխ տեղոյն
- 48 hu Հնդիք եւ Պարսիք
- 49 mosv յոր, hu որ փխ որով (clnqrt)
- 50 nq պանծացան, hmsvu պանծային փխ պանձան (clort)
- 51 nq տեղոյն, hmosuv երկրին վասն փխ տեղոյն (clrt)
- 52 օ Գիսանէ / clrt Գիսանէի
- 53 nq կոոց / h կոոցն Գիսանեայ փխ Գիսանեայ կոոցն
- 54 օ նորում որոյ փխ նորին եղբաւրն



մետրեայ<sup>1</sup>: 10 Ուստի յոյժ բուռնեալ էր սատանայ ի նոյն տեղուջն<sup>2</sup>, զոր եկեալ աղաւթիւք ձերովք<sup>3</sup> ձեռն ի գործ արկաք եւ<sup>4</sup> կործանեցաք զպատկերն<sup>5</sup> սատանայի եւ եղաք<sup>6</sup> ի նոյն տեղուջ<sup>7</sup> մատանի<sup>8</sup> զնշխարս սրբոցն՝ զսրբոյն<sup>9</sup> Կարապետին Յովհաննու<sup>10</sup> եւ զԱթանազիւնայ<sup>11</sup> վկայի<sup>12</sup>, ուստի ի<sup>13</sup> վայր կործանեցաւ մահ իւրով կարողութեամբն<sup>14</sup>, եւ այժմ<sup>15</sup> Աստուած պատուի եւ<sup>16</sup> երկրպագի<sup>17</sup>:

11 Ի նոյն Իննականեան տեղուջն<sup>18</sup> թողի եւ<sup>19</sup> զերկոսին<sup>20</sup> կենդանիսն<sup>21</sup> զԱնտոն<sup>22</sup> եւ զԿրաւնիդէս<sup>23</sup>, զոր<sup>24</sup> դու իսկ<sup>25</sup>

ըստ<sup>26</sup> սիրոյ քո ընծայեցեր<sup>27</sup> զնոսա<sup>28</sup> աշխարհիս<sup>29</sup> Հայոց<sup>30</sup>: 12 Որոց եւ եղեալ իսկ է<sup>31</sup> զիւրեանց մարմինս<sup>32</sup> կենդանի<sup>33</sup> ի<sup>34</sup> խաչ հանել<sup>35</sup> ընդ Քրիստոսի<sup>36</sup>, եւ<sup>37</sup> վասն այլոց աւգտի մնան<sup>38</sup> ի մարմնի, զոր<sup>39</sup> իբրեւ զանգիւտ մարգարիտ համարիմ զնոսա՝ տուեալ<sup>40</sup> ինձ:

13 Այլ ըստ մտերմական սիրոյ ողորմութեան<sup>41</sup> քո, զոր ունիս առ մեզ<sup>42</sup>, աղաչեմ՝ զմիւս<sup>43</sup> եւս<sup>44</sup> ընծայս<sup>45</sup> այլ շնորհեսցես<sup>46</sup> ինձ<sup>47</sup>: 14 Զի հունձք<sup>48</sup> բազումս<sup>49</sup> են<sup>50</sup>, եւ մշակք<sup>51</sup> սակաւ<sup>52</sup>: 15 Այլ<sup>53</sup> զքեզ

1 *clt* Գիմետրեայ  
 2 *l* տեղոջն / *nq* ի նոյն տեղոջն բունեալ էր սատանայ *փխ* յոյժ ... տեղուջն (*clrt*)  
 3 *hmou* չի՞ տեղուջն գոր ... ձերովք (*l unq*) (*clnqrt*)  
 4 *hmou* առեալ *փխ* արկաք եւ / *sv* չի՞ տեղուջն գոր ... արկաք եւ (*2 unq*)  
 5 *t* զպատկեր / *o* կործանեցի զպատկերս *փխ* կործանեցաք զպատկերն  
 6 *o* եղի  
 7 *lmvu* տեղոջ / *nq* տեղոջն / *c* տեղի  
 8 *n* մտանի, *t* մատենի, *v* մատրանի, *hmsu* մատրանայի, *v*<sup>2</sup> մատրանայ *փխ* մատանի (*clqrv<sub>4</sub>*)  
 9 *hmsuv* սրբոյ *փխ* սրբոցն գարբոյն (*clrt*) / *nq* զնշխար սրբոյ *փխ* զնշխարս ... գարբոյն / *o* չի՞ սրբոցն գարբոյն  
 10 *msv* Յովհաննու / *ot* չի՞ Յովհաննու  
 11 *clrt* զԱթանազիւնի, *hmou* Աթանազիւնէ, *sv* Աթանազիւնեայ *փխ* զԱթանազիւնեայ (*noq*)  
 12 *u* վկային  
 13 *u* չի՞ ի  
 14 *chlntu* կարողութեամբ  
 15 *clrt* արդ այժմ  
 16 *o* պատուեալ *փխ* պատուի եւ  
 17 *hmsvu* երկրպագեալ (*u* երկիր պագեալ) պատուի *փխ* պատուի եւ երկրպագի (*clr*) / *nqt* չի՞ եւ երկրպագի  
 18 *m* տեղոջն / *o* տեղուջ / *hnqu* տեղոջ  
 19 *v* թողի, *n* ողի եւ, *s* թողեալ, *hmou* եւ ի նոյն տեղոջն թողի (*u* թող) *փխ* թողի եւ (*clqrt*)  
 20 *n* գերկոսեան / *tq* եւ գերկոսին  
 21 *oq* կենդանի վկայսն Քրիստոսի, *n* կենդանի վկասն *փխ* կենդանիսն (*chlmstuv*)  
 22 *cln* զԱնտոնովն / *u* զԱնդոն / *t* զԱնտոն  
 23 *o* զԿրովմիդէս  
 24 *hmsv* զորս, *o* որ *փխ* զոր (*clnqut*)  
 25 *hmsuv* չի՞ իսկ

26 *l* ընդ *փխ* ըստ  
 27 *o* ընծայս մատուցեր, *clrt* ընծայեցուցեր *փխ* ընծայեցեր (*hmqsv*)  
 28 *nq* չի՞ գնոսա  
 29 *hu* աշխարհ  
 30 *nq* Հայոց. ի տեղոջն, ուր Գիսանէսն կործանեցաւ  
 31 *o* կէտ, *hmsvu* եւ, *c* է ի մտի *փխ* է (*lrt*)  
 32 *nq* որք զմարմինս իւրեանց *փխ* Որոց եւ ... մարմինս (*l unq*)  
 33 *mo* չի՞ զիւրեանց մարմինս կենդանի  
 34 *mosv* զամենայն աւուրս ի  
 35 *l* հանեալ, *nq* հանին, *msuv* ելանել *փխ* հանել (*ct*) / *o* խաչեալ *փխ* ի խաչ հանել  
 36 *h* ընդ Քրիստոսի ի խաչ ելանել *փխ* ի խաչ հանել ընդ Քրիստոսի  
 37 *hmsvu* չի՞ եւ (*clnqrt*)  
 38 *clrt* մնաց, *hmsuv* մտաց *փխ* մնան (*noq*)  
 39 *noq* զորս, *clrt* զի *փխ* զոր (*hmsuv*)  
 40 *o* տուեալս  
 41 *clrt* սիրոյ ողորմութեան, *hmsuv* սիրոյ մտերմութեանը *փխ* մտերմական սիրոյ ողորմութեան (*nq*)  
 42 *n* իս *փխ* մեզ / *clrt* ընդ իս *փխ* առ մեզ  
 43 *hu* զմի, *msv* զի մի *փխ* զմիւս (*clnqrt*)  
 44 *noq* չի՞ եւս  
 45 *hmvo* ընծայս *փխ* ընծայս (*nqs*)  
 46 *h* մատուցանիցես, *msvu* մատուցանես *փխ* շնորհեսցես (*o*)  
 47 *clrt* այլ շնորհեսցես մեզ ընծայեալս *փխ* ընծայս ... ինձ / *nq* ինձ շնորհել *փխ* շնորհեսցես ինձ  
 48 *crt* հունձ / *l-nul* բարձր՝ *փայլալուստ էջերուն*  
 49 *hms* բազումս  
 50 *h* եւ հասեալ ի Քրիստոս, *o* հասեալ եւ ի Քրիստոս *փխ* եւ  
 51 *clu* մշակ  
 52 *msv* սակաւս  
 53 *huo* Բայց *փխ* Այլ

աղաչեմք<sup>1</sup>, զի իբրեւ ճշմարիտ Տէր մշակաց<sup>2</sup> հանցես այլ<sup>3</sup> մշակս<sup>4</sup> ի հունձս յայսոսիկ<sup>5</sup>: 16 Յորոց<sup>6</sup> մին մշակն, զոր խնդրեմք ի քէն, Եղիազար<sup>7</sup> է՝<sup>8</sup> եղբայրն<sup>9</sup> Զենոբայ<sup>10</sup>, զոր ես ածեալ ընդ իս<sup>11</sup> ձեռնադրեցի եպիսկոպոս տանն Մամիկոնէից<sup>12</sup>, արդ՝ եւ զդա<sup>13</sup> յղեսցես հանդերձ այլ մշակաւք<sup>14</sup>: 17 Մանաւանդ եւ զՏիմոթէոս Ագղենացւոց<sup>15</sup> եպիսկոպոսն<sup>16</sup> յղեսցես<sup>17</sup>, զոր դու իսկ գովէիր զհմտութիւն<sup>18</sup> դպրութեանն<sup>19</sup>,

որ<sup>20</sup> յոյժ իսկ պիտանի է<sup>21</sup> երկրիս<sup>22</sup> այսմիկ<sup>23</sup>:

18 Որով<sup>24</sup> աւգնականութիւն<sup>25</sup> գտեալ ի քէն աղաւթիւք<sup>26</sup> եւ խրատիւք<sup>27</sup>, ուստի<sup>28</sup> եւ յարածամ<sup>29</sup> ճգնութեամբ<sup>30</sup> բազմաց աւրինակ գոլով եւ դաստիարակելով, շնորհիւ<sup>31</sup> Տեառն՝ ո՛ղջ լիցիս<sup>32</sup>, բաւական<sup>33</sup> բազմաց<sup>34</sup> աւգնականութեան<sup>35</sup> ի Տէր եւ մերոյ բարեխաւսութեամբ<sup>36</sup>. ամէն:

1 *nq* աղաչեմ / *hmsv* աղաչեմք գձեգ *փ/ս* գեգ աղաչեմք (*clnoqt*)  
 2 *hmosuv* չիք իբրեւ ճշմարիտ Տէր մշակաց  
 3 *hmosuv* չիք այլ (*clnqt*)  
 4 *hu* մշակ  
 5 *h* յայսոսիկ / *u* այսոսիկ / *o* Տեառն *փ/ս* յայսոսիկ  
 6 *hu* որոց  
 7 *hmosuv* Եղիազարոս *փ/ս* Եղիազար (*clnqt*)  
 8 *o* չիք է  
 9 *hmsu* եւ միւսն (*hu* միւս), զոր ածեալ ձեռնադրեցի եպիսկոպոս, եղբայրն (*m* եղբայր), *o* եւ Սիւս Հայոց եպիսկոպոս, եղբայր, *v* եւ միւսն եղբայր *փ/ս* եղբայրն (*nq*)  
 10 *hmsuv* Յակոբայ Ասորոյ (*hu* Ասորոյ) *փ/ս* Զենոբայ (*noq*) / *clt* չիք եղբայրն Զենոբայ  
 11 *clt* չիք ընդ իս / *hmosuv* ընդ իս (*hu* ընդթունիս, *m* ընդունիս) ածեալ (*m* ածել, *hsu* ածէր) *փ/ս* ես ածեալ ընդ իս (*nq*)  
 12 *hmosuv* Մամիկոնէից տանն (*u* տան) *փ/ս* տանն Մամիկոնէից (*clnqt*)  
 13 *t* գայդ *փ/ս* գդա  
 14 *o* չիք արդ եւ գդա ... մշակաւք (*l* տող)  
 15 *s* Աթենացոց, *o* Ադդենացոց, *nqu* Ագղենացոց *փ/ս* Ագղենացոց (*hmsuv*)  
 16 *hov* եպիսկոպոս  
 17 *clt* մանաւանդ յղեսցես եւ զՏիմոթէոս Ագղենացոց (*c* Ագղենացոց) եպիսկոպոս հանդերձ այլ մշակաւք *փ/ս* արդ եւ ... յղեսցես (*3* տող)  
 18 *hu* հմտութիւն  
 19 *clnu* դպրութեան, *o* դպրութիւն *փ/ս* դպրութեանն (*hmqstv*)

20 *o* նորա, *c* եւ ինձ, *hmsuv* որ էր *փ/ս* որ (*lnq*) / *t* չիք որ  
 21 *hmsuv* չիք է  
 22 *o* երկրորդիս *փ/ս* երկրիս  
 23 *hmosuv* մերում *փ/ս* այսմիկ (*nq*) / *clt* զի յայսմ *փ/ս* երկրիս այսմիկ  
 24 *hmqsv* չիք Որով (*clot*)  
 25 *h* օգնականութեան  
 26 *noq* աղաւթից *փ/ս* աղաւթիւք  
 27 *nq* խրատու, *hmsuv* խրատուց *փ/ս* խրատիւք (*clt*) / *o* չիք եւ խրատիւք  
 28 *h* չիք ուստի  
 29 *t* ժամ *փ/ս* յարածամ / *l*-ում բառը *բայբայուած էջեգրում է*  
 30 *hu* նգնութեանդ, *mosv* նգնութեամբդ *փ/ս* նգնութեամբ (*clnqt*)  
 31 *hmov* շնորհիւն  
 32 *nq* լեր, *o* լինիք *փ/ս* լիցիս (*hmosuv*) / *clt* կոչեսցիս *փ/ս* ողջ լիցիս  
 33 *noq* վասն *փ/ս* բաւական (*chlmotuv*)  
 34 *h* չիք բազմաց  
 35 *s* օգնութեամբ *փ/ս* աւգնականութեան  
 36 *o* բարեխաւսութեանս, *hmsuv* բարեխաւսութեամբս *փ/ս* բարեխաւսութեամբ (*clt*) / *nq* եւ մերոց բարեխաւսութեան ի Տէր *փ/ս* ի Տէր ... բարեխաւսութեամբ

[A] ՊԱՏՃԵՆ<sup>1</sup> ԵՐԿՐՈՐԴ.

ՊԱՏԱՍԽԱՆԻ<sup>2</sup> ՊԱՅՄԱՆԱԴՈՐ<sup>3</sup> ԳՐՈՅՆ<sup>4</sup> ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ, ՉՈՐ ՅՂԵԱՅ<sup>5</sup>  
ԿԵՍԱՐՈՒ<sup>6</sup> ՅԱՅՐԱՊԵՏՆ<sup>7</sup> Ի ԺԱՄ ՎԱՂՃԱՆԻ<sup>8</sup> ԻՐՈՅ<sup>9</sup>

1 «Երջանիկ եւ աստուածարեալ տեառն՝ եղբաւրդ, եհաս սուրբ եւ ուրախարար գիր առ մեզ<sup>10</sup> եւ յոյժ անթերի ուրախութեամբ լցոյց զվշտագնեալ անձն<sup>11</sup> իմ: 2 Որ թէպէտ վասն տրտմութեանս հասելոյ<sup>12</sup> ի վշտի էի, սակայն շարժեաց<sup>13</sup> զմեր դանդաղութիւնս ձեր գոհութեան նամակդ<sup>14</sup>:

3 Զոր ընթերցեալ՝ գոհութիւն մատուցի Աստուծոյ, ըստ գրեցելոյ<sup>15</sup> ի քեն<sup>16</sup>, որ ոչ անտես արար Աստուած<sup>17</sup> զագգս հիւսիսական<sup>18</sup>, որք զրկեալք բազում ժամանակս<sup>19</sup> ի ճշմարտութենէն՝ զմոլորեցուցիչս իւրեանց աստուած<sup>20</sup> համարէին<sup>21</sup>: 4 Զի<sup>22</sup>

զայն ուսոյց<sup>23</sup> նոցա հակառակամարտն<sup>24</sup> ճշմարտութեան սատանայ, զի ընդ խաւար ընթացեալք՝ զրկեալք լինին<sup>25</sup> յաստուածածանաւթութեանցն<sup>26</sup>: 5 Այլ ի դէպ եկեալ նոցա մարգարէին բան<sup>27</sup>, թէ՛ «ժողովուրդ<sup>28</sup>, որ<sup>29</sup> նստէր<sup>30</sup> ի խաւարի<sup>31</sup>, տեսին<sup>32</sup> զլոյս մեծ աստուածգիտութեան<sup>33</sup>»: 6 Որ թէպէտ եւ<sup>34</sup> վաղ իսկ ծագեաց արեգակն արդարութեան ընդ արարածս, սակայն ազգդ<sup>35</sup> քո ի տուրնջեան իբրեւ ի գիշերի<sup>36</sup> գորմ<sup>37</sup> խարխափեալք<sup>38</sup>: 7 Ուստի եւ այժմ դեռ հայեցաւ ի դոսա Աստուած<sup>39</sup> եւ էջ փրկել զդոսա<sup>40</sup> ի ձեռաց անմարմին փարաւոնի<sup>41</sup>, զի<sup>42</sup> վերագոյն<sup>43</sup> գտար տանջա-

1 hmsuwy; պատմառ փիս պատմէն (Inoqtv)  
2 It պատասխանիս / msuv; քրթիմ պատասխանի / h պատասխանի քրթիմ  
3 n պայման աւուր, clt պայմանաւորութեան, msv; պատմութիւն փիս պայմանաւոր (oqw) չիք պայմանաւոր  
4 svv; գրոց, cmo գրոյ փիս գրոյն (Inqt) / hu պատմագրոց փիս պայմանաւոր գրոյ / w չիք գրոյն  
5 o գրեաց փիս յղեաց  
6 o ի Կեսարեայ / w ի Կեսարիայ / nq ի Կեսարիոյ  
7 suv; հայրապետիմ  
8 w վախճանիմ, o վաղճանիմ, hmstvu վախճանի փիս վաղճանի (clnqv)  
9 o չիք իւրոյ  
10 hmsv առ մեզ սուրբ եւ ուրախարար գիր քո, wo գիր ուրախարար փիս սուրբ եւ ... առ մեզ (Inqt)  
11 h անձ  
12 sv հասանելոյ / o յամելոյ տրտմութեանս փիս տրտմութեանս հասելոյ  
13 hmsv շարժեալ փիս շարժեաց (lo)  
14 hsv նամակն փիս նամակդ (lmo)  
15 l գրելոց  
16 o գրեցելոյ փիս գրեցելոյ ի քեն  
17 o չիք Աստուած  
18 l հիւսուսական / o հիւսիսական  
19 o բազում անգամ զրկեալս փիս որք զրկեալք ... ժամանակս  
20 lo աստուածս փիս աստուած (hmsv)

21 l անուանէին, o համարելով փիս համարէին (hmsv)  
22 hmsv եւ փիս Զի (lo)  
23 l եցոյց փիս ուսոյց  
24 l հակառակորդ, mo հակառակն փիս հակառակամարտն (hsv)  
25 v լինէին, o լիցին, l էին փիս լինին (hms)  
26 h յաստուածածանութեանց  
27 lo բանն փիս բան (hmsv)  
28 lo ժողովուրդ փիս ժողովուրդ (hmsv)  
29 o որք  
30 lo նստէիք փիս նստէր (hmsv)  
31 l խաւարի անգիտութեան  
32 s ետես, lo տեսէք փիս տեսին (hmv)  
33 o աստուածգիտութեանն, h գիտութեան փիս աստուածգիտութեան (msv) / l չիք աստուածգիտութեան  
34 hmsv եւ փիս ի (lo)  
35 ms ազգդ  
36 s գգիշերի փիս ի գիշերի  
37 o գորմս, s գորմն փիս գորմ (hlmv)  
38 ho խարխափեալք, mv խարխափեալք փիս խարխափեալք (lsv)  
39 l Աստուած ի նոսա փիս ի դոսա Աստուած  
40 o չիք զդոսա  
41 It փարաւովնի, այսինքն սատանայէ  
42 s գոր փիս գի  
43 l վերագոյն իսկ

նաւք<sup>1</sup> քան զՄովսէս՝ ոչ խնայելով ի մարմինդ քո, մինչեւ ազատեալ հաներ յանապատն Սինեայ<sup>2</sup> յանկոխն<sup>3</sup> գազանաց, ուստի հալածական լինէին ցաւք եւ հեծութիւնք<sup>4</sup>:

8 Եւ արդ՝ քանզի<sup>5</sup> քեւ ծագեաց ի դոսա արեգակն արդարութեան<sup>6</sup> Քրիստոս<sup>7</sup>, եւ դու ընտրեցար<sup>8</sup> ի տեղի ընտրելոց<sup>9</sup> սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի<sup>10</sup> եւ Թադէոսի, յիշեա՛ զնոցա<sup>11</sup> նահատակութիւնն<sup>12</sup>, եւ մի՛ երբէք վերջացիս<sup>13</sup> ի շաղաց նոցա: 9 Զի եւ<sup>14</sup> չիք ինչ<sup>15</sup> պատճառաւ<sup>16</sup>, զի ետ<sup>17</sup> զդոսա Տէր ի շինել, եւ ո՛չ ի քակել. քանզի եւ սկիզբն<sup>18</sup> իսկ է մուտ<sup>19</sup> Կարապետիդ<sup>20</sup> յաշխարհդ<sup>21</sup> Հայոց: 10 Որ եւ զիմ<sup>22</sup> անուն<sup>23</sup> գրեսջիր ի քո<sup>24</sup> դպրութեանդ<sup>25</sup>, եւ գրեսցես<sup>26</sup>, զի եւ<sup>27</sup> այնու<sup>28</sup> մասն արհնութեան ընկալայց յետ<sup>29</sup> քո:

11 Այլ եւ<sup>30</sup> խրատ<sup>31</sup> բարեաց տամ քեզ<sup>32</sup>. զիննականեան տեղիսդ, զոր Բարեբախտ<sup>33</sup> ասեն ոմանք, շինեսջիր<sup>34</sup> զգաբնակութիւն<sup>35</sup> դասուց կրանաւորաց, եւ կացուցես զդոսա ըստ արհնակի<sup>36</sup> այսր<sup>37</sup> կրանաւորացս, զոր տեսեր<sup>38</sup> ի մերում վիճակիս: 12 Զոր եւ ի սրբոյն<sup>39</sup> Անտոնէ<sup>40</sup> ուսցիս զկարգ ճգնութեան<sup>41</sup>, զի<sup>42</sup> ոչ իւրիք<sup>43</sup> պակաս է, քան զառաջինն Անտոն<sup>44</sup>: 13 Զոր եւ քեզ աւգնութիւն համարիմ գայս<sup>45</sup>, զի եւ<sup>46</sup> զԵպիփան՝ զաշակերտ<sup>47</sup> սրբոյն Անտոնի, հաւանեցուցի<sup>48</sup> գալ ի նոյն Իննականեան տեղին՝ ունելով ընդ ինքեան<sup>49</sup> ընտիրս<sup>50</sup> արս<sup>51</sup> քառասունս<sup>52</sup> ճգնաւորս<sup>53</sup> խարազնագգեստս<sup>54</sup>, պարկեշտ

1 I տանջանաւոյ  
2 hsv Սինայ փխ Սինեայ (Imo)  
3 հ յանկոխ / օ յանկոխն ի  
4 I հեծութիւնք եւ ցաւ փխ ցաւ եւ հեծութիւնք  
5 m վասնզի փխ քանզի  
6 I նշարտութեան արեգակն փխ արեգակն արդարութեան  
7 sv արեգակն արդարութեան Քրիստոս ի դոսա փխ ի դոսա ... Քրիստոս (Ihmo)  
8 հ ընտրեցիր / Iv ընտրեցար  
9 lo չիք ընտրելոց / v ընտրելոց  
10 ms Բարդուղիմէոսի  
11 I զնոցին  
12 I նահատակութիւնն / հ նահատակութիւն  
13 I վերջանայք  
14 I չիք եւ  
15 I այժմ փխ ինչ  
16 I պատճառք վասն իրերացդ փխ պատճառս  
17 I եղ փխ ետ  
18 հ ի սկիզբ  
19 ms մօտ փխ մուտ  
20 hm Կարապետդ, օ Կարապետին փխ Կարապետիդ (Isv)  
21 I շինութեան մուտ սրբոյ Կարապետիդ յաշխարհիդ փխ իսկ է մուտ ... յաշխարհիդ  
22 I զիմ իսկ  
23 hsv անունս փխ անուն (Imo)  
24 lo չիք քո  
25 I դպրութեանցդ / s դպրութիւնդ  
26 lo չիք եւ գրեսցես (hmsv)

27 I չիք եւ  
28 hmo այնու եւ փխ եւ այնու (sv)  
29 հ ետ փխ յետ  
30 I եւս փխ եւ  
31 հ ի խարտ փխ խրատ  
32 hmv ճեզ փխ քեզ (Iso)  
33 ho Բարեբախտ, mv Բարեբախտիս, s բարեբախտն փխ Բարեբախտ (Inqt)  
34 I շինեցես  
35 հ բնակութեան  
36 I արհնի  
37 I այս փխ այսր  
38 I տեսերդ  
39 հ սուրբ  
40 I Անտոնէն  
41 օն ճգնութեանն  
42 I որ փխ զի  
43 I ինչ փխ իւրիք  
44 ho զառաջին Անտոնն, It յառաջին Անտոնէն փխ զառաջինն Անտոն (msv)  
45 hms գայն  
46 mosv չիք եւ / հ չիք զի եւ  
47 hmosv աշակերտ  
48 I սրբոյդ Անտոնի յաւանեցուցի փխ սրբոյն Անտոնի հաւանեցուցի  
49 օ իւր փխ ինքեան  
50 lo չիք ընտիրս / հ ընտիր, m ընտիր, v ընտիրս փխ ընտիրս (s)  
51 hm արք  
52 օն բառասուն / I բառասուն այր փխ արս բառասունս  
53 hmo ճգնաւորս եւ  
54 m խարազնագգեստս

1 Բան, զոր հարցէք, ո՛վ բարէփառութեան հարցափորձող<sup>1</sup> աստուածապահ տէր իմ, թէ զի՞նչ միտք մի բնութիւնս<sup>2</sup> ասելն առնէ Բանին եւ մարմնոյն, եւ զի՞նչ որ երկուսն ասեն բնութիւնս յետ միանալոյն Բանին ի մարմին իւր. եւ որպիսի՞ ինչ յերկուց բնութեանց միացեալ ասելն իցէ զբնութիւն Որդոյն Աստուծոյ յաստուածութենէն եւ ի մարդկութենէն. եւ եթէ ո՞ր է ճշմարտութիւն որով եկեղեցի Աստուծոյ խոստովանի զուղիղ հաւատն:

2 Լուծումն այսպիսի ինչ է այդոցիկ խընդրոց, որ քան կարճ ի կարճոյն մարթի յիշեցուցանել:

3 Որք մի ասեն բնութիւն Բանին եւ մարմնոյն, կատարեալ են ամբարիշտք. զի մարմինն ի կուսէն է, եւ կոյսն դուստր Դաւթի եւ Աբրահամու, որպէս ասաց առաքեալ, գփրիստոս ի հրէից ըստ մարմնոյ՞. եւ եթէ զգաւակէն Աբրահամու բուռն հարկանէ: 4 Այլ Աբրահամ եւ մարդիկ ի նախահաւրէն Ադամայ եւ յերկրէ ունին սկիզբն: 5 Իսկ Բանն Աստուած հոգեղէն ստեղծիչ Ադամայ<sup>3</sup>, քանզի ամենայն որ ինչ եղեւ<sup>4</sup> Բանին, ասէ, Յոհաննէս, եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ որ ինչ եղեւ<sup>5</sup>: 6 Եւ արդ՝ զի՞ Աստուծոյ անեղի եւ արարչի եւ հողոյ, ժամանակաւ արարելոյ ի նմանէ մի իցէ բնութիւն: 7 Իսկ չորրորդութիւնն<sup>5</sup> այսպէս առնեն այսպիսի խոստովանողք զերրորդութիւնն, զի մի բնութիւն է Աստուծոյ Հաւր<sup>6</sup> եւ Բանին եւ

Սուրբ Հոգոյն, եւ երեք առանձնաւորութիւնք. մի բնութիւն Հայր եւ Որդի եւ Հոգին Սուրբ: 8 Ապա թէ եւ մարմնոյն եւ Բանին մի բնութիւն է, որպէս Բանին եւ Հաւր մի է բնութիւն եւ զիւր համաբուն մարմինն զգեցաւ Բանն. չորք սոքա նախ քան զմիանալ Բանին եւ մարմնոյն լինին. Հայր եւ Հոգին Սուրբ, Բանն Աստուած եւ մարմինն: 9 Այլ միանալ բնութեանցն ոչինչ այլ նշանակէ, եթէ ոչ, զի աւտար նախ միմեանց էին բնութիւնքն, որ յետոյ միացան մարմնալուին Աստուածն Բանի. ապա յիրաւի եղիցի մեզ զայնպիսիսն խոստովանողս անուանել կատարեալ ամբարիշտս:

10 Իսկ որք ք. ասեն բնութիւնս յետ միանալոյ Բանին եւ մարմնոյն, զմինն Աստուած սոսկ արտաքոյ քան զմասունս մարմնոյն, անտես եւ անշաւափ, հզաւր եւ գիտակ, եւ զամենայն (զհաւր դնեն ի վեր)<sup>7</sup> քան զկարիս<sup>8</sup>: 11 Իսկ զմիւս բնութիւնն մարդ մահկանացու, տգէտ, անզաւր, ի ներքո ամենայն կարեաց եւ ապականութեանց. եւ յետ, Ղ աւելի ամաց յառաւել քան զայս փոփոխել<sup>9</sup>. բնութիւն զայսպիսի<sup>10</sup> ասողս թէպէտ եւ բանիւ ոչ, իրաւք երկուս ցուցանեն, որպէս թէ անձն մի համբաւեն, կամ ոչ առեալ սոքա ասեն մարմին ի կուսէն. կամ ի գոյացեալ նախ բնութիւն մարդոյն բնակութեամբ մշտնջենաւորեցուցանեն ի մարմնին զԱստուած Բանն, որ ոչ այլ եւ այլ, բայց սոյն յայտէ, եթէ ոչ հաւատան, եթէ Բանն մարմին եղեւ. զի եթէ հաւատալի էր նոցա բանին

1 Բեռլինի ձեռագրում՝ հարցափորձող

2 Բեռլինի ձեռագրում՝ բնութիւնն

\*\*\* Տէ՛ս Հոգո՛ւ թ՛ 5:

3 Ադամայ

4 եղեւ

բ Յ՛՛՛՛՛ Ը՛՛՛՛՛՛

5 չորրորդութիւն

6 եւ հոր

7 Փակագծի մէջ առնուած բառերը լրացնում ենք Բեռլինի թիւ 51 ձեռագրից. հ. Բեռլինացի ձեռագրի մէջ տեղը բաց է թողնուած:

8 զկարիս, եւ ապակաճութիւն եւ մահ

9 փոփոխեալ

10 զայսպիսիս ասաւղս

մարմնանալ, ոչ բաժանելին զբանն յայն իմեքէ, որ ինչ ինքն եղեւ<sup>1</sup>: 12 Եւ զի արդ վարին ձայնիւ միանալոյ բնութեանցն, զի եթէ ճշմարտեն զոր ասենն, զիա՞րդ բաժանելին, զոր միացուցանենն. ապա թէ անմիացեալ զբնութիւնսն զիտեն, ոչ պարտին այնպիսիքն միանալով վարել ձայնիւ բնութեանցն. զի եթէ երկու կացին բնութիւնքն, ոչ միացան. ոչ միացեալքն ոչ կարեն առնուլ զասուամն միութեանն, իսկ զի ճիշտ միացան ի ձեռն հրաշափառ խառնմանն, բաւական է միանալդ անուն զանքանակութիւն ցուցանել բնութեանցն, եւ զմիութիւն ինքեան. ապա նոքա ամբարիշտ զինքեանս խոստովանին, որք ձայնիւ վարին միանալոյ, իսկ զիրան զորմէ միանալն ասի, հեռագոյն ի բաց որոշեն յԱստուած եւ ի մարդ ըստ իւրաքանչիւր անկից:

13 Իսկ որ յերկուց բնութեանց միացեալ ասեն զՈրդոյն Աստուծոյ զբնութիւն, թերի նոքա լսողացն զիւրեանց իմացուցանեն խոստովանութիւն, զի յերկուց բնութեանց ասել մասն եւ մասն ի միողէ եւ ի միւսմէ նշանակէ բնութեանցն, յորոց միանալն ասի: 14 Եւ այսպէս Հանկանակալ բերեալ յաստուածութենէ եւ ի մարդկութենէ ասել, այլ ոմն բնութիւն բնաւորեալ զՈրդին ի մէջ ցուցանէ զԱստուած եւ մարդ, որոց կատարեալ այնպիսին կարէ գոլ եւ ոչ մարդ, վասն զի զմասն ինչ յԱստուծոյ եւ ի մարդոյ ունել, այլ ոչ զբովանդակն. որպէս զգիցագոունսն առասպելիցն հեթանոսաց ճարտարաբանքն ուրեմն կենդանոյ ծնեալ բնութիւնս ի դից եւ ի մարդկան խառնակութենէ. եւ զի ոչ մասն ինչ յաստուածութենէ էր Բանն. այլ կատարեալ Աստուած, եւ մարմնանալն դորայ

ոչ մասն մարդոյ լինի, այլ կատարեալ մարդ: 15 Սոքա կամ տխմարութեան տուամբ շաղեալք անհանճարս զինքեանս հրապարակեն. եւ կամ թէ այսպէս իսկ զմտաւ ածեն մասն ինչ յաստուածական եւ մասն ինչ ի մարդկական բնութենէ ի մի ածեալ տեղի միանալ զՔրիստոս, Ապողինարի հայհոյութեանն հաւասար են անաւրէնքն. զի զլիով Աստուած եւ մարդ յոյսն մեր զՏէր Յիսուս Քրիստոս անկատար իմն բնաւորեալ իշխեցին հայհոյել աւտար քան զԱստուած եւ զմարդ բնութիւնս այսպիսի<sup>2</sup> ասողքն, յոչէէ ի գոյութիւն եկեալ, եւ այլայլեալ զբնութիւն Որդոյն Աստուծոյ յայտնապէս քարոզեն. եւ յիրաւի են ընդ նզովիւք ի Նիկիայ գումարեալ սուրբ հարցն. զի ոչ զարհուրեցան զմարմնանալն Աստուած Բանի յիշակիսոյ ծնունդ բերեալ նմանութիւն:

16 Այլ եկեղեցի Քրիստոսի փախուցեալ յայսպիսի խոտորմանց, ուղիղ խոստովանութեամբ լուսաւորէ զծնունդս իւր. որք միանգամ ի մահ անդր Քրիստոսի Աստուծոյ մերոյ մկրտիմ<sup>3</sup>: 17 Քանզի գիտէ եթէ բնութիւնքդ երկոքեան Աստուծոյ եւ մարդկան աւտարք միմեանց էին յառաջագոյն, եւ որիչք ամենայն հեռաւորութեամբ. որքան ինչ Աստուծոյ արարչի եւ արարածոյ հողոյս<sup>3</sup> գայր ընդ մէջ մարմնանալոյն Աստուածն կատարեալ ծնանէր յԱստուծոյ Հաւրէ նոյն մարդ բովանդակնա ի մաւրէ իւրմէ ի սուրբ կուսէն եղեւ. ըստ որում եւ աստուածածին այս ասի կոյս եւ ոչ մարդածին: 18 Այսոքիկ նախական աւանդութեամբ վերադասեալ ի մերոյդ յՈրդին Աստուծոյ յինքնատեսաց եւ ի սպասաւորաց Աստուածն Բանի եղելոյ մինչ առ մեզ պաշտեցաւ անդամք

1 Այստեղից մինչեւ վերջը Բեռլինի ձեռագիրը չունի. տորան կցուած է՝ «Առ երկարանակս» գրութեան երկրորդ կէս մասը՝ «եւ զի՞նչ մասն է» հատուածից սկսած:

2 Ձեռագրում՝ այսպիսի  
 « Հմբ. Հմբ. Զ 3:  
 3 Ձեռագրում՝ հոյոյս

Քրիստոսի եկեղեցի սուրբ: 19 Իսկ եթէ նոր այժմ քարոզի ումեք բարձրագոյն, յայտնեսցի Բան. ցուցցէ յաստուածային գրոց եւ լուիցուք: 20 Քանզի ճշմարտութիւնն ոչ զհակառակ կալ ինքեան, այլ զհաւանելն պահանջէ յառողջամիտ խուզողացն, միայն թէ ոչ հարըստահարեսցէ զլսելիս ստուծիւնն զճշմարտութեանն պերճացեալ ձեւ:

1 Նորին. Աշակերտի Թեոդորիտի դագոն կոչեցեալ. Առ երկար-նակսն ընդդիմադրութիւն:

2 Անստացական Բանն Աստուած ի մարդանալն յաւելուած էականի բնութեանն իւրոյ ոչ արար կամ ընկալաւ, եւ թէ մարդկան բնութեանս առգործեաց յաւելուած, զի երեւեսցի մարդանալոյ նմա պատճառն քանզի ոչ է թարց պատճառի. եւ աստուատ ծանիցի երկակցութիւն եւ միութիւնն թարց փոխարկութեանն. զի անստացականն<sup>1</sup> ի ստացականութիւն ոչ կարա նա (s) փոխարկիլ, եւ ոչ ստացացականն. անստացական էանալ եւ յարարածէ անարար գոյանալ. եւ յաւելուած լինել աստուածային բնութեանն. իսկ մարդկային բնութեանս հաւաստի յաւելուած առգործեաց. զի ի մահկանութենէ անմահ արար, եւ յապականութենէ անապական, եւ յերկրաւորութենէ երկնային. եւ աթոռակից Հաւր ցուցաւ, եւ Երրորդութիւնն Երրորդութիւն մնաց եւ ոչ ընկալաւ յաւելուած:

3 Դարձեալ մի բնութիւն Բանին Աստուծոյ խոստովանելով կենդանոյ Որդոյն Աստուծոյ ի կենդանոյ Հաւրէն, իսկ զմիւս բնութիւնն հարկաւոր տաց միւսոյ ումեմն կենդանոյ խոստովանել ի կենդանոյ ումեքէ ծնեցելոյ եւ յումէ պատճառ է, որ զՀաւրն ունի տեղի, զի բնութիւնդ անունն ոչ ի վերայ մասին մարդոյն է. այլ ի վերայ

բոլորին. եւ ոչ ի վեր անգոյնն, այլ գոյացելոյն ըստինքեան եւ դադարման:

4 Դարձեալ Մարիամ զբնութիւն մարդոյն ըստինքեան գոյացութեան ծնաւ, եթէ զբնութիւն Որդոյն Աստուծոյ ըստինքեան կատարելութեանն ի Հաւրէ ի ձեռն մարմնոյն կամ թէ մարմնաւորութեանն: 5 Զի թէ ըստինքեան զգոյութիւնն մարդոյն ծնաւ, ըստորում եւ բնութիւնն է աստուածածին. իսկ եթէ գերկոսին բնութիւնսն ըստ ինքնակացութեան ծնաւ, երկրորդամայր եւ ոչ միածնամայր:

6 Դարձեալ գերկոս բնութիւնս խոստովանելով յետ ի կուսէն ծնելութեան, գերկոսի<sup>2</sup>ն պաշտելի ասես, եթէ զմին. թէ գերկոսին, արարածոյ Որդոյ եւ անկատարի երկրպագես եւ ոչ աւտարանաս ի կռապաշտիցն. իսկ եթէ միոյ բնութեան մինն անպաշտելի մնայ, հեռացեալ ես ի փրկութենէն որ ձեռն մարմնոյն:

7 Դարձեալ գերկոս բնութիւնսն խոստովանելով, հարկաւորէ յերկոսին եւ մկրտիլ՝ յարարած բնութիւնն. եւ յանարարած բնութիւնն, որ է ամբարբշտութիւն (s) իսկ թէ ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգի եւ ի մի բնութիւն մկրտիմք, յայտ է եթէ ի միւս խոստովանեալ բնութիւնն ոչ մկրտիմք, որ է ուրացութիւն փրկութեանն մերոյ. Բանզի որ միանգամ ի Քրիստոս մկրտեցաք, ի մահ անդր ևորա մկրտեցաք<sup>3</sup>, ասաց, որ ասացն: 8 Եւ ինքն թէ մկրտեցէք յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ:

9 Դարձեալ ապականութիւն ի մասանց բնութենէ՝ մարմնոյն, եւ զինչ մասն է, եւ եթէ մասն է եւ միացոյց զսայ (s) իւր յարգանդի կուսին եւ այժմ ապականացու, զի զմիացեալն ոչ էթող, եւ եթէ էթող ըստ քեզ յետ յարութեանն, կիսամարդ է եւ ոչ կատարեալ մարդ: 10 Իսկ եթէ դատապար-

1 Զեոագրում<sup>3</sup> անստացանն

<sup>3</sup> Հատ. 93



տուժեան յանցանաց արկածք տանջանաց բնաւորեցան, իսկ յայս ոչ անկաւ ընդ բանսարկուին իշխանութեամբ. ուստի եւ յիւրոցն ասէ. առ իս ինչ ոչ գտանէ՞, զիա՞րդ տնաւրինէր ապականութեամբ զփրկութիւն ապականելոցս. այլ ահա մարմինն նորա ոչ էտես գապակաճութիւն՞ մարգարէն կնքեաց բանիւ:

11 Դարձեալ եթէ ծնելութիւն եւ կաթնդիեցութիւն եւ աճելութիւն հասակի, եւ թլփատութիւնք եւ կրականութիւնք համայն եւ չարչարանք համայնք եւ խոցումն եւ մահ, եւ թաղումն ապականութեան ցուցակութիւնք են ըստ ձերոց ազանդաբանութեանդ, եւ աշխարհի փրկութիւն ի ձեռն այսց մատակարարեցաւ, յայտ է եթէ ոչ Աստուծոյ առ մեզ երախտիք գոն փրկանաւորութեան, այլ ապականութեանն զայս մեզ առգործեալ եւ յափշտակեալ ի բանսարկուին իշխանութեանէ զսայ (Տ) մեզ պաշտելի է, եւ երկրպագելի զապականութիւնս եւ սմա՛ առ կարգալ փրկիչ: 12 Աւա՛ղ յիմարութեանդ, մարդկային ապականութեանս ծնելութեան եւ յառաջխաղացութեան հայր՝ զսերմն առն ծանեաք ի ձեռն կնոջ: 13 Իսկ ապականութեան մարմնոյ Բանին՝ ծնելութեան զո՞ ասէք գոլ Հայր ի ձեռն Մարիամայ, զի ի Հաւրէն ծանիցուք զապականութիւն:

14 Դարձեալ զՄարիամ ըստ բնութեանն իւրոյ գոյացութեանն ասէք անապական գոլ, եթէ ըստ ծնընդեանն զԲանն Աստուած մարմնացեալ եթէ ըստ բնութեան գոյացութեանն ասելի է, ոչ իմանի ի

մերմէ բնութենէս Մարիամ: 15 Իսկ եթէ ըստ ծնողութեանն է անապական եւ է եւ ասի, զիա՞րդ ծնեալն ի նմանէ ապականացու:

16 Դարձեալ ապականութիւնն բնութիւն ունի ըստ ինքեանն եթէ ոչ, զի եթէ բնութիւն ստեղծուած ստեղծչի զայս եւ առնուլ ասելի, եւ միացուցանել ըստինքեան, իսկ եթէ ոչ ունի բնութիւն ըստինքեան, ոչ ասի ստեղծած ստեղծչին, այլ ի պատրանաց թշնամոյն ներգործեցաւ ի մարդն, յանձնիշխանութեան գործոց, կշտամբութիւն ընդունել ի Տեառնէ: 17 Իսկ Աստուած Բանն զինքեան ստեղծուածն էառ եւ միացոյց իւրեաւ ոչ զբանսարկուին ներգործութիւնն:

18 Զայսոսիկ այնք խուզեն եւ ի հարցաքննութիւն արկանեն, որք ի սահմանս դուզնաքեա մարդոյ իջուցանել զնա խական. իբրեւ զմի ոք ի հասարակաց գոյացելոց ի Տեառնէ. ըստ որում եւ ոչ Աստուած մարդ լեալ խոստովանին, այլ ի մարդ ումն բնակիլ. աստուստ եւ Մարիամ աւտարանա գոլ աստուածածին: 19 Եւ այս է Պաւղեա Սամոստացոյ նախասացութեան սահման. եւ որք ըստ այսմ ձայնակիցք, նախկինք եւ այժմուքս անյուսք եւ յողդողք, որք եւ զմի Աստուածն զՔրիստոս ուրացեալք, աճեն ի վերայ անձանց զերագահասն կորուստ, ըստ նախասացութեան առաքելոյն Աստուծոյ: 20 Այսպիսի խորհողան տարագրէ կաթողիկէ եկեղեցի, եւ մեք: 21 Եղիցին նզովեալ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, ամմէն:

« Յ՛՛՛՛՛ Ժ՛՛՛ 31

բ Գ՛՛՛՛՛ Բ՛ 31. Հմմտ. Ս՛՛՛՛՛ Ժ՛՛՛ 10:

1 Ձեռագրում՝ բանին կրկնուած

## ԴԱԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ԲԱՆ ՀԱՄԱՏՈՅ ԸՆԴԴԵՍ ՅԵՐՁՈՒԱԾՈՂԱՅ

1 Պատրաստեցե՛ք տալ պատասխանի, *ասէ համարձակագոյն յառաքեալսն Պետրոս, ամենայն խնդրողացն Բանին, որ է վասն յուսոյն ձերոյ՞, եւ այս ոչ միայն փոյթ գհեղգացեալսն զարթուցանել միտս, այլ եւ զպակասամտացն ի բաց լուծանել երկունս, զորս թերեւս անտեղի եւ յաւուր յայսմիկ ձեռնարկելոցն հարկաւորագոյն կրել. զի աւրէն է նոցա զերբն յաղագս Աստուծոյ ճառից որոշել ժամանակ: 2 Եւ առ այս որո՞վ արդեւք ձեւակցութեամբ կամ առ ի՞նչ: 3 Քանզի ոչ միով ոմամբ վրիպակաւ, եւ ոչ գոմնն, այլ գրեթէ զքնաւ իսկ զանդամս եկեղեցւոյ ի յայս ախտս աւցտեալ եւ պառակտեալ մախանաց չարին, զոր ասացեալսն յինքենէ յիւր կամս, յանվերձանելին եռոյց հերձուածողական խորխորատն եւ զաւրէն աւուրոց ոմանց ի ծով մխելոց ամենայն ուստէք կայինաւ ամբոխեաց կեանս:*

4 Այնքան աղջամղջա լովից՝<sup>1</sup> ոգիս շուրջ փակեալ մինչ զի անկարելիք նոքա գոլ նկատել, եթէ ընդ ծայրագոյն բարի անձանցն կռուին, որ է ինքն Աստուած, յորժամ զյստակ եւ զվճիտ հաւատոյ ակն կողոպտել ձեռնարկիցեն: 5 Այլ զվիժածացն խտացեալք յանկատար ծնունդս՝ խաբեալք եղեն յարգանդէ հոգեւոր աւագանին ըստ վերստին ծննդեանն, յորս ոչ առողջ ի նոսա բերիւր դաւանումն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: 6 Այսպէս աւտարացեալք եւ վրիպեալք ի մայրենի գրկաց կաթողիկէ եկեղեցւոյ եւ ի սննդական դարմանոց հոգեպատում եւ աստուածախաւս կաթինն, որ յընթերցուածական ստեանցն, ստուլթիւն բարբառել ձեռնարկեցին ընդդէմ ճշմարտութեան, որոց ի վե-

*րայ եկեալ սխալանք երանաւէտ կենաց, սկզբնաչարին լծակուրք գտան եւ զուգակշիռք յեղկելի եւ յանտանելի տանջանս:*

7 Եւ արդ սոքա, զորոց բանքս, արժանի գոն այսպիսում հատուցման յարգարարատն Աստուծոյ. որոց միշտ ի լսելիս հնչէ իմաստնոյն բան. մի քան զարժանն մարտարեք, գուցէ թիւրեսցիս՞: 8 Իսկ արտաքոյ ինչ գրելոյն իմանալ առաքելականն ի բաց բերէ սահման եւ կազմէ կասկածագոյն: 9 Եւ դարձեալ զգուշանալ Բանին, որ յաղագս Աստուծոյ եւ զԱստուծոյ է, խրատէ առակաւոյն, որ յոյժն իսկ այսոսիկ էր քաջաբանագոյն: 10 Այլ այսոքիկ անմտաբերելոցն ընդդիմանային, մանաւանդ եթէ յանդգնելոցն. իսկ մեզ ի Հոգւոյն Սրբոյ վստահելոց շնորհ, որոց արդարութեան հաւատոց ասպնջական եղել սիրտ, նմանապէս եւ բերան, հարկեսցի արբանեկել խոստովանական բանին: 11 Զի սոցայն լծակցութիւն վեհագոյն կենաց հանդիպաւոյս զմեզ յաւրինէ ըստ Պաւղոսի ձայնին. քանզի ոչինչ մեզ սնափառութիւն այժմ կամ անտեղի գոյ յաստուածաբանութիւն մխել ճառս, մանաւանդ եթէ յոյժ իսկ ժամանակի, յորժամ զերկիւղածութեանդ ձերոյ ընկալաք ամենայորդոր փութով գիր: 12 Բայց ոչ համաւրէն կամեցողաց եւ ոչ վարկպարագի, այլ հարկաւոր համարիմ որոց յաղագս Աստուծոյ հանդիսին՝<sup>2</sup> ներածեալ քան յինքեան: 13 Ամենայն ուստէք լինելով եւ ամփոփելով քահանան միանգամայն զինքն եւ զենարան յարգարել եւ զբովանդակ ողջակիզեալ խոստովանական բան բարձրագոյնելով մարմնոյ եւ մարմնականացս եւ վեր ի

<sup>1</sup> Հմմտ. Լ. Պէր. Գ. 15:

1 Բնագիրը աղմատուած է անշուշտ այստեղ:

<sup>2</sup> Հմմտ. Ժող. Է. 17:

2 Ձեռագրում հասդիսդին

լեռն համբառնալ աստուածակամ հնազանդութեան ի վայրէ գողին երկրաքարչ եւ ստորաբերաւղ խորհրդոյ եւ հանդիպեսցի երանութեան մաքրագունիցն սրտից. որոց հանդիսարան գոլ տեսանեմք զնոյն ինքն Աստուածն Բան, եւ մրցանակ յաղթութեան զաստուածատեսութիւն խոստանալ, այն որ միայն է բարի եւ բնաւ իսկ վեհագոյն բարեաց պատճառ, լոյս անճառ եւ համաւրէն պայծառութեան լուսոյ աղբիւր. կեանք անմահ եւ կենսագործակ մահացելոց եւ անմահից, գոյ անեղ եւ գոյացուցիչ էիցս, էութեան անհիւթ, բնութեան անհատ, տարածումն ամփոփ, նրբութիւն անարգել, կար ամենազաւր, հնար ամենահաս, բաւականութիւն անծախելի, էութիւն անթերանելի, փառք անհամեմատ, պայծառութիւն անզուգակշիռ, մեծութիւն անքակ, կերպարան նոյն ամենայն իւրիք, իսկ բնութիւն պարզ եւ յստակ եւ առանց ի բազմաց գոյացեալ, անտեսանելի, անասելի, անպարագրելի, անըմբռնելի, անքննելի, անհասանելի, անճառելի, հաւատալի եւ եթ: 14 Եւ կամ եթէ զայս իցէ ոչ ընդդէմ նմին որոշել սահման որ ի մեզն է յոյժ բարեձեւագոյն անջատելի գոլ ի մտաց, անլուելի, ճառելի, միշտ նոյն ամենակալ ամենայն ուրեք, եւ սակայն անխառն յամենեցունց, մի Աստուած յերիս անձնաւորեակ դէմս, ի նոյն ամփոփեալ բնութիւն, որոյ անչափելի լուսոյն ճառագայթ եւ մերձակայ հոգւոյն անըմբռնելի, թէպէտ իմանալիք եւ հրեղէնք: 15 Եւ զայնր արդիւն հասարակաց հաւանելիս առաջի դնել վայելուչ բանիս երկրագործ, աստուածային տեսչութեանցն ժամանեալ երջանիկն Եսայիաս ի շուրջ կացեալ սերովբէից ուսեալ զՏէրն ընդունել երեքսրբեան փառաբանութեան իմանալի ձայնիւ ընդ թեոց ծածկութիւն թափուցեալ, եւ իբրեւ միջնորդով ոմամբ յանժուովկալելոյն յինքեանս ամփո-

փեալի ի բոցարձակ ցառագայթից: 16 Եւ այսպէս զեկեղեցի Աստուծոյ վարդապետաց երիս ընդունել անձինս, զմի Աստուածն եւ մի բնութիւն եւ մի Տէր. յորոց ոմն ծնաւղ եւ միւսն ծնունդ, իսկ ոմն արտաքս առաքումն, ոչ ժամանակաւք զատեալք եւ ոչ երբեմն որոշեալք, ոչ երբէք սկզբունք եւ ոչ անսկզբունք միապէս, այլ ոմն առանց պատճառի եւ ոմն պատճառաւ: 17 Եւ ասեմ իսկ առանց պատճառի է Հայր, էն միշտ անսկիզբն եւ յաւիտենական աղբիւր եւ պատճառ Որդւոյ ծննդեամբ եւ Հոգւոյն արտաքս առաքութեամբ: 18 Այլ եւ Որդի եւ Հոգի ոչ յետ ժամանակի եւ ոչ սկսեալք, այլ անդէն ընդ պատճառին գոլով ամենակատարք կամ թէ զնոյն ինքն կտակաւ սահմանեցելով յածից ոք երթեալ հասանիցէ յակն եւ յաղբիւր, ուստի ոչինչ գոյ աւտարացեալ կամ այլաբան, այլ ամենեւին նոյն, կամ թէ պարզագոյն ասացից լոյս եւ լոյս եւ լոյս, մի ելով լուսոյն բնութիւն, ըստ ումեմն նախ քան զմեզ իմաստասիրելոյ: 19 Այնքան եւ եթ ընտրելիք, ըստ որում ոչ զանգանին դէմքն եւ ոչ միութիւն ամբոխի. ոչ Հայր զրկէ զՈրդի, այլ Որդւոյ ծննդեամբ կամ առաւել քան զՈրդի ունակութեամբ, բայց զի ծնաւղն է: 20 Եւ ոչ Որդի ճոխանայ քան զՀայր, կամ ներգեւի ինքն զոք ծնանելով կամ մարդեղութեամբն, բայց միայն զի ծնունդ է: 21 Եւ ոչ Հոգին Սուրբ զերկոսին յաղթահարէ, կամ զիջանի Հայր ումէք գոլով կամ եղբայր Որդւոյ, թէպէտ ի Հաւրէ: 22 Այլ այսպէս մնացեալք բնաբար յերկաքանչիւրսն յատկութիւնք երեք մի են, մանաւանդ թէ երեքն մի փառաբանի Ամենասուրբ Երրորդութիւն: 23 Զոր ինքն իսկ անտեսանելին ի տեսութիւն արարեալ, եկեալ ծանալթագոյն զլսաւզսն արար, ասելովն ես ի Հայր

եւ Հայր յիս<sup>ա</sup>, եւ Հոգին Սուրբ որ ի Հաւրէն ելանէ՞ եւ յիմմէն առնու<sup>բ</sup>, յորմէ հաւաստագոյն տեղեկացեալ եւ հաւանեալ աստուածաբանութեանցն Յովհաննէս, ասէ. զԱստուած ոչ ոք ետես երբէք, բայց միածինն Որդի, որ ի ծոց Հաւր նա պատմեաց<sup>բ</sup> եւ զհամաբարբառս նոցին:

24 Եւ ա՛րդ, ո՛րք այսոցիկ ունի ընդդէմ ասել, զի ոչ ոք աւտարաբուն եւ կամ անտեղեկ երրորդութեան, այլ նոյն ինքն Որդին, մին յերրորդութենէն, որ ուսոյցս. որով ի վախճան ժամանակացս խաւսեցաւ Հայր ընդ մեզ. որ է լոյս փառաց եւ նկարագիր հոլութեան նորա, եւ ոչ յափշտակութիւն համարեցաւ զգոլն հաւասար Հաւր, այլ զանձն թափեաց եւ էջ յարգանդ կուսին, առեալ ի նմանէ զծառային կերպէ՛, ոչ յանապականէ, եւ ոչ ապականացու, այլ յապականացուէս անապականացուցեալ եւ յախտակրելոյս եւ մահկանացուէս անախտ եւ անմահացու<sup>1</sup> զոր աւրինակի մեղանչելոյս անմեղ: 25 Քանզի մինչդեռ նստեալ ի խաւարի մեղացն եւ ի ստուերս մահու, վերածագեաց արդարութեան արեգակն՝, որ զխաւար յանցանացն եւ զարկածս ախտից միահողոյն հալածեաց ի մէնջ եւ համենայն ? ի բարձանց երկրային, այլ եւ երկնաւոր: 26 Քանզի էջ առ մեզ անմարմինն եւ ել մարմնացեալ, ոչ մասն ի մարդոյ առեալ եւ ոչ ի մարդ բնակեալ. այլ մարմին բովանդակ եւ շունչ եւ միտս մարդկային ինքն խառնեալ եւ ընդ ինքուեան ստեղ-

ծեալ եւ գոյացեալ: 27 Եւ եթէ հաւաստի զինքն պահանջէ ասել. Բանն մարմին եղեալ, ըստ աւետարանական ճայնին, եւ բնակեալ ի մեզէ. 28 Ոչ եթէ յիւրում մարմին, ըստ ոմանց չարափառութեանց, որ զինքն Որդին յինքեան մարմին իբրեւ յումէք ասեն բնակեալ, այլ իւրովն իբրեւ զմեզ լինելով ընդ մեզ բնակեալ, ըստ այնմ զոր ինքն աստուածաբանն նախաճառեաց զյապագայսն բացակատարելոյ, թէ բնակեցայց ի նոսա եւ զնացից ի նոսա<sup>2</sup>: 29 Ի նոսա, ասէ, բնակէ եւ ոչ ի նմա, քանզի ոչ ոք ինքն յինքեան բնակէ: 30 Եւ դարձեալ Երեմիաս յողագս Որդւոյ ասէ. սա Աստուած մեր ոչ համարեցի, այլ առ սա<sup>բ</sup>, եւ յես փոքր մի ասէ. ի յերկրի երեւեցի եւ ընդ մարդկան շրջեցի<sup>բ</sup>. Իսկ Զաքարիաս ասէ. ահաւասիկ եկի եւ բնակեցայց ի միջի բում, Երուսաղէմ<sup>բ</sup>: 31 Եւ արդ եկեալ ի կատարել զկանխասացութիւն մարգարէիցն վերագոյն գոյացութեան գտեալ եւ անդր քան զբնութիւն զայս հասարակաց. հրաշանան միտք, զի ա՛րդ հողս ընդ հողոյս խմորի, եւ մեք յԱստուած բնակիմք, մի զանկուած, ոչ Բանն խոխել ի մարմնոյ թանձրութիւն, զի Աստուածն ոչ ընդ փոփոխման է, ասաւդն ես նոյն եմ եւ ոչ փոփոխիմ, եւ ոչ զմարմնոյն ծախեաց թանձրամասնութիւն: 32 Քանզի ոչ էր պիտոյ առման, զոր վերստին ունէր եղծանել. այլ առ եւ առաւելոյց բնակցութեամբն վեհագունին յաղթելով: 33 Քանզի մանուկ ի կուսէ ծնանի եւ կուսութեան կնիք անխախտելի մնայ, այս գեր ի վերոյ է մարմնոյ եւ աստուածային եւ հրաշափառագոյն նշան. սակս որոյ եւ աստուածածին ասի կոյս: 34 Սոյն աւրինակ եւ միանալ Բանին ընդ հոգեղինին եւ մի լինել բնութիւն.

<sup>ա</sup> Յ՝ՎՃ. ԺՊ. 10  
<sup>բ</sup> Յ՝ՎՃ. ԺԵ. 27  
<sup>գ</sup> Յ՝ՎՃ. ԺՁ. 14-15  
<sup>դ</sup> Յ՝ՎՃ. Ը. 18  
<sup>ե</sup> Հ՝մմբ. Փլլ. Բ 5-7. Հ՝մմբ. նաեւ Գ. Թ. էջ. 391 «Որ ի կերպարանս Աստուծոյ էր որպէս պատմի մի ըստ միոջէ, զինմն թափեաց, հնազանդեաց մահու եւ խաչի»  
1 Ստեփանոս իմաստասէր, հրատ. Գ. Տէր-Մկրտչեանի եր. 15 Դաւիթ Հարկացւոց մէջ բերուած հատուածը:  
2 Տ՛՝ Ե՝. Թ. 2. Ս՝ղմ. ՆՁ. 10:

է Յ՝ՎՃ. Ը. 14  
ը Բ՝Գ. Գ. 16  
բ Հ՝մմբ. Բ. ար. Գ. 36:  
գ Հ՝մմբ. Բ. ար. Գ. 38:  
գ՝ Հ՝մմբ. Գ. ար. Բ. 10:

նորն? անգամ ի վեր քան զբան է եւ ան-  
ճառելի, կամողին եւ եթ կարելի, որում ամենայն անհնարինք հնարաւոր գոն:  
35 Իսկ եթէ տարակուսիս ի միանալն ան-  
յանկ բնութեանցն, տարակուսելի քեզ գոն  
եւ կուսութեամբն յղութիւն եւ յետ  
ծննդեան կուսութիւն, եւ կոյս միանգա-  
մայն գոյ եւ դիեցուցիչ Որդւոյ: 36 Իսկ ա-  
պա թէ զայս հաւատով կնքես, նովին հա-  
ւատով զմիանալն անյանկ բնութեանցն  
ընկալ ի հրեշտակապետէն, հաւատակից  
լեր կուսին, եթէ ոչ տկարացայ երբեք առ ի  
յԱստուծոյ Բան<sup>3</sup>: 37 Եթէ էր ընդ քննու-  
թեամբ, թերեւս ոչ էր աստուածակերտ  
հրաշք. իսկ որդի ի վեր քան զբնութիւն  
տնաւորինեցաւ, փոխանակ հնոյ, նոր եղեալ  
աղամ<sup>4</sup>. զի գառաջին կուսին վտանգաւոր  
երկունսն լուծցէ, եւ զի ոչ էր կար մարդոյ  
եղծուլ զտնիծիցն վճիռ, ինքն եկն նամա-  
կագիր նզովիցն, եւ ամենայնի մերումս  
հաղորդեալ կրիցս, զբովայդակն ելոյծ:  
38 Քանզի անփոփոխելին<sup>2</sup> փոքրկացաւ եւ  
զժահահոտեալ մեղաւք զմեր բնութիւնս  
իւր մարմին առեալ ոչ զարշեցաւ, եւ եցոյց  
ամենայն վտանգից գեր ի վերոյ: 39 Ամե-  
նակատարն տղայացաւ, յաւիտենականն  
այսաւր ծնաւ, բանն եւ իմաստութիւն ան-  
սաց անբանութենէ տիոց, լոյսն անհամե-  
մատ խանձարրաւք պատեցաւ, ի քերովբէս  
հանգուցեալն ի մտուր եղեւ առբնկեցիկ,  
ուխտից եղաւդն Աբրահամու, թլփատու-  
թիւն յանձն էառ. սուրբն սրբոց իբր  
սրբութեան պիտաւղ ի տաճարն ածաւ. աւ-  
րինացն տուիչ ընդ կարգաւ աւրինի ե-  
մուտ, որում աղաւթէր իսկ ծերունին զլու-  
ծումն կենաց, արձակումն կապելոց զնա  
ծանուցեալ: 40 Զուրբ Յորդանանիս լուա-  
նի ի հուր մկրտաւղ եւ ի հոգի եւ ի նախ

անդ իսկ ցուցանէ<sup>3</sup> մկրտչին զիւր փառսն.  
ինքն մի յերրորդութենէն գոլ ընդ Հաւր  
եւ ընդ Հոգւոյ. փորձի քաղցիւ, գեր ի վե-  
րոյ փորձանաց, եւ նախ քան ի դէպ ժա-  
մանակ ոչ սաստէ փորձողին: 41 Ննջէ ի  
նաւին, որ անքուն աւամբ պահէ զԻսրա-  
յէլ<sup>4</sup> եւ ի որոց<sup>(6)</sup> վրայ քայլէ ոչ աւտար  
թեթեւութեամբ. աշխատի յուղեգնացութե-  
նէն հանգիստն աշխատելոց եւ ծարաւեալ,  
ըմպել հայցէ ի սամարուհոյն կենաց աղ-  
բիւրն: 42 Եւ զի մի յերկարագոյնս ինչ  
բանիւս վարեցայց, կրէ, հրաշագործէ, կե-  
րակրի, կերակրէ, խլէ զզղթայս մեղաց, ազ-  
դէ նախատեսաբար եւ հարցեալ ուսանի  
իբր անգիտակ. արտասուէ, կենածէ, զայ-  
րանայ, տրտմի, աղաւթէ, զարհուրի, զար-  
կուցանէ, ըմբռնի, խարագանի, չարչարի,  
խաչի, մեռանի, արձակէ զչունչն իւր յիւր-  
մէ մարմնոյն, յամէ եռաւրեայ, յառնէ ճո-  
խութեամբ: 43 Զայս ամենայն ինքն  
կրեաց ճշմարտապէս բնութեամբ Որդին  
առ երկաքանչիւրովքն բարեգծեալ ի մեզ  
կամաւ եւ ոչ բռնութեամբ. քանզի ոչ եր-  
բէք բռնադատիւր անմարմինն, որ անդս-  
տին իսկ ընդ միանալ ի Բանն ընդ նմին  
գոյացաւ, վերագոյն մեղաց եւ ապակա-  
նութեանց ախտից եւ մահու: 44 Զի եթէ ի  
բռնութենէ գոյր ըմբռնեալ ի նմին բանտի,  
կապանակացն արձակումն տալ ոչ կարէր.  
այլ նա ինքն իշխանաբար զամենայն  
յանձն էառ, զի հաւաստեալ եւ ոչ առա-  
ջաւք երեւեալ մերում մահու հաւասա-  
րեաց միշտն կենդանի, եւ ի վիմի փակե-  
ցաւ պարունակաւդն տարերց, այն որ ար-  
գելեալն էր ի գերեզմանի, զհայրենին ոչ ի  
բաց մերկանայր աթոռ, այլ ընդ իւրում  
չնչոյն առ դժոխականոն պայծառանայր  
ասելով կապելոցն, թէ «ելէք», եւ որոց ի  
խաւարին թէ «յայտնեցարուք», եւ յարու-

<sup>3</sup> Գ.Վ. Ը 37

<sup>1</sup> Զեռագրում՝ անդամ

<sup>2</sup> Զեռագրում՝ ամփոփին

<sup>3</sup> Զեռագրում՝ ցուցնէ

<sup>4</sup> Սաղմ. Մարական ապաշի. ԴՁ. Հմբ. եր. 196 եւ  
275 (Պարգեւատուն), Էջմիածին, 1861 թ.

ցեալ ի գերեզմանէն անփոփոխաբար եւ անյեղ առ թովմայեանսն մտանէ դրաւքն փակելովք: յայտ արարեալ, թէ որ ի ծննդեանն ոչ խախտեաց զկուսութեան կնիք, եւ ոչ աստ ի մտանել ունի պէտս ինչ փակի: 45 Այլ եւ շաւշափելն ի Թաւմայէ գինքն եւ զբեւեռացն վէրս, ոչ այլ ինչ նմա, որքան թէ զայս կամի արժանի հաւատոյ ճշգրտել պարզեւէ, թէ որով մարմնով բեւեռեալ ի խաչին վէրս յինքն առ, նովին թանձրամասն մարմնով յարեալ, եւ շաւշափելի: ոչ փոփոխեալ եւ ոչ այլայլեալ եւ ոչ ի վիրացն բռնութենէ ընդ մահու գրաւեալ: 46 Սոյն գունակ եւ զանկարաւտ ճաշակումն յառաջ քան զյարութիւն յայտնի ցուցանել կամեցեալ, յաղագս այնորիկ դարձեալ ճաշակէ եւ յետ յարութեան, եւ այսպէս զամենայն հայհոյացն խցեալ զբերան:

47 Համբարձաւ ի յերկինս ոչ վատթար ոք եւ կամ աւտարաբուն ի հայրենի աթոռն հանգուցեալ, այլ նոյն ինքն Աստուածն Բան, որ յերկնուստ էջ եւ մարմնացաւ, զոր եւ Պաւղոս գոչէ. որ ելն զի՞նչ է, ասէ, եթէ ոչ զի էջ նախ, որ ի ներքնագոյն կողմն երկրի էջն, նոյնն է, որ ելն ի վերոյ քան զամենայն: 48 Եւ ինքն իսկ իջաւդն եւ ելողն Որդին մարդոյ ասէ. ոչ ոք ել յերկինս եթէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն, եւ թէ երթամ ես առ առաքիչն իմ՞, եւ թէ առ հայր երթամ: 49 Ածեալ սովիմբ վասն երկրորդ գալստեանն, տեսանիցէք, ասէ, զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ գաւրութեան եւ եկեալ ընդ ամպս երկնիցէ: 50 Ամպով գայ Քրիստոս Յիսուս Տէր յոյսն մեր եւ բազմութեամբ հրեշտակաց եւ

հայրենի փառաւ, զոր տեսաւ յառաքելոցն երթեալ յերկինս, զի եւ երեւեսցի սքանչելի ի մէջ սրբոց իւրոց՝ եւ ահարկու տեսակ ատելեաց, եւ յամալթ եւ ի նախատինս հերեսական յամառութեանցն, որք ընդ անիրաւութիւն հաճեցան եւ զրկեալք եղեն ի ճշմարտութենէն: 51 Առ որովք ծածկեցաւ աւետարանումն փառացն Քրիստոսի, որ երեւեցաւ մարմնով, վկայեցաւ Հոգևով, ցուցաւ հրեշտակաց, ծանուցաւ ի հեթանոսս, հաւատարիմ եղեւ յաշխարհի եւ վերացաւ փառաւք. որում կրկնէ ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրաւորաց եւ վայրասանդանդարամետաց՝, եւ ամենայն լեզու ընծայէ բան, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հաւր՛:

52 Արդ՝ որ ոք ձայնակից է այսմ վերագրեալ հաւատոց, ընդունի զայնպիսիսն կաթողիկէ եկեղեցի եւ մեք. իսկ որ այլ իմն էութիւն դնէ հակառակ կամ հաւասար Սրբոյ երրորդութեան կամ երիս անսկզբունս ըստ առանձնաւորութեանցն, կամ մի դէմ եւ մի անձն յաղագս նոյնութեան բնութեան, կամ դնիցէ անսկիզբն եւ զոմն սկզմամբ, իբր թէ յետ ժամանակի գոյացեալ, կամ թէ նուաստացուցանէ զՈրդի քան զՀայր աւտարացեղութեամբ կամ պատուով, կամ զՀոգին Սուրբ խոնարհագոյն դնէ Հաւր եւ Որդւոյ, կամ որ եւ է պատճառաւ ամբոխէ զերրորդութեան կարգ, կամ թէ յաւելուած յերրորդութիւն դնէ զմարմին Որդւոյն, կամ թէ առաւելեալ կամ նուազել ի փառաց ասէ զՈրդին տնաւրէնութեամբն, կամ ոչ ասէ զԲանն Աստուած մարմնացեալ ի սուրբ կուսէն, այլ զայլ ոմն եղեալ Քրիստոս, կամ յերկուստ ասէ բերեալ զմարմինն, եւ կամ առաջաւք եւ ձեւով միայն ցուցեալ, եւ կամ

« Հմբ. Եփե. Գ 10:  
 բ Յ՝ՎԸ. Գ 13  
 գ Յ՝ՎԸ. Ժ. Գ 5  
 դ Յ՝ՎԸ. Ժ. Գ 10. 16. 28  
 է Մ՝ար. Ի. Գ 64. Մ՝ար. Ժ. Գ 62

չ Տէ՛ւ Բ Թե՛ւ. Ը 10:  
 1 Գթ, էջ 130. յերկրաւորաց եւ յերկնաւորաց, եւ ի վայր սանդղամետիցն  
 է Հմբ. Փլա. Բ 10-11:

յայլմէ բնութեանէ դնէ, ոչ ի մերմէ ստեղծական մահկանացու բնութեանէս, կամ ի մարդ սսէ բնակեալ զԲանն կամ յեղեալ ի մարմին եւ յոսկերս, կամ մասն մարդոյ սսէ առեալ, այլ ոչ բովանդակ գմեր բնութիւնս, կամ մարդածին զկոյսն աւանդէ, այլ ոչ աստուածածին, կամ թէ երկուս յարէ բնութիւնս ի միմեանս մի որդի պատճառելով եւ երկաքանչիւրոցն որոշէ զիւր ներգործութիւնս, իբր թէ մարմինն զիւրն կրէ տկարութիւն, իսկ աստուածութիւն զիւրն բացակատարէր սքանչելիս, որ է յայտնապէս երկուս ամպարչտեալ որդիս, կամ թէ շփոթէ եւ եղծանէ դարձեալ զբնութիւնսն ի միանալն, կամ ի ներքոյ բնութեան վտանգից գրաւէ զմարմինն ի ծննդենէն մինչեւ ցիսաչն եւ ընդ ապականութեամբ եւ ընդ մահուամբ, եւ յետ յարութեան յայլ իմն բնութիւն փոխայեղէ զՈրդի, քան զայն որ ի կուսէն ծնաւն, իբր թէ ապա փառաւորեցաւ եւ յանկատարութենէ եկն ի կատարումն եւ յապականութենէ յանապականութիւն եւ ի թանճրամասնութենէ ի նրբատեսակ փոխեցաւ բնութիւն, եւ յեղու եւ այլայլէ զմարմինն, քան զայն, որ անդատին իսկ ընդ առնումն իւր միացոյց Աստուածն Բան, կամ որ ի բաց եղեալ սսէ այժմ զմարմինն, կամ թէ ոչ արժանի վարկանի զմարմին Որդոյն Հայրենի աթոռոյն եւ ճեղքէ<sup>1</sup> զնա յետ մի աստուածութենէն եւ դնէ զԱստուածն յիւրում փառսն ճոխանալ, իսկ զմարդն կալ յայժմ եւս ի ծառայութեան Հարկի, որպէս այժմուք ուսեալ նոր եւ Հարագլուխ ամպարչտաւղն ՀայՏոյէ: 53 Ձայսպիսիսն խորհողս նզովէ կաթողիկէ եկեղեցի եւ մեք:

54 Եւ եղիցին նզովեալք:

1 Նորին Դաւթի ի հրամանէ Անաստասու Հայոց կաթողիկոսի

2 Այլ զի քո բարեփառութիւնդ յաւժարեաց դաւանութիւն յերկաքանչիւրոցն պահանջել հաւատոյ, ո՛վ երջանիկդ հովուապետ, արդարեւ իսկ հաւատասէր, աւրինաւք հաւանեմ զքեզ յայս կամս շարժեալ, զոր ոչինչ եւ ինձ գոյ փութալի, որ քան եթէ գրով տալ բարեպաշտաբար զառ ի յիսս խոհեցեալսս, միայն թէ հոգոյն շնորհ հասցէ մերում բանիս ի թիկունս, քանզի զանձն իմ հաւատամ բարեմտաց, որոց թուիցի, ոչինչ այլ գոլ ըղձալի, որ քան թէ առ նիկիական սահմանն պահել միաբանութիւն եւ առ նոյնախոհս:

3 Բայց նախ արդէն իսկ համառաւս ընձեռութիւն առնելով, զի ոչինչ իմ նախ քան զմիշտ էակն իմացեալ, որ ընդ ձայնին հալածէ զսկսեալսն ի ներքս զանսպառն ածելոց եւ զնոյն ամենակալ, որում երիս գոլ հաւատալ անձինս եւ այսոցիկ զերկաքանչիւրսն որոշեմ առանձնականս:

4 Զի ընդ Հայրութեան սահմանաւ գիտեմ զՀայր փակեալ ծնաւդութեամբ եւ ոչ յումեքէ պատկեր, փշաւդ կենդանական զշունչն եւ ապրեցուցիչ. ի մահ դատապարտի անպարտականն մահու, որէն դատիչ կենդանեաց եւ մեռելոց: 5 Ընդ այս ամենայն կարգաւ ուղեւորի Փրկիչն ընդ կիրս կենցաղոյս, եղեալ մարդ ճշմարիտ, զի զնախաձայնեալսն լնուցու զիւրոցն ծառայից:

6 Արդ դիմեալ ելանէ ի խաչ ոչ մարդ ոք դուզնաքեայ, այլ Բանն մարմնացեալ. քանզի Միածինն վասն աշխարհիս տուեալ լինի, անչարչարելին չարչարի, կեանքն սպանանի, ըստ իս եւ Պետրոսի անմահն զմահն ճաշակէ. զսոյն յոլովակի ճառ է եւ Պաւղոս:

7 Բայց մի՛ սոսկ Բանին բնութեան զայս հաշուեսցիս, զոր եւ ոչ ես, այլ զի ի մարմին անչարչարելին միացաւ, սեղմ եւ անքակ, եւ շունչս եւ միտս մարդկայինս

1 Ձեռագրի մէջ՝ ոչ նեղիւ, որ յայտնապէս սխալ է:

խառնեաց յանխառն աստուածութիւնն իւր եւ հաւասար Հաւր եւ Հոգւոյն՝ հանդերձ մարմնովն: 8 Վասն այսորիկ անմահն Աստուած մեռանի հանդերձ իւրով մարմնովն, թէ գանձահոգութիւն անխախտ ապահէ. ի գերեզմանի դնանի զոյգ մարմնոյն եւ ընդ շնչոյն միացեալ, առ շունչս իջանէ մեռելոց, զի գարգելեալսն վերածեսցէ: 9 Սորա վասն տարերք ամենայն սասանեցան, ոչ կարացեալ բերել գանարգանս ինքեանս Արարչին, յերրորդ աւուր յառնէ կենդանին յաւիտենից գմահ ջրելով, զի ես ոտնհարից, եւ պարծի ըստ իս ի խաչն նորա ընդհանրական եկեղեցի, զի եւ հրեշտակք եւ Պաղոսի թուի համբառնալ<sup>1</sup> ի յերկինս շինէ Որդի մարդոյ եւ գաւետիս մեզ հիմնէ: 10 Համբառնան դրունք վերին ի մտանելն նորա ուր էրն յառաջ, եւ ամպք ընդունին, զի փոշի են ոտից նորա: 11 Ընդ Հաւր գնատելն ունի անընկեց մարմնովն, այլ յաւելուած յերրորդութիւն ոչ գործէ. հանդերձեալ է գալ նովին մարմնով եւ փառաւք Հաւր, սքանչելի երեւելի ի մէջ սրբոց իւրոց եւ ահագին տեսակ ատելեաց. եւ թագաւորութեան նորա վախճան ոչ ունի, այլ փառաւորեալ է ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

12 Զայս ինքն յինքենէ ուսոյց մեզ Որդի, ինքեամբ ծանոյց զՀայր եւ զՀոգի, եւ Գիրք Սուրբ վարդապետեցին առաքելական եւ մարգարէական կտակք, եւ յիւրաքանչիւր ժամանակս կացեալ ուղղափառ վարդապետք: 13 Եւ այժմ ես տրուպս զիւրաքանչիւր ոք յաստիճանի սրբոյ եկեղեցւոյ զճշմարտասէրս եւ զճշմարտախոհս գամենեսեան ի դէպ ժամանակի աղաչեմ եղբայրասէր աւրինաւք առ ի մէնջ գրելոցս հանդիպել, եւ զթերին ի սմա լնուլ, գաւելին կշռել եւ զբովանդակն կնքել, զվնասախորհսն արտաքս պարսպել եւ ամենեւիմբ ի մեզ գմիաբանութիւն փակել, ամբողջ յանձինս պահել զհաւատն՝ զդեղն կենաց: 14 Զի նովաւ կարասցուք գերծանել յանսպառ տանջանացն, եւ լիցուք վայելել ի յաւիտենական կեանս, զոր յիւր ժամանակս ցուցանէ Երանելին եւ միայն Հգաւրն, Թագաւոր Թագաւորաց եւ Տէր տէրանց, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ետես ի մարդկանց եւ ոչ տեսանել կարող է՞, զի տեսցուք գնա, որպէս եւ Քրիստոս Յիսուս Աստուած մեր. եւ ընդ նմա եւ Հաւր եւ Հոգւոյն Սրբոյ փառս տացուք յաւիտեանս եւ յաւիտենից, ասացեալ յաւիտեանս ամէն:

1 Զեռագրի մէջ՝ համբառնալիս յեկիմս. հաւանորէն աղնատուած շարունակութիւնը

« ԸՏԿԷ. Գ 15-16



## [ՅԱԻԵԼՈՒԱԾ]

\*\*\*

1 Եւ զինչ ալ այս, եթէ ոչ զմշտնջենաւորութիւն եւ զյարակայութիւն այս սուրբ զենմանս ի հաւատացեալս հաւատարմասցի բան, վասն զի անմահ եւ զենումն հաւաստի, եւ նոյն միշտ անմահ եւ կենդանի եւ ստուգապէս մեռեալ, եւ նոյն միշտ կենդանի եւ որ զկնի:

1 Ի ՀԱԻԱՏՈՅ ՃԱՌԷՆ ԴԱԻԹԻ ՀԱՅՈՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ:

2 Բանն Աստուած կատարեալ<sup>1</sup> մարմնացեալ կատարեալ մի անձն Աստու-

ծոյ միջնորդ եւ մարդկան. խոստովանիմ<sup>2</sup> մի անձն որպէս կոչումնդ ի վերայ ընդ մեզ Աստուած կարգացեալ, եւ զայն զմին<sup>3</sup> Որդին<sup>4</sup> Աստուծոյ եւ Որդի Մարդոյ, միով բնութեամբ Որդի Աստուծոյ, եւ Աստուած Որդի Մարդոյ, եւ մարդ<sup>5</sup> միով երեսաւք առանձնապէս մի, ալ Որդի Աստուծոյ եւ մարդ եւ Որդի Մարդոյ եւ Աստուած<sup>6</sup> մարդ եւ ընդ Բանին ըստ Բանին Որդի անդրանիկ Աստուծոյ, Աստուած Բան եւ ընդ<sup>7</sup> մարմնոյն Որդի Մարդոյ:

---

<sup>1</sup> Ա կատեալ

---

<sup>2</sup> Դ խոստովանիմք

<sup>3</sup> Զ զմինն

<sup>4</sup> Զ Որդի փ/ս Որդին

<sup>5</sup> Զ մարդոյ եւ մարդ եւ որդի մարդոյ եւ մարդ փ/ս մարդոյ եւ մարդ

<sup>6</sup> Զ մարդոյ Աստուած փ/ս Մարդոյ եւ Աստուած

<sup>7</sup> Ա ըն

# ԴԱԲԻՌ ՔԵՐԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻՆ



**ԴԻՈՆԻՍԻՈՍ ԹՐԱԿԱՑՈՒ «ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ» («ԱՐՈՒԵՍ  
ԴԻՈՆԻՍԵԱՅ ՔԵՐԱԿԱՆԻ») ԱՈԱԶԻՆ ՄԵԿՆԻՉՆԵՐԸ (ԴԱԻԹ, ՄՈՎՍԵՍ  
ՔԵՐԹՈՂ, ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆԻՉ)**

Դիոնիսիոս Թրակացու (Ք.ա. 170-190 թթ.) Τέχνη γραμματική երկը յունական նախորդ քերականութիւնների ամփոփումն է. նրանում առաւել յստակեցուած են քերականութեան շրջանակները. այն դարձել է դպրոցական ուսուցման առարկայ: Քերականութեան հայերէն տարբերակը յունաբան դպրոցի առաջին թարգմանութիւններից էր. այն խթան հանդիսացաւ մի շարք ինքնուրոյն քերականական գրուածքների ստեղծման համար:

Թրակացու Քերականութեան թարգմանութիւնն ու մեկնութիւնները յունաբան են: Յունարէնի ազդեցութիւնը երկակի բնոյթ ունի. թարգմանութեան լեզուն այլ յունաբան թարգմանութիւնների նման լի է յունարէնից պատճէնման եղանակով կերտուած բառային նորաբանութիւններով, յունարէնի ձեւաբանական առանձնայատկութիւններն արտացոլելու նպատակով ստեղծուած արհեստական քերականական ձեւերով, ինչպէս եւ շարահիւսական յունաբանութիւններով: Միւս կողմից՝ Քերականութեան մէջ դիտարկուած են յունարէնի լեզուական առանձնայատկութիւնները, որոնք թարգմանութեան մէջ յաճախ արհեստականորէն վերագրուել են հայերէնին: Այդուհանդերձ, թարգմանիչը, թէեւ ոչ հետեւողականորէն, փորձել է արտացոլել նաեւ հայերէնի իրական փաստեր:

Քերականութեան թարգմանութիւնը ոչ միայն իր հետ բերեց բազմաթիւ նոր հասկացութիւններ, ինչն արտայայտուեց երկու հարիւրից աւելի տերմինների կերտմամբ, այլեւ տերմիններ կերտելու հիմնական սկզբունքները: Դա հեշտացրեց յունաբան դպրոցի հետագայ փուլերում փիլիսոփայական երկերի թարգմանութիւնը, ինչպէս նաեւ պատմական տարբեր ժամանակահատուածներում, ընդհուպ մինչեւ մեր ժամանակները, գիտական հասկացութիւնների համար հայերէն համարժէքների ստեղծումը: Յունաբան տերմիններից մօտ 80-ը ցարդ պահպանուել են. օրինակ՝ ա. ընդհանուր տերմիններ՝ «քերականութիւն», «ստուգաբանութիւն». բ. հնչիւնաբանական՝ «տառ», «գիր», «ձայնաւոր», «բաղաձայն», «երկբարբառ», «հագագ», «վանկ». գ. բառագիտական, ձեւաբանական՝ «բայ», «մակբայ», «հոմանուն», «մասն բանի», «անուն», «արական», «իգական», «եզական», «յոգնական», «ուղղական», «սեռական», «տրական». դ. կէտադրական՝ «կէտ», «ստորակէտ», «տրոհութիւն», «շեշտ», «բութ», «ապաթարց»: Մի մասն էլ հետագայում փոխարինուել է նորերով՝ «երկձայն» եւ «երկհնչիւն», «թաւ» եւ «չնչեղ պայթական», կամ դուրս եկել գործածութիւնից՝ «շարաձայն», «լերկ», «առինչունակ», «իբրառինչունակ», «բերանուն»):

Առաջին հայ քերականները, հետեւելով յունական աւանդոյթին, իրենց երկերը գրում էին՝ որպէս Թրակացու Քերականութեան մեկնութիւններ. նրա առաջին հայ մեկնիչներն են՝ Դաւիթը, Անանուն Մեկնիչը եւ Մովսէս Քերթոյը:

Նշուած հեղինակների մեկնութիւնները Ն. Ադոնցը վերականգնել էր Գրիգոր Մագիստրոսի (ԺԱ դ.) եւ Յովհաննէս Երզնկացու (գրել է իր երկը 1293 թ.) ծաւալուն բանաբաղաձոյ մեկնութիւններում առկայ քաղուածքներից, որոնց դիմաց լուսանցքներում

նշուած էին համապատասխան անունները: Հետագայում Գ. Ջահուկեանը Դաւիթի ամբողջական մեկնութեան երեք ձեռագիր յայտնաբերեց եւ դրանց հիման վրայ նրա հրատարակած տեքստը հիմնական գծերով հաստատեց Ադոնցի վերականգնած բնագրի ճշգրտութիւնը<sup>1</sup>: Իսկ Անանունի եւ Մովսէս Քերթոզի մեկնութիւնների ամբողջական տեքստեր ցարդ չեն յայտնաբերուել:

Մեկնութիւնների ժամանակի եւ հեղինակների շուրջ բանասիրութեան մէջ յայտնուել են տարբեր կարծիքներ: Օրինակ՝ Ադոնցը խօսում է Դաւիթ Քերականի մասին, մինչդեռ Ջահուկեանը կարծում է, թէ դա Դաւիթ Անյաղթ փիլիսոփան է: Մովսէս Քերթոզին նա նոյնացնում է Խորենացու հետ, եւ նրա տեսակէտներին համամիտ է Խաչերեանը: Ըստ երեւոյթին, հարցի վերջնական ու սպառիչ լուծում հնարաւոր չէ:

Ակնյայտ է մի բան. առաջին մեկնութիւնները ժամանակագրորէն հետեւել են Թրակացու Քերականութեան թարգմանութեանը, որը պէտք է գոյութիւն ունենար արդէն Ե դարի վերջերին, իսկ Ադոնցի համոզմամբ, դրանք նախորդել են Ստեփանոս Սիւնեցու մեկնութեանը (Ը դ. առաջին կէս), ուստի եւ գրուել են Ե դարի վերջից մինչեւ Ը դարի սկիզբն ընկած ժամանակահատուածում:

Մեկնութիւնները, Դիոնիսիոսի երկի թարգմանութեան հետեւութեամբ, այս կամ այն չափով կրում են յունարէնի քերականութեան ազդեցութիւնը, սակայն որոշակիորէն արտացոլում են նաեւ հայերէնի իրողութիւնները:

Երեք մեկնութիւններն ունեն ընդհանրութիւններ եւ առանձնայատկութիւններ: Քերականական արուեստի ըմբռնման հարցում, օրինակ, Անանունը տարբերում է Դաւիթից եւ Մովսէսից: Մասնակի խնդիրների մեկնաբանման մէջ նկատելի է հետեւեալը. Դաւիթը միւսներից առաւել ուշադրութիւն է դարձնում ստուգաբանութեանը: Ճիշտ է, ստուգաբանութեան օրինակներ կան Ե դարի առաջին կէսի թէ՛ ինքնուրոյն, թէ՛ թարգմանական գրականութեան մէջ, Դաւիթն առաջինն է, որ զարգացնում է ստուգաբանութեան որոշ դրոյթներ. «Ստուգաբանութեան ձեւք են երեք. յիրէն, յարուեստէն, ի ձայնէն»<sup>2</sup>: Առաջին դէպքում մեկնիչը նկատի ունի առարկայի ձեւը, օրինակ, «սափոր» (սափոր), այսինքն՝ փորի նմանութիւն ունեցող աման, երկրորդ դէպքում՝ գործողի եւ առարկայի յարաբերութիւնը՝ «փայտհատ», երրորդ դէպքում՝ բնաձայնութիւնը՝ «ճնճողուկ»: Այսպիսով, եթէ բերուած երեք օրինակներից երկրորդում ստուգաբանութիւնը հիմնուած է բառի իրական կառուցուածքի վրայ, ապա միւս երկու դէպքում այն կարելի է որակել որպէս «ժողովրդական ստուգաբանութիւն»:

Ձայնաւորների «երկայն» եւ «սուղ» տարբերակումով Դաւիթը նկատի ունի ոչ թէ երկար եւ կարճ ձայնաւորները (որոնց հակադրութիւնը գրաբարում չկար), այլ գրաբարեան Է-ե, օ (օ)-ն հնչոյթների որակական այլ յատկանիշ՝ առաջին դէպքում Է-ի երկբարբառային, երկրորդ դէպքում՝ օ-ի (այդ գիրը գրաբարում չլինելու պատճառով մեկնիչը նշում է յունարէն օ-ով)՝ երկու հնչիւնից կազմուած լինելու հանգամանքը:

1 Պ. Մուրադեանը մեզ բանաւոր յայտնել է, որ իրեն ծանօթ են Դաւիթի Մեկնութեան՝ ձեռագրերում առկա աւելի ընդարձակ տարբերակներ:

2 Տե՛ս Ադոնցի աշխատութիւնը՝ *Дионисий Фракийский и армянские толкователи*, издал и исследовал Н. Адонц, Петроград, 1915, էջ 85:

Թրակացու թարգմանութեանը հետեւելով՝ Դաւիթն անդրադառնում է յունարէնի պատճենմամբ բայի խոնարհման արհեստական ձեւերին, իսկ Անանունն ու Մովսէսը հրաժարւում են դրանցից՝ ներկայացնելով իրական բայաձեւեր:

Անանունն, ի տարբերութիւն միւս մեկնիչների, հ, յ, վ-ն բաղաձայներ չի համարում, այլ ձայնաւորների եւ բաղաձայների միջակայ մի օղակ: Նա նաեւ երկու կարեւոր տեղեկութիւն է հաղորդում հայ բարբառների վերաբերեալ. առաջինը բաղաձայների տեղաշարժի մասին է (բազուկ, պազուկ, փազուկ), երկրորդը՝ Կորճայքի բարբառում գրաբարեան -ան- ածանցաւոր ձեւերի անաձանց գործածութեան (ոռոգանեմ-ոռոգեմ):

Գնահատելի է նաեւ Անանունի դերը հայերէնի ձեւաբանական առանձնայատկութիւնների ուսումնասիրութեան բնագաւառում:

Մովսէս Քերթոզը յստակօրէն չի գիտակցում քերականութեան եւ փիլիսոփայութեան տարբերութիւնը, բայց նկատելի է քերականութիւնը գրականութիւնից տարբերակելու միտումը:

Մովսէսը փորձում է գանազանել գիրը եւ տառը: Յոլովների թուի հարցում նա հակադրւում է Դաւիթի եւ Անանունին՝ ուղղականն առանձին յոլով չհամարելով:

Դաւիթ Քերականի մեկնութիւնը հրատարակւում է ըստ Գ. Զահուկեանի կազմած բնագրի («Բանբեր Մատենադարանի», 1956, թիւ 3, էջ 241-264):

Լաւրենտի Յովհաննիսեան

#### ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. *Дионисий Фракийский и армянские толкователи*, издал и исследовал Н. Адонц, Петроград, 1915 (Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ հայ մեկնութիւնի նորին ի լոյս էած եւ ի քննարկ Ն. Ադոնց)
2. **Յ. Մանանդեան**, *Յունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները*, Վիեննա, 1928
3. **Գ. Զահուկեան**, *Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում*, Երեւան, 1954
4. **Գ. Զահուկեան**, *Դաւիթի քերականական աշխատութեան նորայայտ ամբողջական ձեռագիր տեքստը*, «Բանբեր Մատենադարանի», 1956, թիւ 3, էջ 241-264
5. **Ա. Մուրադեան**, *Յունարան դպրոցը եւ նրա դերը հայերէնի քերականական տեքմիմարանութեան ստեղծման գործում*, Երեւան, 1971
6. **Adontz N.** *Denys de Thrace et ses commentateurs arméniens*. Réédition de l'édition de 1915 (St. Petersburg), avec traduction de l'introduction en français par René Hotterbeck. Préface M. Leroy. Louvain, 1970.

#### ՏԱՌԱՆՇԵՐ ԲԱՂԱՏՈՒԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

A - ՄՄ ձեռ. թիւ 5596, ժամանակ՝ ԺԲ-ԺԳ դար

B - ՄՄ ձեռ. թիւ 1115, ժամանակ՝ 1409 թ.

C - ՄՄ ձեռ. թիւ 1746, ժամանակ՝ 1280 թ.



## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ<sup>1</sup> ԲԵՐԱԿԱՆԻՆ

1 Յերկուց իմն պատճառաց մարդոյս գոյացեալ հաստատեցաւ<sup>2</sup> բնութիւն՝ յոգւոյ եւ ի մարմնոյ, եւ սոցա արուեստ որոշեալ առանձինն ըստ ինքեանց, ոգւոյն՝ բանականն եւ մարմնոյն՝ գործնականն, բայց հաւասարութեամբ առ միմեանս կապակցեալք, մինն՝ մտածաւրէն առաջնորդելով եւ միւսն<sup>3</sup> զնոյն<sup>4</sup> գործովք կատարելով: 2 Եւ ձեւք երկոցունց ըստ երկց որոշմանց՝ բարւոյ եւ չարի եւ միջակի: 3 Բանականին, որ է բարի՝ գիրք ինչ եւ կամ երգք<sup>5</sup> հոգեւորք, չարին՝ թողչութիւնք եւ կախարդութիւնք, միջակին՝ մրջմունք եւ նմանք<sup>7</sup> նոցին: 4 Իսկ գործականին՝ աւգտակարք յարհեստիցն<sup>8</sup> հիւսնութիւն եւ դարբնութիւն եւ նմանք սոցին<sup>9</sup>, եւ չարին՝ դեղ մահաբերք եւ գործիք, իսկ միջակին՝ աղեղնաւորութիւնք եւ գեղապարելն<sup>10</sup>:

5 Եւ թողով արուեստաւորիս<sup>11</sup> զչարին եւ զմիջակին խնդիր՝ վերաբերէ զբարւոյն: 6 Եւ քանզի արուեստիցն ոմն է կայուն եւ ոմն անցական, ոմն հասարակաց եւ ոմն առանձինն, բանականիս կայունն եւ<sup>12</sup> հասարակաց՝ գիրք եւ անցական<sup>13</sup>

մրմունջք եւ իւր մտածութիւնք<sup>14</sup>, իսկ գործականին հասարակաց եւ կայունն բերդք եւ հանեալ ջուրք. անցականն եւ առանձին դուզնաքեայ<sup>15</sup> գործք:

7 Բայց հարցեալ<sup>16</sup> ուրուք զսահման արուեստիս. զոր աւրինակ, եթէ ասացէ՝ «զի՞նչ է մարդ», լիով պատասխանեալ ասի՝ «կենդանի բանաւոր մահկանացու». կենդանեաւն՝ ընդ բնաւ կենդանիս<sup>17</sup> դասեցաւ, բանականեաւն՝ ընդ վերին զաւրութիւնսն եւ մահկանացուաւն անջատեցաւ<sup>18</sup> ի վերնոցն: 8 Ապա թէ ոչ այսպէս, տգիտանայ<sup>19</sup>:

9 Նոյնպէս գիտութեամբ<sup>20</sup> այնմ թէ՛ «արուեստ է բաղկացութիւն<sup>21</sup> ի թողմանէ նախակրթեալ<sup>22</sup> առ ի պիտանացու ինչ իրս որ ի կենցաղումս»: 10 Բաղկացութիւն՝ իբր թէ ի բազմաց միացեալ ըստ առակի<sup>23</sup> ոստայնանդութեան, վասնզի ոմն ասի գտող բայի եւ ոմն անուան, միւս այլում<sup>24</sup> մասին ուստի բաղկացաւ արուեստ: 11 Իսկ ի թողմանէ նախակրթեալ<sup>25</sup> որպիսի ինչ, զի զոր<sup>26</sup> ինչ եգիտ ոք կրթելով եւ<sup>27</sup> յայլմէն եւս մնացելովք զկնի իւր եթող ապագայիցն: 12 Իսկ պիտանացուն՝ զի

1 Դաւթի մեկնութեան վերաբերեալ մանրամասնութիւնները տե՛ս վերելում յիշատակուած աշխատութեան մէջ: / B Յաղափս

2 A հաստեցաւ

3 C միւսն

4 B գործելով եւ կատարելով / C գործով կատարելով

5 BC երգ

6 C թովչութիւն եւ կախարդութիւն

7 C նմանողք

8 A հիւսնութիւնք եւ դարբնութիւն / C հիւսնութիւնք եւ դարբնութիւնք

9 C իւր

10 C մեղադրեալն

11 C արուեստաւորիս

12 B է

13 A անցականին / C անցականք

14 AB մտածութիւնք ինչ

15 B դուզնաքեայք

16 B ի հարցման

17 A կենդանիս

18 B գատեաւ / C գատաւ

19 C տգէտ է նա

20 B տգիտութեամբ

21 B բաղկացութիւնք

22 C նախակրթիլ

23 C անկի

24 AB այլ ոմն,

25 AB նախակրթութեան

26 B ինչ է գիտոյք

27 A յայլ ամէն եւս մնացելովք / B չի՞ր յայլմէն / C յայլմէն եւս մնացեալ ամբ



բոլոր ինչ ի կենցաղումս արհեստիւ առաջացեալ<sup>1</sup> ունի զտեղի:

13 Արդ հարկաւորաբար բանական արհեստիս առաջարկութիւն հնգիւքս այսոքիւք<sup>2</sup> կատարի՝ դիտաւորութեամբ, հարազատութեամբ, վերագրաւն վարդապետաւն եւ ըստ մասին բարժանմամբ,<sup>3</sup> յորումն եւ աւգտակարն:

14 Դիտաւորութեամբ՝ մտածաւրէն<sup>4</sup> իմն ըստ տնաշինութեան առակի եւ միանգամայն առաջատես խոհականութեան<sup>5</sup>:

15 Իսկ հարագատութիւն՝ ոչ աւտարս ինչ եւ այլեւայլս, քան եթէ համբոյրս եւ հարազատս զասացուածսն<sup>6</sup> առնել:

16 Այլ վերագիրն՝ զի բաւական իցէ միով նկարագրիւն զամենայն գրոյն գիտել զմիտս, որպէս ի Քերականութենէն կամ ի Գործոց առաքելոցն է յայտ:

17 Բայց վարդապետականն՝ յերկուս իմն ունի ձեւս, որ է կատարելոց գործ կամ զգոյացութենէ բուռն հարկանել եւ իջանել ընդ արարածս աւրինակ իմն ընդ աշտիճան յանհատ տեսակսն, եւ կամ աստի դարձեալ անդրէն<sup>7</sup> ելանել:

18 Սոյնգունակ եւ ճըստ մասին կատարումն՝ թէպէտ ի քերականութենէ սկիսքն առնելով առաջնորդէ մինչեւ ի վերջին մասնն եւ կամ ի վերջէ մասնէ մինչեւ ի գլխաւորագոյն սկիսքն, յորում ըստ առաւել քաջայայտութեան եւ ծանալթ կացուցանելոյ զառաջարկեալսն<sup>9</sup> լսաւղաց ընտանենայ եւ աւգտակարն:

1 A առաջագայեալ  
2 A այուսիկ  
3 B յորում եւ / C յորում եւ է  
4 B մտածարար  
5 C խոհեմականութեան  
6 A զասացուածն  
7 AC անդէն  
8 B աստ ասի  
9 A զառաջ երթարկեալսն / C զառակ արկեալսն

19 Արդ գիտելի է եւ այն, զի բարժանի<sup>10</sup> բանական արուեստս ի չորս յիմաստ[ասիր]ութիւն<sup>11</sup>, ի բանական բժշկութիւն, ի քերդողութիւն եւ ի ճարտասանութիւն:

20 Եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ յանգութիւն ունի առ իրեարս՝ իմաստասէրն եւ բանական բժիշկն, ոմն<sup>12</sup> քննէ գերկնի եւ գերկրի բնութիւն եւ ոմն զմարդոյն, իսկ քերականութիւն եւ ճարտասանութիւն, զի քերդութեան արուեստն պիտոյանայ<sup>13</sup> ճարտասանականին<sup>14</sup> պայծառ բանից<sup>15</sup>, որք եւ հավասարապէս վարին առասպելաւք եւ խրատուք<sup>16</sup>, իսկ ճարտասանականն՝ նմանէ կիտից եւ ոլորակաց եւ այլոց ի նոսա գիւտից<sup>17</sup>:

21 Բայց սկիսքն առեալ քերդողականիս յերաժշտականէ անտի, վասնզի զնա բնաւորեցաւ երկայնիւք եւ սղիւք յիւրն վարել նուազաւոր երգս. եւ ապա բազմաց մարդկան ի մէջ առեալ զքերթողականսն<sup>18</sup>, վասն որոյ մեզ այժմ խնդիրս է ըստ իւրաքանչիւրն կարգաց: 22 Ոմանց ի ձայնէ սկիսքն առնելով, իբր ձայնս է նիւթ բանականութեան, որպէս հիւսնականին՝ փայտ եւ դարբնականին՝ երկաթ, այլեւ վայելչութիւն եւ կարգ աշխարհի ձայնիւ<sup>19</sup> ասացեալ յարմարին, եւ հաստատեալ<sup>20</sup> յայս բանիւ վարդապետէին<sup>21</sup> եւ<sup>22</sup> աշակերտեալքն կրթէին<sup>23</sup>: 23 Եւ ասացին զձայն վիրաւորութիւն աւդոյ, աւրինակաւ

10 A բանական արուեստս ի Դ / B բանական արուեստ ի չորս  
11 ABC իմաստութիւն  
12 AB որ  
13 BC պիտոյ է  
14 AB նարտասանին  
15 A բայից / C բառից  
16 AC խրատաւք  
17 AB աւգտից  
18 A քերականսն  
19 A ձայնիս  
20 B հաստատելոյ / C հաստատելով  
21 B վարդապետականն / C վարդապետին  
22 B չիք եւ  
23 C կրթին

զխիստ ինչ<sup>1</sup> ընդ իրարս բախելով, զի վիրաւորեալ զաւղն ի միջոցին տացէ զձայն. իսկ անգայտն եւ կակուղն ոչ նոյնպես<sup>2</sup> տացէ<sup>3</sup> զձայնին<sup>4</sup> Հնչումն: 24 Բայց այլոց պախարակելով զայն, թէ ըստ արուեստաւորին անցանել, բառնի եւ արուեստն, սկիսքն արարին ի գրոյ, որպես զի յառաջիկայսն<sup>5</sup> յիշատակ<sup>6</sup> յերկարաձգեսցի:

25 Իսկ ապա Դիոնեսիոս ոմն անուն եկեալ ըստգտանելով զերկոցունց սկզբմունս այսպես, թե՛ զձայնի բնութիւն գտանել իմաստասիրաց է, եւ գիրն տեսցի ի կարգի իւրում, զի մի այլ ընդ այլոյ քննութեամբ ծաղր լիցի արուեստաւորն. եւ իւր սկսեալ բուռն եհար զնոյն<sup>7</sup> ինքն զիրէս, եթէ «քերականութիւն է հմտութիւն»:

26 Զկնի որոյ Հերովդիանոս ոմն, որդի Ապողինարի, խոհեմագոյն միանգամայն եւ իշխան, որոյ վասն յոյժ անբաւութեան արուեստից զբոլորից այրելով զգրեանս<sup>8</sup> զհաւրն իւր միայն եթող, ոմանք ասեն վասն յիշատակի եւ այլք՝ վասն առաւել մտաւորութեան, բայց փոքր ինչ եւ այս արուեստ կամ վասն չանկանելոյ<sup>9</sup> ի բուռն եւ կամ վասն<sup>10</sup> մանկանց կրթութեան մնացեալ ի Դիոնիսէ ասացելոցն:

27 Առ որովք նախքան սոյն արուեստ մտանել գիտելի է եւ զամբարեալսն ի սմին շահսն, քանզի կէտք եւ ոլորակք, հոլովք անուանց<sup>11</sup> եւ խոնարհմունք բայի եւ

ստուգաբանել եւ այլ սոյնպիսիք ոչ ուստեք որպես ի սմանէ հմտանալի<sup>12</sup> լինին:

[ա. ՅԱՂԱԳՍ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ]

1 Եւ արդ քանզի նախակարգեաց սկիսքն արուեստիս ի<sup>13</sup> հմտութենէ, թուեցաւ ոմանց յանբանութիւն արկանել փոխանակ առաւել գիտութեան: 2 Այլ նա ճշմարիտ գոր ինչ եգիտն եւ կարգեաց ի հմտութենէ եւ ի բանաւորութենէ:

3 Եւ հմտութիւն այսպիսի ինչ. հարցեալ ցքեզ<sup>14</sup> բայ կամ անուն եւ ոչ կարացեալ ըստ արժանոյն պատասխանեալ ի նախնեացն անկար սովորութիւն՝ ըստ նմանութեան երթալոյ անասնոց<sup>15</sup> ի սովորական տեղիսն: 4 Իսկ զբանաւորութեամբ լուծանել զխնդիրն՝ ըստ նշանաւոր հրամանաց ի լսելոյ մարդոյ ստուգելով զբազում անգամ ասացեալն քերդողաց եւ շարագրաց<sup>16</sup>, այլ ոչ զաւտար ինչ, որ ոչ լսի բան:

5 Բայց ասելով մասունս վեց՝ եցոյց քերդողականս, որք հատեալ ի բոլորէ. եւ եթէ զմի ոչ կալցի յայսցանէ քերդողն, ոչ ասի կատարեալ արուեստաւոր: 6 Իսկ տեսակք ասին ճարտասանականին<sup>17</sup> ատենական, բաղխոհական եւ կացրդական, զուգահաւասարք հատեալք<sup>18</sup> ի սեռէ. եւ զնոյն ինքն բերելով ի յինքեան, որպէս զկենդանութիւն կենդանին, յորոց թէ ունիցի զմի ի նոցանէն, կատարեալ ասի ճարտասան:

7 <sup>19</sup>Ըստ որմէ եւ զայն գիտելի է, զի նախադասութիւն ըստ երից լինի յեղանակաց՝ ըստ տեղոյ, ըստ ժամանակի, ըստ

1 B չիբ ինչ  
2 B նոյն  
3 C տան  
4 C չիբ գձայնի  
5 AB յառաջակայսն  
6 AB յիշատակացն  
7 C չիբ գնոյն  
8 C գորեանն  
9 A չանկանելով  
10 BC մանկակրթութեան  
11 C անուան

12 A հմտալի  
13 BC գի  
14 AC գբեզ  
15 C անասնոյ  
16 C շարագրածաց  
17 AB ցարտասանին  
18 C հաստատեալք  
19 B ըստ որում է / C ըստ որում

պատուոյ: 8 Իսկ վերծանութիւնս, որ ասի ընթերցումն ըստ առողջանութեան, նախադասեցաւ ըստ տեղոյ, քանզի անկար է առանց սորա այլեւս առաջիկայիցն զյարմարութիւն ունել: 9 Այլ իմաստասէրք ասացին եւ զվերստին մոռացումն իմաստից՝ ակրինակաւ գիւտիւ<sup>1</sup> ծառային:

10 Եւ զըուցատրութիւնս առնելի<sup>2</sup> է ոչ ըստ սովորական ինչ խաւսից, այլ կամ զքերդողացն արարուածս կամ զիւրաքանչիւր ուրուք նոցունց գաղափարաւք<sup>3</sup> ձեւացուցանելով զըուցել:

11 Նա եւ հարկաւորութիւն է վարդապետին ոչ զաւտար ինչ, այլ զիւրոյ լեզուին խաւսս<sup>4</sup> եւ զպատմութիւնս ինչ նախնեացն արարեալ լաւագոյնսն համառաւտապէս<sup>5</sup> գիտել, զի իբր հարցանիցի<sup>6</sup>, դիւրաւ լուիցի<sup>7</sup>:

12 Բայց ստուգ[աբան]ութեան ձեւք են երեք՝ յիբէն, յարուեստէ, ի ձայնէ. եւ յարացոյց առաջումն՝ սափոր եւ երկրորդին՝ փայտատ եւ երրորդին նննդուկ: 13 Բայց ոչ ամենեցուն է գիւտս այս, քան եթէ խոհեմագունիցն գիտութեամբ:

14 Իսկ համեմատութիւն ունին<sup>8</sup> առ իրեարս բայ առ բայ, անուն առ անուն, եւ եթէ ասացի ստեղծուածոց<sup>9</sup> եւ կազմուածոց, եւ բերցին անուանք հանգոյն նոցին, եւ առաւելն տանի զհաստատութիւնն. նոյնպէս եւ բային՝ <sup>10</sup>ողորմեայն քան զողորմեացն:

15 Այլ մեծի քերդողութեան<sup>11</sup> արուեստն թէպէտ ի վերջէ դասեցաւ, դատողականս է մասն, զի սովորութիւն է բանաւոր արուեստաւորի<sup>12</sup> յառաջադասել զառաւելն, որպէս զվերծանութիւն, զի զարթուցէ<sup>13</sup> զլսաւզն, եւ զկնի զաւրեն դատողականիս, զի համ թողցէ յասացուածն<sup>14</sup>: 16 Եւ են հանգամանք դատողականիս այս. քանզի հերձուածողացն ընդունայնաբանութիւնս լուծանելով, որք ուղղափառութեանց<sup>15</sup> անուամբ կամեցան զիւրեանցն արդարացուցանել զվրիպանս, ի ստուգիւ քննութենէն դատելոյն<sup>16</sup> յանդիմանի աւտարոտի խառնուածն:

[Բ. ՅԱՂԱԳՍ ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ]

1 Արդ զինչ է վերծանութիւն ըստ մեզ եւ կամ որպէս ըստ իմաստնասիրացն, քաջայայտ է: 2 Բայց զարմանալ գոյ ընդ արուեստաւորիս<sup>17</sup>, զի յառաջ ասաց զսոցուն<sup>18</sup> մասունս, մինչեւ տարեալ հասուցանէ յանհատն, ուստի առաւելապէս<sup>19</sup> շահիցն մատակարարիցի աւգուտն:

3 Եւ զի՞ նախակարգէ զվերծանողութիւն քերդողաց եւ ապա շարագրաց. նախ՝ զի ամենայն արուեստաւոր զիւրն կամի <sup>20</sup>յարգուն ցուցանել, երկրորդ՝ զի նախագուռն<sup>21</sup> իսկ<sup>22</sup> եւ սկիսքն բանական արուեստիս զիւրեանցն ասեն<sup>23</sup> լինել քերդողքն:

1 AB գիտիւ  
 2 A ունելի  
 3 AB գաղափարաց  
 4 AB խաւսն  
 5 AB համառոտագոյնս[ն]  
 6 AB հարցանիցի  
 7 AB լուիցի / C լինիցի  
 8 A չի՞ ունին  
 9 C ըստ ստեղծուածոց  
 10 A ողորմեայն փառողորմեայն / C ողորմեայն փան զողորմեայն

11 B քերդողականութեան  
 12 A արուեստի  
 13 A զարթուցանէ  
 14 C զասացուածն  
 15 A ուղղափառաց  
 16 C դատելոցն  
 17 C արուեստաւորս  
 18 A սոցունց / C սորուն  
 19 B առաւել այսպէս  
 20 C յարգեցուցանել  
 21 C նախադրան  
 22 C չի՞ իսկ  
 23 AB չի՞ ասեն

4 Ըստ որում ապա զենթադրուծիւնն<sup>1</sup> <sup>2</sup>իմանալ է նմանութիւն ներքոյ կայ<sup>3</sup> դիմաց ձեւով<sup>4</sup> եւ ձայնիւ նմանապէս, որ<sup>5</sup> գործէ ընթերցողին ըստ քաջութեան հանդիսի<sup>6</sup>, ի յանդգնութենէ եւ յերկչոտութենէ խոյս տալ եւ միայն միջակին սպասելով՝ յորժամ խրոխտական գայցէ բան, եւ ձեւն ըստ այնմ ընթեռնուլ. եւ եթէ խանդաղատական՝ ըստ այնմ, <sup>7</sup>զի եւ իւր եւ վասն որոյ բանն է, արուծիւն ծանիցի:

5 Նա եւ ըստ առողանութեանցն, թե ուղիղ վերծանիցի<sup>8</sup>, որպիսի Պաւղոս<sup>9</sup> եւ զայլսն մի ըստ միտջէ զիւր արուեստն եցոյց լսողին. ապա թե ոչ նա որպէս էր լուաւ, այլեւ ծաղր եղեւ<sup>10</sup>:

6 Իսկ ոչ ուղեղ տրոհել<sup>11</sup> ըստ աւրինակի չար<sup>12</sup> խոհակերի զանդամսն ոչ ուղիղ բարժանել<sup>13</sup>, որ է զմիտս ի մտաց եւ զբան ի բանէ զատուցանել, զի մի պարունակեալն ի նմա միտք յայտնեսցին, եւ ի լսողէն զանխլացոյց եւ ինքն անարուեստ ցուցաւ:

7 Մինչեւ ցայս վայր ասացուածս<sup>14</sup> հասարակաբար պիտանացու բոլոր բանական արուեստաւորաց. իսկ յայսմհետէ զիւրեանցն ձեռնարկութիւն ի մէջ առեալ քերդողացն:

8 Վասնզի ողբերգութիւնն ի հայուսմս է<sup>15</sup>, իսկ ըստ հռոմին թարգմանութեան

նոխազերգութիւն ասի առ ի պաշտան առնել Դիոնեսեայ ումեմն տուողի որթոյ, որ է պատմութիւն յայտնի: 9 Եւ է ողբերգութիւնդ ոչ աշխարհական, քան թէ արարուած քերդողական զքաջացն գործեալ<sup>16</sup> իրս, զոր պատմեալ է ահաւորապէս՝ հանգոյն գործեցելոցն գերազանցութեամբ, ամենայնիւ դիւցազնաբար եւ ոչ <sup>17</sup>կաղս ի կաղս եւ քամահելիս:

10 Իսկ կատակերգութիւնն<sup>18</sup>, <sup>19</sup>որ եւ արարուածք<sup>20</sup> քերդողացն ոմանց յանդիմանութիւն եւ [ոմանց] յաւժարութիւն, որ եւ<sup>21</sup> խրատս բազում ունի յինքեան. աշխարհաւրէնն՝ զի ամենեցուն յայտնի լինիցի:

11 Եւ դամբանականն է գերեզմանական, որպէս թէ անհեղեղս ձեւով եւ ձայնիւ յանկարծաղէպ ինչ հասանել սգոյ լալումն, ըստ որում եւ ի վերծանելն է վարել հմտաբար<sup>22</sup> նմանութեամբն:

12 Իսկ քաջոլորակի տաղ ասի հոմերականն<sup>23</sup>, յորժամ յարմար<sup>24</sup> բառիւք եւ ոլորակաւք ի սկսմանէ մինչեւ յաւատարումն<sup>25</sup> զմիտսն աւարտեալ բերիցէ եւ զչափս: 13 Բայց ասի եւ <sup>26</sup>բոլորակ տաղ, յորժամ առաջարկութիւն մտացն երկարագոյն իցէ, երկրորդ տաղին<sup>27</sup> սկիսքն ի բաղաձայնից եւ կամ ի կրկնակէ հաւիցի<sup>28</sup>, զի զանգայտն<sup>29</sup> եւ զմեծասարն գործիցէ եր-

1 AC գեմբադրութիւն  
 2 AB է իմանալ  
 3 C քերական  
 4 A ձեւոց  
 5 C ուր  
 6 AB հանդիպի  
 7 C զի այն տեղի եւ էր  
 8 C վերծանեսցի  
 9 C Պաւղոս եւ ոչ Սաւղոս  
 10 C եկաց  
 11 A տրոհելով  
 12 C եղար  
 13 C յաւշել  
 14 AB արարուածս  
 15 C չի՞հ է

16 C գործեցեալ  
 17 C կաղս ի կաղս ինչ  
 18 C գկատակերգութիւն  
 19 C որ եւ նա  
 20 A արարուած  
 21 BA չի՞հ եւ  
 22 B հմտաբան  
 23 A ոմերական  
 24 A երկար / B յերկար  
 25 C յանկումն  
 26 C ոլորակաւղ  
 27 C աւղիմ  
 28 C հաւիցի  
 29 B զանգետն

կայն. իսկ մեծավերջ վասն երկայնութեան ձայնին սահմանեցաւ ողբերգակացն:

14 Այլ քնարական քերթութիւնն<sup>1</sup>, որ է մասն իմաստասիրացն ըստ աստեղաբաշխութեան<sup>2</sup>, ըստ երկրաչափականի ունի հանգամանս ըստ թուականին, զի զգաշնակումն ձայնին զոտինն եւ զաղիոյն<sup>3</sup> ի ներքոյ իրան համանման եւ ոչ աւտարոտի<sup>4</sup> ինչ բերիցէ:

15 Իսկ իսանդաղատականն կամ առ սիրելիս երեւի ծնողաց՝ առ մանկունս եւ այսպէս<sup>5</sup> ըստ նմին, եթէ նոյնպիսի<sup>6</sup> տեղի ինչ գիպեսցի<sup>7</sup> յընթեռնուլն<sup>8</sup>:

16 Արդ որ ըստ ասացեալ առողանութեանց, եթէ մի ըստ միովէ այլոց ձեւոցն ոչ պահեսցէ<sup>9</sup> զխորութիւնն, զարիապէս քերդողացն զշարագրութիւն եւ զջան տապալէ եւ զիւր ունակութեան արուեստն ի վերծանելն ծիծաղելի երեւեցուցանէ<sup>10</sup>:

[գ.] ՅԱՂԱԳՍ ՈԼՈՐԱԿԱՑ

1 Բացագանչութիւն յուրակի սեռ իմանի, քանզի հաւասարապէս անշնչիցն եւ շնչաւորացն եւ բանաւորացն է, իսկ ոլորակ՝ միայն բանականիս՝ առ ի պատկանաւոր ունելոյ ձայն եւ ոմանց ծանաւթ լեալ առ ի կրթութենէ, որպէս ի յունական լեզուին, իսկ այլ ազգաց ոչ եւս:

2 Եւ թերեւս տարակուսեսցի ոք<sup>11</sup>, թէ շեշտ վերացման աղազաւ ասի ոլորակ, իսկ բուլթն ընդէ՞ր. <sup>12</sup>այնու զի որպէս նա ի վեր

հանէ, սա ի խոնարհ նմանապէս իջուցանելով<sup>13</sup> հարթէ, որք ի մի տեղ եկեալ բաղկացուցանեն զպարոյկն. ըստ առակի՝ ծայրիցն՝ ի սպիտակէն եւ ի սեւոյն գոշն. իսկ ընդ մահ եւ ընդ կեանս ոչ է միջոց:

[դ. ՅԱՂԱԳՍ ԿԻՏԻ]

1 Նախադասելով սորա զուրոակն, քան զկէտն, ոչ ըստ պատուականութեան, քան եթէ ըստ տեղոյ, քանզի հարկաւոր է յասացուածին նախ ոլորակին եւ ապա կիտին ունել զկարգն:

2 Իսկ զի՞ սասց զիւրաքանչիւր ոք ի կիտիցն յառաջագոյն արհեստիւն. նախ՝ զի սահմանաւ զիւրաքանչիւրոցն բնութիւն ծանուցե, երկրորդ՝ զի տեղեան եւ ձայնիւ զաւարտել կէտն իբրեւ զթագաւոր, իսկ զերկուսն իբրեւ զսպասաւորս նորին<sup>14</sup>, աւրինակ իմն զպակասեալն եւ զառաւելեալն այնոքիւք կոչել<sup>15</sup> ունակութիւնք<sup>16</sup>, իսկ չափաւորն<sup>17</sup> պարզաբար:

3 Եւ են հանգամանք բնակիտիս մի ըստ բացարձակ ձայնի որպէս «ոչ-շունք»<sup>18</sup> եւ որ ի կարգին է. եւ միւս՝ յորժամ ի միջակիտին<sup>19</sup> հանգիստ առնուցու, երթեալ ի ստորակէտն, ուստի պատրաստաբար ի կէտն ելանիցէ ըստ առակի ճանապարհորդութեանն<sup>20</sup>: 4 Եւ ստորակիտիս է եւ<sup>21</sup> այս՝ ունել զբացարձակն եւ սմա որպիսի՝ «ոչ ապաքէն առաքեալ եմ», երկրորդ<sup>22</sup> յորժամ պատասխանուոյ ինչ կարաւտանայ բանն, ըստ այնմ՝ «ինձ պիտոյ է ի քէն մկրտիլ եւ դու առ իս գաս»:

1 C քերթութիւն  
2 C աստեղագիտութեան  
3 BC աղոյն  
4 A աւտար / B աւտարոտի / C աւտարոտիս ինչ  
5 A այս  
6 A նոյնպէս ի  
7 B դիպիցի / C հանդիպի  
8 AB չի՞ յընթեռնուլն  
9 BC պահիցէ  
10 AB յարկացուցանէ  
11 AB չի՞ ոք  
12 AB այս է զի

13 AB զիջուցանելով  
14 AB չի՞ նորին  
15 C չի՞ կոչել  
16 C նշանակութեամբ  
17 A չափաւոր է  
18 C շունչ  
19 C ի միջին կիտին  
20 C նախապարհորդին  
21 C չի՞ եւ  
22 AB քերթոյ

[Ե. ՅԱՂԱԳՍ ՀԱԳՆԵՐԳՈՒԹԵԱՆ]

1 Յետ որոյ զհագներգութիւնն ասելի է, զի ոչ եթէ ի հարկաւորացն է մասանց արուեստիս<sup>1</sup> որպէս եւ այլքն, այլ առ կրթութիւն մարդկանց:

2 Եւ հագներգութիւն ըստ հռոմին<sup>2</sup> ասի<sup>3</sup> գաւազաններգութիւնն, վասնզի սարդենի գաւազանաւ, զոր փոխանակ սուղելոյ կուսին, որպէս ասեն երկիր բուսոյց, պար գոլով<sup>4</sup> Ապողոնի երգեն<sup>5</sup> զհոմերական քերթածսն, վասն խնդրելոյ շնորհին որ ի Հոմերին է ասացեալ քերդածացն, որ զանխլացեալ վասն միայարութեան<sup>6</sup>, բարժանումն գործեցաւ յաղագս դիւրաւ ուսման մանկանց յերկուս գիրս <sup>7</sup>յեղիական եւ յՈղիսական ի քսան եւ չորս ճառսն. քանզի մանկանց է խրոխտելն եւ սրտմտելն ոչ<sup>8</sup> բարիոք, այլ զբարիոք<sup>9</sup> նախանձ եւ զբանական ունել հզաւր զաւրութիւն խորհրդոյն, վասն այնորիկ բարժանմամբ ճառիցն, զի բժշկեսցին միտքն առ ի յամբողջ <sup>10</sup>պատասխանելոյ առ ի յարցուածս յորում է ճառին եւ մի վհատեալ պախեսցէ<sup>11</sup> <sup>12</sup>անգիտանալովն ի քաղցր շահէ ուսումնասիրութեան<sup>13</sup>:

[Գ.] ՅԱՂԱԳՍ ՏԱՌԻ

1 Արդ եւ յայսմ սկիւբն արարեալ արուեստաւորիս<sup>14</sup> վարդապետութեան քննեաց զմասունս եւ զմասանց մասունս.

իսկ այժմ բուռն հարեալ զնիւթոյն զի առ փոքր փոքր ելցէ<sup>15</sup> ի վերին կատարելագոյնն<sup>16</sup>:

2 Եւ զի<sup>17</sup> ասէ յաղագս տառի եւ բուռն հարկանէ զգրոյ. քանզի տառդ անմարմին իբր թե բանի նշանակ, զի գիտելի կացուցանէ զգրովն զբանն, որպէս զայբիւն զայբն. իսկ նախադասեալ տառիս աւրինակ իմն ըստ պատուոյ, իբր ոգին քան զմարմին լաւագոյն<sup>17</sup>:

3 Բայց բազմութիւն գրոյս, մի՞ զի անարուեստ խաւսք եւ բարբարիկոն լեզու, եւ երկրորդ՝ վասն թաւութեան<sup>18</sup> գոյն կարգել ի գիրն որք ըստ խաւսիցն յարմարին:

4 Եւ գիրդ ի քերելոյ եւ ի գծելոյ ըստ հաստատուն յարացուցի եւ Հոմերոնէ կոչի հարկանելով նետիւ զգարչապարդ <sup>19</sup>Դիոմեդեայ Պարիսի:

5 Եւ զի<sup>20</sup> ասաց կրկնաբանելով զտառս. ցուցանէ զարրումն եւ զմիաբանութիւն գրոյ եւ ձայնի հանգոյն տարերցդ<sup>20</sup> ընդ երկրի եւ ընդ կենդանիս միայարութեան<sup>21</sup>. եւ դասութիւն<sup>22</sup> զի երբեմն յար ասի եւ երբեմն այր, միոյն յին եւ միոյն այբն դասելով:

6 Եւ ապա որոշելով զձայնաւորսն ի բաղաձայնիցն իբր պատուականս<sup>23</sup> եւ պատճառս ձայնի յարմարման, զի եւ ըստ ինքեանց եւ ըստ գայլսն խառնելոյ բաւականանան<sup>24</sup> հնչումն եւ բան յաւաւոր<sup>1</sup> պատկանել<sup>2</sup>:

1 AB արուեստաւորիս  
2 B հոգոյ մին  
3 AB լսի  
4 C պարգեւելով  
5 ABC երգել  
6 C միոյ արուեստի արութեան  
7 AB յեղիակոն եւ յՈղիսակոն  
8 BC չի՞ ոչ  
9 BC ոչ բարիւք  
10 C յարցուածս ասել  
11 B պահեսցէ  
12 C չի՞ անգիտանալովն ի քաղցր շահէ  
13 C ուսումնասիրութեամբն  
14 B արուեստիս

15 C եկեսցէ  
16 C աւգնականութիւնսն  
17 C լաւագոյնից  
18 A թագաւորութեան  
19 A չի՞ Դիոմեդեայ / BC Դիոմեդեայ (C դիսմեդեայ) ասպարիսին  
20 B տարերացդ / C տարերց  
21 C միաւորութեան  
22 C դասաւորութեան  
23 A պարունական  
24 AB բաւական



աղագաւ<sup>1</sup> գընութիւն երկոցունց՝ զվանգի, իբր թէ ի միոջէ կողմանէ ձայնաւորն վանգեալ<sup>2</sup> իցէ ի ձայնորդացն, իսկ փաղառութիւն՝ շուրջանակի: 3 Իսկապէս է ընդ ձայնորդսն փաղեալն՝ ընդ միումն կամ ընդ երկուս, իսկ պիտակն՝ սոսկ ա եւ կամ Ե<sup>3</sup>:

[ը. ՅԱՂԱԳՍ ԵՐԿԱՐ ՎԱՆԳԻ]

1 Եւ յորժամ ծանոյց զվանգին բնութիւն, գեկուցանէ այժմ գքանիաւնութիւն երկարիցն եղևոց բնութեամբ եւ զդրութեամբսն<sup>4</sup> միանգամայն, թէ ո՛րքան զո՛ր երիցագոյն ունի աստիճան:

2 [1] Արդ սկիսքն բնութեամբ<sup>5</sup> երկարն է ինքնաբաւ<sup>6</sup> եւ անկարաւտ ծակցութեան ձայնորդի, սակա<sup>7</sup> որոյ եւ առաջին տեղոյ հասաւ:

3 [2] Իսկ երկամանակքն վասն երկարից եւ սղից գոլով<sup>8</sup> պատճառ. երկրորդ նորա ցուցաւ:

4 [3] Այլ երկբարբառս, զի <sup>9</sup>յերկուց խառնուածոց ունի պատուականութիւն յերկայնութիւն<sup>10</sup> թէպէտ ոչ գերազանցեաց քան գերկամանակսն, համայն երկրորդին դասեցաւ:

5 Զկնի սոցա դրութեամբ:

6 [1] Որոյ առաջինն աղց, իբր զի միամաւր ոք գերկուս ձայնորդսն ձգելով զկնի<sup>10</sup> ինքեան<sup>11</sup> դասեցաւ, թէպէտ եւ ոչ հանգոյն առաջնոյն, սակայն առաւելեալ<sup>12</sup> գեր զկնիսն:

7 [2] Որում ընդդէմ է տատրակն, զի որպէս յաղցիցն զցաւն եւ զդատն յառաջկոյս ամփոփեաց այբն, իսկ ի տատրակին զտիւնն եւ զրէն եւ առ վերջին այբն. այսպէս, զի մին միշտ առաջադիր կարէ լինել տիւնն ըրէին աւրինակ իմն տրգալ. եւ ուր այս դիպեսցի, հարկաւոր է կիտիւն զտիւնն եւ զրէն վերջնումն ձայնաւորին տալ: 8 Իսկ զի սուղդ<sup>13</sup> եւ սղացեալ ասի, մի զի սուղ է այբտ եւ ըստ երկամանակի սղանայ ի տեղւոջ:

9 [3] Երկրորդ<sup>14</sup>, զի հաւասար մատուցանէ զբարժանումն զաւրէն եղբար եջիդ եւ ինիդ ի ձայնորդաց պատճառաւ, զի ոչ կարէ երբէք բէդ կենիդ առաջի դասիլ ընդդեմ աղցին եւ տատրակին. միումն՝ զի յառաջկոյս ամփոփեաց զբաղաձայնսն. եւ միւսումն՝ <sup>15</sup>զի ի վերջ, զի պարզ ձայնորդ է կենդ:

10 [4] Նոյնպէս կրկին ձայնորդք միմեանց ընդդեմ<sup>16</sup> են. հեզիկն, զիկն զաւրութեամբ գայն եջին ետ ձեռն, իսկ կետիւն՝ ինիդ:

11 [5] Բայց աջդ եւ<sup>17</sup> կիտիւ<sup>18</sup> եւ զաւրութեամբ ջէդ այբին:

[թ. ՅԱՂԱԳՍ ՍՈՒՂ ՎԱՆԳԻ]

1 Այսպէս դնելով բնութեամբ երկայնս եւ սուղս, իբր զձայրսն<sup>19</sup> քննեաց, եկն<sup>20</sup> զմիջոցն, կամի արդ զսուղ վանգիդ <sup>21</sup>վերաբերել հանգամանս:

2 [1] զնախկինսն<sup>22</sup> ի բուն սղիցն՝<sup>1</sup> յեջէ<sup>2</sup> եւ<sup>3</sup> յոյէ:

1 C յաղագս  
2 C գաւղեալ  
3 C ափ կամ եջ  
4 B դրութեամբսն / C գրութեամբն  
5 BC բնութեան  
6 A ինքն բաւ  
7 C յաղագս  
8 C յովով  
9 AB չի՛րկերկուց ... պատուականութիւն  
10 C չի՛րկերկայնութիւն  
11 BC զինքեամբ  
12 C առաւելն

13 BC սուղ  
14 B երկիրդ  
15 A զվերջ / B զի վերջ  
16 B դէմդեմ  
17 C չի՛ր եւ  
18 C կիտիւն  
19 A ձայրն  
20 C չի՛ր եկն  
21 C հանկամանս ի վերա բերել  
22 C նախ գինդ



3 [2] Իսկ զմիևսդ<sup>4</sup> յայբէ <sup>5</sup>երկամանա- կէ ամփոփեցելոյ:

[Ժ. ՅԱՂԱԳՍ ՀԱՍԱՐԱԿ ՇԱՂԱՇԱՐԱՑ]

1 <sup>6</sup>Յետ որոյ եւ հասարակ լինի ըստ ե- րիս յեղանակս վասն դիւրութեան<sup>7</sup> իմն գտեալ ի Հոմերոնէ, զի մի միտք ինչ բանի զանխլացեալ ի դժուարին չափոցն ծածկի- ցին, որ հասարակապէս ըստ չափոյ<sup>8</sup> յեր- կայնիցն<sup>9</sup> եւ սղիցն մատուցանէ ի տեղիս աւժանդակութեան<sup>10</sup>:

2 [1] Եւ է առաջնոյ յեղանակին հան- դամանք այսպիսի. յորժամ ասէ «Ինձ բնա[ւ] ես ոչ իրիք դու պատճառ, արե՛ւ, այլ աստուածքն»:<sup>3</sup> Արդ առաջի վանգիդ տեղի ի բնաւ իսկ տաղս, թէ բնութեամբ եւ թէ դրութեամբ միշտ զերկայն<sup>11</sup> եւ եթ խնդրել: <sup>4</sup> Իսկ երկրորդ վանգը<sup>12</sup>, զի ի ձայնաւոր երկայն յանգեցաւ եւ երկբար- բառն եւ դմին<sup>13</sup> յարուցեալ<sup>14</sup> եչն, խորտա- կելով զդա եւ արգելլով սաստկաբար աւ- րինակ իմն զալիս ծովու վլ՛ւմ պատահեալ, իշխանութիւն ետ առնել եւ սուղ, որ է ստեղն:

5 [2] Իսկ երկրորդ՝ «Պատրոկղէ, ինձ հիքիս կարի յոյժ սիրեցեալ անձին»:<sup>6</sup> Վասնզի սովորութիւն է նային<sup>15</sup> զաւրէն մոմոյ<sup>16</sup> երբեմն կակղանալ եւ երբեմն

խստանալ: <sup>7</sup> Արդ առաջին վանգիդ կակ- ղանալով ըէդ թոյլ եդ գերազանցել ան- ձայնիդ, զի արասցէ երկայն: <sup>8</sup> Իսկ երկ- րորդ վանգիդ խստանալով դատդ զաւրէն<sup>17</sup> մոմոյ ցուրտ արգել զվայտաձայնն առնե- լով սուղ, որ է ստեղն: <sup>9</sup> Եւ յորժամ սղա- ցուցանել ըստ այսմ աւրինակի զվանգդ ձայնաւորի պէտք են եւ կամ սղի ըստ ո- յի<sup>18</sup> սղացելոյ ըստ երկամանակին, զգուշա- նալով յայլոց ձայնաւորացն եւ զնայի եւ զվատաձայնի զնոյն պահել խտրութիւն:

10 [3] Իսկ երրորդ՝<sup>19</sup> զՆեստոր ոչ խա- բեաց խոշիւնն թէպէտ յուժպ էր: <sup>11</sup> Յոր- ժամ երկրորդ վանգին ձայնաւոր սուղ դի- պիցի<sup>20</sup> միով բաղաձայնիւ եւ բանն երկուք վանգիւք միայն զկատարուամն առնուցու<sup>21</sup> եւ յաջորդ վանգն ի ձայնաւորէ հաւիցի, իշխանութիւն է քեզ առնել համբոյր, թէ- պէտ եւ սուղ է ըստ այլուժ կարծեաց. եւ հաստատի այս, զի ամենայնի խնդիր <sup>22</sup>թէ- պէտ եւ փոքր իցէ, կատարելութիւնն է այ- սոցիկ շաղաշարաց:

12 Յայտնեն եւ պատմութիւնքն ա- ռաջնոյն Պրիամոս Տրուպցի<sup>23</sup> եւ Պարիս<sup>24</sup>, <sup>25</sup>որոյ զկինն յափշտակեալ էր ի հելլենա- ցոց որդին նորա՝ Պրիամոս քննելով զ'ի վերայ եկելոցն գործ՝ ասելով ցաղջիկն. «<sup>26</sup>Ե՛կ այսր, զի չես դու այսմ պատճառք»:

13 Իսկ երկրորդին՝<sup>27</sup> Աքիլլէս<sup>28</sup> Հելլե- նացի եւ Պատրոկղէ դայեկորդի նորա. եւ իբրեւ ետես Աքիլլէս զՊատրոկղէ մեռեալ

1 A աղցիցն / C նուազիցն  
2 C եդ  
3 C չիբ եւ  
4 C հիւնդ  
5 C եւ կամ փոխեցելոյ  
6 AB յետոյ  
7 AB դիրութիւն  
8 C խորհրդոյն  
9 A երկարիցն  
10 AB աստուածութիւն  
11 B գերկայնութիւն  
12 A վանգի / C վասնգդ  
13 B դիմին  
14 C յարացուցեալ  
15 A չիբ նային  
16 C մարմնոյ

17 BC հանգոյն  
18 C աղիստո եւ  
19 ABC երկրորդ  
20 C դիպեցի  
21 AB առնու  
22 C թէպէտ ... կատարելութիւնն է՝ թէ եւ փոքր ինչ կատարելու է  
23 A Պրիամոս Տրուպցի / C Պրիասոստրիպցի  
24 AB Պարիկրիս  
25 C չիբ որոյ ... Պրիամոս  
26 C եկ այսր՝ եկե կայ արդ  
27 A երկրորդումն / B ի յերկրորդին  
28 C Սֆոդոս

Հանդերձ քաջութեամբ՝ լալով հարձն Ա-  
քիլլեայ ասէ, թէ՛ «գՔեզ<sup>1</sup> յամուսնութիւն  
տամ Աքիլլեայ». ասէ՛ «Ինձ հիքիս կարի  
յոյժ սիրեցեալ անձն<sup>2</sup>»:

14 Իսկ երրորդին<sup>3</sup> Նեստոր ոմն հմուտ  
պատերազմի, զոր տուեալ ցՄաքաւոն<sup>4</sup> ոմն  
բժիշկ վիրաւորեալ, զի դարմանեսցէ. որով  
դարմանելով զվերսն<sup>5</sup> տայր նմա հաց եւ  
սեաւ գինի: 15 Բայց իբրեւ յոյժ ամբոխէր  
յոյզ պատերազմին, <sup>6</sup>ոչ սիրելի լինէր նմա  
ըմպումն գինևոյ, քան թէ երթալ ի գործ  
պատերազմին:

[Ժա. ՅԱՂԱԳՍ ԲԱՌԻ]

1 Յայտնելով սորա եւ զհասարակ շա-  
ղաշարաց զհանգամանս՝ հիմն արկանէ  
արդ բանի զբառս, որպէս նաւի զողնա-  
փայտն: 2 Եւ լսի բառ ասացուած, որ է  
ըստ միում վանգի եւ կամ ըստ երկուց եւ  
կամ ըստ երից. նշանակն մի է: 3 Իսկ  
մասնդ է սեռ եւ դուզնաքեայ առ բան ա-  
սի, որ է մեծագոյն քան զդա. եւ դարձեալ՝  
զի դոյզն ասի. <sup>7</sup>որ թէ եւ իցէ իսկ դուզնա-  
քեայ, որ թէ ինքն փոքր է, մեծի ունի  
զաւրութիւն: 4 <sup>8</sup>Ըստ որմէ եւ <sup>9</sup>բաղդասու-  
թիւն է բաղեալ իմն կարգաւորութեամբ եւ  
անդամ լեալ բառդ բանի: 5 Առ որով իմա-  
նալի է եւ գայն, զի ամենայն արուեստա-  
ւոր <sup>10</sup>կամի իրս առաջի արկանել, ոչ ա-  
ռանց նիւթոյն գիւտի մտաբերէ, որպէս եւ  
այս արուեստաւորս յառաջ եգիտ զնիւթն,  
որով ընդ աշտիճանսն էլ մինչեւ ի բանսն:

[Ժբ. ՅԱՂԱԳՍ ԲԱՆԻ]

1 Եւ արդ կամի ցուցանել որքանք ի  
սմա են բարժանմունք մասանց ու այլ եւս  
պաշտեցեալ լինին կիրք:

2 Եւ հետեւեալդ<sup>11</sup> ասելով զդա որ-  
պէս<sup>12</sup> զհետանկեալ բառիցն <sup>13</sup>համեմատ  
իմն շարագրաց, զորս ի մանրամասն գոր-  
ծոյն իւրեանց ասացին հետեւակս, իսկ  
զքերդողս՝ հեծեալս, քաղելով ի յինքն եւ  
անդամս գործելով, որով եւ ինքնակատար  
երեւի եւ զհանգամանս մտացն եւ զփո-  
փոխմունս գլխոցն ըստ տրամախոհու-  
թեան բաւականաբար յայտնիցէ, ոչ ընդ  
տարակուսութեամբ զաւրէն վանգին եւ  
կամ նոյն ինքն բառիս ինքնըստինքեան  
յանգեալ:

3 Բայց զմասունս բանիս ոմանք եւ  
զառասութիւնն յաւելլով ասացին ինն: 4  
Իսկ իմաստասէրք եւ զանուան մասունս  
ընդ անուան դասելով<sup>14</sup> եւ բային ընդ բա-  
յի, ածելով առ նոսա զշաղկապն եւ  
զաւրն<sup>15</sup> եւ զնախադիրն, ասացին հինգ,  
այլ սա զառասութիւն իբրեւ զտեսակ դա-  
սելով ընդ անուամբ, ասաց ութ, իսկ Ա-  
րիստոտելէս զստորասութիւն եւ զբացա-  
սութիւն եւ զբացերեւութիւն ընդ անուան  
եւ ընդ բայի՝ ասելով հինգ գոլ:

5 Բայց մասն ասելով աստանաւր եւ  
ոչ տեսակ՝ երեւեցոյց զմասն, զի յամենայ-  
նի ի վեր է տեսակ քան զմասն, որպէս ի  
վեցսն ի սկսբան արուեստիս քերդողն<sup>16</sup>. զի  
զնոսա թեւ ոչ զվեցն ունին, ոչ է կատա-  
րեալ քերդող, իսկ ճարտասանն միով  
միով: 6 Այլեւ յայսմ վայրի, զի զաւրէն  
սեռի գայլ եւս մասունս կարէ գոյացուցա-  
նել, որպիսի ինչ անուն զնոյն հետեւեալսն

1 AB Բեզ  
2 C անձիմս  
3 AB ի յերրորդումն  
4 A Մափաւ / B Մափասն / C Մափսն  
5 C զվերն  
6 A չիք ոչ ... պատերազմին  
7 A որ թէ եւ իցէ / C եւ թէ եւ իցէ իսկ  
8 C ըստ որում  
9 A բաղդատութիւն է / C բաղդատութեւն  
10 A չիք կամի ... արուեստաւորս

11 A չիք հետեւեալդ  
12 C իբր  
13 C համեմատ]-ից յետոյ տեխստն ընդհատոււմ է:  
14 A դասել  
15 B չիք գաւղն  
16 B չիք քերդողն

եւ զնոյն զուգապատիւս ոչ երէց եւ ոչ կրտսեր, <sup>1</sup>այլ տեսակն թե ունիցի մասուենս, որպէս ատենականն զամբաստանելն եւ զպատասխանելն երէց եւ կրտսեր, զի նախ ամբաստանելն լինի եւ ապա պատասխանի առնել<sup>2</sup>, նոյնպէս եւ այլքն, յորոց զիտելի է եւ զայս, զի [է] տեսակ, որ<sup>3</sup> զաւրէն սեռի բարժանի ի մասուենս եւ ոչ ինքն մնայ որպէս մարդ<sup>4</sup>, եւ է, որ բարժանի եւ ինքն մնայ, որպէս ծառ ի պտուղ եւ յոստս<sup>5</sup> եւ ի կեղեւ:

[Ժգ. ՅԱՂԱԳՍ ԱՆՈՒԱՆ]

1 Զկնի որոյ իմանալի է եւ զեղեայն վէճ անուան եւ բայի, քանզի ոմանք կամեցան նախադասել զբայ, իբր թէ [ի] շինելոյ շինելն եւ ի նաւելոյ նաւելն. իսկ այլք ոչ նմանապէս, այլ զանուն ասացին նշանակիչ գոյացութեան, այլ զբայ՝ պատահման: 2 Եւ զի այսպէս է. նախ յառաջանալ ի դէպ է գոլոյն<sup>6</sup> գեր քան<sup>7</sup> զպատահեալն, յայտ է թէ անուն քան զբայի:

3 Իսկ մասնդ է սեռ. հոլովականալ՝ իբր սահմանաւ<sup>8</sup> զատոյց ի բայէն: 4 Մարմին եւ իր ասելով նշանակել ի դերանունութենէ որոշեաց, իբր զի մարմինն, որ շաւշափի եւ ըմբռնի, եւ իր, որ մտաց հնչի եւ միայն լսելեաց լսի՝ անըմբռնելի: 5 Բայց եւ զիրս աստանաւր պարտ էր ասել անմարմին, քան զիր<sup>9</sup>:

6 Հասարակն մարդ, յատուկն՝ ոմն անուամբ իսկիւ:

7 Իսկ սերք ոչ ի գոյացութեան վերակոչին, զի ոչ էր բնութիւն քննել, այլ

զձայնի<sup>10</sup> նշանակս յայտնել, ոյք են ի Հոռոմին լիով արականին եւ իգականին եւ չեզոքին, իւ եւ կամեսցի ոք յայտնել ըստ երեցունց կարողութիւն է, որոց ոչինչ ի մերումս երեւի. միայն սոսկ եւ սակաւ ինչ, իբր թէ հայր եւ պատանեակ արուին կոչումն եւ մայր եւ աղջիկ՝ իգականին այլ եւս նոյնպիսիք: 8 Բայց յաւելուլն ոմանց զհասարակն եւ մակաւասար ոչ զինքն, այլ զայլս զատուցանէ արուեստաւորս այսմ պատճառ, եւ է հասարակդ այսպիսի, քանզի ձի եւ շուն հասարակ<sup>11</sup> կոչին երկոքումբք ձայնիւք, իսկ մակաւասարն ոչ եւս, այլ ի վեր քան զհաւասարն իգականին անուն եւ եթ է ծիծեառն եւ ափս, նոյնպէս եւ արականին արծուի եւ առիւծ, քանզի այնմ միայն հանդիպին:

9 Եւ նախագաղափար<sup>12</sup> իմանալի է նախաւրինակ իմն<sup>13</sup>, յորմէ ածանցին, իբր յերկրէ՝ բոյսք եւ կենդանիք եւ<sup>14</sup> ըստ նմին, եւ բան՝ <sup>15</sup>ի մարդոյ եւ բերք՝ ի սերմանց պտղոց<sup>16</sup> տնկոց:

10 Բայց տեսակք ասին, <sup>17</sup>զի որպէս ասացեալքն ածանցին իբր յաղբերէ վտակ, այսպէս յանուանէն<sup>18</sup> իրքն՝ երկիր եւ երկրայիցն, երկին եւ երկնայիցն, ջուր եւ ջրայիցն եւ որք նմա այսոցիկ ճշգրտեսցին B ճշգրտեսցին:

11 Իսկ ածանցացն տեսակս զի յոյժ անհուն եւ անբաւ են, թողլով զայլոցն յատուկ, զբանաւորէս բուռն եհար, առաջնորդութեամբ յայտնել, ասելով նախ՝

[1] զհայրանունականսն այսպիսի. հայրանուն ստոյգ ասի ըստ հարազատ

1 A չի՛բ այլ ... կրտսեր  
 2 A առնուլ  
 3 A չի՛բ որ  
 4 A չի՛բ մարդ  
 5 B յոստս  
 6 A գոլ այն  
 7 A չի՛բ քան  
 8 B սահման  
 9 AB զի իր

10 A գնայնի  
 11 B հաւասար  
 12 A նախագաղափար  
 13 B ինչ  
 14 B չի՛բ եւ  
 15 A ի բարդոյ  
 16 B պտղոյ  
 17 B որպէս զի  
 18 B յանցանէն

զաւակին յառաջ գոլոյ նույնպէս եւ զանունն ի նմանէ դնել, իբր Արտաւագր Վարդանեան. իսկ պիտակն է նախնեացն:

12 Եւ զաղափարք Հայրանուանցն, որպէս թէ անունն որդոյն զառաջին վանգն ի հաւրն անուանէ ունիցի, իբրեւ ի Բարայ՝ Բարեւն եւ ի Սամայ՝ Սամէն, ըստ որում եւ Գորգայից զաղափար է, զի որպէս դոքա ճեղքելով<sup>2</sup> ի համանման լեզուէն խաւսս, նմանապէս եւ Հռոմին դորացի<sup>3</sup> ոմն անուանեալ լեզու:

13 Նովին ձեւով<sup>4</sup> ըստ Հայրանուանցն եւ իգականացն երեւի զաղափար՝ կոչեցեալ<sup>5</sup> ի հարանցն ի Մանայն Մանանոյցն եւ ի Տրդատայն՝ Տրդատուհի, որոց թէպէտ ոչ իրաւ համարեցաւ<sup>6</sup> Հոմերոս առնել զզաղափար, իբրեւ անարժան համարեցաւ յիւրն պայծառ եւ հզաւը արարուածս խառնել զտկար եւ զնուաստ բնութեանցն անուանս, այլ զկնի եկեալքն արժանաւոր վարկան ըստ ամենայն կարեկցութեան նոցա եւ յայսմ ոչ զատուցանել:

14 [2] Նա եւ ստացականդ<sup>7</sup> իբր թէ պարառեալ զինքեամբ ստացուածոյն զստացողին անուան, առինչունակաբար կոչեցեալ ի նմանէ զիրք ու կամ այլ ինչ կենցաղաւզուտ<sup>8</sup> ստացուածք:

15 [3] Այլ բաղդատականացն են ձեւք երկու. կամ զոյգ ընդ զուգի, որպէս ի միոյ ազգէ էին եւ քաջք երկոյքեան՝ Դաւիթ եւ Սաւուղ. եւ կամ նուազ ընդ առաւելի, որպէս զեթացիքն ընդ Դաւթի, որոց թէ ընդգէմ թուիցի ոմանց, զի Գեթացիքն բազումք, բժշկի այնու, զի ոչ համեմատեաց զաւրութիւն բազմացն առ Դաւիթ,

այլ որով նուազ գտան: 16 Բայց զաղափարք<sup>9</sup> բաղդատականաց են, յորժամ յերկուց ընթացողաց ասի՝ ոմն քան զոմն արագ, սակաւ ինչ նշանակէ, ապա թէ՛ արագագոյն գոլ, ամենայն ումեք<sup>10</sup> առաւելուլ իմանի. սոյնպէս եւ սաստկագին, ուժգին:

17 [4] Եւ գերադրականդ ամենեւին իմանի առանց բաղդատութեան<sup>11</sup> ծայրք բանին եւ<sup>12</sup> ընդդիմակ ի նմին յորժամ սիցի սփառելիս, բնաւ իւրք գերազանցեալ զարմանալեաւ, նոյնպէս եւ հակառակ նորին:

18 [5] Այլ փաղափշական է աղջկական<sup>13</sup>, որ ոչ ասացաւ ի մերումն վասն պատկառանաց, վասնզի<sup>14</sup> այնպիսեացն<sup>15</sup> բնութիւնն սովորեաց ըստ անկատարութեան<sup>16</sup> տիրոցն եւ զխաւսսն<sup>17</sup> անկատարս ասել. այլ ի փաղաքշելն վասն աւելտի հարկաւոր է զմեծսն եւ զպատուականսն առնուլ ի մէջ անուանց թախանձանաց, որպէս զի<sup>18</sup> խնդրելոյն մի՛ վնասակարին<sup>19</sup> ի գձուձսն կոչելոյն հանդիպեսցի:

19 [6] Յարանուն է՝ յառաքինութենէ՝ առաքինի եւ ի խրախնանութենէ՝ խրախնան:

20 [7] Իսկ բայածական<sup>20</sup> յորժամ սիրեմ՝ ասի բայ է եւ սէր՝ անուն, արդ ածանցելով ի սէրոյ անտի [սիրուն հաստատի]:

21 Դարձեալ ի ձեւս<sup>21</sup> անուանց պարզ՝ իբրեւ մեկնակ ինչ անուն. ի նոյն յաւելեալ միւսն՝ ճանաչի՝ բարդ, եւ յարա-

1 B Բարբէն  
2 B նեբելով  
3 B գորացի  
4 B ձայնիս  
5 A ի հարսանցն  
6 A չիք Հոմերոս ... համարեցաւ  
7 B ստացական  
8 B կենցաղոյս

9 A զաղափար  
10 B ուստեք  
11 A ծայր բնարին  
12 A ընդդիմակին  
13 A աղնկան  
14 A չիք վասնզի  
15 A զայնպիսեացն  
16 A անկարգութեան  
17 A խաւսն  
18 A ի խնդրելոյն  
19 A այլ վնասակարին  
20 AB բայասացական  
21 A ձեւս

բարդ<sup>1</sup> անուն լինի՝ սուղ ինչ այլ յար յինքն ունելով. եւ յարաբարդ ասի, զի ի պարզէն զատ եւ հուպ ի բարդն մասամբ, այլ ոչ նոյնպէս:

22 Իմանալի է եւ զարմագանութիւն բարդիցն, վասնզի անհնար է անուան<sup>2</sup> իմիք առանց այսց լինել զարմագանութեանց<sup>3</sup>, կամ եթէ<sup>4</sup> յերկուց լիոց ու յերկուց պակասից, ու դարձեալ՝ նախադասելով զլին եւ զպակասն ի հետ բերելով, եւ կամ առաջի զպակասն ունելով եւ զլին ի վերջէ:

23 Բայց թիւ աստանաւր չափ իմանի, իբր թէ առանց յաւելլոյ եւ նուազութեան չափեալ լինի եզականդ ի մի եւ յոգնականդ՝ յանբաւս: 24 Այլ է երբ<sup>5</sup> երբեք, զի եւ եզականիդ գիծ գյոքնականն բերէ նշանակ, որպէս թէ պար ասելով կամ տոհմ, նոյնպէս<sup>6</sup> եւ յոքնական[ի]ն՝ զեզականն, որպէս Խոյարաւմն<sup>7</sup> եւ գերկուսն:

25 Իսկ ասելն նախ հոլովս եւ ապա ուղղական եւ երեւեցաւ ոմանց ընդդիմութիւն ի տեղոջ<sup>8</sup>, որպէս թէ ուղղական եւ<sup>9</sup> կամ հոլովական պարտ է անուանել. բայց բժշկեցաւ այսպէս, թէ բոլորիցս ընդ արեզականս լինելութեանցս [անուանք կոչեցան շնորհիւն աստուծոյ] եւ կամ զոր ի նա զաւրացոյց<sup>10</sup>: 26 Արդ ըստ ի վերուստ դրութեանն անուանն անգումն ասի նոյն ինքն ուղղականն, աւրինակ իմն գրչի ի վերայ կակող իմիք նիւթոյ նկարմամբ ուղեղ կացելոյ <sup>11</sup>եւ անդուստ ապա հոլո-

վումն առնելով ի սեռական եւ ի տրական եւ որ ի կարգին:

27 Եւ զի անուանական ասի ուղղականն, իբրեւ սկիսքն իմն եւ պատուականագոյն. իսկ պարզ՝ մեկնակ, անշարադիր<sup>12</sup>:

28 Եւ սեռականդ<sup>13</sup> ստացականդ է ըստ ինքեան հանդիպեալ ստացուածոյ եւ կամ հայրենոյ:

29 Բայց տրականդ<sup>14</sup> լսի թիսական եւ զի ոչ լսի հաւաստի ի մերումս, որ եւ ի Հոռոմին յայտնի<sup>15</sup>, տրականն ձայնիւ յայսմ անուանէ այսմ անուան առաքեալ. յորոց<sup>16</sup> ցուցականն յառաքականէն ըստ երկուց դիմաց. յորժամ առաքեսցի ոք առ ոք յումեքէ, զհեռաւորն նշանաւոր բանիւ ցուցանել եւ զմաւտաւորն երեւին տեսութեամբ:

30 Իսկ հայցականդ<sup>17</sup>, որ ըստ Ելեւնացւոց լեզուին պատճառական, է այս. քանզի յորժամ ի չար ինչ կոչեսցի ոք կամ ի բարի ընդ ձայնին զեկուցանէ զպատճառն:

31 Նա եւ կոչականդ<sup>18</sup> յայտնի է առհասարակական, զի ովդ, որ է նշանակ կոչականի, հաւասարապէս երթեալ լինի ի վերայ դիմաց եւ իրաց, բարեաց եւ հակառակին:

32 Իսկ եմթանկեալ անուամբդ, որ է որպէս ընդ անուամբ անկեալ եւ առաջիկայ մասունս, զոր ասացեալ է զտեսակէ<sup>19</sup>. ոչ որպէս տեսակս<sup>20</sup> ի սեռէ բարժանեալ,

1 A յարբարդ  
2 B անուն  
3 B գարմագանութեանցն  
4 B թէ  
5 B չի՞բրբ  
6 B նոյն  
7 A Խոյարաւմն  
8 A տեղոջ  
9 A չի՞բեւ  
10 A գաւրուց  
11 A չի՞բեւ անդուստ ... ի կարգին

12 A անշարագիրն  
13 A սեռականիդ  
14 A տրականիդ  
15 A յայտի  
16 B գորոց  
17 AB հարցականդ  
18 B կոչականդ  
19 B տեսակս  
20 B չի՞բ տեսակս

այլ միայն ձայնիւ նշանակաւ<sup>1</sup> հարկաւոր անուամբ վարի տեղւոջդ:

33 Բայց վասն [1] իսկիդ եւ [2] առասականիդ հակառակութիւն եղեւ յոմանս:

34 Պղատոն զառասականդ դասեաց առաջին, իբր թէ ի տեսակաց ոմանց տիրականք գաղափարեալ ըստ ժամանակի:

35 Իսկ Արիստոտէլ՝ զիսկդ, այսպիսի եթէ տեսանելդ հաստատուն է քան զլուր, որպէս զարեգակն ոչ ոք<sup>2</sup> լինի կարող ժխտել, իսկ զաներեւելի ինչ՝ բազումք, վասն որոյ եւ նախադասեցաւ տիրականս Մարկոս քան զառասականն մարդ:

36 [3] Եւ յերկոցունց<sup>3</sup> ի վերայ առեալ<sup>4</sup> լինի եռակի գով կամ պարսաւ, որ է ոգւոյն մեծ, քան զմարմնոյն, եւ մարմնոյն՝ քան զարտաքնոցն երկաքանչիւր գովութիւն եւ հակառակն:

37 [4] Առինչունակ՝ ստոյգ, որ միմեանց հակադարձին եւ զմիմեանս բառնան, որպէս տէր զծառայ եւ հայր առ որդի:

38 [5] Իսկ իբր<sup>5</sup> առինչունակն նման սմա, այլ ոչ նոյն, վասնզի բառնալն զմիմեանս զիշերոյ եւ տուրնջեան ոչ եւս:

39 [6] Եւ հումանուն լինի ըստ պատահման եւ մտածութեան. պատահմամբ՝ յորժամ երկուց ոմանց նոյն դիպեսցի<sup>6</sup> առուն տիրականդ [եւ առասական՝ արծուի՝ թռչուն եւ արծուի՝ շինածոյ ի փայտից, իսկ մտածութեամբ՝ ըստ պատուոյ, յուսոյ, աղաւթից եւ այլոցն եւս:

40 [7] Քանզի փաղանունն ըստ քերթողաց լսի բազմանուն, իբր թէ սուրն բազում ունի անուանս զիւրեաւ բարդեալ. իսկ ըստ իմաստասիրաց է փաղանուն, զի

կենդանին բազում բնութեան<sup>7</sup> անուանս փաղեաց:

41 [8] Բերանուն կոչի յիրացն բերմանէ՝ ի գաղթից՝ գաղթայր<sup>8</sup> եւ ի վանմանէ՝ վանեալ:

42 [9] Երկանուն է, որպէս ումեմն կոչեցաւ Պետրոս եւ Կեփաս. արդ եթէ ումեք կոչեցաւ Կեփաս միայն, ոչ անդրադարձի ի նմին հաւասարապէս եւ Պետրոս, որպէս հրոյ ջերմ գոլ եւ ջրոյ խոնաւ է հարկաւոր<sup>9</sup>:

43 [10] Բայց մականունն է հանդերձ այլով անուամբ կամ յառաքինութենէ եւ յընդդիմակէն ասի, իբրեւ Յովհաննու՝ Որդի որոտման, զի զաւրէն որոտման հնչեաց զբանն ընդ տիեզերս զաւետարանական վարդապետութիւնն<sup>10</sup>:

44 [11] Ազգականն է, որպէս միոյ ազգի մարդ ինքեամբ յատուկ կարող է զբաւանդակն յայտնել զազգ:

45 [12] Հարցականն ըստ երից դիմաց. մի՛ իբր թէ զբոլորակն<sup>11</sup> առաջի դնելով հարցանէ զիրն, ապա զորպիսութենէն եւ դարձեալ զորչափութենէ. սոյնպէս եւ զդիմացն բնութիւն քննել եւ որպիսի եւ որչափ:

46 [13] Իսկ եթէ անպատեհ իցէ ասելն, զանցանէ, ընգենլով ի յապա զխնդիրն, յայնժամ անորիշ եցոյց իբրեւ զանյայտ ի բազմաց:

47 [14] Այլ դարձեալ ի վեր բերելովն եւ նմանեցուցանելովն եւ հատուցանելով զխնդրելին բանիւ, այսպէս յայտնի, իբր թէ՛ այսպիսի, այսչափ, այսքան:

1 A նշանակեալ

2 B չիբոբ

3 A յերկուցն

4 B վերառեալ

5 A իբրեւ

6 B դիպիցի

7 B բնութիւն

8 A գաղթեայս

9 A հարկաւորապէս

10 B փարոգութիւնն

11 B բոլորական

48 [15] Բակճաճական<sup>1</sup> լինի բակառական, որպէս պարասելով եզական թուովն<sup>2</sup> զբազմաւք բակառեաց:

49 [16] Իսկ մակբաշխ է, եթէ յիշխանէ բան<sup>3</sup> եւ կամ այլ ինչ պարգեւեսցի<sup>4</sup> երկաքանչիւրոց եւ կամ իւրաքանչիւրոց, որում տացին, ի վերայ նորա երթայ եւ վերբերուի թիւնն:

50 [17] Պարունակն պարփակեալ յինքեան տեղեան՝ կուսաստանն զկոյսն եւ ընկուզուտն զընկուզին:

51 [18] Քերդեալ է որակարար<sup>5</sup> բարառնութիւն, որ է որակաբարութիւն, որպէս ի քաղցրութենէ քաղցրութիւն եւ ի դառնութենէ դառնութիւն. նոյնպէս եւ Հոմերոս յիրաց պատերազմին, իբրեւ տես զնոսա խուճապեալս, ասաց՝ «զխազմն եւ զվրդովն եւ զոյզն»:

52 [19] Սեռական է, թէպէտ բազում ուրեք ասացաւ, հաւաստեաւ աստանաւր ունի, զի կենդանին բազում տեսակս կենդանեաց ունի ընդ ինքեամբ, նոյնպէս տունկն՝ զծառս:

53 [20] Իսկ յատկական ի կենդանոյն եզն, ի տնկոյն՝ եղենի<sup>6</sup>, այսպէս անհատ հոլով յիւրաքանչիւր բնութեան<sup>7</sup> եւ ի միմեանս անխառն եւ լինի անհատ մին ըստ կարծրութեան, որպէս աղամանդ, միւս<sup>8</sup> ըստ մանրութեան, որպէս հիւղէ<sup>9</sup> ի շողն, երրորդ ըստ անխառնութեան՝ ձիոյն յարջառոյն տեսակ:

54 [21] <sup>10</sup>Զանազան իմն դաս<sup>11</sup> եւ թիւ, քանզի դաս ասի, յորում կարգաւորութիւն ընտրի ըստ աշտիճանի:

55 [22] Եւ թիւ՝ թէպէտ ի ստորուստ ի վեր եւ կամ վերուստ ի խոնարհ սկսցի, անհակառակ է:

56 [23] Բացարձակդ ասելով զաստուած, բան, զյառաջագոյն սխալեալն<sup>12</sup> իւր բժշկեաց. եւ է բացարձակ մի ըստ այնմ, զի ոչ տեսանի գոյութեամբ եւ ոչ<sup>13</sup> ի քննելն ըմբռնի արարչական զաւրուութիւնն, բայց ի հեռուստ հաւատով իմանի առ իւրաքանչիւր ումեք. եւ միւսն՝ բացարձակ ձայնիւ լսի եւ համառուտ ի բաց տուեալ, որպէս զպտուղս հոգոյն զսէր, զխնդութիւն, զխաղաղութիւն եւ որ ի կարգին է:

57 Եւ զի յերկարեաց զմասունս ճառիս, յիշատակէ վերստին զանուն, զի ծանոյց, եթէ սորայ են ասացուածք ամենայն:

58 Եւ հաստադրութիւն ասի յիրաւի ներգործութիւն եւ կիր, զի երկոքումբ<sup>14</sup> է հարկաւոր վարել անուան<sup>15</sup>:

#### [ԺՊ. ՅԱՂԱԳՍ ԲԱՅԻ]

1 Բայց թէ որպէս նախադասեցաւ անուն քան զբայ, յայտ է ցուցանելովն. իսկ բայի<sup>16</sup> արժանաւոր իսկ էր երկրորդիս հասանել դասու եւ սկսմամբ<sup>17</sup>:

2 Իսկ սահմանեալ զատուցաւ յայլոցն բայ զաւրէն սեռի անհոլովիւ որոշի յանուանէ. եւ զի կայր խառն եւս ընդ այլսն եւ ած յոլովս ի վերայ որպէս ի վերայ Սոկրատայն, զի ի բոլորից զատուցէ:

1 A բակճաճական

2 A գրագմաւ բակառեալ

3 A չի՞ բան

4 C արգեւիցի

5 C որակարար

6 B իւղենի

7 A բնութիւն

8 A միւս

9 A հիւղէ

10 B զանազանիւն

11 A դաս

12 A սղալելն

13 A չի՞ ոչ

14 A երկոյ՞ումբ

15 A անուամբ

16 B բայդ

17 A սկսման

3 Եւ զի՞ յարեւանայ՝ զհետ երթայ բայի:

4 Բայց զի՞ նախ զխոնարհութիւնս՝ ասաց քան զամանակ. զի խոնարհութիւնք են՝<sup>2</sup> բերող ամանակաց եւ յայտ ի խոնարհմանցն է:

5 Տրամադրութիւնդ են տրամախոհութիւնք՝<sup>3</sup> եւ է ոչ ի վերայ հաստատութեան. եւ է բուն եւ ստոյգ ներգործութիւն գանեմն եւ կիրք՝ գանիմն եւ միջին՝ մոռացայ ոմ եւ կամ մոռացեալ եղէ:<sup>4</sup> 6 Բայց յայլ վայրս՝<sup>5</sup> որպէս Կորճայք՝<sup>6</sup> վարին կրականին ոչ՝<sup>7</sup> հմտաբար, այլ ըստ սովորութեան:

7 Անուանց նախագաղափարից՝ անուան զբունն եւ զածանցեալն նշանակէր. իսկ սա ի մի՞<sup>8</sup> սոսկ կայ ի վերայ ձայնի միով վանգիւ ածանցեալ:

8 Ձեւ՞ նոյնք ըստ անուան ձեւոյ:

9 Թիւ՞ եզական միոյ նշանակիչ, երկուորական՝ մեր չիք, յոքնական՝ յանբաւս՝<sup>9</sup> անկանի:

10 Դեմք՞ ասին ոչ զիրաց, այլ զզիմաց իսկ, իբր թէ նախ՝ յառաջնմէն բանն, երկիր՝<sup>10</sup> առ մաւտաւորն, երիր՝ առ եւս հեռաւորագոյնն:

11 Ամանակ հաւաստեալ երեք՝ ներկայ, անցեալ, ապառնի: 12 Ասացին ոմանք զներկայ իրիցագոյն վասն անցելոյն ընդ նա երկուցն եւս. եւ այլք՝ զանցեալն յազազս յառաջագոյն անցանելոյն ըստ նախադասութեան: 13 Դարձեալ հարցաւ յոմանց՝ զի՞նչ է ժամանակ՝ ի գոյի՞ց, թէ՞ ոչ գոյց. ոյք ի գոյիցն ասացին զայս աւ-

րինակ, թէ լուսաւորաց շարժմունք եւ բնաւ լինելութեանցս՝<sup>11</sup> աճմունք եւ յարմարութիւնք աշխարհի ի ժամանակի կատարին. իսկ Արիստոտելէս ասաց ի յոչ գոյից, որպէս ի յուշկապարկացն համբաւ անուամբ միայն եւ ոչ ճշմարտութեամբ. զանցեալն այսպէս աղարտէ, զի իբր անց, ապականեցաւ. զապառնին՝ զի չէ իսկ ի միջի. զներկայն՝ աներեւութաբար իմն, զոր աւրինակ թէ ի քուն ոք իցէ եւ կամ յայլ սբաւսանս ինչ, նա զիւրն կատարէ զընթացսն ըստ աւրինակի ջրոյ իջանելոյ ի խողովակէ՝<sup>12</sup> յաւազան ինչ տեղիս. իջանէ յաւազան՝<sup>13</sup> եւ ոչ երեւեցաւ, եւ ընդ իջանելն ծորի:

[ԺԵ. ՅԱՂԱԳՍ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ]

1 Առ որով ասելի է՝<sup>14</sup> զլծորդութիւնս, զի խառնուած է սորա՝ ձեռն տալով ստուգաբանութեան: 2 Եւ լծորդութիւն ասի, յորժամ ելեալ մի ի լծոյն՝ մտանէ ընկերակիցն՝ բառնալով՝<sup>15</sup> զլուծն, որպէս բենն զմենի եւ կամ մենն զպէի, նոյնպէս եւ այլքն:

3 Եւ կարգաւոր՝ զի ոչ այլ ընդ այլոյ, այլ յանցիւր կարգի մտանիցեն. յորոց լծորդաց ութք՝<sup>16</sup> առնուն զլորակն, յորժամ սոսկ ասիցի բերեմ, իսկ յաւելեալ զայս ինչ բերեմ՝ ոչ եւս:

4 Արդ ծախելով զբոլոր բաղաձայնսն ի լծորդսն, կամի արդ՝<sup>17</sup> զձայնաւորսդ ի նմին դասու լծորդաց դասել. եչդ, ըստ որում նշանակէ զգովեմն եւ դիեմն, ասեմ լծորդ, իբր զի յատուկ է ոչ անուն՝<sup>18</sup>:

1 B խոնարհութիւն  
2 A չիք են  
3 B տրամափոխութիւնք  
4 B եղէայ  
5 B վերս  
6 B Կորնեայք  
7 A ոմ  
8 A իմ  
9 B անբաւս  
10 B երիր

11 B լինելութեանս  
12 B աւազիմ  
13 B յաւազն  
14 A չիք ասելի է  
15 A բառնալ  
16 B ութիդ  
17 A արդեաւ  
18 A անուն



[Ժգ. ՅԱՂԱԳՍ ԸՆԴՈՒՆԵՐԼՈՒԹԵԱՆ]

1 Այլ վասն ընդունելութեան, զի հասարակ ասի գոյանալ ի բայէ եւ յանուանէ. եթէ կատարեալ ունէր զերկոսեան, ապա նախագահ դասէր քան զերկոսեան. իսկ զ[ի ի]միողէ մասն ինչ ունի եւ մասն ինչ՝ ի միւսմէն, այսր աղագաւ ոչ քան զնոսա նախկին, բայց ըստ նոցանէ<sup>1</sup> կարգեցաւ:

2 Իսկ եթէ զինչ է ընդունելութիւն, ինքն ըստ ինքեան անուո՞ղ յայտնէ. բառդ ի դմա սեռ է. յարեւանայ՝ իբր զհետ երթայ ընդունելութեան որ ինչ բային անկք, բայց զի զգէմս ոչ յայտնէ եւ ոչ զխոնարհմունս, զի շինելն ոչ եցոյց զգէմս. իսկ այլք ի բային նոյնք եւ ի նմա: 3 Եւ զհոլովս ըստ անուանն, որպէս արարելով, արարելոյ եւ որ ի կարգին:

[Ժէ. ՅԱՂԱԳՍ ՅԱԻԴԻ]

1 Յաւդ ըստ մերումս փոքր<sup>2</sup> ինչ նշանակ է, իսկ յաւդիւղ նշանաւոր, բայց այլ ամենայն նշանք դորա ի հայումս ոչ ինչ յայտնեն, այլ միայն եղեալ է վասն զտեղիդ լնլոյ:

[Ժը. ՅԱՂԱԳՍ ԴԵՐԱՆՈՒՆՈՒԹԵԱՆ]

1 Վասն դերանունութեանդ կարգի<sup>3</sup> զիտելի է, զի որպէս անուն նախ կարգեցաւ քան զբայ, նոյն աւրինակ սա քան զմակբայն:

2 Իսկ դերանուն է փոխանականունութիւն<sup>4</sup> եւ թերանուն եւ հասարակ անուն. միդ՝ փոխանակ տիրականին, իսկ միւսդ՝ թերի քան զիսկն, երրորդ՝ հասարակաբար. զորաւրինակ ազգի մարդկան բոլորեցունց ասի մարդ, նոյնպէս եւ դերանունդ ամենայնի երթայ, ասելով՝ ես եւ դու եւ նա. բառդ՝ զաւրէն սեռի:

1 B սոցանայն  
2 B փոփունք  
3 B կարգիդ  
4 B փոխանակ անունութեան

3 Իսկ յայտնել զորոշումն դիմաց, մի՛ զյանդիմանակացն իբրեւ է դա, երկրորդ՝ զհեռացեալն, եթէ պէտք ինչ նովաւ վճարեսցի, ասի՝ «Եթէ նա աստ էր, կարող էր վճարել». նոյն ասել ի մէջ բերեր եւ որոշեցեր զխնդրեալ դէմսն:

4 Արդ զի՞ զանուան նմանութիւն յինքեան բերէ. նախագաղափար ցուցանի իբր թէ զիմ, զքո, զնորա դէմս, իսկ ածանց՝ ի դիմաց տեղոյ ստացուածն ոչ իբրեւ զարարչէն, այլ ի ստացողէն:

5 Սէրբ՝ արական, իգական, չէզոք՝ ձայնիւ նշանին ասացեալ. թէ յանուան<sup>5</sup> զի կատարեալ էր, փոքր ինչ ունէր, իսկ ի սմա՝ եւ ոչ բնաւ, զի մասն է, բայց յատուկ ըստ յիւրաքանչիւր դիմաց:

6 Թիւ՝ ըստ անուանն ի վերայ չափեցելոյն<sup>6</sup> երբեալ:

7 Հոլովբ՝ առաւել եւս քան ի յանուանն աստ կարգեալ, վասնզի անդ է ինչ որ այլ զայլոյ ունի, իսկ աստ ստոյգ:

8 Իսկ զձեւս յայտնի<sup>7</sup> է նախ անձն<sup>8</sup> իմ, անձն քո, անձն նորա եւ ապա ի կարգին զհոլովսն<sup>9</sup>:

9 Եւ զնախագաղափարդ՝ զի երկրորդէ եւ երրորդէ<sup>10</sup> հարկաւորաբար, կամեցեալ ցուցանել դովաւ զերկդիմի բնութիւն ածանցիդ. աւրինակ իմն, թէ ասիցի՝ իմոյ այգւոյ բերք եւ թէ այլ ինչ, միով ձայնիւ զինքն եւ զստացուածն զեկուցանէ:

10 Իսկ բաղաւղդ<sup>11</sup> իմանի<sup>12</sup> սղալանք արուեստաւորիս, զի յաւդի մասն էր եւ ոչ դորա. եւ է անբաղաւղդ պարզ բառ, իսկ բաղաւղդ՝ յաւելուած ունելով ի պարզն:

5 A անուան  
6 B չափեցելոց  
7 A ամոլի  
8 A անձնդ  
9 A չիք զհոլովսն  
10 B չիք երրորդէ  
11 A բաղաւտ  
12 A իման

[Ժք. ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ]

1 Յետ որոյ նախադրութեանդ<sup>1</sup> անուէն եւ տեղի աննմանք, վասնզի անուէր նշանակէ առաջնոյ եւ տեղիդ՝ վերջին: 2 Եւ թէ սխալ էր, ոչ վարեցեալ լինէր մինչեւ ցարդ: 3 Իսկ նախադիր<sup>2</sup> ասի, զի յառաջ եղեալ լինի քան զանուէն եւ զբայ ի բոլոր տեղիս իբր սպասաւոր, իսկ զի ոչ է քան զնոսա պատուական, աւրինակ իմն կարպետ քան զթագաւոր:

4 Բառդ՝ զաւրէն սեռի. բարդութիւն՝ ի սակաւաբանութեան վերայ<sup>3</sup> իբր թէ վաղտուր, իսկ յորժամ խնդիրն յաւելու, յայս բաղդասեցեր:

5 Եւ է Հոռոմին ութեւտասն, իսկ մերս՝ անհամար եւ անբաւ:

6 Իսկ ստորադասմ՝ մի՝ ե՛ւ նախկին, ե՛ւ վերջին՝ քո սակս, սակս քո, իսկ երկու ստորադասքն՝ դրակից<sup>4</sup> եւ <sup>5</sup>կամ հաղորդ:

7 Բայց զի՞ սա նախադասեցաւ քան զմակբայն. զի մասն է անուան<sup>6</sup>, իսկ մակբայն՝ բայի. զոր աւրինակ ապատոհմ հարուստ. եւ ազատն թէեւ աղքատ, վեհագոյն եւ նախագահ քան զծառային:

[ի. ՅԱՂԱԳՍ ՄԱԿԱԲԱՅԻ]

1 Իսկ անխաղաց, զի ոչ ունի խոնարհումն իբրեւ զբայ, իսկ ստորաբայ է եւ կամ ի վերայ, որպէս<sup>7</sup> գայս շինեմ եւ շինեմ գայս:

2 Պարզ, ի նմին գրոյդ յայտ է եւ ջուկադիր. մին՝ ճվադ, նախ եւ միւսն՝ վաղվադ, նախավադ:

3 [1] Եւ ամանակի յայտնիչ է՝ այժմ՝ ներկայի<sup>9</sup>, յայնժամ՝ զանցելոյն, դարձեալ՝ զապառնոյն. եւ զգոսա իբրեւ զսեռս, իսկ զսերկն եւ զվաղիւն՝ իբրեւ զտեսակս:

4 [2] Զբարիոքն եւ զյատկապէսն ասել արականին եւ իգականին հանգետ, զի միջին են:

5 [3] Եւ մուրցացի եւ ծղացի եւ ափացի են յայտ, իսկ ողկուզաւրէն եւ տարմաբար քերդեալ ի Հոմերոնէ, իբր թէ խիտ եւ տարմաբար զաւր հանդիսանայր ի պատերազմի ուրեմն:

6 [6] Կալք երեք՝ ի տան, ի տանէ դուրս եւ <sup>10</sup>անդուստ ի ներքս:

7 [31] Ապերդմնական՝ յասելն ուրուք քաւ, թէ չիք արարեալ:

8 Դրութիւն ծայրիցն եւ սեռին չարի միայն երկբայելոյն<sup>11</sup> եւ միջակի եւ մոլութեան բազում այլանդակ բանիցն մի ինչ յանկարծակի եւ զլինելոյն ճառեսցէ իրս:

[իա. ՅԱՂԱԳՍ ՇԱՂԿԱՊԻ]

1 Շաղկապդ զի՞ ի վերջէ ասացաւ. գիտելի է, զի ոչ ամենայն վերջին լաւ եւ ոչ բնաւ անարգ, վասնզի թէպէտ կառավարն ի վերջէ մտեալ ըստ հարկաւոր պահանջման տեղւոյն, այն առաւել պատուական. իսկ սա ոչ ըստ պատուոյ, քան եթէ պիտոյից. աւրինակ իմն՝ յորժամ նիւթ ինչ ի միջի կայ, այնժամ պիտի եւ<sup>12</sup> կապ, եւ սա նոյնպէս բայի<sup>13</sup> եւ անուան եւ այլոց կապ եւ յաւղ եւ յարմարութիւն լեալ<sup>14</sup>:

1 A նախադրութիւն անդ ուր  
2 B նախդիր  
3 B չի՞ վերայ  
4 A դրակից  
5 A համահաղորդ փ/ս կամ հաղորդ  
6 A բանի  
7 A չի՞ որպէս  
8 A վախճան

9 A ներկաիւ  
10 B անտուստի  
11 A երկբայելիոյն  
12 B չի՞ եւ  
13 A բարի  
14 B սրանից յետոյ տեխտն ընդմիջուած է հետեւեալ հատուածով, որը լուսանցումն նշուած է «յայլմէ» բառով. «Քիլ՝ վեցերորդ մասն է կաննիզնի, զի կանգուն վեցիւսն է: Միտք է յարմարացոյց գանգանելոց իմանալեաց. եւ յառաջերական բանն նոյնպէս եւ միաւորեցուցիչ գանգանողաց իմանալեաց տաղից ի փաղա-

2 Իսկ շաղկապ ասի ի շաղելոյ իմն եւ կապելոյ զբառ ընդ բառ եւ զմիտս ընդ միտս, որպէս զի զմեկնութիւն բանին յայտնեսցէ: 3 Եւ մեկնութիւն՝ ոչ կարեւոր ինչ քննող լուծմանց, այլ սովորական խաւսից բառ<sup>1</sup>: 4 Բառդ՝ զաւրէն սեռի<sup>2</sup>:

5 [1] Արդ հանգամանք շաղկապիս ի ջոկամանիմ<sup>3</sup> անհուն՝ երկուք աւրինակաւք, զի ի սկզբանէ աշխարհիս լոպ որս մինիչեւ ցայժմ ի մէջ ատնուցուս պատմելով եւ կամ ի քէն մտածութիւն խորին: 6 Եւ է ջոկաման իբր եւ զմիաբանութիւն իմն դիմաց եւ առաջարկեալ դիմացն առ իրեարս ըստ ցուցելում աւրինակիրդ եւ ասի եւ, զի<sup>4</sup>, իբր թէ՛ «ես եւ դու»:

7 [2] Իսկ անջատականն ընդդէմ սմին զմիտս իրին ոչ բաժանելով, այլ զդէման միայն որոշելով, եթէ՛ «կամ առնեմ, կամ արա»<sup>5</sup>:

8 [3] Բաղմատդ<sup>6</sup> է, որ ոչ ի նմին հաւաստի ճանապարհի<sup>7</sup>, այլ ճանապարհաւն՝ ըստ առակի սերմանն, որ վերաբերի ի հերձածողան. եւ գիտելի է զնա, թէ՛ «յորժամ ծածկի յամպ յարեգակն», զգոյութիւնն ոչ նշանակէ, բայց զկարգն:

9 [4] Իսկ տարբաղմատն, որ գոճն եւ զգոյացութիւնն յայտ առնէ՛ «Վասնզի՛ ուրախարարն պարտ է ուրախ առնել»:

10 [5] Փաստբանական է իբր զճանապարհորդին յամեցելոյ զպատճառն քննիցէ ոք՝ «է՞ր աղագաւ յամեցեր<sup>8</sup>»:

11 [6] Որոյ<sup>9</sup> ընդդէմ տարակուսականն, զի անդ ի հարցմանէն պատճառն յայտնեցաւ, իսկ աստ յանյայտէն՝ միայն տարակոյսն<sup>10</sup>:

12 [7] Բաղբանական<sup>11</sup> է բազում բաղեալ բանս եւ ի վեր եկեալ առակաւք եւ հաստատութեամբ, զոր դիւրագոյն եւ զարմանալով ասել՝ «ուրեմն՝ <sup>12</sup>այս էին երազքն Յովսեփու»:<sup>13</sup> 13 Բայց եւ հնարաւոր<sup>13</sup> է միում անուան երկուս կոչմունս ընդունել, որպէս եւ մարդ առհասարակ<sup>14</sup> ասի. դարձեալ <sup>15</sup>տիրական կարէ ասել մարդ, սոյնպէս<sup>16</sup> ուրեմնդ է քաջալերելի եւ տարակուսելի:

14 [8] Թարմատար ոչ իբր եւ <sup>17</sup>հարկաւոր որպէս զայլսդ, այլ աւրինակ իմն դոյզն նկար ի հանդերձի վասն փոքր ինչ զարդու, նմանպէս եւ սա մասամբ զչափ տաղին լնլով եւ կամ զմիտս ինչ պայծառացուցանելով:

15 [9] Բայց <sup>18</sup>ընդդիմանակսդ զոմանս ասել սովորութիւն է իմաստնոց զհաստատունսն ինքեանց անուամբ ասել, իսկ զերկբայելիսն, ուստի<sup>19</sup> եպերանք ինչ գայցեն այլոց բանիւ եւ ընդդիմական՝ «թէպէտ արագ էր, սակայն հասի, թէպէտ<sup>20</sup> զաւրաւոր, յաղթեցի»:

ոութիւնս եւ փաղառութեանց ի բառս եւ ի բառից բազմաց ի շարադրութեան եւ երկայն ասացուածս. եւ անհուն հեղեալ ունի միտք երկայնութիւն ետի (?) եւ երկայնի առ ամենայն իմանալիսն, եւ բայ երկանանա (sic) եւ լայնանա ըստ արտագնացական նառից»:

1 B չի՞ր բառ  
2 A սեռից  
3 B ի ջոկամանակիս  
4 A երգի  
5 B ար  
6 A բաղատդ  
7 A նանապարհորդի

8 B յամեցար

9 A որ

10 B տարակոյսն է յինքեան

11 B բաղբանակ

12 A այս են պատերազմքն Յուսեփու

13 B հնարաւոր

14 A առհասարակական

15 B սեռական կարէ ասել մարդոյ

16 A որպէս

17 A հարկաւորապէս

18 B ընդդիմանակիս գայլս ասէ դնողս

19 A եւ ուստի

20 B թէպէտ եւ

16 [10] Վարանական է, զի յորժամ յառաջնոյն ոք վրիպէ, առ հարկի ընդունի զերկրորդն, որպիսի թէ՛ «Յայնչափ յաշխոյժ վաստակոց ոչ բաւականանամ եւ այլոց գոնեայ եւ ոչ ձի ի դարմանել եւ դատարկաբար կերակրելն լեալ»:

[Իբ. ՅԱՂԱԳՍ ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ]

1 Առողջանութիւն անասացութիւն<sup>1</sup> ասի. եւ սեռականք չորք վասն այսորիկ ասի, զի յառաջիկայս բաժանին ոլորակն ի շեշտ եւ ի բութ եւ [ի] պարոյկ, ամանակն՝ յերկար եւ ի սուղ, հագագն՝ ի թաւ եւ ի սոսկ, եւ կիրք՝ յենթամնայն, յապաթարց

եւ ի ստորատ: 2 <sup>2</sup>Ենթամնայն է որպէս<sup>3</sup> աւրէնուսոյց. ապաթարցն<sup>4</sup> զի ի բաց բարձցի այբն, դնելով զնա, ասի ապաթարց:

[Իգ. ՅԱՂԱԳՍ ՈՏԻՑ]

1 Ոտք ասին, վասնզի որպէս բնութիւն կենդանեաց ի վերայ ոտից հաստատագոյն<sup>5</sup>, այսպէս<sup>6</sup> եւ քերդութիւն ամբողջ եւ հաստատուն կատարի այսոքիւք ոտիւք, <sup>7</sup>որ չափք անուանին եւ են միմեանց դիմադրութեամբ. եւ պարզ, զի անամբ լինին շարադրեալք:

1 A առովասացութիւն

2 A ենթամնականն է

3 A չի՛ որպէս

4 A ապթարցն

5 B հաստատնագոյն

6 A սապէս

7 A չի՛ որ չափ անուանին

# ՄՈՎՍԷՍ ՔԵՐԹՈՂ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԲԵՐԱԿԱՆԻՆ

ՅԱՂԱԳՍ ՄԻՈՅ ԲՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԻՆ ՄԱՐՄՆԱՅԵԼՈՅ

Ի ՀԱՄԱՏՈՅ ՃԱՌԵՆ ՄՈՎՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԲԵՐԹՈՂԱՀԱԻՐՆ

ԱՂԱԴԹՔ



## ՄՈՎԱՅԵՍ ՔԵՐԹՈՂՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ

*Կենսագրական տեղեկություններ չեն պահպանուել:*

*Ծնուել է, հաւանաբար, Ե դարի վերջին քառորդին եւ մահացել Զ դարի առաջին կեսին: Համաձայն Ասողիկի վկայութեան՝ Բագրեւանդի եպիսկոպոսն էր:*

*Ելնելով մեզ յայտնի նրա մի քանի երկերից՝ Մովսէսը հմուտ է եղել յունարէնի, ինչպէս նաեւ՝ քերականութեան, հռետորութեան եւ իմաստասիրութեան մէջ: Բացի ուսումնակրթական լայն գործունէութիւնից, զբաղուել է մատենագրութեամբ: Նրա գրչին են պատկանում կամ վերագրուում Դիոնիսիոս Թրակացու Քերականութեան թարգմանութիւնն ու մեկնութիւնը, Փիլոն Եբրայեցու որոշ երկերի հայացումը, ինչպէս նաեւ՝ Յաղագս միոյ բնութեան Բանին մարմնացելոյ դաւանաբանական երկասիրութիւնը (գետեղուած է Գիրք քթոց-ում)<sup>1</sup>, շարականներ (Աստուածայտնութեան ճրագալոյցին, Ս. Ծննդեան կամ Աստուածայտնութեան Ա-Ը աւուրցն, Կարգ Յարութեան՝ ԱԶ-ԴԿ՝ Մեծացուցէ-նեբրով հանդերձ, Տեառնընդառաջին եւ Վերափոխման Ա աւուրն) եւ մի աղօթք:*

*Յաղագս միոյ բնութեան Բանին մարմնացելոյ երկը ձեռագրերում հանդիպում է Երանելոյն մեծի Քերդոդահարն Մովսէսի եպիսկոպոսի անունով<sup>2</sup>: Այն բնութեան խնդրին նուիրուած վաղագոյն երկերից է: Աստուածաշնչական եւ հայրախօսական (Գրիգոր Աքանչեղագործ, Բարսեղ Կեսարացի, Եփրեմ Ասորի, Յովհան Ոսկեբերան, Կիւրեղ Ալեքսանդրացի) առատ վկայութիւնների հիման վրայ, մասնաւորաբար՝ զինավառուելով Գրիգոր Աստուածաբանի հրամանակարգային (դոգմատիկ) մտակառուցման եղանակով, հեղինակն արդարացնում եւ հաստատագրում է Հայոց եկեղեցու որդեգրած քրիստոսաբանութիւնը: Բանն Աստուած, մարմնանալով եւ մարդանալով, միաւորել է ոչ թէ մարդու անունը, այլ՝ անձնաւոր բնութիւնը, որով մարդու փրկութիւնը դառնում է լիակատար: Երկը շարադրուած է դաւանական հիմնադրոյթների քաջ իմացութեամբ, համաբնոյթ փաստերի տեղին ու մտացի համադրումով, սուր տրամաբանութեամբ:*

*Եթէ Յաղագս միոյ բնութեան... երկում դրսեւորուում է Մովսէսի դաւանաբանական սուր միտքը, շարականներում՝ ազնիւ ճաշակն ու աստուածաբանական նրբատեսութիւնը, ապա Աղօթքի մէջ՝ մերձաւոր աղերս արեւելաքրիստոնէական վաղ աստուածխօսական աւանդների հետ:*

*Մովսէսի եւ Անանունի Մեկնութիւն Բերականին երկերը վերահրատարակուում են ըստ Նիկողայոս Աղոնցի վերականգնած գիտական բնագրի<sup>3</sup>:*

*Մովսէս Քերթողի Աղաւթ-ը հրատարակուում է ըստ ՄՄ ձեռ. թիւ 1720 (թերթ 335բ)<sup>4</sup>:*

<sup>1</sup> Ի դէպ, այս քթից մէկ հատուած (ԳԹ, էջ 165) վկայակոչուած է Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի Պարտավնար աշխատութեան մէջ (Ս. էջմիածին, 1779-1780, էջ 50. տե՛ս նաեւ այս երկի վերահրատարակութիւնը՝ Երեւան, 2004):

<sup>2</sup> Տե՛ս ԳԹ, էջ 163-171, նաեւ՝ Սամուէլ Բախանայ Անեցի, Հաւաճումն ի գրոց պատմագրաց, էջ 255-261:

<sup>3</sup> Н. Адони, Дионисий Тракийский и армянские толкователи, Петроградъ, 1915, с. 125-179:

<sup>4</sup> Տե՛ս Ընտրանի Հայ եկեղեցական մատենագրութեան, էջ 242:

Մովսէս Քերթոզից որոշ փոքրիկ հատուածներ մեզ են աւանդուել նաեւ Վարդան Այգեկցու Արմատ Հաւատոյ<sup>1</sup> եւ Անանիա Սանահնեցու Պատմառ երից սրբասացութեան... դաւանաբանական երկերում<sup>2</sup>:

Ինչպէս երեւում է, նա հեղինակել է նաեւ սուրբգրային մի մեկնութիւն, որը կենցաղավարել է մինչեւ ժԲ դ.: Այս մասին է վկայում նրա անուան («Մովսէս ասէ Քերթոզ») յիշատակման փաստը Սարգիս Կունդի Կաթողիկէ թղթոց խմբագիր մեկնութեան մէջ<sup>3</sup>:

Յակոբ Քէոսէեան

### ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Н. Адонц**, *Діонисій бракійсій и армянские толкователи*, Петроградъ, 1915 (**Ն. Ադոնց**, *Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ հայ մեկնութիւնք նորին*):
2. **Գ. Զահուկեան**, *Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում*, Երեւան, 1954:
3. **Հ. Պօղոս Անանեան**, *Մովսէս Քերթոզահայր եւ Մովսէս Խորենացի*, «Բազմավէպ», 1991, քիւ 1-2, էջ 7-25:
4. **Լ. Գ. Խաչերեան**, *Հայ լեզուարանութեան առաջացման պատմութիւնը եւ քերականագիտական միտքը V-XVI դարերում*, Լիզպոն, 1992:
5. **Յակոբ Քէոսէեան**, *Աստուածաբանական բնագրեր, ուսումնասիրութիւններ. Ա. Անանիա Սանահնեցի*, Ս. Էջմիածին, 2000:
6. *Ընտրանի Հայ եկեղեցական մատենագրութեան*, աշխատասիրութեամբ Պօղոս Խաչատրեանի եւ Յակոբ Քէոսէեանի, Ս. Էջմիածին, 2003:
7. **Վարդան Այգեկցի**, *Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ*, Երեւան, 1998:

### ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ԶԵՆԱԳՐԵՐԻ ԵՒ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա - ՄՄ ձեռ. քիւ 3295, ժամանակ՝ ժԸ դար, գրիչ՝ եզեկիւլ էրէց

Բ - ՄՄ ձեռ. քիւ 4425, ժամանակ՝ ժԸ դար

Գ - ՄՄ ձեռ. քիւ 7255, ժամանակ՝ 1701 թ., գրիչ՝ տէր Մինաս

Դ - ՄՄ ձեռ. քիւ 6567, ժամանակ՝ 1733 թ., գրիչ՝ Մարգար ժամարար

Ե - ՄՄ ձեռ. քիւ 512, ժամանակ՝ 1701 թ., գրիչ՝ Թումաս արեղայ

Զ - ՄՄ ձեռ. քիւ 1982, ժամանակ՝ 1702 թ., 1699 թ., գրիչ՝ Ստեփանոս Թոխաթեցի

է - Երուսաղէմի Ա. Յակոբեանց մատենադարանի ձեռ. քիւ 2526, ժամանակ՝ ժԸ դար, գրիչ՝ Աստուածատուր քահանայ

Ա - ԳԹ, էջ 163-171

Բ - Սամուէլ քհն. Անեցի, *Հաւամունք ի գրոց պատմագրաց. Յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս. յառաջաբանով, համեմատութեամբ*,

<sup>1</sup> Տե՛ս Վարդան Այգեկցի, *Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ*, էջ 189-190:

<sup>2</sup> Տե՛ս Յակոբ Քէոսէեան, *Աստուածաբանական բնագրեր, ուսումնասիրութիւններ. Ա. Անանիա Սանահնեցի*, էջ 329:

<sup>3</sup> Տե՛ս Սարգիս Կունդ, *Մեկնութիւն Կաթողիկեայ թղթոց*, Ս. Էջմիածին, 2003, էջ 21:



յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893, էջ 255-261 (հրատարակուած է ըստ ՄՄ՝ ձեռ. 2966, թերթ 89բ-92ա)

**ՏԱՌԱՆԻՇԵՐ ՄՈՎԱԼԵՍ ԲԵՐԹՈՂԻ ԵՒ ԱՆԱՆՈՒՆԻ «ՄԵՎՆՈՒԹԻՒՆ ԲԵՐԱՎԱՆԻՆ»  
ԵՐԿԵՐՈՒՄ ԲԱՂՂԱՏՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԱԽՄԵՐԻ**

**Ա. ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ**

*Մաշտոցի անուան Մատենադարան* ձեռ. թիւ 2382 (1403 թ.), 2380 (1636 թ.), 2381 (1621 թ.), 3917 (1459 թ.)

*Վենետիկի Ա. Ղազարի Մխիթարեան մատենադարան*, ձեռ. թիւ 1273 (1614 թ.), 1104 (ԺԳ դ.), 875 (ԺԵ դ.), 871 (ԺԷ դ.), 306 (1293 թ.), 990 (ԺԶ դ.), 1736 (1654-1656 թթ.), 957 (ԺԸ դ.), 174 (1332 թ.), 289 (ԺԳ-ԺԵ դդ.), 1317 (1605 թ.), 294 (1753 թ.), 671 (1350-1415 թթ.), 46 (ԺԵ դ.), 442 (ԺԸ դ.), 822 (ԺԳ դ.), 632 (ԺԵ դ.), 1244 (1307 թ.), 8 (1413 թ.), 1232 (ԺԳ դ.), 39 (ԺԷ դ.), 968 (1617 թ.), 1317 (1605 թ.):

*Վիեննայի Մխիթարեան մատենադարան*, ձեռ. թիւ 47 (1725 թ.), 336 (1360 թ.)

**Բ.**

*Դիոնիսիոս Թրակացու աշխատութիւնը պահպանուել է Մաշտոցեան Մատենադարանի թիւ 2382, 2380 եւ Վենետիկի Մխիթարեան մատենադարանի թիւ 1104, 875, 306, 1317, 174, 294, 336, 39, 1232, 1273 ձեռագրերում:*

*Դիոնիսիոսի ձեռագրերը սովորաբար նախորդում են Գրիգոր Մագիստրոսի, Յովհան Երզնկացու, Եսայի Նչեցու եւ այլոց քերականագիտական աշխատութիւններին, եւ քանի որ նրանց միջեւ էական տարբերութիւններ չկան, Ն. Աղոնցը նրանց պայմանականօրէն խմբաւորել է ըստ այդ տեքստերը պահպանած հեղինակների:*

*Ելնելով այդ սկզբունքից՝ Ն. Աղոնցի կազմած բնագրերում նշանակուած են հետեւեալ պայմանանիշերը՝*

*M* - Գրիգոր Մագիստրոսի *Քերականութեան մեկնութեան* ձեռագրերը, իսկ ձեռագրերի համեմատութեան ժամանակ Վենետիկի Մխիթարեան մատենադարանի թիւ 875, 871 եւ ՄՄ 3917 ձեռագրերը՝  $M_1$ ,  $M_2$ ,  $M_3$ , ըստ համապատասխան հերթականութեան:

*E* - Յովհան Երզնկացու *Մեկնութեան* ձեռագրեր

*J, N* - Եսայի Նչեցու *Մեկնութեան* (ընդ որում, *J*-ն՝ Վենետիկի, իսկ *N*-ը՝ Վիեննայի Մխիթարեան մատենադարանի) ձեռագրեր

*Դիոնիսիոսից հատուածներ են պահպանուել նաեւ Մովսէսի աշխատութիւններում, աւելի ճիշտ՝ իրականում Մովսէսի աշխատութեան Ստեփաննոս Սիւնեցու ծանօթութիւններում:*

*Ինչպէս այս աշխատութիւնը, այնպէս էլ Դիոնիսիոսի տեքստը նշանակուած է՝*

*MS* - ըստ Վենետիկեան ձեռագրերի.

*T* - Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրի:

Երկու հեղինակների անուան առաջին տառերով կազմուած  $MS$  ձեռագրախումբը օգնել է Ն. Ադոնցին վերականգնելու Մովսէս Քերթովի տեքստը, ընդ որում ձեռագրերում տեքստային տարբերութիւնները նշանակուած են առաջին դէպքում  $MS_1$ , երկրորդ դէպքում՝  $MS_2$ , երրորդ դէպքում՝  $MS_3$ :

$E_2$  տառանիշով նշանակուել է Յովհան Երզնկացու համառօտ ֆերականութեան մէջ պահպանուած Դիոնիսիոսի ֆաղուածքները:

$A$  տառանիշով նշանակուել են Դիոնիսիոսի յղումները Արիստակէսի բառարանային նիւթի յաւելուածում:

## ՄՈՎԱՍԵՍԻ ՔԵՐԴՈՂԻ <ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՔԵՐՎԱԿԱՆԻՆ>

<Ա> 1 <sup>2</sup>ՅԱՂԱԳՍ ՔԵՐՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ

2 Քերականութիւնն է Հմտութիւնն որք ի քերդուացն եւ ի շարագրաց] [Քերդող<sup>3</sup> է, որ զմասունս գիտէ բանին եւ ճանաչէ զդէմս խաւսիցն, զոր ինքն տեղեակն է լեզուին. զի քերուան ի վերայ ողորկութեան բանին ասացաւ, զի քերէ եւ սրբէ ըստ ամենայն դատուական հրամանաց եւ բերէ ի ցանկութիւն լսողաց անընդդիմադրելի բանիւք<sup>4</sup>:

3 <sup>5</sup>Քերդողութիւնն է առասպելավարժութիւնն, զի որպէս հիւանդութիւնն բաժանի ըստ տեսակաց, է որ աթոռագործ է եւ է որ տաճար շինէ. այսպէս եւ սա ըստ մասին

բաժանի, ըստ զանազան իրաց ինչ, եւ ճայնս ճայնս ընդունի անուանակոչութեան<sup>6</sup>:

4 Հմտութիւնն ասացին զընդելն վիպասանական պատմութեան<sup>7</sup>, զոր շարագիրս անուանեն, զի մի նիւթ զայն ունենին բանաւորական<sup>8</sup> վարժիցն]:

5 Եւ մասունք են<sup>9</sup> նորա վեց] Մասն ի բոլորէ է եւ տեսակ<sup>10</sup>ի սեռէ. զի որպէս տեսութիւնն<sup>11</sup> մասն միայն է մարմնոյն եւ մասն ոչ ունի զբոլորին զիտութիւնն<sup>12</sup> <sup>13</sup>եւ ոչ տեսակ զսեռի, այսպէս <sup>14</sup>եւ որ ոչ գտորա<sup>15</sup> զվեցեսեան<sup>16</sup> ունի՝ զվերձանելն եւ զզրուցելն եւ զլեզուացն, յորումս<sup>17</sup> եւ զհնազէտ վիպասանութիւնն<sup>18</sup> եւ <sup>19</sup>յարեաց ի նոյն եւ զստուգաբանելն եւ զհամեմատելն եւ զիրաւապէս <sup>20</sup>դատումն ընտրութեան, <sup>21</sup>մասնական ծովագնաց է բանին եւ ոչ անդնդական խորոցն գիտակ <sup>22</sup>եւ ոչ կարէ ստուգապէս<sup>23</sup> զենթադատութիւնսն ճանաչել եւ տրոհել<sup>24</sup> իրաւացի:

1 M Huius commentarii titulus et ea pars, quam uncis inclusi, desunt apud / MS exstant in codice / MS<sub>1</sub> Մովսեսի քերդողի] Սուրբ հաւրն մերոյ Մովսէսի

2 MS<sub>2</sub> Յաղագս քերականութեանց

3 MS<sub>1</sub> քերթաւղ

4 post բանիւք legitur titulus քերդողութիւնն, quem omisi

5 M<sub>1</sub> ենթակայ անուամբ/ ենթակա անուամբս  
անուամբ / J ենթակայ անուան / E ենթակաւ  
անուամբ  
6 M<sub>1</sub> M<sub>2</sub> Իսկ գառասական դասելով / M<sub>3</sub> իսկ գա-  
ռասականդ ասելով  
7 E J անուան/ անուանց  
8 M նախագաղափարական / նախագաղափար ...  
անուան/ om J  
9 M<sub>1</sub> եւ ասէ գփանիաւնութիւն անուան/ om  
10 իւրաքանչիւրքն/ hic collocant E J verba artis, apud  
M loco superiore posita: եւ ասէ ենթակայ անուան  
այ-  
սինքն (որ է որպէս J) ընդ անուամբ անկեալ եւ  
այսք, որք եւ սոքա տեսակք կոչին  
11 M<sub>3</sub> գոյացութիւնն/ pro գոյութիւնն artis, գոյու-  
թիւն  
12 գոյացութիւն/ pro էութիւն artis

13 յայտէ M<sub>2</sub> M<sub>3</sub> յայտնէ M<sub>1</sub> E J  
14 M<sub>2</sub> տկար/ կար  
15 M<sub>3</sub> յոգւոյ/ ի հոգւոյ  
16 M<sub>3</sub> J զինչ/ add է  
17 M<sub>2</sub> ab յանուանն usque ad հարկաւորաբար/ om  
18 M<sub>3</sub> դարձեալ/ om  
19 M<sub>3</sub> հարկաւորաբար/ om  
20 M<sub>3</sub> ատելին/ ի հարկէ եւ գատելին  
21 M<sub>3</sub> այլ նման/ աննման  
22 տիւ/ pro ար artis  
23 Homonymorum tractatio non legitur apud E J  
24 M<sub>3</sub> երկրային/ ցամաքային  
25 խարբ/ pro խաղ artis

53 <8> Բերանունն է <sup>1</sup>որ ի պատահմանն է իրաց եղեալ է, որպէս վանեալ եւ մեծասուգ:

54 <9> Երկանունն է, որպէս անուանք երկու եղեալ ի վերայ միոյ<sup>2</sup> մարդոյ, որգոն Եղիազարոս Աւարան<sup>3</sup>. սակայն ոչ անդրադարձի բանս, քանզի ոչ եթե որ<sup>4</sup> Եղիազարոս, նոյն եւ Աւարան կարէ կոչիլ:

55 <10> Մականունն է որ <եւ> երկանունն կոչի, որ Հանդերձ այլով իսկիւ ի վերայ եղեալ է մարդոյ, որգոն Բաներեգէս Իովաննէս<sup>5</sup> եւ ձայն գոչման իովաննէս:

56 <11> Ազգականն է, որ ազգ յայտ առնէ:

57 <sup>6</sup><12> -<23>...||||

<ԹԳ> 1 ՅԱՂԱԳՍ ԲԱՅԻ

2 Յարադրէ<sup>7</sup> մեզ յաղագս բայի եւ զհետեւումն նորին ասելով թե՛ բայ է բառ անհոլով, ընդունակ ամանակաց: 3 Վասն որոյ խնդրելի է թե զիարդ ասաց բայ է բառ եւ ոչ ասաց թե բայ է մասն բանի խոնարհական, որպէս եւ անդ յաղագս անուան՝ եթե անունն է մասն բանի հոլովական: 4 Ասեմք թե վասն ստոյգ առնելոյ զվարդապետութիւնն բայի ի հետեւողաց եւ յանհետեւողաց զնա բացատրէ: 5 Եւ <sup>8</sup>զի մասն բանի չասաց, զի յառաջագոյն անդ ի վեր ասաց թե բանի մասունք են ութ. անուն, բայ, ընդունելութիւն<sup>9</sup> <sup>10</sup>եւ որ ի կարգին է: 6 Արդ զմի անգամ ասա-

ցեալն եւ զնոյն ի վերայ անուան կրկնելով, ոչ կամեցաւ ի վերայ բայի ասել, զի մի՛ թախանձեցուցէ զլսողն. եւ վասն այնորիկ ասաց եթե բայ է բառ անհոլով:

7 Իսկ անհոլովական ասաց, զի ոմանք տարակուսեցան<sup>11</sup> ասելով թե ինքն իսկ բայ անունն է. յորժամ ասեմք թե «Դաւիթ գրէ», Դաւիթն անունն է եւ գրէ-ն ազգումն Դաւթին եւ <sup>12</sup>անուանն ազգումն գրէ:

8 Արդ զի յայտ արասցէ թե չէ ճշմարիտ անունն բայ, այլ նշանակիչ միայն ազգմանն, ասաց անհոլովական, վասն զի ճշմարիտ անունն, որ ի վերայ իրի զնի, հոլովականն է, իսկ բայ անհոլով է: 9 Վասն զի ոչ մարթի ասել թե՛ գրեմ, գրեմիւ<sup>13</sup> | եւ այս յանհետեւելեացն: 10 <sup>14</sup>Իսկ ի հետեւելեացն բացատրէ<sup>15</sup> զնա ասելով՝ ընդունակ ամանակաց, <sup>16</sup><դիմաց եւ թուոց> որ ներգործութիւն <sup>17</sup>եւ կամ կիր յարակացոցէ:

11 Քանզի յորժամ ասեն<sup>18</sup> գրեա զներկայ ժամանակս ընդունի եւ է ներգործական: 12 Իսկ յորժամ ասեն գրեցի, զանցեալն ընդունի ժամանակ եւ նոյնպէս ներգործական է. <sup>19</sup><իսկ յորժամ ասեն գրեցից<sup>20</sup>, զապառնի ժամանակն ընդունի նոյնպէս ըստ ներգործութեան>: 13 Իսկ յորժամ ասեն գրիմ<sup>21</sup>, <sup>22</sup>ի ներկայումս ժամանակի եւ կրաւորականին: 14 Իսկ գրեցայ-ն <sup>23</sup><կրաւորական ըստ անցեալ ժամանակին:

11 M տարակուսեցին  
12 M<sub>1</sub> M<sub>2</sub> անուանն ազգումն / J անուան ազգումն / E անուան ազգումն / M<sub>3</sub> անունն ազգումն, quod rectius esse videtur.  
13 J գրեմիւ/ գրեմի կամ գրեմիւ  
14 J Իսկ ի հետեւելեացն/ om  
15 M<sub>1</sub> M<sub>3</sub> բացատրէ/ բաղադրէ  
16 M J uncis saepta om  
17 M<sub>2</sub> J եւ կամ/ կամ / M<sub>3</sub> եւ  
18 J ասեմ/ ասեմ  
19 M uncis saepsi quae om  
20 J գրեցից/ գրեցես / E գրեա  
21 M<sub>1</sub> M<sub>2</sub> գրիմ/ գրեից / M<sub>3</sub> գրեից  
22 E կրաւորական ի ներկայումս ժամանակի / M երկարումն ժամանակի եւ կրաւորականին  
23 M uncis inclusa om

1 որ ի պատահմանն է իրաց եղեալ է, որպէս Իսաֆար, որ է վարձ apud E sub nomine Այլ, cui solum exemplum debetur, v. Genes XXX, 18  
2 E միոյ] post մարդոյ  
3 M<sub>1</sub> Աւարան/ Աւարրեան / E J Աւարեան  
4 M<sub>2</sub> որ/ ոմ  
5 M<sub>2</sub> Իովաննէս/ Լովաննէս / M<sub>3</sub> Յոհաննէս  
6 specierum tractatio inde a <12> usque ad finem deest apud M et E  
7 M<sub>3</sub> յարադրէ/ յարմարէ  
8 M զի մասն/ զմասն  
9 M ընդունելութիւն  
10 M<sub>3</sub> եւ որ ի կարգին է/ եւ այլն

15 Իսկ գրեցայց-ն՝ նոյնպէս կրաւորական է ըստ ապառնւոյն:

16 Իսկ ղիմաց եւ թուոց ասաց<sup>1</sup>, զի յորժամ ասեն<sup>2</sup> գրեմ<sup>3</sup>, զառաջին դէմն յայտ արար եւ <sup>4</sup>գեզական թիւն: 17 Իսկ յորժամ ասեն գրեմ<sup>5</sup> եւ կամ գրէ<sup>6</sup> գերկրորդն եւ կամ<sup>7</sup> գերրորդն, նոյնպէս ըստ եզական թուոյն: 18 Դարձեալ, յորժամ ասեմք թե<sup>8</sup> գրեմք կամ գրէք կամ գրեն, գյոգնականն յայտ արար, <sup>9</sup>զառաջին եւ գերկրորդ եւ գերրորդ դէմն <sup>10</sup>(յայտ արար), զի յոգնականք են:

19 <sup>11</sup>Եւ հետեւանայ բայի խոնարհութիւնք հինգ այսոքիկ. սահմանական է, յորժամ ասեմք կոփէ, կոփեմ. աներեւոյթ կոփել. հրամանեան՝ կոփեա՛. ըղձական՝ կոփիցեմ արդեաւք. ստորագասական՝ թե կոփեմ (յետ սոցա եւ ես):

20 Տրամադրութիւնք երեք, ներգործութիւն եւ կիր եւ միջին: 21 <sup>12</sup>Ներգործութիւն է, յորժամ ես ի յայլս ազդեմ: 22 Իսկ կիր, յորժամ ես<sup>13</sup> ի յայլոց ազդիմ, որպէս կոփիմ: 23 Իսկ միջին է, / յորժամ

ձայնն կրաւորական եւ իրքն ներգործական, որպէս տանիմ. եւ կամ յորժամ ձայնն<sup>14</sup> ներգործական<sup>15</sup> եւ իրքն կրաւորական, որպէս զգենում:

24 Տեսակք երկու, նախագաղափար եւ ածանցական. նախագաղափար է ոռոգեմ, <sup>16</sup>իսկ ածանցական է ոռոգանեմ: 25 / Եւ պարտ է գիտել եթե ըստ մերումս բարբառոյ նախագաղափարաւդ վարին Կորձայքդ<sup>17</sup> միայն: 26 Իսկ ածանցական՝ ոռոգանեմ. արդ այսպէս եւ այլքն ամենեքեան:

27 Ձեւք երեք. պարզ, բարդ, յարաբարդ. պարզ՝ գիտեմ, բարդ՝ ըստգիտեմ, յարաբարդ՝ վարդապետեմ, սահմանաբանեմ<sup>18</sup>:

28 Դէմք երեք. նախ՝ յորմէ բանն, երկրորդ՝ առ ով բան, երրորդ՝ յաղագս ոյր բանն: 29 Աստուստ գիտասցես<sup>19</sup> թե զպատճառն ուսուցանէ քանիաւնութեան<sup>20</sup> ղիմաց, որպէս ուրուք հարցեալ, վասն էր են երեք<sup>21</sup> դէմք եւ ոչ չորք<sup>22</sup> կամ երկու: 30 Ասէ թե զի <sup>23</sup>ամենայն պէտք բանաւորաց երիւքս այսոքիւք կատարին եւ լնուն՝ յորմէ, առ ով եւ վասն ոյր. եւ առնէ յորմէն զառաջին դէմն, իսկ առ ովն՝ գերկրորդն<sup>24</sup>, իսկ վասն ոյրն՝ գերրորդն<sup>25</sup>, զի նախ, որ ասացն. երկրորդ, առ ով խաւսեցաւն. երրորդ, վասն ոյր ճառեացն:

1 E ասաց/ om

2 M<sub>3</sub> ասեմ/ ասաց

3 M գրեմ/ գրեմ

4 M<sub>3</sub> գեզական թիւն/ եզականութիւնն

5 M գրեա/ գրեմ

6 M<sub>1</sub> գրէ/ գրեա / E գրեմ

7 M կամ/ om

8 E թե/ om

9 M<sub>3</sub> գառաջին եւ գերկրորդ եւ գերրորդ/ զմի եւ գերկուս եւ գերեմ codd (ex falsa lectione գա եւ գր եւ զգ), om

10 E M<sub>3</sub> յայտ արար/ om

11 E եւ հետեւանայ ... յետ սոցա եւ ես/ habet inter scholia Hamami; ultimas voces յետ սոցա եւ ես (legendum եւս) ad subsequentem paragraphum referendas credo, non ad antecedens verbum թե կոփեմ, ut tradunt codices per veterem errorem, cui iam Hamamus, IX saeculi auctor, obnoxium se praebet, cum, depravatam sui exemplaris lectionem secutus scribit: ստորագասական<sup>a</sup> կոփեմ, գործեմ, որպէս թէ յետ այլոցն եւ ես գործեմ

12 ներգործութիւն է ... ազդեմ/ habet E inter scholia Stephani

13 M<sub>3</sub> ես/ ասես

14 E ante ձայն/ լինի

15 M ներգործական/ om

16 E Իսկ ածանցական ... ամենեքեան/ om / J Իսկ ածանցականոք այլիդ ամ

17 M<sub>1</sub> Կորձեմդ

18 M<sub>2</sub> սահմանաբանեմ/ կամ հակաբանեմ / M<sub>3</sub> կամ սահակաբանեմ

19 J գիտասցես/ գոգցես

20 J գիտնութիւն

21 M<sub>3</sub> երեք/ երիք

22 M<sub>3</sub> չորք/ չորիք

23 J ամենայն պէտք/ այն են պէտք

24 M<sub>1</sub> M<sub>3</sub> գերկրորդն/ գերկուս

25 գերրորդն J/ գերեմ ceteri



31 / <sup>1</sup>Այլ է առ երեսս<sup>2</sup> եւ միտս բայի առանձնաւորութիւն:

32 Ամանակք երեք. ներկայ, յորում եմքս, անցեալ՝ անցեալն, ապառնի՝ հանդերձեալն: 33 Եւ զհարզ իցեն<sup>3</sup> երեք ամանակքն. վասն զի ամենայն ազգմունք եւ կիրք կամ տակաւին եւս լինին եւ նշանակեն զներկայ ժամանակն, եւ կամ կատարեալք են եւ նշանակեն զանցեալն, եւ կամ կատարելոց են եւ նշանակեն զապառնին, իբր թե լեալ էիր, լինիս, լինելոց ես:

34 Եւ անցեալն ունի չորս<sup>4</sup> զանազանակս<sup>5</sup>. այսինքն, անցեալն չորս զանազանութիւնս ազգմանց ունի՝ զյարաձգականն, զյարակայն, զգերակատարն, զանորիչն: 35 Եւ նշանակէ յարաձգականն զմասն ինչ ներկային, յորմէ մասն ինչ <sup>6</sup><արարեալ է յիրացն եւ մասն ինչ> առնելոյ կամ, յորում ասէ թե դեռ առնէի եւ նշանակէ զյարաձգականն որ չէ<sup>7</sup> բովանդակեալ: 36 Իսկ յարակայն նշանակէ գերկուց աւուրց անցելոց ազգում կամ զամսոյ միոյ կամ զտարւոյ, իբր թե էգործէի<sup>8</sup>, էկոփէի: 37 Եւ գերակատարն զքսան ամաց <sup>9</sup>կամ գերեսնից, որգունակ թե էգործեցի<sup>10</sup>, էկոփեցի:

38 Եւ անորիչն, որպէս անունդ իսկ յայտ առնէ, անորոշաբար զամենայն ժամանակս նշանակէ<sup>11</sup>, <sup>12</sup>զյարաձգականն եւ

զյարակայն եւ զգերակատարն, որոց բաղաձանութիւնք<sup>13</sup> երեք. այսինքն ազգակցութիւնք կամ միաբանութիւնք ներկային ընդ յարաձգին, զի մասն ինչ արարեալ է եւ մասն ինչ առնելոյ կայ: 39 Վասն այնորիկ <sup>14</sup>ունի միաբանութիւն ներկայն առ<sup>15</sup> յարաձգականն, յարակայն <sup>16</sup>ընդ գերակատարին, զի որպէս ներկայն հուպ է ի յարաձգականն, այսպէս յարակայն<sup>17</sup> ի գերակատարն. նմանապէս եւ անորիչն ընդ ապառնելոյն միաբանութիւն ունի<sup>18</sup>:

<ԺԵ> 1 ՅԱՂԱԳՍ ԼԾՈՐԳՈՒԹԵԱՆ

2 Լծորգութիւն<sup>19</sup> դատեալ եղեւ ի տաղաչափական կշռոց ուսումնավարժից ոմանց, որք ի մակացութեան դեգերանս կացին հանապազ, զի զսահմանաչափութիւն<sup>20</sup> բանի լծորգովն շինեին տեղի: 3 <sup>21</sup>Այլ <sup>22</sup>էր իսկ ճշմարտապէս եւ ի տեսակի խաւսիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ:

4 Բայց <sup>23</sup>ըստ մերումս եւ այլ ինչ է, որ ոչ է եղեալ գիւտ առաջնոցն վասն անծանալթութեան լեզուոյս, իբր սոցա, նոցա, որ ոչ միայն յառաջի<sup>24</sup> դասեցելումն,

1 E Այլ ... առանձնաւորութիւն] *habet inter scholia Davidis*: եւ դէմք ասին ոչ գիրաց, այլ գղիմաց, զի է առ երեսս *etc v. 113*<sub>2</sub>  
2 M երեսս] երեսս  
3 E իցեն] են  
4 M չորս] չորս  
5 M<sub>3</sub> զանազանակս] զանազան եղանակս]  
6 M *quae unci saepsi om*  
7 E J չէ] ոչ է  
8 M էգործէի] գործէի  
9 M<sub>2</sub> J կամ գերեսնից] կամ գերեսուն *post* գխան  
10 M էգործեցի, էկոփեցի] գործեցի, կոփեցի (եթ կոփեցի M<sub>3</sub>)  
11 M<sub>3</sub> նշանակէ] յայտ առնէ  
12 M<sub>3</sub> J զյարաձգականին եւ զյարակային եւ զգերակատարին

13 M<sub>1</sub> բաղաձանութիւնք  
14 E ունի միաբանութիւն] միաբանին  
15 M<sub>3</sub> առ] ընդ  
16 E ընդ գերակատարին] ընդ գերակատարն  
17 E *post* յարակայն] *add* ըստ տարւոյ (*non legit J*)  
18 E J ունի] *add* զի յետ գործելոյն զհետ գա եւ գոր առնելոց է  
19 M եւ դարձեալ լծորգութիւն  
20 M<sub>3</sub> զսահման չափութեան  
21 E այլ էր իսկ ... փազուկ *verbis scholiastae Այլ inserit hoc modo*: եւ երրորդ երեսի ի տեսակս խաւսից... որպէս ասի բազուկ, պազուկ, փազուկ  
22 M<sub>3</sub> էր իսկ] երիս  
23 ըստ մերումս M J] ըստ հայկական լեզուիս E  
24 յառաջի է M<sub>3</sub>; *coniugationis tractatio, quam praebet M, apud E aliorum interpretamentis interiectis carptim ita affertur, ut singulae particulae et Davidis notam et Anonymi prae se ferant; itaque quid cuique tribuendum sit non liquet; equidem primam partem earum, quae M<sub>1</sub> praebet, Davidis (v. supra p. 114), alteram hic positam Anonymi, ultimam Moysis esse censeo*

այլ եւ յերկրորդիս խոնարհման, որպէս կոփեմ, կոփես:

<ԺԶ> 1 ՅԱՂԱԳՍ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

2 Ընդունելութիւն բառ ընդունական բայից եւ անուանց յատկութեան] Արդ ընդունելութիւն յանուանէ եւ ի բայէ ունի <sup>1</sup>զիւրն էութիւն եւ լիցի մասն<sup>2</sup> յութիցն:

3 Թարց դիմաց] Այլ<sup>3</sup> դէմք ոչ երեւին սորա | <sup>4</sup>եւ այլն ամենայն ըստ գործականին, զի որպէս դերանուն եւ մակբայ ընդ գոյացականին<sup>5</sup> ազդեալ<sup>6</sup> լինին, նոյնպէս եւ սա ընդ ազդեցութեամբ<sup>7</sup>:

4 Բայց հոլովումն<sup>8</sup> ըստ առաջին մասին բանի, որպէս <sup>9</sup>արարեալ, արարելոյ, արարելում եւ այլն ամենայն: 5 Նոյնպէս չինեալ, բերեալ կերեալ, տարեալ, այս ամենայն եւ սոյնպիսիք հոլովք անուան եւ ընդունելութեան գոն:

<ԺԷ> 1 ՅԱՂԱԳՍ ՅԱԻԴԻ

2 <sup>10</sup>Յաւզս յայլում լեզուի բազում ինչ ունի, | <sup>11</sup>այլ ի մերումս սակաւ, զի հոլովք եւ թիւք միայն լինին, բայց ըստ սերոցն ոչինչ նշանակէ<sup>12</sup>: 3 Եւ է շրջաբերութիւն<sup>13</sup>

այսպէս. այս, <այսր>, այսմ, այսու<sup>14</sup>, <sup>15</sup>զայս, ո՛վ այս:

4 <sup>16</sup>/[Եւ ըստ համարականումն՝ միապէս եսն, եւ երկուորաբար<sup>17</sup> դուն, եւ բազմաւորաբար դուքն, որ յամենայն մասունս գտանի, բաց ի նախադրէ եւ ի շաղկապէ/]:

18<ԺԸ> 1 ՅԱՂԱԳՍ ԴԵՐԱՆՈՒՆՈՒԹԵԱՆ

2 <sup>19</sup>Դերանուն փոխանակ անուան ասի եւ է <sup>20</sup>ըստ աւրինակի դիմացն առաջնոյ<sup>21</sup> ես, դու, նա<sup>22</sup>. <sup>23</sup>/[Եւ այս ըստ այսու/ ստացեալքն<sup>24</sup> իմ, քո, նորա:

3 Բայց սերոցն<sup>25</sup> ոչ այլափոխի ձայնիւ, այլ լրութեամբ<sup>26</sup> եւ անուամբ նշանակի, եթե արք եւ կանայք եւ մանկուք:

4 <sup>27</sup>Եւ թիւք. միապէս՝ ես, դու, նա. եւ երկուորական՝ ես<sup>28</sup> եւ<sup>29</sup> սա, դու եւ դա, նա եւ նա. նաեւ բազմաւորական՝ մեք, դուք, նոքա: 5 <sup>30</sup>Եւ զոր ունին ինչ թուել<sup>31</sup>, ըստ առանձնաւորութեանն՝ իմ, քո, նորա<sup>32</sup>. եւ

1 M E գիրքն էութիւն/ գիր էութիւնն  
2 MS մասն/ մի մասն  
3 MS Այլ/ եւ  
4 M E եւ այլն/ եւ այլն  
5 MS գոյացականին  
6 M<sub>2</sub> ազդեալ/ առեալ / MS եղեալ  
7 M E ազդեցութեանն  
8 M հոլովումն/ ժողովումն  
9 արարեալ, արարելոյ/ արարելով MS; huius capituli scholiorum eadem est condicio atque scholiorum capituli praecedentis; nam hic quoque pars Anonymi scholiorum apud M post scholia Davidis, apud E cum illis permixta exstat, quae pars etiam in cod MS legitur exceptis ultimis verbis inde a նոյնպէս usque ad գոն  
10 E Յաւզս ... ունի/ desunt apud  
11 E այլ ի մերումս սակաւ/ վասն զի սակաւ ինչ ի մերս նշանակէ  
12 E նշանակէ/ նշանակի  
13 E ի շրջաբերութեան

14 E այսու/ այսիւ  
15 E զայս, ով այս/ զայսով  
16 quae uncis saepsi ad articulum spectare non videntur  
17 MS երկուորաբար/ երկաւորապէսն  
18 Haec articuli tractatio, quam omisit M suis explanationibus eius in locum substitutis, sed praebet E Davidis eiusdem rei tractationi adiectam, praebet etiam MS, Anonymo tribuenda est, quamquam E eius notam apponere neglexit  
19 E Դերանուն ... նորա/ om  
20 MS ըստ արինակի/ արինակ  
21 MS առաջնոյ/ նախկինի  
22 M<sub>3</sub> նա/ add եւ այլն ամենայն նմանապէս, omissis omnibus quae sequuntur usque ad finem pronominis tractationis  
23 MS<sub>1</sub> voces, quas uncis inclusi, corruptae sunt, quarum loco legit երկիցս այս  
24 MS<sub>1</sub> ստացեալքն/ ստացական  
25 M սերոցն  
26 MS J լրութեամբ/ իւրութեամբ  
27 Եւ թիւք ... նոքա/ non legit E neque MS  
28 M<sub>1</sub> ես/ են  
29 Եւ ante սա/ om M, legit J  
30 Եւ զոր ունին ... p. 151<sub>2</sub> եւ նոցայն/ praebet E scholio Stephani per incuriam adiuncta, om MS  
31 M թուել/ թիւեալ  
32 M նորա/ դորա

շարադրի<sup>1</sup> զուգիցն՝ <sup>2</sup>իմն եւ քոյն, սորայն եւ դորայն, նորայն եւ նորայն. եւ յոլովապէս՝ մերն եւ ձերն <sup>3</sup>եւ նոցայն:

6 Հոլովք] <sup>4</sup>Եւ զանագան նշանակութեանց<sup>5</sup>.

7 ուղղապէս՝ ես, դու, նա.

8 եւ բաժանականին<sup>6</sup> իմոյ, քոյոյ, նորայոյ.

9 եւ պատուիրականին՝ ինձ, քեզ, նմա.

10 եւ երթալոյն՝ ինեւ, քեւ, նովաւ. <sup>7</sup>թե քեւ կամ նովաւ եկի այսր<sup>8</sup>:

11 եւ աղերսականին՝ զիս, զքեզ, զնա.

12 եւ կոչնականն<sup>9</sup> դու:

13 Եւ ածանցացն] Եւ սորայքն<sup>10</sup>. իմ, քո, նորա. իմոյն, քոյոյն, նորայոյն. իմումն, քոյումն, նորայումն. իմովն, քոյովն, նորայովն. զիմ, զքո, զնորա:

14 Զեւք] <sup>11</sup>Եւ չափաւորութեան. որոշապէս՝ իմ, քո, նորա. եւ զուգաբար՝ անձին իմոյ եւ ըստ այլումն:

15 Եւ տեսակք յոլովք. զանագանակ<ան>ին<sup>12</sup> ես, դու, նա. եւ զարձեալ

<sup>13</sup>ըստ սորայոյս՝ <sup>14</sup>յիմոյն, ի քոյոյն, ի սորայոյն, ի դորայոյն, ի նորայոյն: 16 Եւ յոլովիցն՝ ի մերոցն, ի ձերոցն եւ ի սոցայոյն, ի դոցայոյն, ի նոցայոյն:

17 Անբաղաւդք եւ բաղաւդք] Եւ առանց իրիք՝ ես. եւ իրաւ<sup>15</sup> իմս:

<ԺԹ> 1 ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԳԻՐՈՒԹԵԱՆ

1 Նախադրութիւն է] .../|||

<Ի> 1 ՅԱՂԱԳՍ ՄԱԿԲԱՅԻ

2 Մակբայ է մասն բանի անխաղաց ստոր բայի ասացեալ] Նա եւ մակբայս թեպէտ եւ ըստ երկրորդիս ինչ ձեւանայ<sup>16</sup>, այլ<sup>17</sup> սակայն զանուան ունի գտեղի. եւ զի ոչ զանագանի ըստ խոնարհման<sup>18</sup> բայի մասին, վասն այնր<sup>19</sup> ասի անխաղաց: 3 Բայց է եւ ստորին եւ է առաջին, որպէս թե բերեմ զայս, կամ զայս բերեմ:

4 Եւ են պարզք] Եւ ըստ պարզութեան՝ վաղ կամ նախ, եւ <sup>20</sup>ի ջոկս միութեան՝ վաղվաղ, նախավաղ:

5 <1> Եւ են որք ամանակի են յայտնիչք] Եւ որ <sup>21</sup>զժամանակի ունի զցուցումն եւ ընդ ինքեամբք երեւեցուցանեն <sup>22</sup>ի տեսակս զսեռի ունելոյ Հատումն, իբր թե այժմ, յայնժամ<sup>23</sup>: 6 Եւ սոցա ստորակայք ըստ յարակայումն՝ սերկ, վաղիւն, ցայս, ցայն, ցայսքան, ցայնքան, մինչեւ:

1 J շարադրի/ շարադրեալ  
2 իմն եւ քոյն եւ սորայն եւ (եւ om E) դորայն եւ նորայն habent M E, եւ նորայն bis M3, իմն, քոյն, նորայն J; rectius: իմն եւ սորայն, քոյն եւ դորայն, նորայն եւ նորայն (cfr supra եւ եւ սա, դու եւ դա etc)  
3 M1 եւ նոցայն/ add եւ սոցայն եւ նոցայն եւ նոցայն  
4 E եւ զանագան ... նա] om  
5 J նշանակութեանցն/ նշանակութիւն  
6 MS J բաժանողականին  
7 թե քեւ կամ նովաւ] om MS legit J  
8 MS quae post այսր usque ad finem capitis sequuntur om  
9 E կոչնականն/ կոչականն / MS հոշականն / J հոշական, որ է կոչնականն  
10 M սորայքն/ նոքայքն / atque E, qui hoc verbum cum verbis praecedentis versus coniungens legit: դու եւ նոքայքն: եւ ածանցացն իմ քո etc; նորայքն hic pro artis nomine ածանցացն usurpatum esse ab Anonymo recte intellexit J, qui scribit եւ ածանցացն որ եւ նորայքն (pro եւ նորայքն որ եւ ածանցացն)  
11 figurarum tractationem om E

12 M1 զանագանականին / J զանագանակի / E զանագանին, cui lectioni praeferendae priores lectiones quae idem valent ac եզակի  
13 ըստ սորայոյս cfr supra եւ սորայքն  
14 յիմոյն, ի քոյոյն etc sunt formae ablativi quas supra non memoravit  
15 E իրաւ/ իրաւք  
16 J ձեւանայ/ ձայնեաց  
17 J այլ] om  
18 M3 ըստ խոնարհման] om  
19 J այնր] այնորիկ  
20 M3 ի ջոկս միութեան] ջոկամիութեան / J ջոկամանութեան  
21 M2 զժամանակ ունի ցուցման  
22 M3 եւ ի տեսակս զսեռի ունի զհատումն  
23 M3 յայնժամ] om

7 <2> 1Եւ միջակութեանն, որ 2մի է ըստ մերոյ<sup>3</sup>, 4ի յերգս զերկոսեան<sup>5</sup> ունի զիմացումն. բարևք, յայտնապէս, բնաւ, ամենեւին, համաւրէն յաջողեցաւ<sup>6</sup>:

8 <3> Եւ քերդութեանն] Նոյնպէս եւ զայլդ իմացիր նմանաբանութեամբ. մուրցացի, բազկացի<sup>7</sup>, աքացի, ողկուզաւրէն, տարմաբար:

9 <4> Եւ քանակութեան<ն>] Եւ չափաւորականն՝ բազում անգամ, սակաւ անգամ:

10 <5> Եւ թուոյ յայտականն] Եւ ըստ համարողութեանն<sup>8</sup> երկիցս, երիցս, քառորդ:

11 <6> Եւ ետեղականն] Եւ ըստ կայի՛ ի տանէ ի դուրս գայ, ի ներքս երթայ:

12 <7> Եւ ըզձիցն, իցիւ կամ աւշ կամ յէ<sup>9</sup>:

13 <8> Եւ խրոխտականն, իշտ:

14 <9> Եւ սպառնականն. ահա<sup>10</sup> բոռք աւն եւ աւն լիցի, տիր, տի:

15 <10> Եւ դիւրականն<sup>11</sup>, վաշ, յայ:

16 <11> Եւ շնորհակալուն<sup>12</sup>, դիւր<sup>13</sup>, արքէն:

17 <12> Եւ ողոքելոյն<sup>14</sup>, փոխան, / [փարելի]/<sup>15</sup>:

18 <13> Եւ անշնորհակալուն<sup>16</sup>, ձառ<sup>17</sup>, անշնորհ<sup>18</sup> եղէ:

19 <14> Եւ աղաւականն<sup>19</sup> կամ ապաշաւելոյն, ս՛հ:

20 <15> Եւ եղկականն, վայ, եղուկ:

21 <16> Եւ հրաշականն, իհ:

22 <17> 20Եւ բաքասականն]...////

23 <18> Եւ հեզնականն, վահ<sup>21</sup>:

24 <19> Եւ ուրացութեանն կամ ապերեւութեանն, չէ, ոչ, ոչիւիք, ոչ միովիւիք<sup>22</sup>:

25 <20> 23Եւ յանձնառութեան, այո:

26 <21> 24Եւ հրաժարականն, չէ<sup>25</sup>, մի, մի իւիք:

27 <22> 26Եւ զգուշացուցանելոյն, գոյշ<sup>27</sup>, գուցէ:

28 <23> Եւ մերձակայ<sup>28</sup> <կամ> ճշմարտութեանն, որպէս, զիարդ<sup>29</sup>:

29 <24> Եւ դիպուածոյն, թերեւս, ինձ թուի, ի դէպ:

30 <25> Եւ դասականն, յետ այսորիկ, 30զկնի այսորիկ:

31 <26> Եւ ժողովոյն, խումբ:

1 M ի միջակութեանն / J միջակութիւն ասի  
2 E M<sub>2</sub>J մի է] om  
3 մերոյ] pro սերոց legit M atque etiam E, apud quem in margine emendatur in սերոցն, quae lectio exstat etiam apud J  
4 J ի յերգս] om  
5 J գերկոսեան] յերկոսին  
6 J յաջողեցաւ] add կամ անյաջողեցաւ. նոյնպէս եւ զայլսդ իմացիր նմանութեամբն բանի, tum legit եւ քերթութեանն որպիսի մուրցացի etc; verba նոյնպէս եւ ... բանի, pro quibus M E habent: նոյնպէս եւ զայլ զիմացող իրի նմանաբանութեամբ, ad adverbium <3> qualitatis referenda sunt  
7 բազկացի] pro ծղացի artis  
8 M<sub>3</sub> համարողականութեանն  
9 յէ] pro գոյշ ... մարտան artis  
10 M<sub>3</sub> ահա] ապա  
11 դիւրականն] pro հեշտականն artis  
12 M շնորհակալուն] շնորհակալին / E շնորհակալոյն  
13 դիւր] pro դէն artis

14 ողոքելոյն] pro ողոքականն artis  
15 M փարելի] om  
16 M E անշնորհակալոյն, pro ապաշնորհեանն artis  
17 n M ձառ] ձա  
18 M անշնոհ  
19 M<sub>2</sub> աւաղականն] առասականն  
20 եւ բաքասականն] deest in codd  
21 վահ] ուահ ars  
22 ոչ միովիւիք om M<sub>2</sub>] ոչ եզովիւիք ars  
23 եւ յանձնառութեան pro բաղասորադրութեան artis  
24 եւ հրաժարականն] pro եւ ապասութեանն artis  
25 չէ] non legit ars  
26 եւ զգուշացուցանելոյն] pro զգուշականն artis  
27 գոյշ] զգոյշ ars  
28 մերձակայ] մատարկայ<ին> ars  
29 E զիարդ] M<sub>1</sub> յայրդ այդ / M<sub>3</sub> այրդ, այդ  
30 զկնի այսորիկ] զկնի սորա ars

32 <27> Եւ մատհրամանոյն<sup>1</sup>, թող<sup>2</sup>, ասծ, բեր:

33 <28> Եւ բաղդատութեանն<sup>3</sup>, առաւել, նուազ:

34 <29> Եւ հարցականն, ո՞ւստ, երբ:

35 <30> Եւ սաստկութեանն, յորդ, յոյժ:

36 <31> Եւ <ապ>երդմնականն, քաւ:

37 <32> Եւ խուներդմնականն<sup>4</sup>, հա:

38 <33> Եւ հաստատութեանն, յայտ:

39 <34> Եւ դրութեանն<sup>5</sup>, կարգ ինչ դնելով թե առնելի է:

40 <35> Եւ մոլ(որ)ութեանն, <sup>6</sup>էհ, ըհ, էհը (իա՛, հո՛):

<ԻԱ> 1 ՅԱՂԱԳՍ ՇԱՂԿԱՊԻ

2 Շահկապս այս զերկոսին<sup>8</sup> պնդէ<sup>9</sup> ի միասին գիմաստս, զի միոյ ոչ եղանի<sup>10</sup> կապ, այլ <sup>11</sup>գումբէ եւ յորոց. <sup>12</sup>ապա եւ մեկնութիւնն երեւի<sup>13</sup> սովորական խաւսիցն:

3 <1> Եւ ջոկամանք են] Եւ է ըստ ջոկոյն միակամութիւնն դիմաց. ես եւ դու եւ նա:

4 <2> Եւ անջատականք են] Իսկ գատումն<sup>14</sup> դիմաց, այլ ոչ մտաց. իբր թե արա՛ կամ առնեմ:

5 <3> Եւ բաղդատք, որ ոչ գոյութիւնն, <sup>15</sup>այլ գործ ինչ<sup>16</sup> յայտնեն<sup>17</sup> <sup>18</sup>«թե երկինք եղեն ի սկզբանէ». զի թե կամիմ հասու լինել, ոչ կարեմ, թեպէտ եւ բազում անգամ ջանացայց<sup>19</sup>. «զի թեպէտ զիս տկար կարծեն<sup>20</sup>, չէ ոք հզաւր»:

6 <4> Տարբաղմատք, որք զգոյութիւնն եւ զգործան<sup>21</sup> յայտնեն. <sup>22</sup>«քանզի մարդ զինչ ոչ գիտէ, քանզի վերջամուտ աշխարհի, քանզի գոյացեալ յառաջ այլք եղեն»:

7 <5> Փաստաբանականք. <sup>23</sup>զի, որպէս եղեւն. եթե արդ սա վերջինս այլոցն իշխէ. (թե) յաղագս սորա է. վասն որոյ այս գործեցաւ. <sup>24</sup>վասն զի իմաստուն. <sup>25</sup>վասն ոյր խոնարհի. <sup>26</sup>ըստ որոյ խաբի. ըստ որքան ցանկանայ<sup>27</sup>. <sup>28</sup>որքանի անգամ ճաշակեաց:

8 <6> Եւ տարակուսականք՝ ըստ երկբայութեանն. արդեաւք ի մեծ <sup>29</sup>սխալանս

1 M<sub>1</sub> մութիրամանոյն / M<sub>3</sub> մաւտիրամանոյն / M<sub>2</sub> մաթիրամանոյն  
2 M<sub>3</sub> բող] om  
3 բաղդատականն ars  
4 M<sub>3</sub> խուներդմնականն/ սաւերդմնականն  
5 դրականն ars  
6 E եհ, ըհ, եը, իը, ըիը  
7 J զի շաղկապն երկու ասէ դնէ ի մի իմաստ  
8 M<sub>2</sub> գերկոսին/ գերկուս / E գերկոսեան  
9 M<sub>2</sub> պնդէ post/ ի միասին  
10 E եղանի/ եղիցի  
11 J գումբէ, յորոց ապա մեկնութիւնն  
12 ապա եւ մեկնութեամբն երեւի legit E annexa verbis Davidis  
13 M<sub>2</sub> երեւի/ էր եւ ի  
14 J գատումն է

15 M<sub>1</sub> M<sub>3</sub> այլ գործ/ սոյն գործոյ (M<sub>2</sub> գործ)  
16 J ինչ] post գոյութիւն  
17 E post յայտնեն/ որպէս յորժամ ասի  
18 vulgo «եթէ երկինք եղեն» II Petri III 5  
19 M<sub>1</sub> M<sub>3</sub> ջանացա / M<sub>2</sub> ջանացայ  
20 J կարծեն/ կարծիցեն  
21 M<sub>1</sub> գգործիսն  
22 M քանզի մարդ ինչ գիտեմք, քանզի վերջամուտ աշխարհի, քանզի գոյացեալ (M<sub>2</sub> add է) յառաջայ յայս (M<sub>2</sub> յառաջայ այլո) եղեն / E քանզի մարդ զինքն ոչ գիտէ, քանզի վերջամուտ է յաշխարհ. վասն զի յառաջ այլ գոյացեալք եղեն (praebet inter verba Hamami) / J քանզի մարդ զի՞նչ գիտէ, զի ի վերջէ եմուտ յաշխարհ (cetera om)  
23 M զի որպէս եղենն (pro եղենն) թէ արդ սա՞ վերջինս այլոցն իշխէ / E քանզի, եթե որպէս եղենն, եթե արդ սա վերջինս այլոցն իշխէ / J թէ որպէս եղեն եթէ զիարդ որ վերջինս է, սա այլոց իշխէ; E et J prave intellexisse videntur Anonymum, qui nihil nisi species coniunctionum enumeravit additis verbis եղենն, իշխէ etc  
24 M<sub>1</sub> վասն զի/ վասն / J վասն որ  
25 E վասն ոյր/ վասն որոյ / M<sub>1</sub> վասն ոչ / J վասն որ ի (խոնարհ  
26 J ըստ որոյ/ ըստ որ  
27 J ցանկանայ/ յանցանաց  
28 որքանի անգամ/ որքան միանգամ codd  
29 J սխալանաց առնէր

յառնէր ոք. <sup>1</sup>ապա արդ զինչ<sup>2</sup>, ապաքէն պտուղ<sup>3</sup> էր. ապա ուրեմն (թե)<sup>4</sup> հանել<sup>5</sup> կամէր. իսկ ընդէր<sup>6</sup> էրում<sup>7</sup>, զմէ<sup>8</sup> արար զայն:

9 <7> Եւ բաղբանական՝ ի վերայ եկեալ ինչ յայտնութեամբ. արդեաւք<sup>9</sup> գիտաց<sup>10</sup>. <sup>11</sup>ուրեմն այս էր մահու մեռանիցիսն<sup>12</sup>. այժմ ծանեայ<sup>13</sup>. այլ սակայն յայս բերէր զիմացումն. այսուհետեւ չէ ծածուկ. վասն որոյ ծանեաք. յաղագս որոյ ասացն:

10 <8> Եւ [թարմատարք]...////

11 <9> Եւ - ընդդիմակս]...////

12 <sup>14</sup><10> Եւ վարանականք են] // [Եւ ընտրէ գերկրորդն գէթ ինչ այն չեղեւ, գո-

նեա աստէն կէի. փարթար զայս ոք չհանէր]//:

15<ԻԲ> 1 ՅԱՂԱԳՍ ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆՑ

2 Առողջանութիւնք են տասն]....////

<ԻԳ> 1 ՅԱՂԱԳՍ ԱՐՈՒԵՍՏԻ

2 Արուեստ է]...////

<ԻԴ> 1 ՅԱՂԱԳՍ ՈՏԻՑ

2 Ոտք են պարզք երկոտասանք]....////

1 *M*<sub>2</sub> արդ ապա

2 *E* զինչ է

3 *M* պտուղն

4 *J* թե/ *om*

5 *M*<sub>2</sub> հանել/ հայել

6 *M* ընդէր/ անդէն

7 *M* էրում/ *om*

8 *M* իսկ գմէ

9 *M*<sub>3</sub> արդեաւ/ արդ

10 *M* գիտաց/ *add* արդեաւ

11 *J pro* ուրեմն ... ծանեայ/ ուրեմն (*adicit antecedenti*). այլ այս է որ ասացաւ

12 *M*<sub>1</sub> *M*<sub>3</sub> մեռանիցես / *M*<sub>2</sub> մեռանիցես

13 *M* ծանեա / *E* ծանեաւ

14 <10> *deest apud M*

15 *Interpretatio horum capitum, quae sunt supplementa artis, deest in codicibus, deest et tabula coniugationis.*

# ԹՔՈԴՈՐՈՍ ՔՌԹԵՆԱԲՈՐ

ՃԱՌ ԸՆԴԴԵՄ ՄԱՅՐԱԳՈՒՄԱՑՈՅՆ

ՆԵՐՔՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ

ԳՈՎԵՍՏ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ԵՒ Ի ՄԻԸՏ ԿՈՅՆ ՄԱՐԻԱՄ





## ԹԵՈՂՈՐՈՍ ՔՈԹԵՆԱԽՈՐԸ ԵՒ ԻՐ ՃԱՌԵՐԸ

Թէոդորոս Քոթենաւորը ծնուել է հաւանաբար է դ. սկզբին: Եղբօրորդին է Կոմիտաս կաթողիկոսի եւ քեռորդին՝ Եզր կաթողիկոսի: Նախնական ուսումը ստացել է հօրեղբօր ձեռքի տակ եւ ապա՝ Սիւնեաց վարդապետարանում Մաթուսաղայի մօտ: Քոթենաւոր է կոչուել, ըստ երեւոյթին, քրճագրեստ ճգնակեաց լինելու պատճառով: Եղել է Արագածոտնի Ս. Աստուածածին վանքի վանահայրը, Եզր կաթողիկոսի հետ մասնակցել է 638 թ. Կարինի ժողովին: Թէոդորոսին են աշակերտել ապագայ կաթողիկոսներ Սահակ Զորոփորեցին (677-703 թթ.) եւ Յովհան Օձնեցին (717-728 թթ.):

Թէոդորոս Քոթենաւորի գրչին պատկանում են երեք ճառեր, որոնք հրատարակուել են Յովհան Օձնեցու մատենագրութիւնն ամփոփող հատորի մէջ<sup>1</sup>:

ա. Ճառ ընդդէմ Մայրագումացոյն. գրուած է 630-ական թթ.: Այստեղ շատ յաճախ բացարձակեցում են Մայրագոմեցու դաւանաբանական տեսակէտերը:

բ. Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ. երկի ազդեցութեան որոշակի հետքեր կան Սահակ Զորոփորեցու Խաչի շարականներում եւ Անանիա վարդապետ Սանահնեցու Վաղարշապատի Կաթողիկէ Եկեղեցու ներբողում:

գ. Գովեստ ի սուրբ Աստուածածինն. վենետիկեան օրինակից գատ, առկայ է նաեւ ճառի երուսաղէմեան օրինակը<sup>2</sup>, որն, ըստ Նորայր արքեպիսկոպոս Պողարեանի, վենետիկեան ձեռագրի համեմատ ունի կարեւոր տարբերութիւններ, որոնց հաշուառումով էլ ներկայացում է բնագիրը:

Յակոբ Քեոսեան

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Յովհաննու Իմաստասիրի Աւանցույ Մատենագրութիւնն**, Վենետիկ, 1953, էջ 171-183:
2. *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հտ. երկրորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեանը, Երուսաղէմ, 1953, էջ 24-28:
3. *Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան*, աշխատասիրութեամբ՝ Պողոս Խաչատրեանի եւ Յակոբ Քեոսեանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 202-207:

## ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒՄ ՁԵՌԱԳՐԵՐԻ

Ե - Մատենադարան Սրբոց Յակոբեանց (Երուսաղէմ), ձեռ. քիւ 154, ԽԹ (ըստ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. երկրորդ, էջ 24-28):

1 Տե՛ս **Յովհաննու Իմաստասիրի Աւանցույ Մատենագրութիւնն**, Վենետիկ-Ս. Ղազար, 1953, էջ 171-183:

2 Տե՛ս *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հտ. երկրորդ, էջ 24-28:



## ԵՐԱՆԵՒՈՅՆ ԹԵՈՂՈՐՈՍԻ ԸՆԴԴԵՍ ՄԱՅՐԱԳՈՒՄԱՅՈՅՆ

1 Ահա այժմ նորահրատ տոչորեցաւ բոց, եւ ըզբեղմնաբեր տունկս բանական զբախտին, ճշմարտոտոգ աւետարանին համբակս համբացուցանել ճարակի, եւ գքաջուղէչ եւ զլիապատար հաւատոյն խայրիս թառամեցուցանել նկրտի: 2 Ձեզ ասեմ, որդիք լուսոյ, մի՛ տարփայք խաւարի, եւ մի՛ զարտուղիք յարքայական պողոտայէն. եւ մի՛ ստունգանէք չորեքտառեան աւետարանականաւանդ փողոցն՝ որք յերկնականոյցն վերակոչեն քաղաք գձեզ, եւ վատամիտ<sup>1</sup> յուլութեամբ վերջանայք ի քաջամարտիկ նախահարցն արդարահրահանգ հետեւանաց:

3 Քանզի ահա վերայայտեցան այժմ ի տանս Թորգոմաց նորածին դառնութեան զարմք, աւցտողք ճշմարտութեանն. որք կաթարոսք արտաքուստ երեւին դուարեանին զգեստաւք, եւ խաչակիր մարմնակրութեամբ, եւ ներկերպին գազանադէմք, խրթնագգեստք, խուճապողք, տգիտախողխողք, քծնաբանք, գաղտապատիրք, գողտրաբարբառք, ապաժուժախորհք, դժապանք: 4 Որք անսարսափելի մտաւք եւ անձնահանճար իմաստիւք ահա յաւակնեալք յարաձգին առ բոլորիցն արարող եւ համագոյիցս փրկող Բանն Աստուած. եւ ի թագէ տնաւրինական կրիցն գմինն ի բաց կապտեն զակն հաւատոյն, որպէս զի զբոլորն ուրասցին գփրրկանակն զկիրառութիւնսն. կիսափրկումն մարդոյն առադրելով՝ մասնառութեամբ դաւանիլ զփրկանակն Բանի գտնաւրինակրութիւն:

5 Արդ չարահաւեալ զխորհուրդս իւրեանց՝ սկզբնականին մատենագրել այսպէս. Ոչ, ասեն, տկարութեամբ՝ այլ կարողութեամբ յաղթեաց մարտի թշնամոյն. իւրական վկայեն բանքն. Ոչ աւարի տուն

սկայի, եթէ ոչ նախկին հզարն կապի՞: 6 Եւ եթէ այս ճշմարիտ է, յայտ է, ասեն, թէ անընդունակ է առաջթարգմանութիւն աւետարանին, որ յաղաւթակայութեանն գահաքրտնութիւնն պատմեն ամենակարողի Բանին Աստուծոյ, եւ զի հրըշտակէն քաջալերելն:

7 Ձի՞նչ արդեաւք այսպիսիքս կարծիցեն զիւրեանց ծայրակոտոր իմաստսն, աղէ ասասցեն մեզ մուրագիտ աղանդաբերքն: 8 Մարմնակա՞ն կիրառութեամբքն փրկանակն Բան վարակեալ հերքեաց զթշնամին մարդկան, թէ մերկ աստուածաբուն զաւրութեամբն. եւ թէ իւրական յատուկ բնութեամբն՝ զի՞նչ պէտք մարդոյն զգեցման. որոյ կամակարաւ չհրամանին ոչ ոք դիմակացիլ զաւրէր: 9 Վասնզի ոչ գէական իւր բնութիւնն ի փորձ հանդիսի տուեալ, այլ զիւրական մարմինն յաղթող ախտի եւ ապականութեան եւ մահու ցուցեալ. եւ մարմնական կիրառութեամբն պատրեալ զթշնամին՝ ի գործ պատերազմի կոչէր. զի իբրեւ առ Ադամն մատուցեալ ի փորձ՝ որպէս յԱստուծոյ կործանեսցի պարտեալ: 10 Քանզի աստուածական անուամբն պատրեալ զնախկին մարդն բարիատեացն թշնամին, սակս այսորիկ մարմնոյն զգեցմամբ եւ յանձնառող զմարմնական կիրան փրկանակն Բան իրագործելով, խաբեալ զթշնամին պարտեալ ամաչեցոյց. եւ փրկեաց մարմնականաւքն զմարմնականսս:

11 Արդ ի գե՛ր կառու գաչս մտաց սրտիդ առ նախաստեղծ մարդն. եւ որ ինչ յաղագս պատուիրագանցութեանն պատուհասակրեցաւ՝ իմաց զիւրաքանչիւրսն:

12 Եւ նախիմաց լեր գտէրունական աւրինադրութիւնսն. Յամենայնսն վայելեսցես

1 Յօրինակին՝ վատավիտ

« Հմմտ. Մատթ. ԺԲ 29-30, Մարկ. Գ 27-28:

ի յոքնաբուսական տնգոցն. բայց առ այդ մի հպեսցիս փայտ իմացական բարոյ ի չարոյ: 13 Աստանաւր ծանիր զերկիւղն սկիզբն ամենայն բարոյ եւ չարոյ, եւ որ ինչ ի մարդու մն առբնացեալն էին կիրք՝ եւ զնոյնս եւ բարէստեղծողն Աստուած պատուիրանադրեաց:

14 Արդ երկիւղ ի բնութիւն, եւ աներկիւղութիւն ի յանձնիչխան կամսն իմաց: 15 Յաղագս այսորիկ անդէն առձեռեալ ւարինապահումն, զիւրական հաճոյիցն բարեխնամողն Աստուծոյ առ նա մեղադիր զմարդոյն առնելոյ զկամս: 16 Իսկ նորա ինքնիչխանութեամբ թիկնադրեալ զերկիւղ ւարինացն, ուստի մեծափառութեան ցանկացեալ՝ յանհպելին մերձենայր փայտ ապարասանաբար, եւ գեղաղէշադիտակ զխայրին կապտէր յաւակնազեղց: 17 Իսկոյն ի ճաշակելն ի նախագգեցիկն արտամերկանայր ի փառացն. եւ ապա ներգործէր նմա յիշումն ւարինադրին. Յորում աւուր ուտիցէք յիմացական խայրոյդ, ի նմին մեռանիջիք յաւուր:

18 Սակս այսորիկ յամենագիտէն Աստուծոյ երեսաց հարթուցեալ սաղարթապատ եղանիւր. խաւսափեալ ընդ յաւետուղէշ տնգովքն հրաժարել ըղձանային ի մահահրաման պատուհասողէն: 19 Դարձեալ ի հեզահարցումն դատողին յուսակնեալ, անգիտակ զմի արդեաւքն կարծեցին ի չհրամայեալ խայրին հպեցար: 20 Տիրապատճառեալ աղեղնաբանէր, եւ զկողամարդն ցուցանէր առ ի խայրիոցն ճաշակման: 21 Իսկ նա զարբանեակ չարին: 22 Իսկ արդարագիտաւղն Աստուած զիւրականն վերածեաց զճշմարտութիւն: 23 Կշտամբէր զկամաւոր սխալանսն նոցա եւ զապերախտութիւն. պատուհաս նախկին զցաւաւքն ծնանիլն առաջատարփին. երկրորդ՝ զանիծադրութիւնսն տայր ամայալայել բուսաբերին<sup>1</sup>. երրորդ՝ երկիւքն

քրտնաբերքն. չորրորդ՝ մահադարձ հողանալն: 24 Յորմէ սարսուցեալ վրդովէին ամենայն բանականացն սեռք. եւ հրճուանայր տիրակարծ իշխանն մահուն:

25 Իսկ անսկզբնագոյ ողորմութեանցն Աստուած բարեգործեալ՝ ի վհատեալսն նկատէր նպաստատու ւարինադրութեամբ փարախել զցնդեալսն: 26 Վերայայտեաց արս արդարս. առաքեաց մարգարէս աստուածաքարոզս. սականեաց զապարասանսն զանազան հարուածովք: 27 Յետ այսորիկ ամենայն վարժից՝ զանմահ ի տեսականութեանն տարփայր մահականացուիս փրկել ազգ, վայրիջեաց յանպարագրական ծոցոյ Հաւր էական Բանն անմահական բնութեամբն, եւ անսկզբնական էութեամբ ներտաղաւարեցաւ ի ծննդական ի սուրբ կուսէն. եւ անպարատեղի բնութեանն պարունակատեղէր իննամսեայ ժամանակաւ ի համբարականի կնոջ. եւ զերկնայինն ոչ թողոյր թափուր տեղի. սաղմնառեալ միացաւ ընդ մերաստեղծակ բնութեան մարմնոյ, որպէս ինքն կամեցեալ զիտակ անճառաբար: 28 Ոչ զիւրն ստեղծ բնութիւն, այլ զմերն առստեղծեալ միացոյց իւր մարմին: 29 Ոչ էրն փոխեաց, եւ ոչ զեղեւն շփոթեաց, այլ բնութեամբ միացոյց ընդ մերումն, անբաժանաբար մնալով ի նմին Աստուածն Բան բովանդակեալ զյարգանդին բնակիլն: 30 Ստրկից մարդկան ծնաւ ի կուսէն անապականաբար. եւ զցաւոցն ելուծ զդատակնիք, իմաց՝ զծննդոց փրկաւղ. եւ կիրքն անախտք պատուհասաւող կրիցն:

31 Ընկալ զքաղցն կարաւտացելոյ դրախտին վայելից յազումն. զվաստակն՝ տարժանեցելոյ երկսն, եւ տարփողի առաջին անաշխատելի կենացն հանգիստ զծարաւն՝ պասքելոյ ըղձման աղեկնաբողիս ազբերն արբումն. զքիրտն՝ անիծիցն քրտանն բարձումն. զերկիւղն՝ մահուանն երկիւղին ազատումն. զչարչարանսն՝ չարչարանացն փրկումն. զմահն բարձաւղի

1 Յօրինակիւն՝ տարամավայելարուսաբերիւր

կենացն փայտի անմահութիւն. զյարու-  
թիւնն՝ սկզբանն կարաւտեալ՝ լինելու-  
թեան դարձումն. զհամբարձումն՝ զկնի  
պահպանութեան պատուիրանին խոստման  
ծանաւթութեան:

32 Դարձեալ իմա՛ց ի մեզ երախտա-  
գործեալ փրկանակն Բանի զմարդն եղա-  
նիլ: 33 Եւ զի մի՛ ոմանք պիտակապէս  
վարկանիցին զմարդեղութիւնն Տեառն, եւ  
ոմանք՝ սոսկ մարդ ծնանիլ ի կնոջէ, յայտ  
առնէ՝ զճշմարիտն լինել մարդ ի կուսէն  
Աստուած՝ բացայայտելով զիտասցուք, ըն-  
կալեալ զարգացումն հասակի մարդ վերա-  
յայտիւր մեզ զինքն: 34 Ատեցող զչար՝  
տղայն, եւ ընտրող զբարին ըստ Եսայեայ,  
վկայէ Աստուած ճշմարիտ գոլ. քարոզիւր  
դիւանունդ լինել՝ զՄարկիոնի սանձեաց  
զաներասանակ բերանն, որ առաջաւքն  
դաւանէր զլինելն մարդ: 35 Իսկ ի կուսա-  
կան ի ստեացն ցնդել զկաթն՝ զՍամոս-  
տացոյն ցամաքեցոյց զգժընդակաբար-  
բառ զլեզուն. որ շնորհագործ որդի ա-  
նուանէր, եւ ոչ զԲանն Աստուած՝ մարդ  
լեալ դաւանէր:

36 Քաղցեալ ի փորձարկութիւն անա-  
պատին, ստուգապէս զինքն վերայայտե-  
լով մարդ: 37 Փորձալիտին հարցագիտու-  
թիւն կոչաւորութեան բացայայտելով զոչ  
իմացականն գիտակ առնել զնա, եւ զնա-  
խապատիրն ամաչեցուցանել յոյս. որ զառ  
ի Բանէն կենագործութիւն ոչ գիտէր մա-  
հացելումն լինել. այլ ճաշակմանն մահա-  
ծութեամբ միայն հրճուանայր սխալա-  
նացն սաղրիչ:

38 Վաստակեցաւ իսկապէս. ինքն գի-  
տէ՝ փորձագործութեամբ վկայեալ զեղա-  
նիլ վասն մեր մարդ: 39 Եւ զի զնա զնոյն՝  
Աստուած ծանիցուք, տիրաբանեալ ասէր,  
առ իս հետեւեցարուք, տաժանեալքդ, եւ  
ես հանգուցից զձեզ:

40 Ծարակեցաւ արդարապէս. եւ ինքն  
գիտէ մերով պիտաւորութեամբն ծանու-  
ցանիլ զինքն գոլ մարդ ճշմարիտ: 41 Եւ  
զի զնա անմահութեան իմասցուք աղբիւր  
ծարակականացն պարգեւել ասաց կենդա-  
նի ջուր, եւ վտականալ աղբերց անմահա-  
կանաց ի նայն հաւատացելոց իբրեւ ի  
ճշմարիտն Աստուած:

42 Տրտմեցաւ ճշմարտապէս, որպէս  
ինքն գիտէ, կատարեալ վկայելով զինքն  
տնաւրինացեալ, բանական ունելով զոգի  
եւ զմիտս: 43 Եւ զկիսամարդն դաւանո-  
ղաց կարկեաց զբերանն. եւ զնախաստեղ-  
ծին մահաժառանգութեանն եբարձ զսուգ:  
44 Երկեալ ի մահուանէ, որպէս ինքն գի-  
տէ, ճշմարիտ յայտնելով մեզ զինքն եղա-  
նիլ մարդ, եւ զՄանինեցոցն ընդբերանեաց  
զլեզուս. որք ստուերակերպութեամբ  
նաւթճեն զմարդեղութիւն նորին փրկա-  
նակն Բանի:

45 Յայսմ տեղուջ ընդգծեալ դիմա-  
մարդք ճշմարտութեանն՝ ճառ արկեալ յե-  
ղանակեն. Երկիւղ, ասեն, ոչ է ի սկզբնե-  
ղութիւն բնաւորեալ, եւ ոչ է Աստուծոյ  
գործած, այլ վերջապարուկ ներգործեալ  
յարանայ ախտ: 46 Արդ ո՛վ որոճողք  
ստուութեանցն, զմէ՞ մոլորիք ի բոլորիցն ա-  
րարողէ, եւ զսահմանեալ ճառագրու-  
թիւնսն վրդովալից գործականութեամբ  
փութայք կատարել. քանզի որպէս ձե-  
րունդ վկայեն ճառք, ախտիւ աւլնուք:  
47 Այլ ո՛վ յամառողք, ի նախարարու-  
թեանն իմացարուք բարեգոյակ ստեղծեալ  
կամս եւ անձնիշխանականս, ընդ նմին  
բնաւորեալ եւ երկիւղ տիրափառական:

48 Արդ որպէս յարդարընկալ կամացն  
ինքնատիրութեամբ արտագանցեաց, նմա-  
նունակ եւ մահընկալ պատուհասիլ՝ բնա-  
ւորականաւն զարհուրեցաւ երկիւղիւ:  
49 Քանզի ուր եկամուտ ներգործի եր-  
կիւղ, անդ արութիւն ոչ անուանի:  
50 Վասն զի քաջութիւն է՝ զբնաւորա-

1 Յօրինակին՝ գլխաւորութեանն ... կաւտեալ

կանսն փոխագործութեամբ պարտել, զայն որ իւր կամաւորութեամբ ընդ բարւոյն բնացաւ:

51 Ուստի եթէ ոչ ընդ բնութեանն առգոյացեալ էր երկիւղն, զիա՞րդ անբնականան զարհուրէր. կամ որպէս բարէստեղծողն Աստուած՝ զոչն ընդունակ՝ պատուհասակոծ առնէր, թէ Երկերուք ի Տեառնէ Աստուծոյ ձերմէ՞: 52 Աղէ զարհուրեցո՛ղու զտունկ, վրդովեցո զգետս, հայցեա՛ց բարեգործութիւն առ ի նոցանէ. յայտ է թէ ոչ հնազանդին. վասն զի ոչ է ի նոսա բնաւորեալ յասացելոցդ: 53 Արդ իմա՛ զերկիւղն բարւոյ առիթ լեալ: 54 Երկիւղ ի Տեառնէ պատիւ Տեառն. երկիւղ ի մահուանէ՛ արդարութեան գործարան: 55 Բայց մի՛ ինձ աստ զանյուսութեան ներածցես զերկիւղ, ո՛վ դու, այլ զբնաւորականին:

56 Քանզի յերկաւոր նախասացութեամբ պատմեաց վերակենցաղիլ ի փրկանակն Բան: 57 Արդ եթէ ոչ երկեալ առեցելովն, յայտ է թէ եւ ոչ մարդացաւ. որպէս Մանիքեցիքն վկայեն: 58 Եւ եթէ ի նախասացելոցդ ոչ յանձնառեաց, ապա ոչ ունէր բանական ոգի. որպէս կիսադաւանն ասաց Ապաղիւնար զաւորիկեցի: 59 Դարձեալ՝ թէ ախտ ներածես վարկանել յերկիւղն, սակս է՞ր ոչ ի քաղցն եւ ի ծարաւն եւ յընդունելութիւն կերակրոցն նոյնպէս վարկանիցիս. քանզի մեզ նմանի քաղցեալքն եւ ծարաւիքն ընդ հաշանաւք անկեալ տօգունին, եւ պակասին առ ի նոցանէն ուժեղութիւնքն ...<sup>1</sup> Իսկ աուլցեալքն մարմնական պիտոյիւքն՝ առոգացեալք յաւրանան, եւ տոչորի ի նոսա բոց ախտիցն: 60 Իսկ փրկանակն Բանի ոչ այսպէս կիրք. քանզի յաղագս մարմնաւորութեանն բացայայտելով զինքն գոլ ճշմա-

րիտ մարդ, զբնականսն մեր առաջի արկեալ՝ քաղցեալ եւ ծարաւեցաւ, անընկալ ի հաշանաց եւ մաքուր ի մեղաց՝ Աստուածն Բան մերառեցելովն. քանզի ոչ գործեաց զանաւրէնութիւն, պիտառոցէ մարգարէն, եւ նենգութիւն ոչ գոյ ի շրթունս նորա. այսու տարացուցիւ իմասցուք զերկիւղն:

61 Արդ ամենեցուն բացայայտ է, եթէ մահ յանցանաց ընձեռեցաւ պատուհաս. իսկ Աստուածն<sup>2</sup> Բանի ոչ ինչ գործեալ դատապարտական, սակս է՞ր մեռաւ, եթէ ոչ մահուամբն իւրով մահուն գործեաց մահ: 62 Դարձեալ ի մերում մահուանն ապականութիւն եւ եղծումն գործառնի. իսկ Աստուածն Բան մերառեցելովն մահացեալ, անապական եւ անմահ մնաց նոյնի մարմնովն: 63 Քանզի զմեռանիլն ստուգապէս՝ հիւսանիլն կտաւովն եւ ի տապանի ներծածկիլն վկայեն ճշմարտութեանն<sup>3</sup>. եւ ի զինահարիլն բխումն արեանն՝ պիտառոցէ ըզկենդանին մնալ: 64 Քանզի ոչ զէականն իւր բնութիւն, այլ զտնաւրինեալն արտափչեաց ոգի. անքակ եւ անբաժին մնացեալ ի բանական ոգւոջն Աստուածն Բան ի նմին մարմնի բնութեանն:

65 Աղէ ասացեն մեզ անձնահանձարքն, եւ ճշմարտութեանն անիմայք. երկիւղ ի հրանիւթ բնութեանն անմարմին հոգեղինացն բնաբա՞ր առգոյացեալ է, եթէ վերջաբոլսակ ախտակրին. եւ եթէ ոչ բնաբար, զիա՞րդ անդրլակի փառատրեն զէականն Աստուած անընգալքն<sup>4</sup> երկիւղի: 66 Ապա եթէ ի գոյեղութեանն աուլցեալ ունին զերկիւղն ամենից բացայայտ է՝ թէ անախտք են: 67 Ուստի ամենայն անկարութեանն սկիզբն արտայայտեցաւ աներկիւղութիւն, որում նախկին բանսարկուին պիտառոցէ անկումն, եւ երկրորդ՝ նախծին մարդոյն: 68 Իսկ եթէ զառ ի բարւոյ

1 Տէ՛\* Ղէ-- Ի Ե 36. Երէմ. Ե 24. Սփ. Լ 7. Յայր. Ժ՛Կ 7:  
1 Յօրինակին բառ մի անընթեռնիլի

2 Յօրինակին՝ յԱստուածն  
3 Յօրինակին՝ ճշմարտութիւնն  
4 Յօրինակին՝ անընգալքն

միայն վարկանիմք ունել զերկիւղն, նո-  
վիմբ իմասցուք եւ զառ ի չարչարանացն:  
69 Վասն այսորիկ արութիւնն անուանի  
քաղցիւ քաղցի համբերել, եւ երկիւղիւ եր-  
կիւղի:

70 Ոչ զարհուրի, ասեն, գրկընկալ մա-  
նուկ. յայտ է ասեն, թէ եկամուտ բաղկա-  
նայ երկիւղ: 71 Առ քեզ ասեմ, որ զծաղ-  
րականսդ բարբառիս. նա բանաւորու-  
թիւնն ո՞չ ապաքէն ընդ սկզբնեղութեանն  
առքնացեալ է ի մարդումն. սակայն թերա-  
հասակ մարմնոյ գոյացութեամբ ոչ զաւրե-  
ղանայ քնարգել բան, այլ զխժական բառ  
երգէ ձայն. նմանապէս բաղկացեալ իմաս-  
ցիս զերկիւղ. եւ մի՛ յաւէտաղիւղաջեալ  
զանգիրսն բարբառելով յախմարացն յա-  
գաչմունս: 72 Ոչ ոք տաժանեալ յերկս՝ ա-  
րիւն վիժաքրտնի. եւ եթէ մարդում, ասեն,  
ոչ բաղկանայ զիա՞րդ արդեաւք զՅիսուսէ  
Որդւոյն Աստուծոյ իշխեսցէ ոք զայս բե-  
րանաբացել: 73 Արդ, խաւյացեալդ ի չա-  
րափառութեանդ, յումէ՞ լուար զանբնակ  
զործոյդ լուր. գրումն աւետարանին որ-  
պէս արեան ասաց տարացուցաբանու-  
թեամբ քիրտն, այլ ոչ թորումն անգինա-  
հար արեան:

74 Արդ կաճառք բանիցն յուզեալ՝  
դարձեալ վիճաբանին: 75 Եռակի ճառագ-  
րեալ աւետարանական տառիցն պատմու-  
թիւնք անմիբան ի միմեանց գտան. յո-  
րոց զմին ընտրեալ գովեսցուք, եւ զմիւսն  
հերքեալ արտաքսեսցուք ի սրբումն կոչա-  
րանէն: 76 Քանզի բազմերգելին Գրիգոր  
առաքելաքարոզ նահատակն Քրիստոսի  
զամենայն աւետարանական պիտառու-  
թիւնսն ճառագրեաց՝ զոր ինչ յաղագս Աս-  
տուծոյ Բանի՛ տնաւրինական կիրառու-  
թիւն պիտառէր. իսկ զահաքրտնիւն եւ ոչ  
յատուկ ձայնիւ յիշատակեաց. ուստի յայտ  
է, ասեն, եթէ հնապատմութիւն աւետարա-  
նին ոչ է ընդունակ: 77 Եւ եթէ ոք քան

զնախաքարոզն Գրիգոր խորհեսցի լինել  
իմաստուն, եւ այլ ինչ նորաձեւեսցէ ճա-  
ռել, այնպիսին դատապարտեալ է ասեն:

78 Արդ ո՛վ խաբողորսակ թշնամիք,  
ներբողելով ձեր զճշմարտաքարոզ վկայն  
Քրիստոսի գյոգներջանիկն Գրիգոր՝ սը-  
տաղաղակ բանիւ սփածանել մերկու-  
թեանն ծածկոյթ, դովին այդու բանիւ՝ ցու-  
ցից յայլումն տեղւո՞ջ՝ բամբասանս յարդա-  
րեալ ձեր նախադրուատին Գրիգորի, այլ  
ոչ գովեստ. քանզի որթողքսական վեր-  
նադիտաւղ քրիստոսագգեստ նախա-  
հայրքն գումարեալք ի Նիկիապողիս՝ կա-  
նոնադրեցին երկակի հնգեակ<sup>2</sup> եւ եզակի  
քառեակ թուով միայն՝ ի սրբումն կոչարա-  
նին ընթեռնուկ թուղթս զաստուածաքա-  
րոզ առաքելոյն Պաւղոսի. եւ ի նորապա-  
տում գրութեանն զնոյն շարագրութիւն  
վերառեալ է: 79 Իսկ բարեդրուատելին  
Գրիգոր զառ ի հարցն լռեալն եւ ոչ մա-  
կադրեալ ի նոր թարգմանութիւնս, վկա-  
բանութեամբ ճառագրեաց, թէ Անաւրէն  
իշխանն իբրեւ աստուածանալն կամեցաւ,  
ասէ մաքուր Առաքեալն, զամենեսին ընդ  
մեղաւք գրաւեաց. եւ այս ի հնապատումն  
տառսն վերատառեալ է, այլ ոչ ի նորապա-  
տում շարագրութեանն:

80 Արդ եթէ սակս ոչ զծագրութեան<sup>3</sup>  
ի նորաբեր թարգմանութեանցն հնագում  
աւետարանին իբր զոչ ճշմարիտ ի բաց ըն-  
կեցեալ մերժեսցի յեկեղեցւոյ, ընդ նմին  
խոտեալ բամբասի եւ մեծ մակադիտաւղն  
Գրիգոր ստուերաբանութեամբ գրուա-  
տեալն ի ձէնջ: 81 Ապա եթէ ճշմարտապա-  
տումն Գրիգոր ոչ ըստ համաւրէն աւետա-  
րանական կարգաբանութեամբ գլխոցն  
բաղդատեալ շարագրեաց, այլ յատուկ  
պարզմտութեամբ ըստ ախմարացն լսելու-  
թեամբ բաւել զառժամայն պիտոյիցն սա-  
կաւամասնութեամբ վկայութիւնս առաջի

1 Յօրինակիմ՝ Աստուծոյ Բան

2 Յօրինակիմ՝ եռակի հնգեակ

3 Յօրինակիմ՝ զծագրութիւն

եղեալ՝ մարգարէական տառիւք հաստատէր, արդ զմէ անփապ լինիք զնմանէ պատճառադրութեամբ: 82 Աղէ՞ ի յիշումն եկեսցէ ձեզ իսկապատում տարմաբանիցն գործադրութիւնք՝ զոր ինչ յաղագս նորին բանի հետեւեալ են:

83 Ուստի նախկին յօլովից գոլով հայր ճշմարտասէր անձանց՝ տէր Բարսիլիոս կապաղովկացի՝ ոչ ի վտանգ ինչ աւամայից ճառեալ, այլ գեր ի վերոյ դաւորիկեցոյն երթալ Ապողինարի կշտամբէր, որ կիսամասնութեամբն դաւանէր զտնաւրէնութիւն փրկական Բանի. Ես զչարչարանսն, ասէ, եւ զտրտմութիւնն եւ զգոփալն, եւ որ ինչ միանգամ սոցին կցուրդ յաւետարանականսն կայ, Աստուծոյ Բանին ասեմ. եւ ոչ բնութեան աստուածութեանն, այլ միաւորութեանն:

84 Սորին զուգասողակից եւ որ<sup>1</sup> մականուն Գրիգոր աստուածաբանն արժանաւորեցաւ կոչիլ, առ եւնոմիացիսն ճառեալ ասաց. Զխաւսելն եւ զգարհուրելն յաղագս քո թափեցելոյն իմա՛ց տնաւրինաբար: 85 Դարձեալ յերկակեռակի յեզում ճառի զամենայն տնաւրինականսն լուծականութեամբ յեղանակեալ՝ յեղակին հնգետասան թուականութեանցն ազատաբանեալ ասաց համառաւտաբար, թէ Եւքրտնելն արեան ցուցականութեամբ յաղագս մեր չարչարեցելոյն ծաներուք: 86 Դարձեալ ի յաստուածայտնութեան ճառին մակադրեալ ասաց. Ըստ որում քաղցեալն եւ վաստակեցալն եւ արտասուեաց եւ երկեալն աւրինաւք մարմնոյ:

87 Սմին համասաւղ եւ երջանիկն Յոհան ներբողանունն ոսկեբերան՝ կարգաբանութեամբ զաւետարանական թուեալ բան. Որպէս զի մի՛ կարծեաւք անուանեսցի մարդեղութիւն յԱստուածն Բանի, սակա այսորիկ ստուգապէս աղաւթէր առ Հայր ի կոհակին ճիթենեաց. եւ քրտնեալ

թուրէր յորդահոսակ առուս որպէս ապացուցի արեան իջման:

88 Համաճայնակից գոլ սմա եւ արդարածերն Եպիփան կիպրացի. Մարմնաւորապէս իմացարուք, ասէ զհաջրտնութիւնն, եւ մի՛ սոսկ հոգէպէս. իսկ զառ ի հրըշտակէն զաւրանալն՝ զմովսէսականն իմացարուք աւարտել զաւրհներգական մարգարէութիւնսն, երկրպագել նմա Որդւոյն Աստուծոյ, եւ ուժեղացուցանել զնա հրեշտակացն Տեառն: 89 Զանուանական զաւրութիւնսն վսամաբանութեամբ փառաւորել՝ մաքուր սպասաւորաց զաւրութիւն անուանեաց, զնորայսն գովաբանել ի վերայ մահու գտիրականն<sup>2</sup>, եւ զդժոխոցն լուծանել զպետութիւն:

90 Արդ դու, ո՛վ յաւղաբան եւ զրայահոլ<sup>3</sup>, իբր գերաթռեար մտացաթեւ հանճարով քան զերկնագուշակ<sup>4</sup> նախահարսն, որք հիմունք եկեղեցւոյ եւ խարխիւք ճշմարտութեան անուանեցան. որոց պահապանք՝ հրեշտակք, եւ զաւրավար՝ ինքն Տէրն. որք վկայեալք, յաղագս Քրիստոսի նահատակեալք զլխափառեցան յառաքելական աստիճանին: 91 Կամ գրէ՞ թէ եաւթն<sup>5</sup> հարիւր ամ լիեալ յետ չարչարանաց Որդւոյն Աստուծոյ. եւ այսքան ժամանակք յանգիտութեան գնացին բոլոր մանկունք եկեղեցւոյ, եւ միայնարդ եւս ի վախճան ժամանակաց նորուք դուք եւ նորածանք գտայք ճշմարտութեանն երկրորդ ապաւղինարիտք. որ նորածայն աւանդութեամբք նորածին բուսուցէք արմատոց դառնութեան փուշս հրաճարակ անշիջատոչոր բոցոյն:

92 Արդ հի՞մ վարիք զարտուղի խորհրդովդ. եկա՛յք ընդ մեզ խոստովանեսցուք զառ ի կուսէն ծնեալն Աստուածն

2 Յօրինակիկն՝ ի վերայ մահա գտիակացն

3 Յօրինակիկն՝ գրացահուր

4 Յօրինակիկն՝ զերկնագոլակ

5 Յօրինակիկն եղեալ էր Զ փոխանակ դնելոյ Զ:

1 Յօրինակիկն՝ զուգասողացիկ եւ մականուն



Բան՝ ճշմարիտ առեալ մարմին անփոփոխ աստուածութեամբ, անյեղյեղուկ միութեամբ, անորիչ աստուածութեամբ, եւ եզակի դէմ. անբաժ ի կրից, անապական մարմնով, մաքուր ի մեղաց, անեղծ ի չարչարանս, եւ չարչարեալ իսկապէս: 93 Եւ անմահ բնութեամբ, եւ մեռաւ ճշմարիտ մերունական մարմնովն. աներկիւղական աստուածութեամբ, եւ տրտմութեամբ զանգիտեալ ի կամաւոր չարչարանսն մերառեցելով հոգւովն: 94 Աղբիւր կենաց գոլով բնութեամբ, եւ ծարաւեալ ստուգապէս մերառեալ մարմնովն: 95 Բոլորիցս արարող, եւ ոչ վաստակեալ ըստ մարգարէին. եւ ի միաւրեայ պողոտայնոյ սամարացոց վաստակեալ հանգչի մերատոհմակ տեսական:

96 Համագոյիցս եղելութեան անկարաւտ դարմանիչ, եւ քաղցեալ ստուգապէս մերակերպ առեցելովն: 97 Անտարաւղ եւ անբովանդակելի բնութեանն, եւ ի գիրկս բովանդակեալ մերահասակ տղա-

յութեամբն: 98 Աներեւոյթ անսկզբնութեամբ, երեւեցաւ մերագոյակ մարմնովն. անեղ անըմբռնելի մշտնջենաւորութեամբ սկիզբն առեալ մարդեղութեամբ, եւ ըմբռնեցաւ մերանիւթ բնութեամբ: 99 Սա ոչ պակաս ի մերոց կրիցս, եւ անախտ. սա ոչ նուազ աստուածութեամբն, եւ անմեկին տնաւրինեալ բնութեամբ. սա ամենից կամաւորութեամբ համբերեալ տարաւ, զի բոլորումն գործեսցէ փրկութիւն մարդոյն: 100 Զսորա զաստուածականսն դաւանեսցուք բնութեամբ, եւ զտնաւրինականս կամաւոր յանձնառութեամբ: 101 Զսա բարեբանեսցուք գոհացողական երգասողութեամբ: 102 Փառք Հաւր էականի, որ զմիածինն իւր առաքեաց ի փրկութիւն աշխարհի. փառք համագոյակցին, որ վասն մեր մարմնացաւ. փառք անսկզբնակից Հոգւոյն, որ ետ զաստուածգիտութիւն որդոց մարդկան:

103 Փառք միասնական Սուրբ Երրորդութեանն յաւիտեանս. ամէն:

**ՆՈՐԻՆ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԹԵՈՂՈՐՈՍԻ ԾԳՆԱԽՈՐ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ ԵՒ  
ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԵՐԲՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱԶՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ ԵՒ Ի  
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ԵՒ ՓՐԿՉԻՆ ՅԻՍՈՒՄԻ ԲՐԻՍՏՈՍԻ**

1 Զահաւոր եւ զանքննելի խորհուրդ անհասութեան արփիահրատ աստուածա- յին սուրբ նշանիս, ո՛վ աստուածասէրք, դուն ինչ սղական բանիւք արտայայտեալ ներբողական եւ պանծալի ճահողասաց խորհրդով, հոգեպարգեւ աստուածիմաստ շնորհաւք կենդանագրելով, համառուտա- բար հրատարակեցից յօքնաւրինական յու- սով ենթադրութեամբ ի Քրիստոս: 2 Ե- կա՛յք ամենեքեան ուղղափառ հաւատով եւ ուռթիւ ստորասացութեամբ երկիր պագցուք գերահրաշ աստուածային սուրբ խաչիս, ի սմա բեւեռեցելոյն բազկատա- րած շարամերձութեամբ եւ անսակի տնտեսութեան հական բնութեան Բանին Աստուծոյ:

3 Որ զնախադասական ապացուցու- թեանցն զմակերեւութիւն բաղադրեալ հո- գիաներկ եւ մարմնաքնար երգողին, ի վաղնջուց հետէ հաւեալ ձայնէր՝ զսերկա- ծին հակն զի վերայ փայտին բաղադրա- կան գերածութեամբն<sup>1</sup> արտաշնչացեալ անտղելի ինքնակայութեամբն, ձիրելով ի վերայ հեթանոսաց նշան եւ լոյս երեսաց, անստուերական իրակեալ ներգործիչ Աս- տուած ելով Բանն: 4 Ոչ իբր որումն պա- տուական գոյից նիւթից երկնայնոցն ա- ռեալ՝ առ մեզ ժամանեաց զհաւաստու- թեանն զենթադրութիւն զենանիլ ի վերայ մահաբեր փայտին՝ առթելով զնոյն փրկու- թեան աւճան<sup>2</sup>, զնիչ գերապանծ փայտին գիտութեան, որցեալ յանապակ եւ յանու- չակ մշտնջենաւոր եւ յանվախճան ուրա- խութիւնսն երկնաթուիչ հաւատով ի Քրիս-

տոս, այլ ի վեր քան զսեռական էիցն գե- րագանցեալ վսամական վեհագունիցն ի- մանալի մակացութեանց իմաստիցն՝ յան- պարագրելի եւ յանպարիմանալի աստուա- ծային խորոցն ելով դաշնաւորութեան ընդ փայտին սեւեռմամբ, զթշնամիսս իւր զմեզ՝ համայն իսկ եւ զամենայն աշխարհ յինքեան բաղարկեալ, արգահատու- թեամբն տեսողական տառիւքն առտուեալ զնոյն, անանջատելի միաւորութեամբն առկացոյց առաջի Հաւր:

5 Եւ զարտամերկացեալն ի լուսաւոր Աստուծոյ ձեռացն ստեղծեցելումն աներ- կիւղական բնութեամբ եւ անձնիչխանա- կան կամաւքն՝ աստուածական անուամբն պատրեալ բարիատեաց եւ ռեմակալ թշնամւոյն, ի ձեռն մերակերպ առեցելոյ մարմնոյ զգեցմամբն՝ ներգործելով փրկա- կան Բանին, կապտեալ ամաչեցոյց զհա- կառակամարտն, եւ փրկեաց աստուածա- խառն խայրին ի վերայ փայտին ախտա- կան առբերութեամբն՝ պատսպարեալ միշտ յարատեակ ընդ հրաբուն հոյսն՝ կաճա- ռաճեմ էիցն բազմադասելոցն:

6 Եւ ետ ընդ ետ վերտարեալ սեւեռա- գոյն մակասիր ենթակացութեամբն, տի- պատեսակ անչփոթելի բնութեամբ աս- տուածութեանն մակագրեալ ի քառեակ փայտն, զտնաւրինեալն արտաշնչեաց հո- գի. զինահարեալն ի տիգաբուխ եւ վտա- կահոս կենդանութեանն, ի մեզ գոլով աղ- բեւրն ջրոյ խաղացելոյ յաւիտենին կեն- դանութեան:

7 Քանզի անշնչացեալ մարմինն՝ ստուգապէս պիտառութեամբն կենդանա- տեսակ աստուածացեալ մարմնովն, եւ եր- կախումբ ներմարդութեամբն, զիտապե-

1 Յօրինակիւն՝ գարածութեամբն  
2 Յօրինակիւն՝ սնան

տական իշխանութեամբն ի բացորոշութենէն ազատ գոյով ի մեռեալս՝ սակս կարծեալ երկիւղին մահու ունակութեան, ընդ մեզ եղեալ Աստուած Բանն, ինքն անջատի որոշմամբ յերկուս տեղիս, արտաբերեալ յորջորջմամբ, եւ առտուեալ զանձն ի ձեռս Հաւր. վասն զի իւր էր տնտեսականն՝ ընդ որում անշփոթ բնաբար ներմիացեալ եւ խառնեալ շարայարելութեամբն ըստ որումն բանի: 8 Քանզի անյեղաւրէն եւ անքատակ՝ է աստուածահարաչ ներանձնաւոր մարմինն, եւ տղաբար կանոնաւ բովանդակի եւ չափի:

9 Զնոյն պատկանեալ Տեառն յաւետարանին ասէր, Իշխանութիւն ունիմ առդնել զանձն իմ, եւ իշխանութիւն ունիմ միւս անգամ առնուլ: 10 Որով եւ անդ խիտակրեալ<sup>2</sup> շնչովն առ ի դժոխաբնակ մարդկան շունչսն Հիւսանի ընդ մեզ առասնակաց, եւ ի տապանի ներծածկիլ մարմնով, ի մարմնածածուկ ներքնագոյն դժոխս, վերակենցաղեալ կենդանացոյց միահաղոյն զամենեսեան իջմամբ առ դարապետական արգելեալ Հոգիսն. եւ ռահ գործեալ ի նմա ի ձեռն լուսածին գերապանծ նիշփայտին: 11 Յորում լուսաթռիչ սերոբէին ի գիշերին այն պատահեալ կանանցն, վերաբերէր առ նոսա քարոզութեամբ զխաչեցելոյն ասելով, Զի՞ խնդրէք զկենդանիւն ընդ մեռեալսն, որ բնաբար առաստութեամբն ձերեաց զկենդանութիւն ամենայն էակացս:

12 Որոց եւ խայտացեալք ընդ ընծայական շնորհազրոուստ բացատրութիւն զուարթնոյն, առ ընդհատ եկաւորութեամբն խաչեցելոյն գյարութիւն. ուստի եւ զնոյն իսկ զգալանութեանն ունակութիւնն անվթար եւ սուրբ հաւատով ուր-

ցեալ<sup>3</sup> յԱստուած ճշմարիտ, աստանաւր ոգեալ արտասանեցից արփիահարաչ եւ քրիստոսագարդ սուրբ նշանիս:

13 Ո՛վ ճշմարիտ աստուածային տունկ, արեւելաբոյս արմատ ընծիղեալ սաղարթածաղիկ եւ կենդանատեսակ զաւրութիւն, իմանալի պտուղ, անբան կենդանի, քառաթեւ նշան, անբարբառ բարեխաւս զքէն կախեցելոյ Բանին Աստուծոյ: 14 Որ փոխանակ նախկի տնկոյն, որում սաղարթախիտ պտղովն վայելչացեալ, չքնաղազարդ տեսական գունեալ, զարմանագեղ եւ առոյգ գեղեցկութեան տենչալի փափաքմամբն, կամակ եւ խնորժելի առ ի տարփումն տեսողացն Հայեցուածովն<sup>4</sup> յաւրինեալ յաւետաբեր շեշտակի արգահատութեամբն զինդութիւն առթեցեր, դառնութիւնաբեր ելով բուժկութեանն, առգիտաբար դաւողութեամբ պատիր պտղովն կաղակարծելի բաժամտութեամբն, ամայացեալ տարատողմամբն արտակացելոցն յաստուածաստեղծ եւ յանձառելի փառաց աստուածութեանն:

15 Ո՛վ ճշմարիտ աստուածային տունկ, նախաբոյս եւ ինքնագոյակ կառուցմամբ պատկանեալ, սորեկ պտուղ, եւ յետածին ժամանակաւ ձեւացեալ քառատեսակ սուրբ նշան, եւ անբարբառ բարեխաւս զքէն Հեղուսելոյ անմահ Բանին Աստուծոյ: 16 Որ իբր ի ձեռն միոյ մահու՝ միահաղոյն բազմաձաբար անմահ ստացեալ՝ խաւարամութ եւ նսեմացեալ շամանդաղութեամբ աղջամղջով ստուերամածեալ, փանաքի անքատութեամբն տարալածեալ, տարապատկանութեամբ յաստուածատեսակ արարչատուր փառաւորութեանն ունակ եղեալ յանցանաց նախահաւրն, իսկապէս եւ զնոյն կերպատեսակ նմանութիւն ստացեալ զմահացելոյ ծառային անանջատելի սիրովն, բոլոր ի յերրոր-

1 Յօրինակիւն՝ անգնակ

ա Յ՝ՎԸ. Ժ. 17-18

2 Յօրինակիւն՝ ախտակեալ

բ Ղ՝Վ. Ի՛Վ. 5-6

3 Յօրինակիւն՝ ուրագեալ

4 Յօրինակիւն՝ հայցուածովն

դուլթենէն եւ անորիչ ի ներմարդութենէն՝ յարահիւսեալ ի վերայ քո մեռանի անտղաբար արտաշնչութեամբն կենդանին՝ կենդանութիւն շնորհելով բնաւին եզակի բնութեամբ աստուածութեամբն:

17 Ո՛վ ճշմարիտ աստուածային տունկ, գերադրական եւ իմանալի տնկագործութեանն խորհրդոյն ապաստովթ, խորութիւն եւ անխանաւթ քառաթեւ սուրբ նշան, եւ անբարբառ բարեխաւս զքէն բեւեռեցելոյն անմահ Բանին Աստուծոյ. որ նախ քան զբուսանել փայտին ի մէջ խորացելոյ աղխափակեալ դրախտին հրասրեալ սուսերաւքն՝ ի սրոբէապահ բոցեղինացն պարունակեալ ճանապարհ ծառոյն կենաց, յաւետաբար միշտ եւ գերագոյնս ինքն զքեզ տեսանելով, անդուստ ամենատես աչաց տեսական Բանին Աստուծոյ, եւ անուանեալ ծառ կենաց, առբերելով ի քեզ պտուղ կենդանութեամբ՝ անորակ ներմարդութեամբն միաւորեալ բնութիւն աստուածութեանն մեռանիւր զմահ վասն մեղաց, սակս աստուածագործելով զմեզ. զի թէպէտ եւ համաբնակից՝ այնր տնկոյն եւ անսուրբ փայտին առասնակայ առկոչեցեալ, յորում պատճառք մեղացն ի ձեռն պատիր պտղոյն ճաշակմանն եղեւ մահու առիթ. իսկ որպէս եւ այնր իբրու ելոյ ահաւոր զաւրութիւն բեւեռեցելոյն հեղուսեալ ի վերայ քո ճշմարիտ կեանք եւ պատճառք փրկութեան, արտաբերեցեր զյաւիտենական արդարութիւնն մշտնջենաւորութեամբ Հաւր յաւիտենից:

18 Ո՛վ սքանչելի փայտ, եւ աստուածազարդ տապան, իմանալի խորհուրդ ծածկեալ, քառաթեւ սուրբ նշան, եւ սկիզբն սեւեռից սերման մարմնացեալ անմահ Բանին Աստուծոյ. որ զկենդանին անմահ Բանն Աստուած ելով էականութեամբն՝ սպասաւորեալ ի քեզ յառաջագոյն, այն որ խաւսէրն առ ի յաւրինադրել

զնիւթական արկածեալ աւրէնն, զկենդանաբեր տապանին զփայտն, վայրանցեալ էր բարձր եւ ի վերայ գեղման, եւ շարացեալ տնաւրինաբար բաղդատութեամբ անտղելի եւ անճառելի միաւորութեամբն, հեղուսեալ ընդ քեզ իւրով գերակ<sup>2</sup> բարձրութեամբն: 19 Գերագոյնս ի ծփական եւ ի ծովացեալ ալեաց մեղաց զի քեզ աւժանդակեալ ոգիան աւդագնաց սլացութեամբն թեթեւս թռուցեալ՝ մերձ առ երկինս վերաբերեցեր, ապականելով զհնութիւն ծերութեան եղծման ազանց, սուզանելով յանդունդս կորստեան քանակի կասմանն. յորում զմաքուր եւ զվճիտ դուռն տէրունոյն բերանացուցեալ, այս ինքն զտիգահարեալն ի զինուորէն, իբրու ըստ իմանալի բացելոյ ձեղուանն, մեծաբարբառ գոչմամբն ի ձեռն Հաւր աւանդեաց զհոգին. յոյժ տաւաւորագոյն քատակութեամբն փոխանակ աղաւնոյն, կենդանասաղարթ դաւարութեամբն շղաբերի, զընտանեգոյն կարութիւնն, հանգէտ եւ հաղորդ երեւեալ Հոգին Սուրբ. անձամբ ընդ անձինս՝ իբր ի տապանի պահանութեամբ ոգւոյն, այս ինքն արգելելոցն ի դարապետացն դժոխոց, զինդութիւն առթելով հրախառն արեան ի քեզ ցայտեցելոյ խաղաղագործիցէ յերկինս եւ յերկրի:

20 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, աստուածակերտ եւ իմանալի սեղան, երկնակառոյց յառաջաբերութեանն անմահ գեման Որդւոյն Աստուծոյ կամաւոր պատարագին. վասն զի ի քեզ տեսանեմք զԱստուած Բանն մարմնով բաղկացութեամբն գոյացեալ, փոխանակ Իսահակայ արտաշարեալ<sup>3</sup> ընդ փայտին ենթադրութեամբ. հնազանդ Հաւր եւ ծառայ մերատոհմ կերպիւ, եւ առաջնորդ յերկնաւոր ուրախութեանցն բնակութիւնսն. քանզի բեւեռեալ իբր ի սեղան ի վերայ քո փոխանակ ան-

1 Յօրինակի՝ մահաբնակից

2 Յօրինակի՝ գեմակ

3 Յօրինակի՝ արաշարեալ

բան կենդանւոյն մատուցեալ ողջակէզ անարատ եւ զենուամն անբիծ, ոչ զմի անձն Իսահակայ այլ համաւրէն իսկ զամենայն աշխարհս փրկագործեալ կենդանացուցեր:

21 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, աստուածագարգեալ իմանալի սանդուխք յերկրէ յերկինս բարձրացեալ զնոյն ինքն զՔրիստոս պայծառ ճառագայթիւք ջահափայլեալ արփրակիզն փայլմամբ, զարեզակն արդարութեան ի քեզ պսակ ունելով հաստատեալ առբերելով զփրկութիւն ամենայն աշխարհի. ըստ որում նախկին տեսեալ զքեզ սրբոյն Յակովբայ ճանապարհ վերելելոց յերկինս առ Հայր, եւ դուռն երկնից անուանեալ իջելոց դասուց կաճառացն հոյակապ, եւ գումարտակ ժողովոյն երամ երամ իջելոց հրեշտակացն յերկիր՝ առ միութիւն վերնոց եւ ստորնայնոց, հրաշաշակիղ եւ կատարեալ ուղեկցութիւն զկնի աստուածային ճայնին՝ թռուցեալք լուսատեսակ կերպիւն առ ճշմարիտն էից կայ, ի վերինն բրաբրոն յաստուածակեաց աշխարհն:

22 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, աստուածագարգեալ իմանալի գաւազան սուրբ հովուին, եւ պատճառ ծնելութեան ստեղծատեսակ հոգևով՝ առանց մարմնոյ եւ արեան յաւէժաբար գոլով. եւ ոչ իբրեւ զաւրինակն յամպն եւ ի ծովն, կամ իբրեւ զմեծախորհուրդն՝ որ առ Յակոբայն, յորժամ դնէր զգաւազանն ի ջուրսն աւազանին յանդիման խաշանցն առ զկծելոյ նոցա ի ձեռն գաւազանացն եւ ծնանելոյ խաշանցն գորշախայտս եւ սպիտակս եւ խայտախարիս. այլ մշտնջենաւոր յաւէտ յարածգական տեւողութեամբ կանգնեալ աւազան իմանալի եւ հոգեւորական աւթոց փրկութեան եւ կնիք ամրութեան, անմահ ելով կենդանագրութեան բանին արտասանեալ ճշմարտութեամբ յոյժ գեղեցկապէս եւ հրաշափառագոյն. յաւէժառատ եւ վտակահոս աստուածային աղբերն ի քեզ ցայտեալ ահաւոր սրսկմամբն, բեւեկ-

նակայծակ հրատալից արիւնն եւ ջուրն ի բերանացելոյ երակէն հոսեալ, արտամերժելոցն եւ մերկացելոցն ի փայտէն դատապարտութեան, լուսաւոր եւ անապական ծածկութից, եւ համայն ամենեւին թափանցանց ի միասին եղեր կնիք եւ գործարան եւ վերստին ծնունդ բանաւոր ոչխարաց:

23 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, աստուածաներկ դրոշմն, զէն եւ կնիք հրատեսակ պարծեցելոցն ի քեզ սրամխեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ, որ փոխանակ գառնագէն արիւնաշաղախ արեամբ դրոշմեալս զսեամս որդւոցն Իսրայելի, միանգամայն առ հասարակ եղեն զերծեալք ի բարկութենէն աստուածային սրոյն:

24 Իսկ դու, ո՛վ ահաւոր եւ վսամարփի աստուածային նշանի զաւրութիւն անպարտելի, պատկեր եւ կնիք ի դէմս ամենից հաստատեալ, յորում զահաւոր զհուրն եւ զլոյսն ի քեզ ներպարունակեալ անանջատելի ներգործութեամբ Որդւոյն Աստուծոյ, ճշմարիտ կեանք եւ հրախառն դրոշմ հրասրեալ աստուածամուխ արեամբ Որդւոյն Աստուծոյ, միանգամայն իսկ եւ հրագունից հրածնունդ սեռական էիցն, եւ ստորնայնոցս էակացս եղեր պատասպարան եւ պաշտպան:

25 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ եւ հրաշատեսիլ գաւազան, արեւափառ նշոյլք, լուսածին եւ արփի ճառագայթ, ամենագան եւ պէսպէս գունակ գունակ զարմանագանեալ, որ փոխանակ գաւազանին որ ի ձեռն մարգարէին՝ որում զհպարտացեալ ամբարտաւանութիւն եգիպտական սատակմանն տանջեալ պէսպէս եւ ազգի ազգի հարուածովք. այսքան երկոտասան սքանչելաւք հրատարակեալ յոյժ հարկաւորապէս բռնադատութեամբ ցնորականաւք վրիպեալք, խաղմական վրդովիւն տոչկեալ չարչարեցեր ջնջելով զիշատակ նոցա մինչեւ ի սպառ. համանգամայն իսկ եւ զանմարմին Փարաւոնն, որ

խրոխտացեալ բարձրավզութեամբ, ինքնահաճոյ հպարտութեամբն ոքողեալ ի խոշս եւ ի գոգս քանակաւոր սահմանաց:

26 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ եւ ամպատեսիլ սիւն կայծակնաբորբոք ճառագայթիւքն պայծառացեալ ի յերկրի. ճանապարհընթաց եւ առաջնորդ ուղղութեան բանականին աստուածատեսակ ընտրողութեան Իսրայելի՝ յաւետապարգեւ երկիրն աւետեաց, ընդ քեզ միացեալ յարակայ ի կեանս բնաւորական լոյսն. քեզ հետեւեցելոյ՝ առաջնորդես յաստուածակերտ խորանս անչափելոյ Երրորդութեանն. ուստի եւ ի վաղնջուց հետէ տեսեալ զքեզ մարգարէին, ոչ միայն սիւն այլ եւ սեղան եւ տաճար եւ լեռն ըստ որումն մարգարէի:

27 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ եւ աստուածաբուխ աղբեր, քեւ բացելոյ երկավտակ բղխմամբ ի կողէն կենդանութեան բեւեռեցելոյն ի վերայ քո անմահ Բանին Աստուծոյ, որ ի նիւթական եւ յանմաքուր հոսանուտ դառնաբեր կենացս՝ ցամաքեալ յաստուածային հոսմանէ ուղիցն վայրաբերականութեամբ, սողոսկեալք վիժածական ծորմամբն եւ տաժանեալք եղբերական սգովն ի ձեռն փայտին դառնութեան, յոյժ տենչալի զարմագանութեամբ եւ գերարփի ծագմամբ գերարկեալ զճաշակումն ջրոյն դառնութեան՝ քաղցրութիւն երեւեցար ի Մեռա, ազդմամբ գրոյն տրամիտ եւ ախորժ եւ արբուն գործեցեր:

28 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ աստուածագարդեալ կերպարան եւ տուող աւրինազիր հաւատոյ, կենդանութեան հոգւոյն աստուածախաւսից նկարագիր եւ անբարբառ բարեխաւս պարծելոցս ի քեզ. զի թէպէտ եւ հիւթանիւթ հողոյ ընծիւղեալ ածանցականութեամբ արտաբերեալ, եւ համանունաբար անուանեալ փայտ պիտակապէս ըստ միոյ եղանակի, այլ սակայն զանագանեալ ի միւս կողմանէ՝ ըստ

քառից յեղանակս տրամադրութեամբ ի վեր քան զմիտս եւ զհասումն՝ մակադրեալ ընդ քեզ շարամերձութեամբն, այն՝ որ խաւսէրն ի Սինայինն եւ աւրինադրէր գաւրէնսն հրատաբորբոք եւ միգավառ մառախղամուտ խաւարաւն, եռանդնակայծակ հրալից արիւնուտ ահաւոր հուրն իջեալ ի վերայ քո, յոյժ բիւրապատիկ տեւողական արգահատութեամբ՝ պահեցար անկէզ. ուստի եւ նոյնագոյակ հուրն այն՝ որ անչփոթելի բնութեամբն բորբոքեալ խաւսէր ի մէջ բուսածին թփատեսակ եւ փշադաժան մորենւոյն ապացուցութեամբն<sup>1</sup> խորհրդովն վայրիջեալ յանպարագրական ծոցոյ Հաւր, անպարագրելի բնութիւնն իջեվանեալ, ներտաղաւարեցաւ ի համբարանի կուսին, անկեղակարծ եւ անթառամ պահելով զերկաքանչիւրոցն զբնութիւնս. հարկաւորապէս եւ կամաւորաբար ըստ արժանի փառաւորութեանդ՝ խոնարհեալ երկիր պագանէր քեզ ամենասուրբ կոյսն եւ մայր ծնելոյ փրկչին մերոյ զքէն կախեցելոյ անմահ Բանին Աստուծոյ:

29 Ո՛վ սքանչելի փայտ սուրբ, աստուածագարդեալ անձեռագործ տախտակ եւ կենդանագիր ընդ համագոյ Երրորդութեանն, յորում նկարագրեալ ի քեզ ճշմարտութիւնն, եւ զմեծի լուսոյն զխորհուրդն առդրելով որպէս յիմանալի քառանալի քառանկիւն եւ վիմարդեան տախտակս տպաւորեալ ի ձեռն չքնաղատես առնն Աստուծոյ, ոչ տասնբանեայ մատամբ տառ ձեւացեալ, այլ մշտնջենաւոր եւ յաւէժաբար տեւողութեամբ զնոյն ինքն զԱստուած Բանն անպարագիր գծաւորութեամբն հեղուսեալ իբր ի տախտակի՝ անջինջ գրով ամենայն ատենաբանեալ շնորհեցեր:

30 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, աստուածագարդեալ իմանալի պատկեր ար-

1 Յօրինակին՝ ապացութեամբն

քայական քառաթեւ սուրբ նշան, կենդանատեսակ գաւրութիւն, որ իբրու բուսանելով յերկրի՝ բարձրացեալ ծայր արձակեցեր ընդ քառատեսակ ձեւացեալ անկիւնս երկրի, առբերելով ի քեզ գերկնաւոր անմահ թագաւորն. անկասկած յապականողէ աւձէն, յորժամ խածանէր զգումարտական ժողովն գումարումն բանակին հակաճառեալ ներհակութեամբն ընդդէմ հարկանող աւձիցն, լուծանելով զխայթոց մահաբեր աւձին, այս ինքն զանմարմին թշնամւոյն: 31 Զի թէ առ հնովն եւ աւրինական յոյժ հարկանէր զխուժախումբ եւ բաժամիտ ժողովն, բժշկեալ լինէին ի սահեցող զոյացեալ անշունչ նմանութիւն. ո՞րչափ եւս առաւել հրակայծակս արիւնախառն սխրալի ահաւորն հուր ի քեզ մերձեցեալ՝ հաղորդելով եւ մկրտելով ի մահ, մարմնով մեռուցչին՝ մահու, բժշկելով կենդանական անմահութեամբն ի սեւաթոյր եւ ի խաւարաբորբոք անիծեալ աւձին դառնութենէն՝<sup>2</sup> զի քեզ հայեցողս հաւատացեալսս:

32 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ աստուածագարդեալ, իմանալի թագ արքայական, քառաթեւ սուրբ նշան եւ անբարբառ բարեխաւս զքէն կախեցելոյ անմահ Բանին Աստուծոյ. որ զկենդանի աստուածավայելուչ իրագործութիւնն՝ աստուատ աստուածաստեղծ մարդոյն քողասուղեալ խորամանկութեամբ մախանաւք բանարկուին՝ առժամայն աղաւաղեալք ի կենդանատեսակ լուսոյն, եւ անկեալք ընդ մեղաւք մահու, առաւել բիւրապատիկ արգահատութեամբ տնաւրինեալ աստուածութեամբն զքեզ ինքեան բարձեալ ամենեցուն թագաւորն Յիսուս՝ փոխանակ Յեսուայ, այս ինքն զգայիսոնական զթագաւորեալ զմեղսն բաղխեալ ցասմամբ բարկութեան, մինչեւ ի կատար ընթացից արեգականն, նշան յաղթութեան պարտեցելոյ

թշնամւոյն ի վերայ կանգնէ. որպէս եւ աւրինադիր բանն ազդէ կոչեցեալ, երկճիղ կախէ զփայտէ:

33 Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, իմանալի թագ արքունական, նախաճայնեալ զքեզ հոգիաներկ երգողին, յորում բարձեալ զահաւոր եւ զպայծառ զքեզազարդեալ զգլուխն զՔրիստոս, պէսպէս զարմագանութեամբ փայլեալ ի սահմանս կատարելութեան ծայրի քո՝ մեծապէս բերկրանաւք տարփողական տենչմամբն փափաքեցելոյն՝ ակումբահոյլ դասախումբ ժողովոյն ի քեզ հաւատացելոց՝ եւ միանգամայն երկնի եւ երկրի զփրկութիւն առթեալ տրամադրեցեր. վասն որոյ եւ ազդմամբ Հոգւոյն զքեզ մարգարէն՝ ոչ միայն թագ, այլ եւ պսակ փառաց յարահիւսեալ ի գլուխ քո յաւէժ մշտնջենաւորութեամբ, ընդ քեզ միացեալ յարակայ ի կեանս սակս պսակելոյ զսուրբսն Աստուծոյ: 34 Ըստ նմին բաղդատութեան քատակի եւ Իմաստունն արտաբերեալ զքեզ ետ ընդ ետ՝ առանակայ ունակութեամբ արտասանեալ առադրէր դստերացն Երուսաղեմի ելանել եւ տեսանել պսակեալ ի մաւրէն ի գլուխ արքային Սողոմոնի, յաւուր ուրախութեան փեսայացեալ անմահ Բանին Աստուծոյ: 35 Եւ արդ թէպէտ եւ հիահրաշափառագոյն եւ յոքնուստ տպաւորեալ ի քեզ աստանաւր խորհուրդ ներմարդութեան եղակի բնութեան Բանին Աստուծոյ, ո՞վ աստուածային նշանի ահաւոր զաւրութիւն, սակայն զթիւ վաթսնիդ զլիւսաւոր մեծ խորհուրդ իմանալի եւ բարձրագոյն ըստ երկրտասան ցեղիցն Իսրայելի բաժանմանցն, իբրեւ ընդ կենդանւոյ ընդ քեզ խաւսեցայ:

36 Ո՛վ քառատեսակ սուրբ նշան, կենդանի փայտ եւ ճայն բանաւոր, սրեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ. վասն զի քեւ ծանեաք զճշմարիտ արքայն Սողոմոն հանդերձ վաթսուն զաւրաւք պահպանութեամբ էիցն՝ ըստ թուոյ հինգ զգայու-

1 Յօրինակիւն՝ մեռուցիչն

2 Յօրինակիւն՝ դառնութեան

թեանցս, որով պիտակացեալ արտաքսեսցուք տարապականութեամբ գործովք փայտին իմացութեան բարւոյ եւ չարի: 37 Քեւ լուծեալ բարձաւ քրտնաբեր անիծադրութիւնն Ադամայ, որ ի ձեռն Հինգ շարադրեալ<sup>1</sup> ազդեցութեան, եւ մուտ<sup>2</sup> հարուածոցն մախանաւք: 38 Քեւ խայտառակեցաւ աւձ աւազակն, եւ բացաւ դրախտ՝ մարդ աւազակին: 39 Քեւ բացաւ սրովբէպիակ աղխեալ դուռն դրախտին կենաց: 40 Քեւ կապեցաւ կարծեցեալ իշխանն պետութեանց խաւարի: 41 Քեւ հորդեալ դիւրեցաւ եւթնաձորոյ ճանապարհն ըստ Նայեայ: 42 Քեւ ազատեցան վտարանդեալ ոգիքն ի դառն մահուանէ: 43 Քեւ նորոգեցաւ ճանապարհ ծառոյն կենաց. եւ եմ մամապարի եւ մշմարտութիւն եւ կեանք: 44 Քեւ թուրեցեալ ընթանան համարձակապէս ազեալ հոգիքն զՔրիստոս: 45 Քեւ բացաւ դուռն յարութեան ննջելոց սրբոց: 46 Քեւ ցնծայր հրեշտակապետն աւետարանելով կանանցն խաչեցելոյն զյարութիւն: 47 Քեւ ուրախացան դասք առաքելոցն՝ քարոզելով աշխարհի զփրկութիւն: 48 Քեւ նորոգեալ եղեւ երկին նոր եւ երկիր նորոգայարդար, եւ ամենայն որ ի նոսա երեւելի եւ աներեւոյթ արարածք: 49 Քեւ լուսաւորեալ պայծառանայ կաթողիկէ սուրբ եկեղեցի:

50 Քեւ զուարճացեալ խրախուսելով պարծի Սիոն վերինն Երուսաղէմ: 51 Քեւ բերկրեալ խնդայ ամուլն որդւովք հանդերձ՝ ծննդեամբ սուրբ աւազանին: 52 Քեւ լուսաւորեալ ուրախանան ժողովուրդք հաւատացելոց ի Քրիստոս: 53 Քեւ դաստիարակին աստուածագգեաց տղայերամ մանկունք սուրբ եկեղեցոյ: 54 Քեւ զգաստանան երիտասարդք եւ կուսանք՝ հանդերձ բազմահոյլ ծերովք:

55 Քեւ պարծին կուսանք խստամբերողաց, բնակեալք ի լերինս յայրս եւ ի քարածերպս վիմաց: 56 Քեւ դրոշմեալ աստուածակերպ միութեամբ՝ կնքին ելից եւ մտից մերոց զգայարանք: 57 Քեւ աւրհանին բազմատեսակ նմանութեամբ խորանաչէն յարկք սուրբ եկեղեցոյ: 58 Քեւ բաշխի փրկական մարմին եւ արիւնն ի վերայ քո պատարագեալ: 59 Քեւ արժանացեալք կոչին յաւժումն քահանայութեան՝ անարատ եւ անբիծ նմանութեան քահանայապետին Քրիստոսի: 60 Քեւ պսակեալ հրճուին փեսայացեալ հարսունք ի սուրբ եկեղեցոյ: 61 Քեւ կերակրեալ առատութեամբ լիապէս բուծանես զամենակարաւտ սովամեղ քաղցելոց անձինս:

62 Քեւ լինին բժշկութիւնք տարժանամեղ հիւանդութեան վհատեալ հոգւոց եւ մարմնոց: 63 Քեւ հրաժարին ննջեցեալք յաշխարհէ մեծապարծ ուրախութեամբ յաստուածակերտ խորանսն, առհաւատչեայ երանութեանցն անմահական կենաց հանգստեանն ի Քրիստոս: 64 Քեւ կնքին զերեզմանք մեռելոց՝ հաղորդընծայ սաղմոսանուագ եւ հրեշտակախառն փառաբանական ձայնիւ մատուցանեն զերգս մխիթարիչ Սուրբ Հոգւոյն բարեխաւսութեամբ անմռունչ հեծութեամբ ի Քրիստոս: 65 Քեւ փայլէ միւսանգամ գալուստ Որդւոյն Աստուծոյ, անճառելի ծննդեամբն արեւելանչան ճառագայթիւք աստուածատեսակ մարմնովն: 66 Քեւ բանան զերեզմանք մեռելոց եւ յառնեն ի մահահանգիստ քնոյ: 67 Քեւ տանջեալ ի միասին առհասարակ դատին ազգք Հրէիցն անհաւատից: 68 Քեւ ցնծան դասք աջակողմանն պարծելոց ի քեզ՝ թուրեցեալ ամպովք ընդ առաջ Տեառն երկնաթոխի հաւատով ի լուսազարդ տէրունակայանս յերկնաւոր բնակութիւնսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

69 Այս քեզ իմոյ արտադրութեան բանից պտուղ, ո՛վ աստուածային սուրբ

1 Յօրինակին՝ շարժադրեալ

2 Յօրինակին՝ մօտ

\*\*\* Յ՝ՎՃ. Ժ՛Կ. 6



նշան, եւ աստուածակերտ իմանալի անբան կենդանի, եւ ձայն բանաւոր: <sup>70</sup> Ոչ ոստ ձիթենեոյ ոլոմպիականս ծաղկեալս մատուցանեմ առաջի քո, կամ բոլորեալ պսակս ի հնդկային քարանց պէսպէս զարմազանութեամբ գունեալ. այլ բանս մշտնջենաւոր եւ յաւէժաբար ընդ քեզ բաղդատեալ աստուածատիպ ունակութեամբն, ըստ ձայնի հոգենուագ աստուածահաւրն Դաւթի, որ բաղկացեալ գերագանցութեամբ սխրանալով ունէր զքաղցրութիւն ի քիմս, այսինքն գաստուածային բանն, առաւել քան զմեղր բերանոյ. եւ կամ թէ ըստ այլում հոգէկրի ումմն զհրամայեալսն ի Տեառնէ ծասկեալ մանր զմատեանն, եւ վերաբերել ճշմարտութեամբ զկենդանի զբանն, որ այնքան ընդ քաղցրութիւն գրոյն հիացմամբ զարմացեալ պատմէր. ուստի եւ զնոյն աստուածատեսակ բանին ճշմարտութեան զիմաստս զոր ունէի դուն ինչ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ ընծայեցի քեզ, սուրբ նշան, ի սկտեղս խանթից գտառագծական արտադրութիւնսն՝ իբր ի քառեակ տրապիզիս զՔրիստոսի փրկութեանն ապաստովթ խորհուրդ:

<sup>71</sup> Քանզի շուրջ եկեալ ի խորհուրդս անդաստանի մտաց իմոց, իբր ի սքանչելատես աստուածատունկ դարաստանաց, քաղեցի ըստ իւրաքանչիւր մարգարէական ոստոց զերեւեալ պտուղն կենդանութեան ի քեզ առբերելով. մանաւանդ սակս ահեղակերպ եւ սոսկալի աւուրն երեւելոյ, յորժամ փայլես երկնախումբ զաւրաւք եւ լուսաւոր եւ անճառելի լուսով զի քեզ հաւատացեալս՝ յանքանակ եւ յանչափ ուրախութիւնսն աստուածակայ կենաց լուսոյ ճառագայթիցն ի վերնաքաղաքամայրն Երուսաղեմի, միշտ անդադար գեղապարտութեամբ ընդ անմարմին հոյսն՝ լուսաճեմ կայճառացն խրախուսելով հանգիտաբար եւ յաւէժական հնչմամբ պարակցեալ, հրեշտակախառն աւրհնութեամբ ի պսակահամբար<sup>1</sup> կիտին բոլորեալ պսակաւք՝ զեռաթուեան եւ զեզակի լոյսն աչալուրջ երեսաւք համարձակապէս տեսանելով, հրաշ առ հրաշ ջահավառեալ յերկնալոյս ուրախութիւնսն, որ է համաբնակ եւ անանց տէրութիւն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1 Յօրինակին՝ սպակահաւրար

**ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԹԵՈՂՈՐՈՍԻ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ ԳՈՎԵՍՏ Ի ՍՈՒՐԲ  
ՎԱՏՈՒԱԾԱԾԻՆՆ ԵՒ Ի ՄԻՇՏ ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ**

1 *Զբանաւոր եւ գներանձնեան<sup>1</sup> տա-  
ճար սքանչելագործութեան<sup>2</sup> ամենաբարե-  
ձեւ կարգաւորութեամբ եւ<sup>3</sup> վայելչակազ-  
մութեամբ զարդարեալ<sup>4</sup> երկնից բնակողին,  
<sup>5</sup>զմաքոր եւ զպարկեշտասէր առագաստ  
հարսնութեան փեսայացեալ Բանին Հաւր,  
զՄարիամ Կոյս Աստուածածին համաբոլո-  
րապսակեալ հաւատով սրբոյ Երրորդու-  
թեանն, ընդհանրական<sup>6</sup> առաքելաչէն<sup>7</sup> ե-  
կեղեցիք Քրիստոսի, փառատրողական եր-  
գաբանութեամբ հոգեգուարձ<sup>8</sup> նուագարա-  
նաւք<sup>9</sup> վերագոչեսցո՛ւք<sup>10</sup> ի սերկեան ա-  
ւուրս դասախմբութեամբ<sup>11</sup>. վասն զի յայսմ  
աւուր ընկալան<sup>12</sup> մեծարգոյ աւետիքն<sup>13</sup>  
բոլորաբնակ տիեզերք: 2 Քանզի<sup>14</sup> Հաւր  
հաւասար Բանն Աստուած՝ Հաւր համագո-  
յակից գոլով<sup>15</sup> եւ յինքեան զՀոգին կե-  
նաց<sup>16</sup>, ծնաւ այսաւր<sup>17</sup> ի Բէթղէէմ<sup>18</sup>, արքա-  
յաչէն<sup>19</sup> քաղաք Դաւթի: 3 <sup>20</sup>Վասն զի ի<sup>21</sup>*

*Բէթղէէմ<sup>22</sup> թարգմանեալ կոչի ըստ եբրա-  
յեցւոցն՝<sup>23</sup> երգումն իւր: 4 Յաղագս որոյ  
յանձն իւր երգուաւ անսուտն յէութեան՝  
նախագուշակ մարգարէութեամբն<sup>24</sup>, եւ  
հաստատեալ կատարեաց զբանս ծառայից  
իւրոց, եւ զխորհուրդս պատգամաբեր<sup>25</sup>  
հրեշտակաց<sup>26</sup> արդարացոյց:*

5 *Այսաւր աւետարուր եւ ուրախաբեր  
ձայն<sup>27</sup> հրեշտակապետին առ Կոյսն Մա-  
րիամ կարապետող<sup>28</sup> վանգիւք տարահն-  
չող<sup>29</sup> ձայնեալ ընդ բոլոր համատիեզերս<sup>30</sup>  
ամենայն, թէ<sup>31</sup> Ծնաւ ձեզ<sup>32</sup> այսաւր<sup>33</sup>  
փրկիչ, որ է ամեալ Տէր ի քաղաքի Դաւ-  
թի”:*

6 *Այսաւր մեծ խնդութիւն ամենայն  
տիեզերաց. քանզի<sup>34</sup> բացաւ դուռն արեւե-  
լեան<sup>35</sup> աստղանշան ճանապարհաւն<sup>36</sup>  
մոգս հանելով<sup>37</sup> ընծայաբերս<sup>38</sup>, երկնաւոր  
հրեշտակաց արքային մատուցանելով ոս-  
կի արքայական<sup>39</sup> ինքնահողաբուսակ<sup>40</sup> ա-*

1 Ե գներանձնական  
2 Ե սքանչելագործողին փյս սքանչելագործութեան  
3 Ե չի՛ք եւ  
4 Ե վայելչակազմագարդեալ փյս վայելչակազմու-  
թեամբ գարդարեալ  
5 Ե եւ պարկեշտասէր մաքուր եւ անարատ  
6 Ե ունի՛ ընդհանրական եւ  
7 Ե ունի՛ առաքելաչէն սուրբ  
8 Ե եւ հոգեգուար(ա)ն  
9 Ե երգարանօք  
10 Ե վերագոյնվելսյցուք  
11 Ե վերադասախմբութեամբ  
12 Ե առընկալան  
13 Ե ունի՛ անտիքի խնդութեան  
14 Ե չի՛ք Հօր հաւասար Բանն Աստուած. ունի՛  
համագոր Աստուծոյ  
15 Ե ունելով փյս գոլով  
16 Ե կենդանարար  
17 Ե չի՛ք այսօր  
18 Ե ունի՛ ի Բեթղահէմ Հրէաստանի  
19 Ե յարբայաչէն  
20 Ե վասնզի Բեթղահէմաւ բացաւ մեզ դուռն  
եղեմական դրախտին

21 Ե չի՛ք ի  
22 Ե Բեթղահէմ  
23 Ե եբրայականին  
24 Ե մարգարէին  
25 Ե պատգամաբերս  
26 Ե հրեշտակացն  
27 Ե նաշակող ձայն  
28 Ե կարապետող  
29 Ե տարհնչեաց  
30 Ե համաբոլորախովիտ տիեզերս փյս բոլոր հա-  
մատիեզերս  
31 Ե վասն զի փյս թէ  
32 Ե մեզ փյս ձեզ  
33 Ե չի՛ք այսօր  
\* Ղ.՝-Կ. Բ 11  
34 Ե վասնզի  
35 Ե արեւելից  
36 Ե նանապարհաւ  
37 Ե հանեալ մոգս  
38 Ե ընծաբեր ի պատիւ  
39 Ե ստիեղծական փյս արբայական  
40 Ե ինքնահողաբուսակ

ըուեստահնարագործութեամբ մաքրագտեալ եւ գունագարգեալ ի շողիւնս<sup>1</sup> հրալուսաճաճանչադեղնութեանն<sup>2</sup>. կնգրուկ<sup>3</sup> երեւելի անուշահոտութեամբ<sup>4</sup>. եւ զմուռս պիտանիս եւ խորհրդայեղց<sup>5</sup>: 7 Ոսկի՝ որպէս ինքնակալ եւ յաղթող<sup>6</sup> թագաւորի, կնգրուկ՝ որպէս Աստուծոյ երկնաւորի եւ մարդասէր բարեկամողի<sup>7</sup>. իսկ զմուռ՝<sup>8</sup> որպէս ինքնայաւժար<sup>9</sup> վասն մեր մեռելոյ եւ յերկրի<sup>10</sup> թաղելոյ, որ նշանակէ<sup>11</sup> 12 իսկ զմեր խաչելութիւնն, եւ յերկրաբերձ<sup>13</sup> քաղաքականութեանցս<sup>14</sup> մեռանել<sup>15</sup>, ըստ Պաղոսի<sup>16</sup> առաքելախաւս վարդապետութեանն, թէ Սպանեմ գանդամսն ձեր գերկրաւորս՝. եւ եթէ<sup>17</sup> Մեռարուք դուք<sup>18</sup>, եւ կեանքն ձեր ծածկեալ եմ ընդ Քրիստոսի յԱստուած<sup>19</sup>։

8 Քանզի յարեւելից ուղեւորեալ<sup>20</sup> մոգուցն աստղանշան ուղեւորութեամբ<sup>21</sup>, որ<sup>22</sup> զմիւսանգամ յանկարծահաս<sup>23</sup> փայ-

լակնացայտ յարեւելից զփառապարգեւ<sup>24</sup> գալուստն<sup>25</sup> Քրիստոսի նշանակէ<sup>26</sup>, որ հատուցանէ սիրողաց իւրոց պարգեւս<sup>27</sup> բարեաց: 9 Եւ զարձեալ որպէս ծնաւ<sup>28</sup> ի Բէթղէմ<sup>29</sup> յառաջին<sup>30</sup> գալստեանն<sup>31</sup>, եւ արար խաղաղութիւն<sup>32</sup> ի մէջ երկրի ըստ Դաւթայ<sup>33</sup>, 34 սոյնաւրինակ եւ յերկրորդ վայրս եկեսցէ ըստ զգաստ ըստ տեսական վարուց, եւ հայրենական փառաւք եւ իշխանութեամբ դատէ<sup>35</sup> զտիեզերս<sup>36</sup> ամենայն<sup>37</sup>: 10 Դարձեալ հրեշտակական<sup>38</sup> աւետարանութեամբ<sup>39</sup> եւ<sup>40</sup> գովասանութեամբ<sup>41</sup> համաձայնակից<sup>42</sup> գոլով իմ<sup>43</sup>, հետեւիմ<sup>44</sup> յաւետախաղաց հրճուասիրութեամբ եւ ի նոյն յորդորումն<sup>45</sup> հոմանմանեալս<sup>46</sup> յարածիգն<sup>47</sup> վերագունիցն<sup>48</sup> հանճարեղացն<sup>49</sup> արտասանութեամբ<sup>50</sup> ներբողածանալթն<sup>51</sup> հանդիսիւք: 11 Վասն զի այսաւր աւարտագործեալ<sup>52</sup> կատարաշինեցաւ<sup>1</sup> լըումն

1 Ե շողիւնսս  
 2 Ե հրալուսանանանչ դեղնատեսութեան  
 3 Ե այլ եւ կնգրուկ  
 4 Ե անուշահոտ բուրմամբ  
 5 Ե խորհրդայեղցս  
 6 Ե յաղթող  
 7 Ե բարեխնամողի փ/ս բարեկամողի  
 8 Ե գմուռս  
 9 Ե ինքնակամայոժար  
 10 Ե յերկիր  
 11 Ե ունի՝ նշանակեալ ցուցանէ գմարտիրոսաւորչար  
 12 Ե չի՞ իսկ զմեր խաչելութիւնն, եւ  
 13 Ե երկրաբնակ փ/ս յերկրաբերձ  
 14 Ե ունի՝ քաղաքավարութիւն սրբոցն  
 15 Ե ունի՝ մեռանել կեանքանույն  
 16 Ե Պաղոսի  
 17 Ե Եթէ  
 18 Ե չի՞ դուք  
 19 Ե առ Աստուած  
 20 Ե Կ. Կ. Գ. 5  
 21 Ե թէ  
 22 Ե չի՞ դուք  
 23 Ե առ Աստուած  
 24 Ե ունի՝ ուղեւորեալ ընծայաբեր  
 25 Ե ուղապետութեամբն փ/ս ուղեւորութեամբ  
 26 Ե չի՞ որ  
 27 Ե ունի՝ յանկարծա(կա)հաս եւ

24 Ե փառապարգեւ  
 25 Ե գալուստն  
 26 Ե նշանակէր  
 27 Ե զպարգեւս  
 28 Ե ծնաւ  
 29 Ե Բեթղեմ  
 30 Ե յառաջնում  
 31 Ե գալստեան  
 32 Ե զփրկութիւն փ/ս խաղաղութիւն  
 33 Ե ունի՝ Դաւթի երգողութեամբ  
 34 Ե չի՞ սոյնաւրինակ ... իշխանութեամբ  
 35 Ե ունի՝ դատել գոլոր  
 36 Ե տիեզերս  
 37 Ե չի՞ ամենայն  
 38 Ե հրեշտակապետին  
 39 Ե աւետարանի փ/ս աւետարանութեամբ  
 40 Ե չի՞ եւ  
 41 Ե առասացութեամբ փ/ս գովասանութեամբ  
 42 Ե համաձայնից  
 43 Ե չի՞ իմ  
 44 Ե հետեւիմ  
 45 Ե յորդորումնս  
 46 Ե համակել փ/ս հոմանմանեալս  
 47 Ե յարածիգս  
 48 Ե վեհագունից  
 49 Ե հանճարեղաց  
 50 Ե յարասանելով փ/ս արտասանութեամբ  
 51 Ե ներբողածաւալ փ/ս ներբողածանութեան  
 52 Ե աւարտաշինեալ

եկեղեցւոյ՝<sup>2</sup> բազմայեղանակ նախագուշակ մարգարէիցն քարոզութեամբ<sup>3</sup>:

12 Այսաւր ցնծան բերկրական կցրդիւք, եւ գեղազանակ պարախնդութեամբ<sup>4</sup> երկնայինք եւ երկրայինք. այս ինքն դասք հրեշտակաց եւ կաճառք մարդկան, եւ<sup>5</sup> առ միմեանս արտաբերելով<sup>6</sup> գալստեամբ<sup>7</sup> որդւոյն Աստուծոյ: 13 Այսաւր եհաս մեզ ժամանակ ուրախութեան<sup>8</sup>. եւ խումբք սրբոցն<sup>9</sup> անաղատ ջահագործութեամբք<sup>10</sup> գունակս գունակս<sup>11</sup> պայծառացուցանեն զպատիւ մեծի աւուրս վայելչութեան՝ գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 14 Այսաւր վերահայեաց տեսակ<sup>12</sup> զուարթածաղիկ<sup>13</sup> երփնազանագեղ<sup>14</sup> գարունն<sup>15</sup>, սաղարթաճեմափթիթ բուսով<sup>16</sup> վայելչացեալք<sup>17</sup> գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 15 Այսաւր ընկալաք<sup>18</sup> զցաւդ աստուածգիտութեան յանկինս շտեմարանաց<sup>19</sup> սրտից, զի<sup>20</sup> քաղցրութիւն<sup>21</sup> տատրակաց<sup>22</sup> ձայնի<sup>23</sup> լսելի եղեւ յերկրի մերում գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 16 Այսաւր

ամպք աստուածայինք եւ ցաւդք<sup>24</sup> հոգեզուարճք<sup>25</sup> վերաբերեալ<sup>26</sup> բուսովք<sup>27</sup> ստորացաւդեն ի մարդիկ գալստեամբ որդւոյն<sup>28</sup> Աստուծոյ<sup>29</sup>:

17 Այսաւր<sup>30</sup> հոսանք հոգէխաղացք<sup>31</sup> եւ վտակք առատաբուղխք միշտխողովմեան<sup>32</sup> տրամոռզանեն<sup>33</sup> զբուրաստանեալ աւետարանատունկ մանկունս եկեղեցւոյ գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 18 Այսաւր արարածք ամենայն լուսով փայլագունեալք<sup>34</sup> ճառագայթանան գալստեամբ որդւոյն<sup>35</sup>: 19 Այսաւր երկիրս երկինք եղեւ<sup>36</sup>, վասն զի տեսանի Աստուած<sup>37</sup> եկեալ յաշխարհ<sup>38</sup>: 20 Այսաւր հողաստեղծեալ<sup>39</sup> զարմ ադամածնութեանս<sup>40</sup> երկնաքաղաքացի անուանակոչութեամբ<sup>41</sup> զրեցան<sup>42</sup> ի դպրութիւն կենաց<sup>43</sup> գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 21 Այսաւր նորափետուր հրաշիւք գեղեցկագարդեալք<sup>44</sup> ի հնարագործութենէն<sup>45</sup> գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 22 Այսաւր դառնացեալ աղբերք եւ

1 Ե ունի՝ կատարագործեցան ի  
2 Ե եկեղեցեաց  
3 Ե քարոզարանութիւն  
4 Ե գեղազանակարեան տօնախմբութեամբ փխ գեղազանակ պարախնդութեամբ  
5 Ե չի՞ եւ  
6 Ե անտաքերելով փխ արտաքերելով  
7 Ե զգալուստ  
8 Ե մեծ լուսաւոր տօնիս փխ ուրախութեան  
9 Ե սրբոց  
10 Ե ջահագործութեամբ  
11 Ե գունակ գունակ  
12 Ե ունի՝ տեսակ վարսագեղեալք  
13 Ե ունի՝ գուարթերանգժ ծաղկօք եւ  
14 Ե երփնագունագարդ  
15 Ե գարունս  
16 Ե բուսովք  
17 Ե վայելչաւորեալք  
18 Ե առընկալաք  
19 Ե շտեմարանացեալ  
20 Ե եւ փխ զի  
21 Ե քաղցրածայնութիւն փխ քաղցրութիւն  
22 Ե տատրակի  
23 Ե չի՞ ձայնի

24 Ե անձրեւ փխ ցօղք  
25 Ե հոգեզուարմք  
26 Ե վայրաքերեալք  
27 Ե չի՞ բուսովք  
28 Ե չի՞ որդւոյն  
29 Ե ունի՝ Աստուծոյ մերոյ յաշխարհս  
30 Ե ունի՝ Այսօր եւ  
31 Ե հոգեխաղացք  
32 Ե միշտ անուշահամ փխ միշտխողովմեան  
33 Ե ոռոգեն փխ տրամոռզանեն  
34 Ե լուսափայլագունեալ փխ լուսով փայլագունեալք  
35 Ե ունի՝ որդւոյն Աստուծոյ  
36 Ե եղեն  
37 Ե ունի՝ Աստուած մարմնով  
38 Ե յաշխարհս  
39 Ե հողաստեղծ  
40 Ե ադամածին բնութեանս փխ ադամածնութեանս  
41 Ե ունի՝ անուանակոչութեամբ պատուեցաւ ի գիրս  
42 Ե չի՞ գրեցան  
43 Ե կենաց դպրութեան  
44 Ե ունի՝ գեղազարդեցաք, ի նախաժամանեալք յազատութիւն  
45 Ե ունի՝ ի հնագործութենէ մեղացն

լիճք ջրակուտից՝ ի քաղցրութեան ճաշակս տրամադրին գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 23 Այսաւր<sup>1</sup> վտակք<sup>2</sup> յաղբերաց<sup>3</sup> առատաբերին<sup>4</sup> ի խաղս եւ ի մարգագետինս<sup>5</sup> ծաղկոցաց գալստեամբ որդւոյն Աստուծոյ:

24 Այսաւր<sup>6</sup> ծով համատարած<sup>7</sup> տարաբերութեան<sup>8</sup> նուագարանաւք սահմանագոչ<sup>9</sup> վերաճայթեցին<sup>10</sup> խաղաղաշարժ գեղաճեմեալ<sup>11</sup> գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 25 Այսաւր<sup>12</sup> բազմահոլով<sup>13</sup> գետոց յորճանասոյզ<sup>14</sup> պտոյտք անարգել գանգրիւք գեղաձփեալք<sup>15</sup> գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 26 Այսաւր եւ ջրակոյտ<sup>16</sup> առլուղակաց<sup>17</sup> ջրկայ դասակարգութիւն<sup>18</sup> եռաբերկրեցին<sup>19</sup> վերածնութեամբ<sup>20</sup> գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 21

27 Այսաւր եւ վերին աւդք շահեկանաբար<sup>22</sup> սփռեալք<sup>23</sup> տարածին<sup>24</sup> ի պէտս մարդկան գալստեամբ որդւոյն Աստուծոյ:

28 Այսաւր եւ վերագագաթնակատարահերձ<sup>25</sup> կոհակ<sup>26</sup> լերանց վարսագեղեալ պճնագարդեցին<sup>27</sup> գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 28

29 Այսաւր երկնահոլովակառու<sup>29</sup> տարերք երկուց լուսաւորաց<sup>30</sup> ջահ՝ պայծառ<sup>31</sup> դամբարաւք<sup>32</sup> փայլածին<sup>33</sup> գալստեամբ որդւոյն Աստուծոյ: 34

30 Այսաւր ստորափայլեաց<sup>35</sup> արեգակն արդարութեան<sup>36</sup>, որոյ բժշկութիւն<sup>37</sup> ի թեւ է: 31 Այսաւր փարատեցաւ<sup>38</sup> խաւար սատանայական<sup>39</sup> առագաստին<sup>40</sup>, եւ վարայայտնեալ<sup>41</sup> տեսաք զլոյսն ճշմար-

1 Ե ունի՝ Այսօր դառնացեալ  
2 Ե աղբիւրք եւ լինք փխ վտակք  
3 Ե ջրակրտից փխ յաղբերաց. ունի՝ ի քաղցրախառնութեան ճաշակս տրամադրեն, գալստեամբ որդւոյն Աստուծոյ: Այսօր երկրակայլակ աղբիւրակունք բերանացեալք հոսմամբք  
4 Ե չիք ի խաղս եւ  
5 Ե ունի՝ մարգագետինս եւ ի շաւեղս  
6 Ե ունի՝ Այսօր եւ  
7 Ե ունի՝ համատարած մկանաբարձ  
8 Ե տարբերութեամբ փխ տարաբերութեան  
9 Ե սահմանագոչ նրագարանոք  
10 Ե վերանայթեցէ  
11 Ե գեղաճեմեալով  
12 Ե ունի՝ Այսօր եւ  
13 Ե բազմահոլովագնաց  
14 Ե յորճաւոր  
15 Ե գեղաձփեցեն  
16 Ե ջրակայտառ  
17 Ե յօղակացն  
18 Ե ջրկայտասակարգութիւնքն փխ ջրկայ դասակարգութիւն  
19 Ե եռաբերկրեցին  
20 Ե ունի՝ սեռածնութեամբ յալս կայանից  
21 Ե ունի նոր պարբերութիւն՝ Այսօր եւ օղապարիկ թոչնոց գանգանաբոյլ առիթ, եւ սաւառնաթեւարձակ հետախաղաց պարատարմաբերութեամբ բերկրաճոռողագոչ լսանեմեցեն գալստեամբ որդւոյն Աստուծոյ:

22 Ե շայեկանաբար  
23 Ե սփռեալ  
24 Ե տարածանին  
25 Ե վերագագաթնակատարաբերձ  
26 Ե կոհակք  
27 Ե ունի՝ պճնագարդին հովտաբեր ուսովք  
28 Ե ունի նոր պարբերութիւն՝ Այսօր լեռնաստորոտ բոլորածիր վայրք, լայնասփիւռ եւ հարթալատակ դաշտացն, ծաղկաւէտ բուրաստանեալ, ցցուաբերին գեղուղէշ տնկովք գալստեամբ որդւոյն Աստուծոյ:  
29 Ե երկնահոլովակառոյց  
30 Ե լուսաւորացն  
31 Ե ջահապայծառ փխ ջահ պայծառ  
32 Ե դամբարիւք  
33 Ե ունի՝ փայլակնագործին յաշխարհի  
34 Ե ունի նոր պարբերութիւն՝ Այսօր եւ յոճնակայնառախումբ գիշերագարդ պարք ակնանաննչ աստեղաբաշխութեանց մաքրատեսակ վառմամբ փայլածին գալստեամբ որդւոյն Աստուծոյ:  
35 Ե ունի՝ ստորափայլեաց մեք  
36 Ե ունի՝ արդարութեան բո  
37 Ե ունի՝ Է ի թեւ իւր, եւ նովաւ լուսաւորին ամենայն արարածք, գալստեամբ որդւոյն Աստուծոյ:  
38 Ե ունի՝ փարատեցաւ ի մէնչ  
39 Ե սատանայական խաւարն  
40 Ե արագաստեալ  
41 Ե վերածագեալ փխ վարայայտնեալ

տուլթեան, վասն զի<sup>1</sup> Քրիստոս<sup>2</sup> եկն յաշխարհս:

32 <sup>3</sup>Այսաւր անեղն եղանի եւ անտեան տեսանի իւրով մարդեղութեամբն: 33 Այսաւր անվայրափակն եւ անբովանդակն<sup>4</sup> բովանդակի, եւ անժամանակն սկզբնաւորի<sup>5</sup> իւրով մարդասիրութեամբն<sup>6</sup>: 34 Այսաւր գայ կամաւորութեամբ յաշխարհ<sup>7</sup>, <sup>8</sup>որ յաշխարհի է՝ եւ ի սմանէ ոչ երբէք մեկնեցաւ: 35 Այսաւր խոնարհեցուցանէ զլերինս ի ծառայութիւն, եւ հնազանդեալ հային<sup>9</sup> հրամանաց<sup>10</sup> նորա: 36 Այսաւր սնտոի արձանապաշտութիւնն ունայնանայր<sup>11</sup> եւ<sup>12</sup> ի բաց բառնիւր<sup>13</sup>, եւ աստուածպաշտութիւն արգահատեալ<sup>14</sup> յաշխարհ<sup>15</sup> ծագեաց<sup>16</sup> գալստեամբ որդւոյն<sup>17</sup> Աստուծոյ<sup>18</sup>: 37 Այսաւր ի հին տրտմական<sup>19</sup> տիրութեանցն<sup>20</sup> զերծեալք<sup>21</sup>, եւ որպէս նոր իսրայէլ եղաք<sup>22</sup> ապրեալք<sup>23</sup> գալստեամբ<sup>24</sup> որդւոյն<sup>25</sup> Աստուծոյ<sup>26</sup>:

38 Այսաւր յղփացեալ<sup>27</sup> շտեմարանք Հրէիցն<sup>28</sup> աստուածգիտութեան<sup>29</sup> սպառեցան<sup>30</sup>, եւ կարաւտացեալ<sup>31</sup> շտեմարանք հեթանոսաց<sup>32</sup> առաւել<sup>33</sup> զեղմամբ աուլցան շնորհատուր պարգեւաւք Հոգւոյն Սրբոյ: 39 Այսաւր վերաբունեալ<sup>34</sup> ամբարտաւանք յերկիր<sup>35</sup> ստորանկեալ կործանեցան, եւ աղքատացեալ տնանկք աւրհնաբանութեամբ<sup>36</sup> մինչեւ յերկինս բարձրացան: 40 Այսաւր զերծաք ի դառնապարհակ<sup>37</sup> աղիւսագործութենէն<sup>38</sup> Փարաւոլնի<sup>39</sup>, եւ<sup>40</sup> ընկալաք զգիր նամակի ազատութեան գալստեամբն Քրիստոսի յաշխարհս: 41 Այսաւր բացաջնջեցաւ<sup>41</sup> ձեռագիր հակառակամարտին<sup>42</sup> գալստեամբն<sup>43</sup> Քրիստոսի յաշխարհս<sup>44</sup>: 42 Այսաւր ծովաքատակ<sup>45</sup> մեղք աշխարհի արտասահմանահաւած<sup>46</sup> փախչի<sup>47</sup>, եւ Յորդանան<sup>48</sup> ընդ կրունկն դառնայ<sup>49</sup>, եւ<sup>50</sup> ոգիք<sup>1</sup> մարդկան<sup>2</sup>

1 Ե որոյ փխ զի  
2 Ե աստուածորդին փխ Քրիստոս  
3 Ե չիք Այսօր ... մարդեղութեամբն:  
4 Ե անբովանդակելին  
5 Ե ունի՝ սկզբնաւորեալ չափաբերի  
6 Ե ունի՝ մարդասիրական գալարեամբն  
7 Ե յերկիր փխ յաշխարհի  
8 Ե չիք որ ... մեկնեցաւ. ունի՝ եւ ամենեւին լուսաւորէ եւ զմարդիկ երկնայինս առնէ.  
9 Ե կայ պահին փխ հային  
10 Ե հրամանի  
11 Ե ունի՝ ունայնութեամբ արձանապետութիւնն կոոցն  
12 Ե չիք եւ  
13 Ե բառնին  
14 Ե ունի՝ առգահացեալ քարոզի  
15 Ե յաշխարհի  
16 Ե չիք ծագեաց  
17 Ե չիք որդւոյն  
18 Ե ունի՝ Աստուծոյ մերոյ  
19 Ե եւ ի տխրաբեր (տրտմաբեր) փխ տրտմական  
20 Ե տրտմութեանցն փխ տխրութեանցն  
21 Ե ունի՝ զերծեալ միտքարեցալ  
22 Ե չիք եղաք  
23 Ե ապրեցաք  
24 Ե յայտնութեամբ փխ գալստեամբ  
25 Ե չիք որդւոյն

26 Ե ունի՝ Աստուծոյ մերոյ  
27 Ե յղփացելոց  
28 Ե Հրէից շտեմարանք  
29 Ե գիտութեան փխ աստուածգիտութեան  
30 Ե նուազեալ պակասեցան  
31 Ե կարօտացելոց  
32 Ե հեթանոսաց հնձանք փխ շտեմարանք հեթանոսաց  
33 Ե առաւելեալ  
34 Ե բարձրամտեալ խրոխտաւեր փխ վերաբունեալ  
35 Ե ի յերկիր  
36 Ե չիք օրհնաբանութեամբ. ունի՝ խոնարհութեամբ մեծարգոյ իշխանութեամբ  
37 Ե դառն գրաւ պահանջահարկ սակաղի փխ դառնապարհակ  
38 Ե ունի՝ աղիւսարկութենէ բոնակալին  
39 Ե փարաւոնի  
40 Ե չիք եւ  
41 Ե բազմաջնջեցաւ  
42 Ե ունի՝ հակառակամարտին առ ի մէջ  
43 Ե ունի՝ գալստեամբ որդւոյն Աստուծոյ  
44 Ե չիք Քրիստոսի յաշխարհս  
45 Ե ծովայտակ  
46 Ե տարասահմանահաւած  
47 Ե փախչին  
48 Ե Յորդանանի  
49 Ե յեղադառնալով փխ դառնայ  
50 Ե չիք եւ

լուսաւորին<sup>3</sup> եւ Յիսուս<sup>4</sup> մկրտին<sup>5</sup>, զի<sup>6</sup> Աստուած տեսանի եկեալ<sup>7</sup> յաշխարհս<sup>8</sup>:

43 Այսաւր<sup>9</sup> Յովհաննէս որդի<sup>10</sup> պառաւ մաւրն զաքարեան զարմ, դստերն<sup>11</sup> Եղիսաբեթի, մեծ քահանայական շառաւիղ<sup>12</sup> մակաբայեցւոցն<sup>13</sup> զեղմամբ<sup>14</sup>, երկրորդ<sup>15</sup> տոհմ<sup>16</sup> դեւեան<sup>17</sup> գոլով<sup>18</sup> ի Հոսանապտոյտ պարագայ ջուրսն Յորդանանու եւ<sup>19</sup> մկրտէ<sup>20</sup> զՔրիստոս<sup>21</sup>, լինի<sup>22</sup> վկայ<sup>23</sup> համապատիւ<sup>24</sup> Սուրբ<sup>25</sup> Երրորդութեանն, տեսանելով զէջան<sup>26</sup> աղանակերպ Սուրբ Հոգւոյն<sup>27</sup> ի վերայ գլխոյն<sup>28</sup> Քրիստոսի<sup>29</sup>, եւ զհայրական<sup>30</sup> զձայնն, թէ<sup>31</sup> Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուի<sup>32</sup>։ 44 Այսաւր անխո-

նարհն<sup>32</sup> զգլուխն իւրում ծառային խոնարհեցուցանէ, զի զմեզ բարձրացուցէ իւրով զալստեամբն<sup>33;34</sup>

45 Այսաւր անպարագրելին ձեռնադրի<sup>35</sup> յիւրում մարդեղութեանն, զի զմեզ տեսողս<sup>36</sup> արասցէ իւրոյ<sup>37</sup> աստուածութեանն<sup>38</sup>։ 46 Այսաւր յայտնի աշխարհի, եւ ամենեքին<sup>39</sup> լուսով<sup>40</sup> ճառագայթատեսին<sup>41</sup>։ 47 Այսաւր<sup>42</sup> աստուածաշունչ քնարն Յովհաննէս<sup>43</sup> ի գլուխ ահաւոր<sup>44</sup> 45Եւ հրակէզ մերձենայր, լուսնալով<sup>46</sup> մաքրին ջուրքն Յորդանանու<sup>47</sup> յապականութենէն<sup>48</sup> եռացմանցն<sup>49</sup>։ 48 Այսաւր ջուրք ի սրբութիւն<sup>50</sup> աշխարհի վերաբերին<sup>51</sup>, եւ մաքրագտեալ սրբին ամենայն բնութիւնք ջուրց յերեւելի<sup>52</sup> Աստուծոյ մերոյ։

49 Այսաւր ժառանգեցաք զարքայութիւն երկնից<sup>53</sup>, զի<sup>54</sup> արքայութեան<sup>55</sup> նորա

1 Ե հոգւով փխ ոգիք  
2 Ե չիք մարդկան  
3 Ե ունի՝ լուսաւորի՝ ընդ նմին  
4 Ե գՅիսուս  
5 Ե մկրտէ  
6 Ե վասնզի փխ զի  
7 Ե եկեալ տեսանի  
8 Ե յաշխարհ  
9 Ե ունի՝ Այսոր եւ  
10 Ե Զաբարիայ, թոռն պառաւմօրն Եսայի փխ պառաւ մօրն զաբարեան զարմ  
11 Ե եւ անդրանիկն փխ դստերն  
12 Ե շառաւիղն  
13 Ե մակաբայեցուեալ փխ մակաբայեցւոցն  
14 Ե ընծիւղմամբ փխ զեղմամբ  
15 Ե երրորդ  
16 Ե տոհմին  
17 Ե Ղեւեայ  
18 Ե կալով փխ գոլով  
19 Ե չիք եւ  
20 Ե մկրտելով  
21 Ե գՅիսուս փխ զՔրիստոս  
22 Ե լինել  
23 Ե չիք վկայ  
24 Ե համակապսակապատիւ փխ համապատիւ  
25 Ե սրբոյ  
26 Ե գէջս  
27 Ե Հոգւոյն Սրբոյ  
28 Ե գագաթանն փխ գլխոյն  
29 Ե Յիսուսի փխ Քրիստոսի  
30 Ե հայրախնամ փխ զհայրական  
31 Ե եթէ փխ թէ  
32 Ե Երբեք ԺԼ 5. Երբ ԹԹ 6-7

32 Ե ունի՝ անխոնարհելին մեծաւ բարձրութեամբն իւրով  
33 Ե իմաստութեամբն փխ զալստեամբն  
34 Ե ունի նոր պարբերութիւն՝ Այսոր ծառայն դողալով եւ երկիւղիւ կայ առաջի խմբագործողին որ եւ բառնայ զմեզս աշխարհի։  
35 Ե ունի՝ ձեռնադրի ի հողեղինէն  
36 Ե տեսողս  
37 Ե իւրում  
38 Ե ունի՝ աստուածութեան, զալստեամբն իւրով յաշխարհս  
39 Ե ամենեքեան  
40 Ե լուսափայլ փխ լուսով  
41 Ե ճառագայթանն փխ ճառագայթատեսին  
42 Ե ունի՝ Այսոր եւ  
43 Ե ունի՝ Յովհաննէս մերկանալով ի հրակէզ եւ  
44 Ե յահաւոր գլուխն Յիսուսի փխ ի գլուխ ահաւոր  
45 Ե չիք եւ ... մերձենայր  
46 Ե առ ի լուանալ փխ լուանալով  
47 Ե ունի՝ Յորդանանու եւ եղեմախաղաց  
48 Ե ունի՝ ապականութեանցն լուսամբն  
49 Ե չիք եռացմանցն  
50 Ե փրկութիւն փխ սրբութիւն  
51 Ե վերերեւելի փխ վերաբերին  
52 Ե յայտնութեամբ փխ յերեւելի  
53 Ե գերկնից արքայութիւնն  
54 Ե վասնզի փխ զի  
55 Ե թագաւորութեան փխ արքայութեան

վախճան ոչ գոյ<sup>1</sup>: 50 Այսաւր բղխեցին լե-  
րինք<sup>2</sup> զբաղցրութիւն<sup>3</sup>, եւ բլուրք<sup>4</sup> գկաթն  
ի<sup>5</sup> դալարոջ<sup>6</sup>: 51 Դարձեալ բանալով անդ-  
րէն<sup>7</sup> զխանութս<sup>8</sup> ալեաց<sup>9</sup>, վերստին գեղեց-  
կացուցուք<sup>10</sup> զբանայեղց<sup>11</sup> նուագարա-  
նաց<sup>12</sup> գովասանութեանս մերոյ, եւ ի նոյն  
յաղբերէ<sup>13</sup> Հոգեւոր<sup>14</sup> Հանճարոյ ընթաս-  
ցուք<sup>15</sup> ճաշակել<sup>16</sup> զվտակս<sup>17</sup> Հոգեւորս<sup>18</sup>, եւ  
նովաւ անցուցանել զտունկս ներքողե-  
նիս<sup>19</sup> առ Սուրբ եւ<sup>20</sup> Աստուածածին<sup>21</sup>  
կոյսն Մարիամ, եւ շահատակարար<sup>22</sup> ծաղ-  
կեցուցանել զբանիջոյց կորովութեանս<sup>23</sup>  
մերոյ արգասեաց<sup>24</sup>, ձայնակից լինելով<sup>25</sup>  
հրեշտակին<sup>26</sup> ահաւոր<sup>27</sup> առասանու-  
թեանց<sup>28</sup>:

52 Ուրախացի՛ր խնդամտաբար սրտիւ,  
Տիրուհի կոյս եւ Աստուածածին Մարիամ,  
դուստր մարգարէութեան<sup>29</sup> շնորհի<sup>30</sup> եւ

մայր Տեառն, որ Աստուած վայելչու-  
թեան<sup>31</sup> ծնար զարեգակն արդարութեան<sup>32</sup>,  
եւ քեւ տեսաք եւ ծանեաք զճշմարտահոս  
լոյսն<sup>33</sup> Քրիստոս<sup>34</sup>, որ լուսաւորէ զամե-  
նայն մարդ՝ որ<sup>35</sup> գալոց է<sup>36</sup> յաշխարհ:  
53 Ուրախացի՛ր բերկրական<sup>37</sup> սրտիւ<sup>38</sup>,  
աւրհնեալդ ի կանայս, պայծառազարդ ա-  
րեւելք, որ<sup>39</sup> ի<sup>40</sup> քէն<sup>41</sup> փայլածագեաց<sup>42</sup> լու-  
սաւորութիւն աստուածաշունչ<sup>43</sup> երեսացն  
Քրիստոսի, եւ մակազարթոյց զսիրտս<sup>44</sup>  
մեր առ ի քննել զխորս գիտութեան<sup>45</sup> ուղ-  
ղափառ Հաւատոյ: 54 Ուրախացի՛ր  
հրճուողալից<sup>46</sup> սրտիւ, ամէնաւրհնեալ<sup>47</sup>  
ծնող<sup>48</sup> եւ աղախին Տեառն, որ արժանաւո-  
րեցար գոլ ինքնատես եւ սպասաւոր <sup>49</sup>Բա-  
նին Աստուծոյ Հաւր:

55 Ուրախացի՛ր բերկրական<sup>50</sup> ձայ-  
նիւ<sup>51</sup>, կոյս բարեպաշտ<sup>52</sup> եւ անարատ  
ծնունդ նախաստեղծին<sup>53</sup>, եւ ընդհանուր

1 Ե չի՛ք վախճան փխ վախճան ոչ գոյ  
2 Ե լերինք բղխեցեցն փխ բղխեցին լերինք  
3 Ե գարդարութիւն փխ գբաղցրութիւն  
4 Ե ունի՛ բլուրք յորդաբերեցեցն  
5 Ե չի՛ք ի  
6 Ե ունի՛ դալար, գալստեամբ Աստուծոյ մերոյ  
7 Ե անդրէն բանալով  
8 Ե գխանութ  
9 Ե ունի՛ ալեաց գիտութեանս  
10 Ե ունի՛ գեղեցիկեցուք զնուագս  
11 Ե բանականայեղց փխ զբանայեղց  
12 Ե չի՛ք նուագարանաց  
13 Ե աղբիւր  
14 Ե չի՛ք հոգեւոր  
15 Ե ընդասցուք  
16 Ե նաշակելով  
17 Ե վտակս  
18 Ե չի՛ք հոգեւորս  
19 Ե գնեքրողական տունկս փխ գտունկս ներքո-  
ղենիս  
20 Ե չի՛ք եւ  
21 Ե ունի՛ Աստուածածինն եւ միշտ  
22 Ե շահատակարար  
23 Ե բորովաբնութեանս փխ կորովութեանս  
24 Ե արգասեացս  
25 Ե գովով փխ լինելով  
26 Ե հրեշտակապետին փխ հրեշտակին  
27 Ե գեղեցից փխ ահաւոր  
28 Ե առասանութեամբ  
29 Ե մարգարէական

30 Ե շնորհաց  
31 Ե աստուածավայելչարար փխ Աստուած վայել-  
չութեան  
32 Ե գարդարութեան արեգակ(ան)ն  
33 Ե զլոյսն նշմարտահոս  
34 Ե Քրիստոս  
35 Ե չի՛ք որ  
36 Ե գեկեալն փխ գալոց է  
37 Ե ունի՛ բերկրեա սիրական  
38 Ե ունի՛ սրտիւ Մարիամ կոյս  
39 Ե վասնզի փխ որ  
40 Ե չի՛ք ի  
41 Ե քեւ փխ քեւ  
42 Ե ունի՛ փայլատակեաց ի մեզ  
43 Ե աստուածաշունչ  
44 Ե զմիտս փխ զսիրտս  
45 Ե զխորագիտութիւն փխ զխորս գիտութեան  
46 Ե հրեշտակից  
47 Ե ամենաբերկրեալ փխ ամենօրհնեալ  
48 Ե ծնող  
49 Ե Բանին Հօր եւ Աստուծոյ մերոյ փխ Բանին  
Աստուծոյ Հօր  
50 Ե վայելչական բերկրասիրական փխ բերկրա-  
կան  
51 Ե սրտիւ փխ ձայնիւ  
52 Ե պարկեշտասէր փխ բարեպաշտ  
53 Ե նախաստեղծին ծնունդ



ստեղծողին ծնունդ<sup>1</sup>, քանզի<sup>2</sup> ի քեզ հաճեցաւ բնակիլ անպարիմանալին Աստուած: 56 Ուրախացի՛ր մեծ խնդութեամբ, Մարիամ սրբուհի<sup>3</sup>, աւրհնեալդ ի կանայս. բարձրատեսակ եւ պայծառ<sup>4</sup> երկին<sup>5</sup>, աթոռ փառաց բարձրելոյ<sup>6</sup> ճշմարտին<sup>7</sup> Աստուծոյ:<sup>8</sup>

57 Ուրախացի՛ր խնդամտաբար սրտիւ, մայր լուսոյ եւ բերկրանաց. անդաստան ջճաղկաց, ցցունագարդ գեղգեղեալ բազմագունակ երանգաւք եւ յարազուարճ առատացաւդովք<sup>10</sup>, հովիտ շուշանաբեր, եւ մանուշակ անուշահոտ<sup>11</sup> յաւէտ<sup>12</sup> սրբասնեալ վարուք, որ<sup>13</sup> մեզ հրաշագործեցեր<sup>14</sup> զանուշահոտութեան<sup>15</sup> գեղեցկազան Բանին Աստուծոյ զտնտեսութիւն<sup>16</sup>:

58 Ուրախացի՛ր վայելչափառ սրտիւ<sup>17</sup>, անհարսնացեալ Տիրուհի կոյս եւ Աստուածածին, դրախտ փափկասնոյց զանազանափիթիթ բողբոջիւք<sup>18</sup>, զանազան<sup>19</sup> գեղաւորութեամբ, առաքելովք եւ մարգա-

րէիւք եւ<sup>20</sup> վարդապետաւք, եւ ամենայաղթ<sup>21</sup> մարտիրոսաւք<sup>22</sup> եւ<sup>23</sup> ամենայն սրբովք<sup>24</sup>: 59 Ուրախացի՛ր եւ<sup>25</sup> բերկրասիրեա, Մայր լուսոյ եւ բերկրանաց, այգի տաշտաւոր եւ<sup>26</sup> ողկուզաբեր<sup>27</sup>, գինէբուղիս<sup>28</sup> եւ սաղարթաճեմ շարունակեալ<sup>29</sup>, որ ի քէն մակաշառաւեղեաց<sup>30</sup> ընծիւղեալ<sup>31</sup> հայրատունկ որթն ճշմարիտ Քրիստոս, եւ ներբաժանեալ երկուս<sup>32</sup> մանունս<sup>33</sup> զնդակաց<sup>34</sup> հրէակաճառ<sup>35</sup> ատենին շարաւանդան<sup>36</sup>, եւ մսուր<sup>37</sup> սարապետացն<sup>38</sup> յաւարումն բաժանման<sup>39</sup> շարադասեցաւ<sup>40</sup>: 60 Իսկ մեզ<sup>41</sup> դաւանողացս զքեզ, ամենասուրբ<sup>42</sup> Աստուածածին Կոյս անարատուհի եւ արդարակորով, երկրպագողացս որդւոյ քո<sup>43</sup> եւ Աստուծոյ մերոյ չորեքտառեան առատաբուղիս<sup>44</sup> վարդապետութեան ճաշակ<sup>45</sup>

1 Ե ծնող փիս ստեղծողին ծնունդ  
2 Ե վասնզի փիս քանզի  
3 Ե սրբասնեալ փիս սրբուհի  
4 Ե պայծառագարդ փիս պայծառ  
5 Ե երկինք  
6 Ե չիք բարձրելոյ  
7 Ե ունի՛ ճշմարիտ որդւոյն  
8 Ե ունի՛ նոր պարբերութիւն՝ Ուրախացի լուսաւոր դիմօք եւ բերկրեա սիրական սրտի սրբուհի կոյս եւ Աստուածածին լեան տարագործ պարարտաբերութեամբ, ամենակարող զօրութեամբ բարձրելոյն հովանաւորեալ, ի ԲԷՆ ԲԱՄՆ մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ:  
9 Ե ծաղկացցունագարդագեղեալ փիս ծաղկաց, ցցունագարդ գեղգեղեալ  
10 Ե առաւօտին ցօղովն փիս առատացաւդովք  
11 Ե մանիշակաւէտ փիս մանուշակ անուշահոտ  
12 Ե չիք յաւէտ  
13 Ե ունի՛ որ ի  
14 Ե հրաշաքործեցեր փիս հրաշագործեցեր  
15 Ե զանուշահոտութիւն փիս զանուշահոտութեան  
16 Ե տնտեսութեան փիս զտնտեսութիւն  
17 Ե վայելչակամաւորութեամբ փիս վայելչափառ սրտիւ  
18 Ե ունի՛ բողբոջիւք բուրաստանեալ  
19 Ե չիք զանազան

20 Ե չիք եւ  
21 Ե յաղթող  
22 Ե մարտիրոսովք  
23 Ե չիք եւ  
24 Ե արդարոց դասով փիս սրբովք  
25 Ե բերկրեա սիրամայր փիս բերկրասիրեա, Մայր  
26 Ե չիք եւ  
27 Ե ողկուզալից  
28 Ե գինեբուղիս  
29 Ե բարունակեալ փիս շարունակեալ  
30 Ե մակաշառաւեղեալ  
31 Ե ընծիւղեաց  
32 Ե յերկուս  
33 Ե մասունս  
34 Ե բոլորագնդականաց  
35 Ե հրէականականառ  
36 Ե շրուանդան  
37 Ե մսուր փիս մսուր  
38 Ե ունի՛ սարապետացն պատշանեալ առ ի  
39 Ե բաժանմանն  
40 Ե չիք շարադասեցաւ  
41 Ե ունի՛ մեզ ուղղակի  
42 Ե չիք ամենասուրբ  
43 Ե ունի՛ ԲՈՒՄ Քրիստոսի  
44 Ե աւետարանաբուղիս փիս առատաբուղիս  
45 Ե չիք ճաշակ

նուագաւորեալ պաշտեն<sup>1</sup> մինչեւ ի<sup>2</sup> ժամանակս<sup>3</sup> յաւիտեանս<sup>4</sup>:

61 Դարձեալ ուրախացի՛ր արժանապատիւ<sup>5</sup> սիրով, Մարիամ կոյս<sup>6</sup>, ծնող<sup>7</sup> եւ աղախին բոլորեցունց փրկչին եւ Աստուծոյ, Հնձան<sup>8</sup> աստուածահրաշ եւ հոգէնկար<sup>9</sup>, որ յարաբղխեցեր զհոսանս վտակաց<sup>10</sup> անուշահամս եւ առատաբուղխս<sup>11</sup> հոգէծաւալ գինւոյն Քրիստոսի ի մէջ<sup>12</sup> Հնձանաշէն<sup>13</sup> եկեղեցւոյ<sup>14</sup>. եւ մատուակեալ ի վեցեակ<sup>15</sup> դար եղափոխութեանս մինչեւ յապառնիս<sup>16</sup> եւթնեկի<sup>17</sup> աւուր մտին, հոգէպարար<sup>18</sup> զմայլեցուցանեն<sup>19</sup> զմանկունս առագաստի փեսայացեալ Բանին Աստուծոյ. այլ եւ ի հանդերձեալսն վերաթուեալ<sup>20</sup> շտեմարանելով<sup>21</sup> զբարեացն պարգեւաբաշխութեան ձիրս: 62 22Ուրախ լեր Մարիամ<sup>23</sup> շնորհազարդեալ տաճար, հարսն երկնային եւ լուսաւոր առագաստ արքունական, գործարան միաւորութեան Բանին<sup>24</sup> բնութեան<sup>25</sup>: 63 Ուրախացի՛ր,

անհարսնացեալ Մարիամ, մայր Տեառն, բաժակ հոգեւոր<sup>26</sup> եւ<sup>27</sup> աստուածային շնորհացն տուող<sup>28</sup> ի ձեռն աւետարանագիր արանցն Քրիստոսի, որ<sup>29</sup> արբուցին գտիեցերս<sup>30</sup>:

64 31Դարձեալ բազմերանաւէտ բարբառով ուրախացի՛ր, Մարիամ սրբուհի, աւրհնեալդ ի կանայս, ուռկան հոգեւոր եւ հոգիանիւթ գործի լայնասփիւռ առաքելագունդ ձկնորսացն, որք զանազանահաւաք զարմիւք որսացին զբոլորահովիտ տիեզերս ի կեանսն յաւիտենից, եւ յանծերանալի համաբնակութիւնսն: 65 Ուրախացի՛ր բարեբաստութեամբ, անհարսնացեալ Մարիամ, անարատ մաքուր աղաւնի Քրիստոսի, շնորհատու Հոգւոյն ընդունարան, որ միշտ բարեձեւազարդեալ ուղղապետին եկեղեցիք հեթանոսաց:

66 Դարձեալ խնդա՛լից ուրախացիր, Մարիամ, պտուղ արքայութեանն երկնից. յաղագս որոյ ի քո պատուական մայրութեանդ, եկեղեցիք նորափետուր զարդարեալ հրաշիւք, ծայրարձակ ոտիւք առաքինութեան պայծառաբերին պտղով հաւատովք յընծայումն որդւոյ քո Աստուծոյ մերոյ: 67 Ուրախացիր, Աստուածածին Մարիամ, պարկեշտասէր եւ սրբասէր վարուք, ոչ եթէ մերաւրէն ինչ, այլ անճառաբար յղացար եւ ծնար զէմմանուէլն, ըստ Եսայեայ տեսողութեանն. վասն զի ճշմարտապէս մանուկ ծնաւ մեզ ըստ Հոգւոյն նկարակերպութեանն, եւ Որդի բարձրելոյն ըստ հրեշտակապետին աւետեացն: 68 Զինախ քան զանուանակոչութիւն հաւր եւ մաւր, առցէ զգաւրութիւն Դամասկոսի եւ

1 Ե պաշտին  
2 Ե ունի՛ ի վախճան  
3 Ե չի՞ ժամանակս  
4 Ե ունի՛ յաւիտենիս այսորիկ  
5 Ե արժանապարտ  
6 Ե չի՞ կոյս  
7 Ե ծնող  
8 Ե հնձան  
9 Ե հոգեմըկար  
10 Ե չի՞ վտակաց  
11 Ե առատաբեր  
12 Ե ունի՛ մէջ սրբոց եւ  
13 Ե հնձանաշէն  
14 Ե եկեղեցեաց  
15 Ե դարայեղափոխութեանս փիս դար եղափոխութեանս  
16 Ե յապառնի  
17 Ե աւարտաբերութեան փիս աւուր մտին  
18 Ե հոգեպարզ փիս հոգեպարար  
19 Ե գմայլեցուցանես  
20 Ե վերաթեւեալ փիս վերաթուեալ  
21 Ե շտեմարանես  
22 Ե Ուրախացիր փիս Ուրախ լեր  
23 Ե հարսն երկնային, շնորհազարդ տաճար փիս շնորհազարդեալ տաճար, հարսն երկնային  
24 Ե չի՞ Բանին

25 Ե բնութեանցն  
26 Ե հոգեւորաբուխ  
27 Ե չի՞ եւ  
28 Ե տուեալ  
29 Ե որք փիս որ  
30 Ե ունի՛ գտիեցերս ամենայն  
31 Ե չի՞ Դարձեալ ... կոյս եւ Աստուածածին Մարիամ (նախ. 83)

զաւար Սամարեայ. եւ ոչ եւս երկիցուք ի ծխալից երկուց թագաւորաց խանձողաց ի մեզ տիրելոյ. այս ինքն մահու եւ դժոխոց. վասն զի Թագաւոր մեծ ի վերայ ամենեցուն Աստուած է՞:

69 Դարձեալ ուրախացի՛ր անփորձ ի մերաւրէն հարսանեաց, հարսն երկնային եւ անհարսնացեալ Մարիամ. որ հրաշագանապէս Աստուած վայելչութեան ծնար զէմմանուէլն, զգեղեղեշարմատն<sup>1</sup> պողաբերեցեր, որպէս ի ծարաւուտ երկրի, եւ անկէզ պահեցար շնորհաւք Սուրբ Հոգւոյն ի մեքակերպ սաղմնանկար ի զուգամասնութենէն. այլ եւ ի հեթանոսս շառաւեղագործեալ<sup>2</sup> համաբոլոր տարածասփիւռ ներծաւալեցաւ ուղէշարձակ քաղցրաբեղուն արմատոյն այնորիկ, որ ի քէն յայտնեցաւ աշխարհի, որք պասքածարաւիք էին յամենայն սրտէ աստուածգիտութեանն:

70 Ուրախացի՛ր լուսայեղց դիմակաւ բերկրեալ եւ զուարթալից սրտիւ, աւրհնեալդ ի կանայս, Մայր կենաց եւ փրկութեան ազգի մարդկան. գեղմն լուսակիզն եւ անթանալի, մարգարէափորձ պիտառութեամբ բացայայտեալ, որ զանարանց հարսին ունիս զձեւ անախտ եւ անամբօս եւ պարկեշտասէր. վասն որոյ Դաւիթ ի մարգարէս ի նոյն տիպս կուսածին հարսնութեանդ՝ յորդորահար քնար նուագարանաւն համակի զէջն Հոգւոյն ի քեզ տպաւորեալ, ասէր Իջե՛՛ որպէս զանձրեւ ի վերայ գեղման, եւ որպէս զցաւդ զի ցաւդէ յերկիր: 71 Ծագեսցի՛ յաւուրս մարմնաւորութեան նորա արդարութիւն, եւ բազում խաղաղութիւն մինչեւ ցկատարեալ մաշումն լուսնին<sup>3</sup>. այս ինքն նուագումն հեթանոսաց. զի Որ հնամայն եւ ծերանայն՝

մերձ է յապականութիւն<sup>4</sup> ըստ Պաւղոսի. վասն զի Քրիստոսիւ խափանելոց էր:

72 Դարձեալ եռանդնասէր եւ յորդոր փութով եւ յորդորապահանջ հարկապահանջութեանս ըստ բազմայեղանակաբուն շառաւիղն գովասանութեամբ Հոգւոյն Սրբոյ վարսագեղութեանց խոյրապսակազարդ փաղփեւք ընծայաբերեմք քեզ ի մերմէ նուաստաջան արուեստից, ո՛վ Տիրուհի, սրբասնեալ վերահռչակեալ քոյր մեր, դուստր մարգարէութեանց, ակն սուտակ եւ դահանակ լուսաջահայեղց, ընտրաբանեալ ի մէջ դստերաց Սիովնի: 73 Վասն զի ի բազմաց անհաւանութենէն, քեզ հաճեցաւ Հայրն բոլորից՝ եւ առաքեաց զիւր սիրելի միածինն ի ծառայական մարմինն տաղաւարիլ, Հոգւոյն Սրբոյ ի քեզ ներգործեալ:

74 Ուրախացի՛ր, պարկեշտուհի Մարիամ, դուստր աբրահամեան աւետեացն, բողբոջ Իսահակայ, որ անապական ծնար եւ սքանչելապէս զԱստուծոյ զզաւրութիւնն եւ զիմաստութիւնն եւ զանդրանիկն արարածոց եւ զարարիչն համաբոլոր բնութեանս, որ այժմ դարձաւ ի տղայութիւն արքայն հրեշտակաց, եւ դարձոյց գտիեզերս ի մանկութիւն կենաց:

75 Դարձեալ աստուածավայելչաբար սրտիւ եւ բարէզուարձ ուրախութեամբ ուրախացի՛ր, Մարիամ անհարսնացեալ, եւ անզբաղասէր կոյս, եւ սխրագործ երանաւէտ հարսն ծննդեամբ, զգեղեմական գետոյն վտակս առատագոյն բերես ի քեզ, որ խոխոմեալ արբուցանես զյոզնազանազունակ տունկս դրախտին փափկութեան, որ այժմ իմանալի է մեր դիտաւորութեանս՝ զեկեղեցւոյ բուրաստանեալ մանկունս՝ վերաստեղնեալ հաւատով սնեալք անարգելս առ հոսանահոլովաչարժ վարդապետութիւնս աւետարանին Քրիստոսի:

« Սաղմ. Խ.Ձ. 8

1 Օրինակում՝ գգեղեշարմատն

2 Օրինակում՝ շառաւեղագործեաց

3 Սաղմ. ՀԼ. 6

4 Եբբ. Բ. 13

76 Ուրախացի՛ր բոլորամի՛տ սրտիւ, Մայր լուսոյ, Աստուածածին Մարիամ, սեղան աստուածախառն. զոր աւրինակ հրամայեցաւ Մովսեսի անտաշագործ մարդկային հնարաւորութեանց վիմակառոյց արձան ուղղեալ՝ ընդունակ ընծայեալ Աստուծոյ. այսպէս եւ պարկեշտասէր անձն քո անկաւ եւ անփորձ պահեցաւ ի մերաւրէն հարսանեաց. վասն զի շնորհաւք Հոգւոյն Սրբոյ պարսպեալ՝ եղեր ընդունող սեղան երկնային հացին իջելոյն յերկնից, որ կեանս տայ ամենայն աշխարհի:

77 Ուրախացի՛ր, Մարիամ, խնդամտաբար սրտիւ հլու եւ միամիտ աղաւնի աւրհնեալդ ի կանայս, եզամիտ Քրիստոսի, որ եւ հրամայեցաւ ըստ Եզեկիէլի. վասն զի դու ես դուռն փակեալ արեւելածագ ելից եւ մտից Տեառն Աստուծոյ Իսրայելի. զի անհասական եւ անճառ խորհուրդք բերիւր երկնապարծ ամենասուրբ կուսութեանդ քո դուռն:

78 Դարձեալ ուրախացի՛ր վերստին երկնաբեր աւետեաւք, բերկրեալդ վայելուչ սրտիւ, մայր Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ անփական եւ անբովանդակն երկնի եւ երկրի մեծագործութեամբ՝ ինքնակամ յաւժարութեամբ սրտիւ բարեհաճեցաւ իննամսեայ ժամանակաւ գեղազարդեալ ի քում հոգէնկար արգանդիդ, մինչեւ ծնար զանդրանիկն արարածոց եւ զարարիչն, որոյ կոչեցաւ անուն Յիսուս, ըստ հրեշտակին առասանութեան:

79 Ուրախացի՛ր, Մարիամ աւրհնեալդ ի կանայս, երանելի տեսողաց եւ տարփելի անտեսից, ջրհոր հոգեւորաբուղիս, որ լի գոս աստուածահանճար իմաստաբեր անձկութեամբ, կենդանի անծարաւ ջրոյն, որ սամարուհւոյն տենչասիրեալ սակս նեղավտակ պասքածարաւ երթեւեկութեանն. որով եւ մեծ մարգարէն Դաւիթ թագաւորն Իսրայելի, հոգւոյն եռանդամբ ցանկայր. Ո՞ տայր ինձ ըմպել ի ջրոյն Բէթղէւմի որ

առ դրանն<sup>»</sup>: 80 Եւ յիրաւի առ դրանն դիտաւորութիւն մարգարէին, քանզի մերձ առ դուրսն կայր փառապարգեւ գալուստն Քրիստոսի: 81 Եւ երից զաւրավարացն կառամարտից վանեալ զգեղուր ալլազգեացն, եւ բերեալ զջուրն ըղձալի առ արքայ, եւ ոչ կամեցաւ ըմպել՝ քանզի ոչ էր հասեալ ի նորա ծերացեալ ժամանակն՝ ծնանել ի քէն Քրիստոս. թէպէտ եւ համադոյգ անձն եւ մարմին մարգարէին եւ հոգի ընդ աստուածատուր իմաստութեանն եւ գիտութեանն, եւ անցեալ ընդ երկրաբարձ ասպարէզս դիւագունդ փաղանգաց, որ եւ թշնամիս առնեն պատրանաւք իւրեանց զմարդիկ Աստուծոյ:

82 Ուրախացի՛ր, Մարիամ, տիեզերաբաղձ տուփ ոսկի, զարդարեալ անուշահոտ խնկովք, եւ տաշտ մաքրափայլ իւղեփեցական բուրմամբ. քանզի որպէս ի գունազանագեղ վարդից եւ շուշանաց եւ հովտածիծաղասաղարթ<sup>1</sup> ծիրանաթոր մանուշակացն, վարդագեղեալ ունիս հիւսակ, անհարսնացեալ Մարիամ, պարկեշտասէր վարուք առաքինական սրբութեամբք: 83 Վասն որոյ եւ առ ի մէնջ ընկալցիս զբանիցս ընծայումն, որ ոչ երբէք կարաւտաբերիս նուաստութեանս մերոյ դրուատեաց. որոյ գովասանութեան չափ՝ ոչ առ ի մարդկանէ այլ առ ի յԱստուծոյ ընծայ քեզ, ո՛վ Տիրուհի կոյս եւ Աստուածածին Մարիամ:

84 Արդ<sup>2</sup> այսպիսի շահատակող<sup>3</sup> եւ հոգեւոր<sup>4</sup> կուսական տաւնախմբութեանս, ո՛վ սիրելիք, բազմայորդոր<sup>5</sup> փութով հաւանեցարո՛ւք<sup>6</sup> ի շնորհավաճառութիւն<sup>7</sup>

» Հմբ. Բ Թագ. ԻԳ. 15:  
 1 Օրինակում՝ հովտածիծաղասաղարթ  
 2 Ե ունի՝ Արդ յաղագս  
 3 Ե շահատեսակասեր փի շահատակող  
 4 Ե հանդիսաւոր փի հոգեւոր  
 5 Ե չի՞ բազմայորդոր. ունի՝ գուարմալից սիրով եւ  
 6 Ե հաւաքեցաց փի հաւանեցարո՛ւք  
 7 Ե շահավաճառութիւն փի շնորհավաճառութիւն

այսր<sup>1</sup> աւուր, երիտասարդք եւ կուսանք,  
ծերք եւ տղայք, գեղեցկապէս փութով<sup>2</sup>  
փոխեցէ՛ք<sup>3</sup> զմարմնաւոր<sup>4</sup> թմբկահարու-  
թիւնս ընդ հոգեւորսն<sup>5</sup>։ Վասն զի այս իսկ

է ժամանակ տուրեւառիկ<sup>6</sup> անարգել<sup>7</sup> ան-  
խափան ուղեւորիլ<sup>8</sup> յարքայութիւնն<sup>9</sup> երկ-  
նից <sup>10</sup>ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում  
փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

1 Ե այսմ  
2 Ե չի՞ փութով  
3 Ե փոխանորդեցէ՛ք փ/ս փոխեցէ՛ք  
4 Ե զմարմնաւորական  
5 Ե ունի՛ հոգեւոր երգարանի

---

6 Ե ունի՛ տարեւտիկ հոգեւորոշակ ֆրիստոսա-  
պանձ գորականացն, զի  
7 Ե ունի՛ անարգել եւ  
8 Ե ուղղաւորեցում  
9 Ե յարքայութիւն  
10 Ե չի՛ք ի ... փառք. ունի՛ բարեխօսութեամբ սուրբ  
Աստուածածնին եւ ամենայն սրբոց ընդ բացօ-  
թեագք հովիւսն եւ ընդ մոզսն հանդիպեալ  
լուսոյն տեսողութեան, եւ ընդ բոցեղէն հրեշ-  
տակաց բազմութիւնսն նուագողական փառա-  
տրութիւնս վերառափել ի բարձունս չօր եւ  
Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ

# ԱՆԱՍՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԵՐԱՊՈԼՍԵՑԻ

ՎԱՍՆ ՎԱՆՈՐԷԻՑ, ՈՐ Ի ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔՆ ՅԵՐՈՒՍԱԴԵՄ



## «ՎԱՍՆ ՎԱՆՈՐԵՒՑ, ՈՐ Ի ՍՈՒՐԲ ԲԱՂԱՔՆ ՅԵՐՈՒՍԱՂԵՍ»

Անաստաս վարդապետ Հերապոլսեցու անունով մեզ հասած Երուսաղէմի հայկական վանքերի ցուցակի բնագիրը գիտական աշխարհին յայտնի էր դարձել հ. Ղուկաս Ինճի-ճեանի եւ հ. Ղեւոնդ Ալիշանի բարձր արժեւորումով ու հրատարակութիւններով ժԹ դարում: Ծաւալով փոքրիկ այդ բնագիրը իր գիտական արժէքով հայ մատենագրութեան չափազանց կարեւոր սկզբնաղբիւրներից է, որը պահպանուել է զգալի ընդմիջարկութիւններով, որը եւ յանիրաւի հիմք է տուել հրատարակութիւնից յետոյ երկի մասին ձեւաւորելու թերահաւատ վերաբերմունք, անգամ՝ այն յայտարարելու անվաւեր:

Յուցակին կցուած յիշատակարանում պատմող դէպքերի մասին այլ աղբիւրներում պահպանուած զուգահեռ փաստերի հիման վրայ փորձ է արուել նաեւ հաստատելու Յուցակի վաւերական լինելու եւ գիտական մեծ կարեւորութիւն ունենալու հանգամանքը եւ այն, ի տարբերութիւն նախկինում է կամ Ը դարերով թուագրելու աւանդոյթի՝ վերագրելու Զ դարի 70-ական թթ.:

Յուցակի ձեռագրերը իրենց յիշատակարաններով հանդերձ պահպանուել են ԺԷ-ԺԹ դդ. արտագրութիւններով՝ տարբեր ժողովածուների մէջ, ներկայացնում են երկու խմբագրութիւն, որոնցից մէկը ակնյայտօրէն բխում է ԺԵ դ. մէկ մայր օրինակից, իսկ միւս խմբագրութիւնը յայտնի է միայն մէկ օրինակով եւ «Երեւակ»-ում ժԹ դարի կատարուած տպագրութեամբ: Առկայ ձեռագրերը ստորեւ ներկայացուած են Ա. Սանջեանի կողմից իրականացուած համեմատական բնագրի տեսքով, որը, սակայն, բնականաբար, արձանագրում է Յուցակի միայն ԺԷ-ԺԹ դդ. կրած փոփոխութիւնները:

Նախորդ դարերի ընթացքում Յուցակում ու նրա յիշատակարանում կատարուած խմբագրում-յաւելումների եւ կրած փոփոխութիւնների պարզաբանումները դեռեւս մնում են հետազօտութեան առանձին խնդիրներ, որոնք կարող են լուծուել առաւել հին բնագրերի եւ Երուսաղէմում հնագիտական նոր յայտնագործութիւնների միջոցով: Յուցակի՝ մեզ հասած տարբերակի պատմագիտական արժէքը լիովին հիմք է տալիս այն ոչ միայն վաւերական ճանաչելու, այլեւ յուսալու աղբիւրագիտական ու հնագիտական հետազայ աշխատանքի յաջողութեան եւ նրա սկզբնագրի վերականգնման հնարաւորութիւնը:

Պաւել Զորանեան

### ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Մ. Արծրունեան**, Ստորագրութիւն սբ. Բաղաթին Երուսաղէմի, Երուսաղէմ, 1859:
2. **Տ. Սաւալանեանց**, Պատմութիւն Երուսաղէմի, 1-2, Երուսաղէմ, 1931:
3. **Ա. Տէր-Յովհաննիսեանց**, Ժամանակագրական պատմութիւն Սբ. Երուսաղէմի, Երուսաղէմ, 1890, էջ 86-97:
4. **Հ. Վ. Հացունի**, Կուսաստանի Հայաստանի մէջ, «Բազմավէպ», 1923, էջ 76-77:
5. **Մ. Եպս. Աղանունի**, Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ. Ուսումնասիրութիւններ, Երուսաղէմ, Տպարան սրբոց Յակոբեանց, 1931:
6. **Յ. Քիրտեան**, Խնանկարը (Mosaïque) հայոց մօտ (կանխագոյն շրջանին), Երուսաղէմի Խնանկարները-անոնց գիւտը, «Բազմավէպ», 1934, էջ 60, 193-199:



7. **Պ. Զորանեան**, *Անաստաս վարդապետի կազմած Երուսաղէմի հայկական վանքերի Ցուցակի ժամանակի հարցի շուրջ*, ՊԲՀ, 2001, թիւ 1, էջ 27-46:
8. **Ղ. Իննիներեան**, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*, հտ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1835, էջ 199-201:
9. *Երեւակ*, Կ. Պոլիս, 1860, թիւ 94, էջ 298-305:
10. *Վասն վանորէից, որ ի սուրբ Բաղամն յԵրուսաղէմ, յԱզաթանգեղեայ պատմութեանէն, որ էր դպրապետ սուրբ Լուսաւորչին Գրիգորի*, հրատ. Հ. Ղ. Ալիշանի, «Բագմավէպ», 1882, էջ 23-26:
11. **Հ. Ղ. Ալիշան**, *Վասն վանորէից որ ի Ս. Բաղամն Երուսաղէմ, ըստ նախնեաց մերոց*, Վենետիկ-Ս. Ղազար, 1896, էջ 5-13:
12. **Հ. Ղ. Ալիշան**, *Հայապատում*, հտ. Ա, էջ 227-229:
13. **Յ. Անասեան**, *Հայկական մատենագիտութիւն*, հտ. Ա, Երեւան, 1959, էջ 825:
14. **Ն. Պողարեան**, *Հայ գրողներ (Ե-ԺԷ դար)*, Երուսաղէմ, 1971, էջ 80-81:
15. **Մ. արքեպ. Օրմանեան**, *Ազգապատում*, § 377-378:
16. **Ա. Շ. Մնացականեան**, *Աղուանից աշխարհի գրականութեան հարցի շուրջը*, Երեւան, 1966, էջ 97-98:
17. **Կարապետ վարդապետ [Տէր-Մկրտչեան]**, *Երուսաղէմի Յովհաննէս Եպիսկոպոսի Թուղթը առ Արաս Աղուանից կաթողիկոս*, «Արարատ», 1896, էջ 252-253:
18. **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վարագ Առաքելեանի, Երեւան, 1983, էջ 285-286:
19. **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана*, СПб, 1908, с. 260.
20. **В. Г. Василевский**, *Повесть Епифания о Иерусалиме и сущих в нем мест*, "Православный Палестинский сборник", вып. XI, СПб, 1886, с. 134-137.
21. **L. Alishan**, *Anastas d'Arménie (VII<sup>e</sup> siècle). Le LXX couvents arméniens de Jérusalem*, "Archives de l'Orient Latin", 2 (1884), p. 395-399.
22. **Aristakes Vardanian**, *Des Jowhannes von Jerusalem Brief an den albanischen Katholikos Abas*, "Oriens Christianus", N. S., II (1912), S. 67-77.
23. **Avedis K. Sanjian**, *Anastas vardapet's List of Armenian Monasteries in sevent-century Jerusalem. A critical Exemination*, "Le Museon". Revue d'Etudes Orientales, LXXXII, 3-4. 1969, pp. 275-279.

#### ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԾ ԶԵՆԱԳՐԵՐԻ

- A - ՄՄ ձեռ. թիւ 1770, ժամանակ՝ 1589 թ.  
 B - ՄՄ ձեռ. թիւ 2079, ժամանակ՝ 1622 թ.  
 C - Վենետիկ, Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. թիւ 1537, ժամանակ՝ 1716 թ.  
 D - Երուսաղէմ, ձեռ. թիւ 3541, ԺԹ դ., պատնէն  
 E - ՄՄ ձեռ. թիւ 9622, ժամանակ՝ 1858 թ.

## ՎԱՍՆ ՎԱՆՈՐԵԻՑ, ՈՐ Ի ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔՆ ՅԵՐՈՒՍԱՂԵՍ

1 Ի ժամանակս թագաւորութեան մեծին<sup>1</sup> Տրդատայ եւ ի հայրապետութեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեծամեծ իշխանքն հայոց շինեցին վանորայք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, որոց աւանատես եղէ գրեւով յայս գիւրաքանչիւրսն յականէ յանուանէ<sup>2</sup>:

2 Հառաչման վանքն Պետրոսի առաքելոյն, որ արտաքոյ քաղաքինն է, ի կողմանէ Սելովամայէ,<sup>3</sup> որ կոչի Հառաչումն Պետրոսի, ընչիւք եւ ծախիւք արքունի շինեալ եղեւ:

3 Պանդայ<sup>4</sup> վանքն, որ սուրբ Կարապետին է, որ յարեւելից կողմանէ ի Զիթենեաց լերինն կայ, նոյնպէս արքունի ծախիւք շինեալ, յանուն Սուրբ Կաթողիկէին, որ ի Վաղարշապատ քաղաքի, զոր Աղուանք ունին մինչեւ ցայժմ:

4 Մըժայ վանքն, որ յանուն Սուրբ Քառասնիցն, զոր այժմ Տաճիկք ունին:

5 Մերձ ի նա՝ Բատին<sup>5</sup> վանքն Շիրակացւոց, զոր Կնկղաւորաց վանք ետոյ աւանանեցաւ<sup>6</sup>:

6 Սուրբ Գէորգայ վանքն, ի նոյն կողմն է, զոր այժմ աւեր է:

7 Նորավանք, մերձ ի գերեզմանն Եսայեայ մարգարէին, ի նոյն կողմն Զիթենեաց լերինն, զոր այժմ քակեալ են Տաճիկք<sup>7</sup>:

8 Խաղայ<sup>8</sup> երանելոյ վանքն, որ է ի Զորն Հովսափատու, մերձ ի Գեթսեմանի<sup>9</sup>:

9 Սուրբ Պաղիքատոսի<sup>10</sup> վանքն, ի կողմն հիւսիսոյ՞ ի չորրորդապետէն Հայոց շինեալ:

10 Արծրունեաց վանքն, որ յանուն Սուրբ Գէորգայ:

11 Զարեհաւանի վանքն, արտաքոյ քաղաքին:

12 Մամիկոնեանց վանքն, որ յանուն Սուրբ Կարապետին:

13 Գուգարաց<sup>11</sup> վանքն:

14 Բդեշխի վանքն, (շինեալ ի նոյն կողմն),<sup>12</sup> որ կոչի սրբոյն Սարգսի եւ Բագոսի:

15 Սիւնեաց վանքն, որ յանուն Սրբոյն Գէորգայ, (զոր Տաճիկք քակեցին)<sup>13</sup>:

16 Ռշտունեաց վանքն, որ էր ուրկանոց վանորէիցն Հայոց, (նոյն կողմն)<sup>14</sup>:

17 Խոռխոռունեաց վանքն, ի նոյն կողմն<sup>15</sup>:

18 Երիցավանք<sup>16</sup>, որ ի Դաւթի գրան է, որ յանուն Սուրբ Աստուածածնի է:

19 Սրբոց Ղեւոնդեանց վանքն:

20 Կրտի վանքն<sup>17</sup> շինեալ ի չորրորդապետէն հայոց, ի կողմն յարեւելից:

8 A Խայթա / C Խաթա

9 AE Խաթայ վանքն, մերձ սուրբ գերեզմանի մօր Տեան

10 B Պողոստոսի / C Պողիոստոսի

11 B Գուգորաց

12 DE չիբ

13 DE չիբ

14 DE չիբ

15 E է արտաքոյ քաղաքին

16 ABC Իրիցավանք

17 A Կրիտի վանք / B Կուտայ վանքն / E Կրտավանքն

1 DE փակագծի մէջ

2 ABC որոց անուանի վանորէիցն են այսոքիկ

3 DE ի կողմն Սիոնի

4 DE Պանտայ

5 D Բատիայ

6 DE Բատենայ վանքն Շիրակացւոց, որս կնկղաւորի բնակեմն

7 DE Նորավանքն, մերձ ի գերեզմանին Եսայեայ մարգարէին. է աւերակ

21 Անձեւացեաց վանքն, որ յանուն Սրբոյն Անանեայ, որ է մերձ ի Բեթղեհէմ:

22 Եւ ի ներս ի քաղաքն՝ Արշակունեաց վանքն, որ առ Պրոպատիկէի:

23 Գագաւունի վանքն, որ յանուն սրբոց Հռիփսիմեայ եւ Գայիանեայ, ի մէջ քաղաքին՝ առ դրան Սուրբ Յարութեան:

24 Կամսարականաց վանքն, յանուն Սրբոյ Լուսաւորչին, շինեալ ի յԱրշակունեաց:

25 Ամատունեաց վանքն, ի կողմն Սուրբ Սիոնի:

26 Այլ վանք Ամատունեաց, ուր հաւատաւոր կուսանք բնակէին, ի կողմն Սիոնի:

27 Մամիկոնէից վանքն, յանուն Սուրբ Կարապետին, ի նոյն կողմն:

28 Չորս վանք այլ, ի Սելովամայ կողմն կայ:

29 Կարնացւոց<sup>1</sup> վանքն շինեալ ի Սմբատայ Բագրատունեաց:

30 Սահառունեաց վանքն, ի նոյն կողման է, զոր Քարուվանք կոչեն, որ է Տեառնեղբաւրն՝ զոր ընկալաւ վէմն:

31 Պալհառունեաց<sup>2</sup> վանքն, որ է ի կողմն Գալիլեայ լերինն:

32 Այլ Անձեւացեաց վանքն, կայ ի նոյն կողմանն:

33 Պաղակունեաց<sup>3</sup> վանքն, ի նոյն կողման է, զոր այժմ Տաճիկք ունին:

34 Սրբոց Քառասնից վանքն, ի նոյն կողմանն կայ:

35 Կոտայեցոց<sup>4</sup> վանքն, ի կողմն Ձիթենեաց լերին, յորում Քրիստոս տէն մեր գինն երանութիւնս ուսոյց աշակերտացն:

1 A Կարնանաց  
2 ABC Պալունեաց  
3 ABC Զաղակունեաց / D Զապակունեաց  
4 B Կատայեցոց

36 Վարաժնունեաց<sup>5</sup> վանքն, ի նոյն կողմն տաճարին Սողոմոնի:

37 Վանանդեցւոց<sup>6</sup> վանքն, ի նոյն կողմն:

38 Զտայեցաց<sup>7</sup> վանքն, ի նոյն կողմն:

39 Մոկաց վանքն, ի կողմն Գեթսեմանի:

40 Քաջբերունեաց վանքն, ի կողմն Գալիլեայ լերին:

41 Սահառունեաց վանքն, ի նոյն կողմն է:

42 Մաղխաղեաց<sup>8</sup> վանքն, որ այժմ Հոռոմն ունի:

43 Սուրբ Յովհաննու վանքն առ դրան Սուրբ Յարութեան, որ այժմ Վրացիք<sup>9</sup> ունին:

44 Կողբայ վանքն,<sup>10</sup> ի նոյն կողմն, զոր այժմ Հոռոմն ունի:

45 Սանտունեաց վանքն, այժմ աւերակ է:

46 Արշակունեաց<sup>11</sup> վանքն, այժմ աւերակ է:

47 Վանք մի եւս՝ յարեւելից կողմն:

48 Դերջանայ վանք:

49 Սիւնեաց վանքն, յարեւելից կուսէ:

50 Այլ վանք Սիւնեաց՝ ի Չորն Յովսափաթու:

51 Այլ վանք Սիւնեաց՝ ի Չորն Սաբայի:

52 Չորրորդ վանք Սիւնեաց, ի Չորն Յովսափաթու:

5 ABC Վարաժնեաց  
6 ABC Վանանդեաց  
7 C Զատեցացն / D Ղատեան / E Զատեցեանց  
8 AC Մաղաղեաց / B Մաղաղեաց / E Մաղաղեաց  
9 C Հայք  
10 C Կողավանքն / D Պողայ  
11 A Արշամունեաց / B Այլամունեաց / C Աշամունեաց

53 Հինգերորդ վանք Սիւնեաց, զոր Տաճիկք ունին:

54 Բատրոյ<sup>1</sup> վանքն, որ յանուն Սուրբ Աստուածածնի, առ աշտարակին Դաւթի:

55 Կաղանդուաց<sup>2</sup> վանքն, ի նոյն կողմն:

56 Մարասայ Սուրբ Գէորգայ<sup>3</sup> վանքն, ի նոյն կողմն ի Հարաւոյ:

57 Արցախայ վանքն, ի Հարաւակողմն:

58 Այլ երեք վանք<sup>4</sup> Աղուանից, զոր այժմ Տաճիկք ունին:

59 Այլ երեք վանք եւս գոն՝ ի մէջ քաղաքին շինեալք:

60 Տաշրաց վանք, որ յանուն Սուրբ Գէորգայ, յԱրշակունեաց շինեալ:

61 Եւ այլ չորս<sup>5</sup> վանք մեծամեծք՝ ի մէջ քաղաքին՝ ի Մամիկոնէից շինեալ:

62 Ամենայն բովանդակ եաւթանասուն<sup>6</sup> վանորայք շինեալ եղեւ յիշխանացն Հայոց ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, ի սուրբ աստուածակոխ տնաւրինական տեղիսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: 63 Նա եւս գմեծամեծ եկեղեցիս, զսուրբ Գողգոթայն, զՍուրբ Ծնունդն, զաստուածընկալ Սուրբ Գերեզմանն, զՀամբարձման Ոտնատեղին, զՍուրբ Յակոբն, զՀրեշտակապետն, զՓրկիչն, զՍուրբ Սիւան Վերնատունն, զՃառներն, զԽաչ Գիւտն եւ զեկեղեցի Սուրբ Լուսաւորչի (ի ժամանակս Կոստանդեայ եւ Տրդատայ սուրբ թագաւորացն շինեալք Հաստատեցան՝ ի պէտս աղաւթից ի փրկութիւն Հոգւոց ամենայն Հաւատացելոց)<sup>7</sup>:

64 Եւ այս ամենայն վանորայքս յԵրուսաղէմ ի Սուրբ Լուսաւորչէն Հաստատեցան, բայց յուրվս ի Ներսիսէ, զոր հրամեաց շինել ի պատճառս աղաւթից ի փրկութիւն Հայոց<sup>8</sup>:

65 Եւ արդ, հայրապետք տեղւոյն<sup>9</sup> յետոյ շարժեալք ի նախանձ, (որք էին Քաղկեդոնիք)<sup>10</sup>, խանգարեցին զամենայն կարգս վանաւրչից մերոց<sup>11</sup>, վասն որոյ իշխանքն Հայոց միաբանեալ ետուն եաւթն<sup>12</sup> կենդինարս թագաւորին Յուստինիանոսի, որ է եաւթանասուն Հազար զահեկանս, եւ թափեցին յիշխանութենէ Հայրապետացն (Յունաց)<sup>13</sup> զամենայն վանորայս Հայոց, եթէ արանց վանք, եթէ կանանց վանք, եւ եթէ խրճիթք միանձանց, անդէն զինքեանս առնելով իշխեցողս:

66 Ապա յետոյ անփոյթ արարեալ իշխանացն Հայոց եւ կաթողիկոսացն, որպէս եւ զայլս ի մեծամեծ պատուիրանացն զանց առնէին անհոգութեամբ. ուստի բազում վանորայք (որ յԵրուսաղէմ)<sup>14</sup> տապալեալ քանդեցան, որք ունէին զբնակիրս հեղք եւ ծոյլ: 67 Իսկ որք էին ժիրք եւ պիտանիք եւ աստուածահաճոյ վարուք, պահեցին զիւրեանց սահման Հաւատոյ, դեռ եւս վանորայք նոցին մնան Հաստատուն: 68 Այլ եւ յուրվ վանորչից մերոց առաջնորդքն մինչ վախճանէին, ոչ ոք լինէր հոգաբարձու կարգել զայլ ոք առաջնորդ Հայոց, (յաղագս որոյ զնոյն անտերունչ մնացեալ վանսն առնուին եւ տիրէին Յոյնք)<sup>15</sup>:

1 A Բարտոյ / B Բարտ  
2 CDE Կաղանդաւորաց  
3 ABC Գրիգորայ Մարասայ  
4 DE չորք  
5 DE եօթն  
6 DE եօթանասուն եւ երկու  
7 ABC շինեալ եղի ի թագաւորէն Տրդատայ եւ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն

8 DE չիք այս պարբերութիւնը / B հոգոց փխ հայոց  
9 E Հոռոմոց  
10 ABC չիք  
11 B այստեղ աւարտուում է  
12 DE հինգ  
13 DE ունեն միայն  
14 AC ունեն միայն  
15 AC ապա անապարէին պատրիարքուցն երուսաղէմի եւ Հոռոմի

69 Դարձեալ եւ էր, զի ինքեանք իսկ վանականքն Հայոց թողեալ զիւրեանց վանսն կամաւ ի բաց գնային յաղագս ծանրութեան տաճկական հարկացն եւ էր, զի ի վանս իւրեանց զկանայս եւ գսարկաւազուհիս բնակեցուցանէին, որք էին ընդ պարսպաւք, զի ինքեանք ազատ լիցին ի հարկապահանջութեանց, իբրեւ զվանս հաւատաւոր կանանց: 70 Եւ ինքեանք վանականք (Հայոց)<sup>1</sup> ելանէին արտաքոյ քաղաքին յայլ տեղի վանաց բնակէին, եւ փոխեալ զանուանս գաւառաց եւ ազատաց եւ ազգացն, եւ յայլ անուն անուանէին զվանորայս իւրեանց, թերեւս ի նոցանէ գտցեն աւգնութիւն ինչ եւ պահպանութիւն:

71 Արդ, էին եւ յայլ տեղիս վանորայք Հայոց ի շրջակայս՝ յԵգիպտոս, յԱղէքսանդրիա, ի Թէփայիղ եւ ի լեառն Սինէական վանորայք մետասանք.<sup>2</sup> նաեւ ի լեառն Թաբաւր, եւ յեզր ծովուն Տիբերիայ, եւ յայլ սահմանս Պաղեստինոյ, զորոց զյոլովն իմով իսկ աչաւք տեսեալ յամս բազումս մնալով անդ յերկրին այնմիկ. եւ հոգեպատում մատեանք եւ Աստուածաշունչք անթիւք գտանէին ի հայկական լեզու յամենայն մենաստանս Երուսաղէմի, նաեւ շուրջ զԵրուսաղէմաւ, ուր էին վանորայք Հայոց:

72 (Անաստաս վարդապետս Յերապաւլսեցի, ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Համագասպայ Կամսարականի Պալհաւունաց, գրեալ զայսոսիկ ետու նմա),<sup>3</sup> որ կամէր գնալ ի Սուրբ Երուսաղէմ, որ եւ գնաց իսկ եւ արժանացաւ աստուածակոխ Սուրբ տեղեացն, յորս շրջեցաւ Տէր Յիսուս Քրիստոս ի մարդանալն իւրում, եւ ի հայ-

րապետէն Սուրբ Երուսաղէմի թափեալ ազատեաց զամենայն վանորայսն Հայոց (անկելոց ընդ բռնութեամբ Յունաց),<sup>4</sup> որք կամէին փոխել զկարգ եւ զսահմանս նոցա, եւ յեղաշրջել ի հաւատս (ըստ Յորենաղի քարոզութեան)<sup>5</sup>:

73 (Բայց սակայն յետ ժամանակաց ինչ եւ աւուրց, սկսան բազում նեղութիւնս տալ եւ տանջանս հարցն Հայոց երկաբնակ պատրիարքունք Յունաց՝ սակս ոչ հաւանելոյ նոցա ժողովոյն Քաղկեդոնի)<sup>6</sup>:

74 Եւ միաբանեալ ամենայն հարք եւ առաջնորդք (մենաստանացն եւ խրճիթաւոր միայնակեացքն),<sup>7</sup> անձինք իբր հինգ հարիւր, գրեցին առ երանելի կաթողիկոսն Յովհան, եւ առ այլ աթոռակալսն, եթէ զի՞նչ պարտ իցէ առնել, հաւանե՞լ նոցա եւ ունել իւրաքանչիւր զտեղի բնակութեան իւրեանց, եթէ թողուլ եւ ելանել անտի. վասն զի հրաման թագաւորին (Յունաց աւր ըստ աւրէ)<sup>8</sup> խստանայր ի վերայ սրբոյ քաղաքին Երուսաղէմի եւ ի վերայ հայրապետացն մերոց, զի մի ոք բնակեսցի անդ ի կրաւնաւորացն Հայոց, եւ Յակոբիկ Ասորի, եւ կամ յԵգիպտացոցն. այլ միայն բնակեսցին այնք, որք ունին զգաւանութիւն թագաւորին եւ զսահմանադրութիւն Յորենաղի:

75 Առ այս գրեաց կաթողիկոսն Հայոց, թէ վասն հաւատոյ մի հնազանդիք դոցա, այլ թողէք եւ արտաքս գնացէք ի քաղաքէդ այտի: 76 Վասն որոյ բազումք թողին զվանորայս եւ զինչս իւրեանց եւ ի

1 AC չիբ  
 2 AC մեմաստամբ  
 3 AC Երանելոյն Անաստասայ հայոց վարդապետի՝ գրեալ զանուանս վանորէիցն Երուսաղէմի, ի խնդրոյ իշխանին Համագասպայ Կամսարականի Պալիաունոյ

4 AC չիբ  
 5 BDE գոր Բարոզէին յայնմ ժամանակի Յորենաղ Քաղկեդոնիկ հայրապետն Երուսաղէմի  
 6 AC Այլ եւ յետոյ բազում նեղութիւնս եւ տանջանս կրեցին հարբն Հայոց եւ վանորայքն ի պատրիարքացն Հոռոմոցն եւ այլոց, որ զկնի մոցս նստան, սակս ոչ հաւանելոյ չորրորդ ժողովոյն Քաղկեդոնի եւ խոստովանութեան երկու բնութեանց:  
 7 DE չիբ  
 8 AC չիբ

բաց գնացին, ոմանք չոգան յԵգիպտոս, ոմանք գնացեալ բնակեցան ի Կեսարիա եւ բազումք եւս ի տեղւոջէ իւրեանց ոչ շարժեցան եւ ոչ գնացին յայլ ուրեք, այլ կացին եւ մնացին ի տեղիս իւրեանց՝ Համբերելով բազմաց նեղութեանց, աւարառութեանց, գանից եւ տանջանաց, մինչեւ տիրեցին Տաճիկք աշխարհին Պաղեստինոյ եւ Երուսաղէմի եւ այնուհետեւ ոչ Համարձակեցան (Յոյնք)<sup>1</sup> բռնադատել զոք, եւ ինքեանք իսկ քայքայեալք ի Տաճկաց<sup>2</sup> եղեն իբրեւ զմեզ տառապեալք: 77 Եւ ապա, որք մնացեալ էին յԵրուսաղէմ ի Հայոց, գտին Հանգիստ, նաեւ Ասորիք եւ Եգիպտացիք:

78 Իսկ յետոյ ի ծանրութենէ (տաճկական)<sup>3</sup> Հարկացն նեղեալք, եւ վասն աւերանացն երկրին Հայոց, զի ոչ բերեցին զտուրս<sup>4</sup> զիւղաւրէիցն, զոր պարգեւեալ էին թագաւորքն եւ իշխանքն Հայոց, վասն որոյ եւ նոցա չկարացեալ Համբերել՝ թողին զտեղիս իւրեանց, եւ Հնգետասան վանք միայն մնաց (ի ձեռս Հայոց)<sup>5</sup> ոմանք

ի լեառն Ձիթենեաց, այլք մերձ ի Բեթղեհէմ եւ այլք յեզր գետոյն Յորդանանու, նա եւ ի լեառն Փորձութեան, եւ յԱնապատ Փրկչին, եւ ի լեառն Թաբաւրական եւ ի Հերմոն՝ Հանդէպ Թաբաւրայ եւ յեզր Տիբերական ծովուն, եւ անդ ուր Քրիստոս զեալթն նկանակն ետ Հինգ Հազարացն: 79 (Յայտոսիկ տեղիս մնացին բազմութիւն կրանաւորացն Հայոց)<sup>6</sup>:

80 (Յիշատակարան)

Ի յերկիրն Հոռոմոց Գաղատիա, որ մականուն կոչի Անգուրիա, ի Լուսաւորչին Գրիգորի յանուն եկեղեցի՝ գտաք գիրք, յորում գրեալ էր դրուատս այս, որ Ամաստաս անուամբ վարդապետ հայոց գնացեալ էր յԵրուսաղէմ, եւ ականատես եղեալ վանորէիցն եւ շէն ամենայն վանորայքն հայոց, որ յԵրուսաղէմ՝ եաւթանասուն վանք. եւ գրեալ զամենայն եւ բերեալ ի Ծովաց գաւառն, որ այժմ կոչի Չմշկածակ, եւ մեր գրեալ զայս եւ արիմակեալ զամենայն կարգաւ<sup>7</sup>:

1 AC չիբ  
2 AC ի ձեռաց Իսմայելացւոցն  
3 AC չիբ  
4 AC զմուտս  
5 AC չիբ

6 AC եւ այսոցիկ այսպէս եղելոց  
7 DE Չայս պատմութիւն գտաք ի Գաղատիոյ Ա. Լուսաւորիչ եկեղեցի միոջ գրքի եւ անտի օրինակեալ գրեցաք ի ծանօթութիւն եւ ի տեղեկութիւն ազգիս հայոց:

# ՄԱՀԱԿ ԶՈՐՈՓՈՐԵՑԻ

ՅԱՐՄԱԻԵՆԵԱՅՆ ԱՐԻ ՈՐ Է ՂՈԳՈՍԵԱՆ

ԿԱՆՈՆԶ ԿԵՐՋՆՈՅ ՍԱՅԱԿԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ





## ՍԱՀԱԿ ԶՈՐՈՓՈՐԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԵՐԿԵՐԸ

Սահակ Զորոփորեցին ծնունդ է Գուգարաց նահանգի Զորոփոր գաւառի Արքունաշէն գիւղում: Իր ուսումը ստացել է Թէոդորոս Քոթենաւորի մօտ: Կաթողիկոսական աթոռը զբաղեցրել է 677 թ. մինչեւ իր մահը՝ 703 թ.: Իբրեւ Հայոց եկեղեցու հովուապետ՝ մասնակցել է Յուստինիանոս Բ. կայսեր հրամանով 689 թ. գումարուած եկեղեցաժողովին: Հետագայում գերեզարուել է արաբների կողմից: Ժողովրդի օրհասական վիճակով մտահոգ Սահակ Զորոփորեցին մի նամակ է յղել Մահմէդ ոստիկանին, որի մօտ մեկնելու ճանապարհին՝ Խառանում, վախճանուել է: Համաձայն աւանդութեան՝ ոստիկանը կարգացել է նամակը եւ կատարել է նրա խնդրանքը:

Սահակ Զորոփորեցու անունով մեզ են հասել եկեղեցական կանոններ, շարականներ, մէկ թուղթ եւ մէկ ճառ՝ նուիրուած Արմաւենեաց (Մաղկազարդի) տօնին:

ա. Սահակ Զորոփորեցու կանոնները, որոնք թուով 15-ն են, գետեղուած են Կանոնագրքում<sup>1</sup>: Երկը բովանդակում է Յովհաննէս Սիւնականի հարցումներն ու «պատասխանիք նմին՝ Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ նորին աթոռակցաց եպիսկոպոսաց բազմաց»: Կանոններն աչքի են ընկնում իրենց խայտաբղէտ կազմով: Դրանք վերաբերում են ներեկեղեցական հասարակական կեանքի տարբեր մարզերի (ծիսական, բարեպաշտական սովորոյթներ եւ այլն): Ի դէպ, այստեղ օրինակարգուած է այն խորհրդական եւ իրաւական գիտակցութիւնը, թէ միայն օրհնուած ձէթի (միւռոն) մէջ է բնակուում շնորհը, եւ թէ հէնց այդ պատճառով ծիսական գործառոյթի նպատակով այն պէտք է ընդունել բացառապէս հայրապետից՝ հանգամանք, որը միտուած է հայրապետական կենտրոնաձիգ իշխանութեան հաստատմանը:

բ. Բաւական մեծ թիւ են կազմում Սահակի շարականները, որոնց մէջ գերակշիռ տեղ են զբաղեցնում Ս. Խաչին նուիրուածները: Սա հոգեւոր անդրադարձն էր պարսիկների կողմից Խաչափայտի գերեզարուութեան եւ Յունաց Հերակլ կայսեր ջանքերով նրա գերեզարձի պատմական իրադարձութեան: Զորոփորեցու գրչին պատկանում են նաեւ Եկեղեցուն նուիրուած շարականներ, որոնց մէջ յիշարժան են Շողակաթի կանոնի մէջ մտած 5 փոքրիկ երգերը, մասնաւորապէս էջ Միածինն ի շարքէ գողտրիկ երգը: Շարականներում լսուում են թէ՛ մեկնողական եւ թէ՛ դաւանական աստուածաբանութեան արձագանքներ:

գ. Արմաւենեաց աւր, որ է դոգմեան ճառում<sup>2</sup>, իր խօսքը սկսելով գարնան, բնութեան զարթօնքի գեղեցիկ նկարագրութեամբ, հեղինակն ընթերցողին առաջնորդում է դէպ հոգեւոր գարուն: Ծառը շարադրուած է Հին ու Նոր կտակարանային արժէքների նրբին համեմատութեամբ, արեւելաքրիստոնէական ճառախօսութեանն ընտանի սկզբունքների, հայրախօսական աւանդների պահպանութեան առողջ գիտակցութեամբ:

դ. Պատասխանի թղթոյն Հոնաց (681 թ). պահպանուել է Անանունի 684 թ. պատմութեան մէջ (II, ԽԵ), (տե՛ս աստ, էջ 893-894): Թուղթն ունի վարչաիրաւական բովանդակութիւն: Ի պատասխան Հոնաց խնդրանքի՝ Հայոց կաթողիկոսը նշում է, որ ինքն իրաւա-

1 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատասիրութեամբ՝ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 506-513:

2 Տե՛ս Յովհաննէս Խաչատուր Օճնցի, Մատենագրութիւն, Երկրորդ տպագրութիւն, Վեներիկ-Ս. Ղազար, 1953, էջ 213-222:

սու չէ Իսրայէլին եպիսկոպոս կարգելու նրանց շրջանի վրայ, քանզի դա պատկանում է Աղուանքի կաթողիկոսական աթոռի վարչական իրաւասութեանը: Փաստն անուղղակիօրէն ցոյց է տալիս այն հեղինակութիւնը, որ վայելում էր Հայոց կաթողիկոսական աթոռը շրջակայ երկրներում:

Յակոբ Քեոսեան

### ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Յովհաննէս Իմաստասէր Աւանցի**, *Մատենագրութիւնք*, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, 1953, էջ 213-222:
2. *Կանոնագիրք Հայոց*, Ա, աշխատասիրութեամբ՝ Վ. Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 506-513:
3. **Գ. Յակոբեան**, *Սահակ Ձորոփորեցի*, «Էջմիածին», 1976, թիւ 3, էջ 41-47:
4. **Ն. Թահմիզեան**, *Սահակ Ձորոփորեցին եւ Խաչի ու Եկեղեցու շարականները*, «Էջմիածին», 1980, թիւ 11, էջ 37-47:
5. **M. van Esbroek**, *Le discours du Catholikos Sahak III en 691 et quelques dossiers annexes au Quinsexe*, - The Council in Trullo revised, ed. G. Nedungatt and M. Featherstone, Rome, 1995, pp. 323-454.

### ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ (ԿԱՆՈՆՔ)

#### Ա. Խմբի ձեռագրեր

- A - Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի ձեռ. թիւ 131, Կանոնագիրք. ժամանակ՝ 1098 թ.
- B - ՄՄ ձեռ. թիւ 8926, Կանոնագիրք. ժամանակ՝ ԺԳ դ.
- C - ՄՄ ձեռ. թիւ 6409, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ ԺԵ-ԺԶ դդ.
- D - ՄՄ ձեռ. թիւ 795, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1618 թ.
- E - ՄՄ ձեռ. թիւ 2635, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ 1635 թ.
- F - ՄՄ ձեռ. թիւ 6496, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ 1637 թ.
- G - ՄՄ ձեռ. թիւ 2655, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ ԺԷ դ.
- H - ՄՄ ձեռ. թիւ 2596, Կանոնագիրք. ժամանակ՝ ԺԷ դ., ընդօրինակուած է G-ից
- I - ՄՄ ձեռ. թիւ 8158, Կանոնագիրք. ժամանակ՝ 1635 թ.
- J - ՄՄ ձեռ. թիւ 3706, Կանոնագիրք. ժամանակ՝ 1636 թ., սրանից ընդօրինակուել են IJ ձեռագրերը
- K - ՄՄ ձեռ. թիւ 4403, Կանոնագիրք. ժամանակ՝ 1647 թ.
- L - ՄՄ ձեռ. թիւ 4631, Կանոնագիրք. ժամանակ՝ 1649 թ.

- M* - ՄՄ՝ ձեռ. թիւ 5782, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ ժէ դ.
- N* - ՄՄ՝ ձեռ. թիւ 7580, Դատաստանագիրք եւ Կանոնագիրք. ժամանակ՝ 1651 թ.
- O* - ՄՄ՝ ձեռ. թիւ 3291, Դատաստանագիրք եւ Կանոնագիրք. ժամանակ՝ 1654 թ.
- P* - ՄՄ՝ ձեռ. թիւ 9298, Դատաստանագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ անյայտ
- Q* - ՄՄ՝ ձեռ. թիւ 5894, Կանոնագիրք. ժամանակ՝ 1664 թ.
- R* - ՄՄ՝ ձեռ. թիւ 2883, Կանոնագիրք. ժամանակ՝ 1665 թ.
- S* - ՄՄ՝ ձեռ. թիւ 3097, Կանոնագիրք. ժամանակ՝ մինչեւ 1681 թ., ընթերցումներով աւելի մօտ է KLMQT ձեռագրերին
- T* - ՄՄ՝ ձեռ. թիւ 9488, Կանոնագիրք. ժամանակ՝ 1621 թ., T ձեռագրից հաւանաբար ընդօրինակուել են IJ KLMSQ ձեռագրերը եւ կատարուած ուղղումներն անցել են այլ ձեռագրերի՝ IJKLMSQ:
- U* - ՄՄ՝ ձեռ. թիւ 3148, Կանոնագիրք. ժամանակ՝ ժէ՞ դ., ընդօրինակուած է A ձեռագրից
- V* - ՄՄ՝ ձեռ. թիւ 3099, Կանոնագիրք. ժամանակ՝ մինչեւ 1667 թ., V ձեռագրի գրչու-թիւնը շատ մման է S-ի գրչութեանը, գուցէ ընդօրինակել է միեւնոյն գրիչը:
- X* - ՄՄ՝ ձեռ. թիւ 449, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1757 թ.
- Y* - ՄՄ՝ ձեռ. թիւ 3297, Կանոնագիրք եւ Դաւիթ-բեկի պատմութիւն. ժամանակ՝ 1780 թ., ամենայն հաւանականութեամբ ընդօրինակուած է նախորդ X ձեռագրից
- Z* - ՄՄ՝ ձեռ. թիւ 7317, Կանոնագիրք. ժամանակ՝ 1652 թ.
- W* - ՄՄ՝ ձեռ. թիւ 3059, Դատաստանագիրք, «Գիրք Նոմոսի» եւ Կանոնագիրք. ժամանակ՝ 1843 թ.
- ó* - ՄՄ՝ ձեռ. թիւ 3065, Կանոնագիրք. ժամանակ՝ ժԼ՞ դ.
- é* - ՄՄ՝ ձեռ. թիւ 1779, Զանազան նիւթեր եւ Կանոնագիրք. ժամանակ՝ ժէ դ.
- ú* - ՄՄ՝ ձեռ. թիւ 3141, Կանոնագիրք, ժամանակ՝ ժԹ՞ դ.

### Բ խմբի ձեռագրեր

- a* - ՄՄ՝ ձեռ. թիւ 7615, Կանոնագիրք եւ կանոնական այլ նիւթեր. ժամանակ՝ ժԴ՞-ժԵ՞ դդ.
- b* - ՄՄ՝ ձեռ. թիւ 8380, Կանոնագիրք. ժամանակ՝ 1632 թ.
- c* - ՄՄ՝ ձեռ. թիւ 8964, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ ժԴ՞-ժԵ՞ դդ.
- d* - ՄՄ՝ ձեռ. թիւ 2676, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ ժէ դ.
- e* - ՄՄ՝ ձեռ. թիւ 783, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1605 թ.
- f* - ՄՄ՝ ձեռ. թիւ 8006, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1611 թ.
- g* - ՄՄ՝ ձեռ. թիւ 5148, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1618 թ.
- h* - ՄՄ՝ ձեռ. թիւ 3368, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1639 թ.
- i* - ՄՄ՝ ձեռ. թիւ 656, Կանոնագիրք. ժամանակ՝ 1661 թ.
- k* - ՄՄ՝ ձեռ. թիւ 654, Կանոնագիրք. ժամանակ՝ 1671 թ.

- l* - ՄՄ ձեռ. թիւ 8938, Կանոնագիրք, Դատաստանագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ մինչեւ 1685 թ.
- m* - ՄՄ ձեռ. թիւ 2677, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1697 թ.
- n* - ՄՄ ձեռ. թիւ 778, Կանոնագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ 1635 թ.
- o* - ՄՄ ձեռ. թիւ 660, Կանոնագիրք. ժամանակ՝ Ժէ դ., մօտ է հի ձեռագրերին
- p* - ՄՄ ձեռ. թիւ 3544, Կանոնագիրք. ժամանակ՝ Ժէ դ.
- q* - ՄՄ ձեռ. թիւ 8236, Կանոնագիրք. ժամանակ՝ Ժէ դ.
- r* - ՄՄ ձեռ. թիւ 9513, Կանոնագիրք. Դատաստանագիրք եւ այլ նիւթեր. ժամանակ՝ Ժէ դ., ընդհանուր առմամբ մօտ է it ձեռագրերին
- s* - ՄՄ ձեռ. թիւ 3098, Կանոնագիրք. ժամանակ՝ Ժէ դ.
- t* - ՄՄ ձեռ. թիւ 646, Կանոնագիրք. ժամանակ՝ 1731 թ., ընթերցումներով մօտ է hilor ձեռագրերին

# ՍԱՀԱԿԱՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՅԵԱԼ ՅԱՐՄԱԻՆԵՆԵԱՅՆ ԱՐԻ

## ՈՐ Է ՂՈԳՈՍԵԱՆ

1 Աւետարեբեր եւ տիեզերական տաւն, եւ տէրունեան տաւնից գերափառագոյն. բերկրաբերձ եւ սոսկալի բոլոր բանակաց երկնաբիւրաց փառաբանողաց պանծացուցանելի. յորում երկինք եւ երկիր եւ ծով բերկրեալ խնդան, քառահոլով տարերք զհնութիւն յառաջին յեղանակելով լինելութիւն: 2 Աւղք զբարեխառնական եւ զպտղածնաւոյ բուրեցին շունչ: 3 Աստեղք մաքրափայլք եւ ակնակիրտք, նկարակերտելով զիւրաքանչիւրոց դիրս: 4 Լուսին կարակնածեւ լրացեալ արեգակնապէս զբոլոր գիշերն ջահաւորէ. եւ արեգակն՝ ի հասարակահոլովն ժամանեալ ժամանակ, զմէջս երկնի եւ երկրի հոլաթեւէ: 5 Ծով՝ ի բարձրակոհակ վրդովմանց եւ յոլորտածաւալ շարժմանց լռեալ կայ: 6 Երկիր զձմեռնային զսգաւորութիւն ի գարնանային յեղանակեալ վերանորոգումն. եւ բուրաստանք ի ստածող աւղոց սաւառնազարդեալք, ի գագաթունս բերելով ծայրից զծաղկանց զանազանութիւնս տեսակաց հոտոց եւ համոց: 7 Եւ զեռունք որջացեալք յերկրի, բունեալ ի փապարս եւ ի ծերպս, զժամանակիս զգալով զմեծափառութիւն, արտաբերելեալ հետեւողութեամբ յաւետածեւ իւրաքանչիւրովք ձայնիւք, երաժշտականեալ<sup>1</sup> փողեն զաւուրս վայելչութիւն: 8 Եւ ծովածին կենասէրք երամակողղղի<sup>2</sup> լսելով երամապետիցն, ի ձմեռնային եւ ի միջնաշխարհ<sup>3</sup> կայարանացն երամախմբեալք՝ ի մերոյին ժամանելով գետին, լրացուցանեն զերկիր եւ զջուրս, եւ բազմանուազ ձայնիւք զզանազանութիւն երագածեւ տեսակաց, ի

տուրնջեան եւ ի գիշերի գերաժշտականացն վերաթեւեն նուազ:

9 Եւ գազանացն եւ էրէոցն քառահետեւ շարմունք, հոլեալք եւ երամացեալք՝ ի շարից եւ յանտառաց նորածին ծաղկանց ճոխացուցանեն զորովայնս. զգոչումն եւ զբշումն արտաբերելով՝ զբանականաց հրաշացուցանեն զլսողութիւն: 10 Եւ տնական կենդանիք արտաքոյ իւրաքանչիւրոց ելանեն յորջից. ոմանք զհողագործականն տաժանմունս ի նուս բերելով, իսկ այլք հոլեալք լրացուցանեն զհովիտս եւ զկոհակս զանազան ծաղկանց՝ զմարմնոյ եւ զճարպոյ բերելով զառաւելութիւն: 11 Եւ նաւուղղակին զնաւ ծովուն ընծայեցուցանելով, ի ձմեռնային լռեալ վրդովմանց, աջողակ առագաստափար աւղով սլացեալ ի բաղձալին ժամանէ երկիր: 12 Եւ երկրագործ ի բնակաց, ըստ հոգեհոլազ երաժշտապետին Դաւթայ, ելանէ ի գործ իւր եւ ի վաստակս ձեռաց իւրոց, զսերմանական եւ զտնկածաւոյ երկիր գործելով, զըշտեմարանացն ճոխացուցանելով զլիութիւն: 13 Եւ բովանդակ երկին եւ երկիր եւ ծով, եւ ամենայն կենդանատեսակք զաւուրս մեծացուցանելով զփառաւորութիւն բերկրին եւ խնդան, եւ մերոյ փառաբանութեանս բարեբանակցութեամբ<sup>4</sup> համագոյապէս. զոր բաւական համարելով, զաւուրս յառաջ աճցուք զսաղմոսն:

14 ի թագաւորաց մեծն, եւ աւրինականին երաժշտականութեանն առաջին Դաւիթ, գրաւորականին հաւատարիմ մարգարէ, եւ բարբարոսական ազգին տանջաւոյ. մշտայաղթ ի պատերազմունս, եւ

1 Յօրինակին՝ երաժշտավանեալ

2 Յօրինակին՝ երամակուղղի

3 Յօրինակին՝ միջնաշխարհ

4 Յօրինակին՝ բարեբանակցութեան

Հսկայիցն ծախաւղ. նսեմացելոյն Իսրայէլի ճրագ, եւ արարչական սրտի Հաւր Համակամ. նախահայր մարմնացելոյ Բանին. եւ Աստուածածնի կուսին ցեղապետ, եւ ըստ նահապետական տանցն նախահայր, եւ ՚ի քահանայական երգս պարագլուխ եւ աստուածաբանող, սերովբէիցն բարեբանակից զսերկեան նախագոչելով մարգարէական հոգևովն՝ զմեծափառութեան փողեաց մեզ բան, զիննսներորդ զվեցերորդ սաղմոսն՝ ասելով, Լերինք ցնծացեմ առաջի Տեառն զի գայ՝: 15 Նման եւ ճշմարիտ է բանս. զի յամենայնում պետք եւ առաջինք զաւետաբեր խնդան լուր. ՚ի զաւրու զաւրավարք. ՚ի հաւտի հաւտապետք. ՚ի նաւի նաւապետք: 16 Այսպէս եւ արարիչն զհողեղինի առնելով զբնութիւնս, բարձրացեալ կոհակք եւ բլուրք հոգեղէնք՝ զհողեղինին զոլ ազգակցութիւնն խնդասցեն. եւ վերագոյն քան զվեցերեակ աւուրցն փառաբանութիւնն բերկրեսցին. յաղագս իւրաքանչիւրոցն ունելով հողեղինաւք ընդ հողեղինին հարազատութիւն մարդկան եւ լեռանց:

17 Բայց ըստ նշանակի նմանեցուցանէ զլերինս մաքուր մարգարէական անձանց, ո՛րպէս հողանիւթեայ մարմնովք տաճարացան Սրբոյ Հոգւոյն, եւ շնորհաբարձ բախտիւն վերամբարձան քան զմարդկային բնութիւնս, եւ Հոգւոյն Սրբոյ սրակնութեամբ զբազմաժամանակեայ եւ զհանդերձեալ դիտաւորեցին խորհուրդ. եւ զբաւորական թողլով յիշատակ զսարսափելի աւուրս մեծ վայելչութիւն: 18 Զոր յաղագս սերկեան խոստովանեցին աւուրս շնորհաւետեալ հոգիք նոցա, եւ աստուածային բարձրացեալ ճոխութեամբ, յիշատակելով զնոսա երգ ընդ մեզ ցնծալով զՈրդւոյն մեծափառ եկաւորութիւնն. որում եւ մեծն առաքելոցն Պաւղոս յիւր յառաքելական մատենին, առ եփեսացի

տուճարին գրելով, Աւրինեալ է Աստուած՝ եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ աւրինեաց զմեզ ամենայն հոգեւոր աւրինութեամբ յերկնաւորս ՚ի Քրիստոսէ, հրամայէ զմեծ գունդն բարեբանութեամբ զմարմնացելոյ Բանին աւրհնել զՀայր ոչ ըստ զբաւորականին եւ հնացելոյ աւրինին, որ ընդ անիծիւք էր փակեալ, եւ անակնառու դատողութեամբք յանցաւորացն հրամայէր տանջմունս զնացից՝ եւ տանջանաց զանազանեցելոց, վիրոյ ընդ վիրաց, եւ անդամս ընդ անդամոց կրճատել. եւ զանազան սատակմունք, քարկոծմունք, սրամահութիւնք եւ հրկիզութիւնք: 19 Այլ Որդւոյ զմեր կերպարանեալ զբնութիւնս, եւ բնութեամբ քաւարան գոլով բնութեանս, ՚ի տանջանաց զբնութիւնս ազատելով, եւ միով մահուամբ զանազան մահուց կնքեաց զիր. եւ յաջորդեաց շնորհ գրոյն՝ Հոգի. եւ եղեւ ինքն Բանն ամենայն յամենայնում: 20 Ընդ հողեղէնսն հողեղէն. աւրինին ճոխացուցանաւղ, գրոյն լուծիչ. ոգւոյն քննաւղ. պատկեր աներեւելի Հաւրն, եւ ամենայն մարդկան զաւրութիւն եւ իմաստութիւն. հասարակաց արարիչ. փակելոյ դրախտին բացաւղ. ճանապարհ ՚ի վերելից առ Հայր. դուռն երկրորդ՝ յերկրորդ երկինս մտողաց: 21 Երկնի Աստուած, յաղագս արարչութեանն. երկրի թագաւոր, յաղագս մարմնաւորութեանն. մարդկան սիրելի, յաղագս փրկագործութեանն. հրեշտակաց նախապատմելի, յաղագս աստուածութեանն. եւ հասարակաց համախնդութեամբ լծորդելով առաքելական գրոց ՚ի տիեզերատաւնակ աւուրս համաշխարհական խմբեալ բարեբանումն, զբլորից Հաւր եւ զմիածին Որդւոյն մարդասիրութիւնն փողեալ գոչեսցուք աստուածաբանաբար:

« Սաղմ. Գ. Է 8

բ Եփե. Ը 3

22 Երանելին մեծն յաւետարանչաց Մատթէոս, երկուց հոգեւորաց հանդիպեալ շնորհաց, զառաքելականն ունելով աթոռ, եւ արտաբերական աստուածորդւոյն ճառեցելոյ աստուածաբանաւղ, յիւրում հրաշապատում տառսն աւետարանեալ զսերկեան աւուրս եկաւորութեան խորհուրդ՝ ճառեալ ասէ. Իբրեւ մաւտ եղեմ յերուսաղէմ, եւ եկիմ 'ի Բեթփագէ մերձ 'ի լեառն Ձիթենեաց, յայնժամ Յիսուս արձակէ երկուս յաշակերտացն եւ ասէ ցնոսա. երթայք 'ի գեղդ որ առաջի ձեր կայ. եւ իբրեւ մտանիցէք, գտանիցէք էշ կապեալ եւ յաւանակ ընդ միմն, լուծէք եւ ածէք ինձ. եւ էթէ ոք աւսիցէ ինչ ձեզ. ասասցիք եթէ տեսոն իւրում պիտոյ է. եւ վաղվաղակի առաքեաց զնոսա՞: 23 Ընդ աւետարանչիս ճառեցելոյ զաստուածահրաշ սքանչելագործութիւնս Որդւոյ՝ ո՛րպէս հոգէխառն շարագրեալ տառիւք պատմէ բան: 24 'ի Գալիլէէ հետեւանալ Որդւոյ, եւ զախտացելոյն մերձ զաստուածեղէնն ընդձեռեալ բուժական զեղ հոգւոյ եւ մարմնոյ, որոյ ազագաւ եւ զհաւատարիմ բարեկամին տեսանէ զախտանալն ըստ մարմնոյ 'ի հրէաստանի եւ 'ի Բեթանիա, եւ զանբուժականն մարմնեղէն ախտին 'ի մարդկեղէն դեղարանացն, եւ զանչնչանալն եւ զննջելոյն յաջորդեալ տեղի, եւ զառաքումն լծորդածին կանանցն, զի նախ քան զվաղճանելն ժամանեցէ աստուածային շնորհաւքն, եւ բուժումն անբժշկական ախտին ընդձեռեցէ: 25 Եւ նախ քան զժամանելն Տեսոն եւ աշակերտացն 'ի Բեթանիա՝ անչնչանայր Ղազարոս, եւ զգերեզմանականացն ըմբոշխնելով կերպ, փոխեալ լինէր 'ի կենդանութենէն. զոր եկեալ Տէրն գտանէր վախճանեալ չորեքաւրեայ, եւ զապականեալ մարմինն, սոսկալի ձայնիւ տիրաբար հրամայեալ՝ արտաքս 'ի գերեզմանէն հետեւանալ, եւ յերիզապնդէ թողացուցանել կա-

պարանէ. եւ 'ի Բեթանիա յընթրելն իւրում, մի 'ի բազմականացն էր Ղազարոս:

26 Այսոքիկ հրաշագործութիւնք յերկեան յանկեաց<sup>1</sup> աւուրն. իսկ 'ի սերկեանս առեալ զբազմութիւն աշակերտացն, եւ յառաջելով 'ի Բեթանիայ 'ի ձիթաստանեաց լեառնն, հանդիպի 'ի Բեթփագէ. յոր առաքէ երկուս յաշակերտացն, եւ հրամայէ ածել զէշն եւ զյաւանակն ընդ նմին. եւ փութով առաքէ, զի նախ քան զմտանելն յերուսաղէմ, նստցի 'ի վերայ նոցա: 27 Բայց ըստ աստի տեսութեան մտանելն յերուսաղէմ, եւ եկաւորելն 'ի Բեթփագէ եւ 'ի լեառն Ձիթենեաց, իմանալի է զմերձակայ չարչարանաց աստուածորդւոյն, եւ մահուամբ 'ի մահուանէ զմարդկային ազատել զբնութիւնս. եւ Երուսաղէմ իմանալ զբոլոր տիեզերաց՝ 'ի ձեռն առաքելական քարոզութեանն, եւ աւազանին վերածնութեան: 28 Իսկ Բեթփագէ թարգմանի տուն ծնաւտի, որ նշանակէ զանմաքուր կենդանոյն ծնաւտ, որով վարսաւորն Սամսոն զանթլփատիցն բերուց վանեալ մեռուցանէր. ընդ որում եւ վարսաւորն Յիսուս Որդի եւ Բան Հաւր նստելով 'ի վերայ նորին կենդանւոյ, նշանակէ զաստուածացելոյ հակառակամարտին ճոխութիւն 'ի տիեզերապետութենէ լուծանել ընդ ոտիւք մեռուցէ: 29 Իսկ ձիթաստանեաց լեառնն նախ գուշակէ զտիեզերաց լուսաւորելն՝ կամաւորաբար եկաւորելն 'ի չարչարանս: 30 Եւ երկուս առաքեալս յաշակերտացն, զտիեզերաց նմանաբերէ զկոչումն, երկու հոգեխառն կոչմամբք՝ գրաւորական եւ հոգեւորական. եւ վաղվաղակի առաքելն զերկաքանչիւրոցն անվրէպ ժամանակս նշանակէ զմարգարէականն եւ զաւետարանականն:

31 Բայց այս ամենայն լեալ ոչ վայրապար. այլ զի լցցի բան մարգարէական-

« Տէ՛ \* Մ \* Գ \* Ի \* Ը \* 1 :

1 Յօրինակին՝ յանկեանց

նին, խոստովանութիւնն Զաքարեայ, որ ասէ. Ասացէ՛ք դստեր Սիոնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ եւ հեծեալ յէջ եւ յաւանակի իշոյ՞: 32 Համագոյ աւրինին հոգեկիրքս զհանդերձեալ աստուածորդւոյն զսքանչելագործութիւնս նախաճառեալ աստուածաբանեցին: 33 Մեծն 'ի նահապետաց Յակոբ՝ մարգարէական ճառեալ ձայնիւ, ասէ զՅուդայէ, յորմէ հանդերձեալ էր զառ 'ի կուսէն մարմնանալն կատարել, որ է նախահայր սրբոյ կուսին. Անպակաս լիցի իշխանութիւնն եւ պետութիւնն 'ի յուդայեան տոհմէն, մինչեւ հասցէ ժամանակ որոյ իւրն է իշխանութիւն: 34 Կապեսցէ զգրաստ իւր ընդ որթոյ, եւ գլաւանակ իւր զգնդակէ որթոյ՞:

35 Իմանալ է որթ զԱստուածորդւոյն մարմնաւորութիւնն յաղագս խոստովանելոյ զիւր զարարչական մարմինն որթ, եւ զերանելի առաքեալսն ուռ: 36 Կապեսցէ ընդ որթոյ զգրաստ իւր, զմարմնանալն եւ զհամատնաւրինելն ընդ հողեղէն բնութեամբ, եւ կապել անգրաւ եւ անլուծանելի սիրով ընդ մերունակ բնութեանս: 37 Եւ ընդ զնդակէ որթոյ զյաւանակ իւր, զնորածնելոցն յաւազանէ որդէգրաբար ընդ Սրբոյ Երրորդութեանն կապեալ սիրով, անխոյզ եւ անլուծանելի կապանաւք միաւորեաց: 38 Իսկ մեծն մարգարէից Զաքարիաս բացափայլ եւ անառագաստ զսերկեան արարչաբար հրաշագործութիւն փողեալ ճառեաց բան Խնդա, ասելով, դուստր Սիոնի, զի թագաւոր գայ քեզ՝ նստեալ 'ի վերայ անմաքուր կեցնանեաց նորոց՞: 39 Թագաւոր եւ փրկիչ, հեզ եւ խոնարհ խոստովանի զծոցածին Բանն Հաւր. որ ընդ արարչական անուանն 'ի ձեռն մարդկաւրէն տնաւրէնութեանն, եւ ճշմարտապէս առնլով մարմին, եւ խոստովանելով

թագաւոր՝ Աստուած երկնի եւ երկրի: 40 Իսկ յանմաքուր կենդանիսն նստելով, զերկուս նշանակելով ժողովարանս՝ Հրէից եւ հեթանոսաց եւ անմաքուր յաղագս այսորիկ, զի զուգահաւասարք երկաքանչիւրոցն 'ի բազմաստուածութիւնն կործանեալ: 41 Վասն որոյ առնու զբնութիւն հողեղէն, 'ի ձեռն որոյ սիրով առաւելագունիւ կապեալ ընդ Հրէից եւ հեթանոսաց ժողովարան, արժանաւորեցուցանէ զնոսա որդէգրութեան հաւասարակից Հաւրն եւ իւր ժառանգութեան՝ աւագանին վերածնութեամբ, զոր տաճարացուցեալ ինքեան՝ նստի եւ հանգչի 'ի սուրբ յեկեղեցուոջ, որ զանագանէ երկնային Հաւրն՝ քահանայս եւ մարգարէս, ուստերս եւ դստերս:

42 Իսկ դուստր Սիոնի՝ իմանալի է զսուրբ եկեղեցի. վասն զի երանելի առաքեալքն զնորա արքայութեանն խորհուրդ 'ի Սիոն յԱստուածորդւոյն ընկալան. անդ եւ զՍուրբ Հոգւոյն իշխանութիւնն առին 'ի ձեռն աստուածային բերանոյ փչմանն. անդուստ եւ զհիմնարկութիւն սուրբ եկեղեցոյ երանելի առաքեալքն սկզբնաւորեցին. անդուստ եւ լեզուաւքն՝ զանագանեցելովք 'ի քարոզութիւնն կոչեցաւ, եւ զԱստուածորդւոյն զյարութիւնն 'ի նմածանեան: 43 Յաղագս այսր ամենայնի հրամայէ ուրախանալ դստեր Սիոնի՝ որ է սուրբ եկեղեցի:

44 Գնացիմ աշակերտքն եւ արարիմ որպէս հրամայեաց նոցա Յիսուս. ածիմ զէջն եւ գլաւանակն, եւ արկիմ 'ի վերայ նոցա ձորձս, եւ նստաւ 'ի վերայ նոցա՞: 45 Ո՞յք մեզ երկու աշակերտքն թուին գնացեալ: 46 Զերկուս առաքելական տեսակացն ասել. զեւթանասուն եւ զերկուցն՝ զոր նախ քան զաստուածեղէն զյարութիւնն իւր առաքեաց. եւ զերկուսա-

ա Հմմտ. Գալ. Թ. 9:  
բ Հմմտ. Նոն. Խթ. 11:  
գ Հմմտ. Գալ. Թ. 9:

1 Յօրինակիմ՝ զլեզուքն  
Կ Մարթ. ԻԼ 7



սանսն՝ զկնի յարութեանն փչելով ՚ի նոսա  
Հոգի Սուրբ, եւ ասելով. Գնացե՛ք աշակեր-  
տեցե՛ք զամենայն հեթանոսս<sup>ա</sup>։ 47 Իսկ ածել  
զկենդանիսն եւ զյաւանակ նորունի՝ զնո-  
րահաւատիցն, որ ՚ի Հրէից եւ ՚ի Հեթանո-  
սաց ժողովրդենէ ասէ, որք հաւանեալք  
նորա վարդապետութեանն՝ մարմին եւ ան-  
դամք սրբոյ եկեղեցւոյ կոչեցան։ 48 Եւ  
արկանելն ՚ի վերայ ձորձս, ընծայեցուցա-  
նել զհոգւոյ եւ զմարմնոյ զմաքրութիւն,  
յորում նստէր եւ հանգչէր Աստուածոր-  
դին։

49 Եւ բազում ժողովուրդի տարածա-  
նէին գհանդերնս իւրեանց ՚ի ցանապար-  
հին<sup>է</sup>։ 50 Ժողովուրդ բազում, զբազմու-  
թիւն մարդկանն ասէ, որք զմարմնական  
ախտից յանցաւորութիւնս խոստովանու-  
թեամբ առաջի Աստուածորդւոյն՝ անծած-  
կաբար տարածանելով. իսկ ճանապարհին  
հետեւանալն Յիսուսի ՚ի հրէաստանի՝ եւ ՚ի  
Գալիլեա, եւ ախտացելոյն ըստ պատուի-  
րանազանցութեանն, ինքնին ժամանել  
բուժումն ՚ի յանցմանն բժշկապետաբար։  
51 Եւ այլ, ասէ, հատանէին ոստս ՚ի ծա-  
ոոց, եւ տարածանէին ՚ի ցանապարհին<sup>է</sup>։  
52 Եւ այս ոչ վայրապար, այլ աստուածե-  
ղէն եկաւորութեանն արժանաւոր գործա-  
կցութիւն. քանզի գտիեցերական հանդեր-  
ձեալ էր կատարել զփրկութիւն, եւ զըն-  
դունայն հնազանդութիւն արարածոց փո-  
խել յարարչական հնազանդութիւնն. երկ-  
րի եւ ծովու՝ իւրաքանչիւրովք ճանաչել եւ  
մեծացուցանել զԱստուածն իւրեանց. ընդ  
որս եւ ծառք ՚ի նորածին ծննդոց՝ զսա-  
ղարթ եւ զճաղիկս գոյացուցչին իւրեանց  
ընդ ոտիւք ընծայեցուցանեն։

53 Եւ ժողովուրդն որ առաջի եւ զկնի  
երթային՝ աղաղակէին եւ ասէին. Աւրինու-  
թիւն որդւոյ Դաւթի, արինեալ որ գասդ

յանուն Տեառն, արինութիւն ՚ի բար-  
ձունս<sup>ա</sup>։ 54 Ժողովուրդք առաջի եւ զկնի  
ասելով, իմանալի է զերկուս հոգեկիր  
պարս՝ մարգարէութիւն, քահանայութիւն.  
որ նախ քան զմարմնանալն խոստովանե-  
ցին զնորա գալուստն. իսկ զկնի ժողո-  
վուրդքն երանելի առաքեալքն, եւ սրբոյ  
եկեղեցւոյ բազմութիւնքն, որք զկնի նորա  
տնաւրէնութեանն որդի Դաւթի զնա խոս-  
տովանին. որ անբաժանաբար ՚ի հայրենին  
մնաց ծոց, եւ բոլորովիմբ գտաւ ՚ի կուսա-  
կան յորովայնէ ծնեալ. մարդ կատարեալ  
առանց մեղաց։ 55 Զայսոսիկ միշտ խոս-  
տովանին երկուց ժողովարան, պարք ա-  
ռաքելականս սրբով եկեղեցւով։

56 Եւ ՚ի մտանելն ցորա, ասէ, յերու-  
սաղէմ, դրդեցաւ քաղաքն ամենայն, եւ ա-  
սեմ ո՞վ իցէ սա<sup>է</sup>։ 57 ՚ի հասարակաց ա-  
րարչին ծնելութեան մաքրի եւ երուսաղէ-  
մանայ բոլոր տիեզերք, վասն զի զհամա-  
գոյ աշխարհի զմաքրութիւն ոգւոց մարմ-  
նանալն նշանակէր, եւ բազմաստուածու-  
թեանն անմաքրութիւնն ՚ի տիեզերաց ո-  
լորտեցուցանել։ 58 Եւ զզրդումն քաղա-  
քայնոցն, զհակառակամարտին զաւրու-  
թիւնն ասէ, որք փորձեալ՝ գտին զնա Աս-  
տուած ճշմարիտ. որում աղաղակելով ա-  
սէին, Գիտեմք զքեզ ո՞վ ես, սուրբդ Աստու-  
ծոյ, մի՛ նախ քան զժամանակն զմեզ դա-  
տեր<sup>ա</sup>։ 59 Զաստուածացեալ նոցա զաւրու-  
թիւն արտաքոյ ընկէց. եւ զիւր ճշմարիտ  
արարչական անուն հրամայեաց աստուա-  
ծախոստ բարեբանել ճշմարտափառու-  
թեամբ։

60 Եւ ժողովուրդն ասէին, սա է մար-  
գարէն Յիսուս, որ ՚ի Նագարեթէ գալի-  
լիացւոցէ։ 61 Ժողովուրդս՝ որպէս նախա-  
ճառեցաք՝ իմանալի է զսուրբ եկեղեցի,

ա Մարթ. ԻԸ 19  
բ Տէ՛ \* Մարգ. ԺԸ 8:  
գ Տէ՛ \* Մարգ. ԺԸ 8:

դ Մարթ. ԻԸ 9  
է Մարթ. ԻԸ 10  
զ Հմմտ. Մարգ. Ը 24, Գ. Գ. Գ. 34:  
է Մարթ. ԻԸ 11

որք միշտ խոստովանին զնորա աստուածութիւնն, եւ զմարմնանալն եւ զմնալն առ Հաւր: 62 Եւ մարգարէ յաղագս մարգարէաբար եւ աստուածապէս զհանդերձեալսն նախագուշակել. որպէս 'ի Գալիլէ շրջել, եւ 'ի հրէաստանի տեսանել զՂազարոս մեռեալ. եւ նախ քան զգրաւորական դպրութիւն, զաւրինականացն դաստիարակէ զհրահանգապետս: 63 Իսկ նազորեցի կոչի, մաքուր, որ է հաւատարիմ եւ ճշմարիտ վկայ նորա մարմնաւորութեանն. Որ ոչն արար մեղս, եւ ոչ գտաւ նեմգութիւն 'ի բերան նորա“:

64 Եւ մեք որ աշպխսի տիեզերագով եւ բարեբանաւղ հանդիսացաք աւուրս, համախոհ լծորդութեամբ ընդ նոսա զաստուածեղէն մտիցն սպասաւորեսցուք գործակցաբար, ընդ տղայսն բարեբանեսցուք,

ընդ ծերսն հանդերձ ոստովք երկրպագեսցուք, ընդ աշակերտսն խոստովանեսցուք զաւրհնեալ եկեալն յանուն Տեառն. ընդ ամենայն լիցուք ամենայն, զի բովանդակ աստուածեղէնն հասցուք շնորհաց 'ի ձեռն մատակարարի Սուրբ Հոգւոյն, որ տայ առատապէս զարարչական շնորհն արժանաբար հայցողաց. որ եկեալ բունեսցէ 'ի մերում ժողովարանս, եւ տաճարացուցէ զհոգի եւ զմարմին. բնակարան եւ աւթեւան Սրբոյ Երրորդութեանն կազմեսցէ: 65 Վասն որոյ հասարակաց Հաւր, եւ Որդւոյ միածնի եւ կենագործողի, եւ Սրբոյ Հոգւոյն մատակարարի եւ պարգեւաբաշխի մշտնջենաւոր փառաբանութիւն մատուցուք այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

2ԿԱՆՈՆԵ 3ՎԵՐՁՆՈՅ ՍԱՅԱԿԱՅ4 ԿԱԹՈՂԻԿՈՍԻ5  
6ԳԼՈՒՆԵ ԺԵ

1 Ա. Եպիսկոպոսի8 ոչ զգեճուլ9 երկաթս10:

2 Բ. Եպիսկոպոսի11 12ոչ է պարտ թողուլ զկարգն եւ գնալ13 յանապատ14:

3 Գ. Քահանայի15 16որ առանձնանայ17 ասել18 Աւրհնութիւն19 եւ փառս20:

4 Դ. Քահանայի21 որ աւրկանայ22 23առանձին ասել Աւրհնութիւն24 եւ փառս25:

5 Ե. 26Աւրկի եւ բորոտի ի27 հիւանդանոցս28 կալ29 30եւ մի՛ յանապատս31 եւ ոչ առնուլ32 սքեմ33:

6 Զ. Աւրկի34 եւ բորոտի35 հաղորդել, թէ36 37ի մեղս չեն38:

7 Է. Սքեմաւոր39 որ40 աւրկանայ41 կամ42 բորոտի 43ի նմին կրանաւորանոցի44 կա՞լ1:

1 ü կանոնախմբի N-ը մուծուած է վերնագրում այսպէս՝ կանոնի իգ սահակայ վերջնոյ  
2 AUhlo կանովն / BCDEFHILMb կանոն / երկու ձեռագրերի վերնագրերը ընդարձակ են այսպէս՝ n կանոն սրբոյն սահակայ վերջնոյ հայոց կաթողիկոսի ունի գլուխս ժե / e կանոնի եւ սահմանի սահակայ հայոց կաթողիկոսի / g չի՞ վերնագիր  
3 Iacfkmps սահակայ (f սայիակայ) վերջնոյ (km վերջնոց) / b սրբոյն փիս վերջնոյ / BCDEFGH չի՞ վերջնոյ  
4 BCDEGHabcfkmps սահակայ հայոց  
5 qs կաթողիկոսին / IJKLMOQRSTVXZWcr կաթողիկոսի  
6 IJKLMOQRSTVXWcr գլուխ / p ցանկ փիս գլուխի ժե / ABCDEFGHUiüabchkmoqrs չի՞ գլուխի ժե  
7 gû չունեն ցանկը  
8 en վասն եպիսկոպոսի / M եպիսկոպոսին / UY եպիսկոպոս  
9 c գեճուլ (s գեճուլ) փիս զգեճուլ  
10 en երկաթ  
11 en վասն եպիսկոպոսի / Rô եպիսկոպոս / b չի՞ եպիսկոպոսի  
12 b եւ ոչ է պարտ որ թողուլ  
13 befg երթալ փիս գնալ  
14 J անապատս / b յանապատ աղաւթել առ Աստուած / ô ի յանապատս / pացի VWaefnqr-ից, մնացած ձեռագրերը՝ յանապատս  
15 en վասն քահանայի (n քահանայի)  
16 kmps որ մեղուցեալ (s մեղութեալ) է եւ առանձնանայ  
17 Q յանձնանայ  
18 R ասեալ  
19 H արհնութիւնս / b արհնութիւնն  
20 hlr փառ / befg չի՞ եւ փառս

21 en վասն քահանայի (n քահանայի) / abcckmpqs քահանայ  
22 BCDEFGHRYWbefhlg ուրկանայ / n ուրկանայ / kmps արկանայ եւ (ps չի՞ եւ) կամ բորոտի  
23 Qeq առանձինն / kmps չի՞ առանձին ... եւ փառս  
24 b արհնութիւնն  
25 ar փառ / o փառ / Wbefg չի՞ եւ փառս  
26 bq չի՞ արկի եւ ... առնուլ սքեմ / en վասն ուրկի / BCDEFGHMPYhklmpqr ուրկի  
27 hklmop չի՞ ի  
28 Ml ի հիւանդանոցն / e ի հիւանդանայս / kmps հիւանդանոց  
29 fhlor կեալ  
30 KLQSTXYZ եւ մի ի  
31 DGIJ անապատս / e յանապատ  
32 ô առնուլոյ / f առնու  
33 a սքեմ / ô եմք փիս սքեմ  
34 en վասն ուրկի / BCDEFGHMPYabcfhklmpqr ուրկի  
35 Y բորոտի  
36 X չի՞ թէ  
37 beq չի՞ ի, մեղաւ / kmps ի մեղսն / hlo ի մեղելս փիս ի մեղս  
38 cf ոչ են / kmps չէ / beq չի՞ չեն  
39 en վասն սքեմաւոր / KLMQRSTXZô սիւնաւոր (Y սիւնաւոր) փիս սքեմաւոր  
40 p չի՞ որ  
41 BCDEFGHKMQRSTXYZôbeq ուրկանայ  
42 ôefg եւ փիս կամ  
43 hlor ի նոյն փիս ի նմին / q կրկնուած է՝ ի նմին  
44 Q կրանաւորանոցի / Y կրանաւորանոցի / bq կրանաւորի / c կրանաւորանոցի / e կրան

8 Ը. Ոչ<sup>2</sup> կատարել գլխատակ<sup>3</sup> ելից  
իւրոց<sup>4</sup> ի կենդանութեան<sup>5</sup> իւրում:

9 Թ. Հաղորդութիւն<sup>6</sup> 7 կիրակէէ ի  
կիրակէ<sup>8</sup> պահել եւեթ<sup>9</sup>:

10 Ժ. Որ<sup>10</sup> զկնի<sup>11</sup> ժամու հաղորդե-  
ցին<sup>12</sup>:

11 ԺԱ. 13 Սիւնական որ հաղորդեցի<sup>14</sup>:

12 ԺԲ. Վասն<sup>15</sup> սրբոյ սեղանոյն<sup>16</sup> որ  
խոպանանայ<sup>17</sup>:

13 ԺԳ. Վասն ամանոյ<sup>18</sup> ձիթոյն<sup>19</sup>:

14 ԺԴ. 20 Վասն<sup>21</sup> յաւելուածոյ ձի-  
թոյն:

15 ԺԵ. Վասն<sup>22</sup> քառասունս<sup>23</sup> ունե-  
լոյ<sup>24</sup>:

1 25 Հարցմունք կանոնական<sup>26</sup> Յով-  
հաննայ<sup>27</sup> Սիւնականի<sup>28</sup> ֆաղափաց<sup>29</sup>  
եւ առընթերադրեալ<sup>30</sup> պատաս-  
խանի<sup>31</sup> նմին<sup>32</sup> Սահակայ Հայոց<sup>33</sup>  
կաթողիկոսի<sup>34</sup> եւ<sup>35</sup> նորին<sup>36</sup> աթո-  
նակցաց<sup>37</sup> եպիսկոպոսաց<sup>38</sup> բազ-  
մաց<sup>39</sup>:

2 ՈԿ (ՈԾԴ) Ա. Հարցումն<sup>40</sup>. Եթէ  
պա<sup>ր</sup>տ իցէ<sup>41</sup> եպիսկոպոսին մինչդեռ<sup>42</sup> յե-  
կեղեցւոջ<sup>43</sup> իւրում իցէ եւ ի գործ<sup>1</sup> եպիս-

1 hlr կեալ  
2 en վասն ոչ  
3 Բացի Ylor-ից, մնացած ձեռագրերը՝ գլխատակս  
4 abcefg չիբ իւրոց  
5 QXY ի կենդանութեանն  
6 en վասն հաղորդութեան (n հաղորդութիւն) / b  
զաղորդութիւն / f հաղորդութեան / q հաղոր-  
դութիւն  
7 L ի կիրակէէ կիրակէ / Qkmps կիրակէէ ի կիր-  
ակի / hlor ի (r չիբ ի) կիրակէի (or կիրակէէ)  
ի կիրակի (o կիրակէ) / XW կիրակէէ կիրակի  
/ af կիրակէի (a ի կիրակէէ) ի կիրակէ / e ի  
կիրակէ իւրակէ / bq չիբ կիրակէէ / o կիրակէ  
ի կիրակէ / քացի AUYN-ից, մնացած ձեռագրե-  
րը՝ կիրակէէ ի կիրակէ  
8 b ի կիրակի / q ի կիրակէի  
9 kms եթե / beq չիբ եթե  
10 en վասն որ  
11 Wöabcefg ժամուն / kmps ժամուն հաղորդ տայ  
ասել պարտ է գնաշակմանն  
12 Db հաղորդեցին / Qfl հաղորդիցեն / h հաղոր-  
դեցին  
13 en վասն սիւնական (n սիւնականի) / kmps վասն  
սիւնական ֆահանայից փխ սիւնական որ  
հաղորդիցի / G սունական / b չիբ սիւնական  
որ հաղորդիցի  
14 esq հաղորդի  
15 e սրբելոյ սեղանի  
16 q սեղանո  
17 Me խոպանայ  
18 e ամանի / hlor ամանոց  
19 óa ձիթոյ / M եւ ձիթոյն / b ձիթեմոյն  
20 kmps վասն թէ (p եթէ) պարտ է գնէք յաւելու /  
Eabceq չիբ վասն ... ձիթոյն  
21 CJ յաւելածոյ / M աւելուածոյ / O յաւելուածու /  
ó աւելածո ձիթոյ

22 p չիբ վասն  
23 IJKLMQRTXYZó ֆառասունք / beq ֆառասուն / p  
գֆառասունս  
24 Rbq ունել / e ունելեաց / H [ուն]ելոյ / a աունելոյ  
փխ ունելոյ  
25 W զարցմունք / hlo չիբ հարցմունք / ú կանոնա-  
կան հարցմունք  
26 eg կանոնական / hln կանոնականք / DGH չիբ  
կանոնականք  
27 AFKLOPQSTVZúmps յովհանայ / G յովանայ /  
RXn յովհանու / Yb յոհանու / q յոհանու / eg  
յովանու / ó ովհանայ / f հովհանայ  
28 ó սիւնականի / f սիւնականի / h սիւնակեցի /  
lor սիւնակեցի / kmps չիբ սիւնականի  
29 ABCDEFGHWAefkmps ֆաղափայ / egn ֆաղափի / q  
ֆաղափ / b յաղագս փխ ֆաղափաց  
30 Tacefgkmpqs առընթերադրեալ / hlor առընթեր  
եղեալ  
31 H պատասխանիմք / eg պատասխանի / M եւ  
պատասխանիք  
32 bq չիբ նմին  
33 eg չիբ հայոց  
34 As կաթողիկոսի / IJKLMQSTZWmnr կաթողի-  
կոսի / bq կաթողիկոսին  
35 p չիբ եւ  
36 ABCDEFGHIJKMOSTUVWün նորուն  
37 p աթոնաց / q աթոնակաց  
38 l եպիսկոպոսակցաց / Yb չիբ եպիսկոպոսաց  
39 Y չիբ բազմաց / քացի BCDEFGHIQVWóúbh-  
lorq-ից, մնացած ձեռագրերը՝ բազմաց գլուխք  
(IQVóúbhlorq գլուխ) ժե  
40 ackms հարցողի / fq հարցողաց / hlor հարցումն  
հարցողի / b չիբ հարցումն  
41 hlor է փխ իցէ / Y չիբ իցէ  
42 G մինդեռ / ó մինչդեռ / e մինչդեռ / r մինչդեռ  
43 CDHYbfq յեկեղեցոյ / Góegl եկեղեցոյ / ko  
եկեղեցւոյ

կոպոսութեան<sup>2</sup>, երկաթս առնուլ<sup>3</sup> յանձն<sup>4</sup> իւր եւ այնու վարել զտեսչութիւնն<sup>5</sup>:

3 Պատասխանի<sup>6</sup>. Չէ՛ արժան<sup>7</sup>, զի<sup>8</sup> <sup>9</sup>կեղծաւորութեան եւ մարդահաճոյութեան<sup>10</sup> կարծիս<sup>11</sup> տայ ժողովրդեանն<sup>12</sup>:

4 ՈԿԱ (ՈՄԵ) Բ. Հարցումն. Եթէ պա՞րտ է<sup>13</sup> եպիսկոպոսի<sup>14</sup> կրանաւորել<sup>15</sup> սքեմաւորութեամբ<sup>16</sup> <sup>17</sup>ինքեամբ իսկ եւ<sup>18</sup> զիւր<sup>19</sup> գործ<sup>20</sup> թողուլ:

5 Պատասխանի<sup>21</sup>. <sup>22</sup>Ոչ է պարտ, <sup>23</sup>այլ յոր<sup>24</sup> կոչումն կոչեցաւ<sup>25</sup> <sup>26</sup>ի նմին յարամնալ<sup>27</sup>:

6 ՈԿԲ (ՈՄԶ) Գ. Հարցումն<sup>28</sup>. <sup>29</sup>Որ ոք պոռնկեալ է եւ ի<sup>30</sup> բազում<sup>31</sup> մեղս<sup>32</sup> մեծա-

մեծս<sup>33</sup> <sup>34</sup>չաղախեալ եւ<sup>35</sup> յերիցութիւն<sup>36</sup> ըմբռնի<sup>37</sup> ոչ կամաւ<sup>38</sup> եւ յետոյ<sup>39</sup> նեղեալ <sup>40</sup>ի խղճէն թողուլ<sup>41</sup> զկարգն եւ ի մեծամեծ<sup>42</sup> ճգնութիւնս ձեռնարկէ<sup>43</sup> խիստ<sup>44</sup> կրանիւք՝ արժան<sup>45</sup> է Աւրհնութիւն<sup>46</sup> եւ փառս ասել առանձինն<sup>47</sup> իւր<sup>48</sup> վարս<sup>49</sup>, թէ ոչ:

7 Պատասխանի. Արժան<sup>50</sup> է, մանաւանդ թէ<sup>51</sup> <sup>52</sup>միայնակեաց իցէ:

8 ՈԿԳ (ՈՄԷ) Դ. Հարցումն. Եթէ <sup>53</sup>երէց ոք բորոտի կամ աւրկանայ<sup>54</sup>, պա՞րտ է յառանձին<sup>55</sup> <sup>56</sup>աղաւթսն իւր<sup>57</sup> Աւրհնու-

1 hl ի գործս  
2 hlor եպիսկոպոսութեանն  
3 M յառնուլ  
4 oho անձն / l անձին  
5 bq տեսչութիւն / IJKLMQRSTUXZWo hln գտեսչութիւն  
6 Y չի՞ պատասխանի  
7 GH արժանի  
8 o չի՞ զի  
9 o զկեղծաւորութեան Y կեղծաւորութեանն, մարդահանութեանն  
10 FMOQRSTVXZobeghklmnopqrs մարդահանութեան  
11 o կարծիկ / i կարնիս  
12 JVWúp ժողովրդեան  
13 ackms իցէ փիս է  
14 o եպիսկոպոս / MYabcfkmpqs եպիսկոպոսին  
15 Hgq կրանաւորի / b գկրանաւորի / o կրօնաւորե / acfkm կրանաւորիլ / e կրօնաւորիս  
16 b գսեմաւորութեամբ / q գսեմաւորութիւն / ú չի՞ սեմաւորութեամբ  
17 ú չի՞ ինքեամբ իսկ / o ինքեամբ  
18 oeg չի՞ եւ  
19 o զիւ[ր?] / ú իւր  
20 befgq գործն  
21 CD պատասխանիբ  
22 Mbhlor չէ  
23 befgq այլ ի կոչումն որ (bq յոր եւ) կոչեցաւ / BC այլ  
24 IJKLMQRSTVXZobúkpqs որ  
25 o չի՞ կոչեցաւ  
26 O ի մին փիս ի նմին  
27 ks յար մնալ / o աւուր (hl յամբանալ) փիս յարմնալ  
